



## S Ա Ր Ե Կ Ա Ն Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

2010 թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀՀ ՍԱՐԴՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՍԱՐԴՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱՐԱ  
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏԱԱՆ ՍԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2011

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԲԱԺԻՆ 1.

<b>ՊԱՇՏԱՆԻ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b>	<b>5</b>
1.1. Դիմում-բողոքների և դիմումատուների հետ աշխատանք.....	5
1.1.1. Դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն.....	5
1.1.2. Խորհրդատվություն.....	14
1.1.3. Ընդունելություն.....	17
1.1.4. Այցելություններ, արագ արձագանքում.....	17
1.1.5. Փորձագիտական խորհուրդ.....	20
1.2. Դրական արդյունքներով ավարտված գործեր.....	21
1.3. Իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն.....	24
1.4. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտ.....	25
1.4.1. Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկատվական նյութերի ամենօրյա պատրաստում և տարածում.....	26
1.4.2. Հայաստանյան և արտերկրյա ՁԼՍ-ներում տեղ գտած մարդու իրավունքներին վերաբերող նյութերի ամենօրյա մոնիթորինգ.....	27
1.4.3. Մամուլի ասուլիսների, Պաշտպանի և նրա աշխատակազմի հետ հարցազրույցների կազմակերպում.....	28
1.4.4. Մարդու իրավունքների հանրային իրազեկման և բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված գործունեություն.....	29
1.4.5. Պաշտպանի կայքէջի վարում.....	29
1.5. Սիցազգային համագործակցություն.....	29
1.6. Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն.....	35

## ԲԱԺԻՆ 2.

<b>ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՊԱՏճԱռՆԵՐԸ</b>	<b>39</b>
2.1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ.....	39
2.1.1. Խոշտանգումների արգելում.....	39
2.1.2 Արդար դատաքննության իրավունք.....	41
2.1.3. Անձնական ազատության և անձեռնմխելության իրավունք.....	46
2.1.4. Խաղաղ հավաքների իրավունք.....	48
2.1.5. Խոսքի ազատության իրավունք.....	52
2.2 Տնտեսական և սոցիալական իրավունքներ.....	55
2.2.1. Աշխատանքային իրավունքներ.....	55
2.2.2. Սոցիալական ապահովության իրավունք.....	58
2.2.3. Սեփականության իրավունք.....	63
2.2.4. Առողջության պահպանման իրավունք.....	66
2.2.5. Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունք.....	69

## ԲԱԺԻՆ 3.

<b>ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ</b>	<b>74</b>
---	-----------

3.1. ՀՀ Նախագահի աշխատակազմ	74
3.2. ՀՀ ազգային ժողով	75
3.3. ՀՀ կառավարություն	75
3.3.1. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե	87
3.3.2. ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	90
3.3.3. ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	100
3.3.4. ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	103
3.4. ՀՀ ոստիկանություն	104
3.5. ՀՀ դատախազություն	108
3.6. ՀՀ հատուկ քննչական ծառայություն	110
3.7. Դատական պրակտիկայի դիտարկում (մոնիթորինգ)	112
3.7.1. Օրենսդրական թերությունների ազդեցությունը արդար դատաքննության իրականացման արդյունավետության վրա	112
3.7.2. Սնվար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման օրենսդրական իմբերը և գործնական կիրառումը	113
3.7.3. Դատավորի վարքագծի նկատմամբ հսկողական մեխանիզմների կատարելագործում	114
3.7.4. Պաշտպանի իրավասությունը դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ դիմողին առաջարկություններ կամ խորհրդատվություն տալու առումով	116
3.7.5. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ փոխելու վերաբերյալ իրավակիրառ պրակտիկան	117
3.7.6. Սեփականության իրավունքի պաշտպանության առնչվող խնդիրների վերաբերյալ	118
3.7.7. Փաստաբանների պաշտպանվածության վերաբերյալ	118
3.8. Դատական նիստերի դիտարկում (մոնիթորինգ)	119
3.8.1. Քաղաքացիների դիմումների հիման վրա դատական նիստերի դիտարկում	119
3.8.2. ՀՀ դատարանների արդարացման դատավճիռների վերաբերյալ	120
3.9. ՀՀ արդարադատության նախարարություն և ստորաբաժանումներ	121
3.9.1. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն	126
3.9.2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն	129
3.9.3. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ	130
3.10. ՀՀ պաշտպանության նախարարություն	131
3.11. ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	133
3.11.1. Միգրացիոն պետական ծառայություն	134
3.11.2. ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե	138
3.12. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	139
3.12.1. ՀՀ սոցիալական ապահովագրութան պետական ծառայություն	140
3.12.2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն	142
3.12.3. Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն	143
3.12.4. Աշխատանքի պետական տեսչություն	146
3.13. ՀՀ կրթության և գիտության նախարարություն	147
3.14. ՀՀ առողջապահության նախարարություն	155

3.15. << բնապահպանության նախարարություն	157
3.16. << արտակարգ իրավիճակների նախարարություն	163
3.17. Տրանսպորտի և կառի նախարարություն	165
3.18. << ֆինանսների նախարարություն	167
3.19. << արտաքին գործերի նախարարություն	168
3.20. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ	171
3.20.1. Մարզպետարաններ	171
3.20.2. Երևանի քաղաքապետարան	173
3.20.3. Երևանի վարչական շրջաններ	182
3.20.4. Քաղաքապետարաններ	184
3.20.5. Գյուղապետարաններ	191
<b>ԲԱԺԻՆ 4.</b>	
<b>ՀԱՏՈՒԿ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ</b>	194
4.1. Զինակոչիկների և զինծառայողների իրավունքներ	194
4.2. Երեխանների իրավունքներ	197
4.3. Փախստականների իրավունքներ	202
4.4. Ազգային փոքրամասնությունների իրավունքներ	203

**ԲԱԺԻՆ  
ՊԱՇՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**1.1. Դիմում-բողոքների և դիմումատունների հետ աշխատանք**

**1.1.1. Դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն**

2010 թ-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 5221 անձից ստացել է 4089 դիմում-բողոք, որից 1253-ը՝ գրավոր (դրանցից 64-ը կազմում են կողեկտիվ դիմում-բողոքները՝ 1196 դիմումատուի կողմից), իսկ 2836-ը՝ բանավոր: Նշված ժամանակահատվածում դրական լուծում է ստացել 123 դիմում-բողոք, ինչի արդյունքում վերականգնվել է 562 անձի խախտված իրավունքը:


Աղյուսակ 1-ում ներկայացված է 2009 և 2010 թվականներին Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների քանակական համեմատությունը՝ համաձայն միջին ամսական թվերի:

**Աղյուսակ 1**

**Դիմում-բողոքների քանակական պատկերը**

	ընդամենը		միջին ամսական			
	2009թ.	2010թ.	2009թ.	2010թ.	տարրերություն	% հարաբերություն
ընդամենը	3783	4089	315	341	+26	108.2 %
այդ թվում՝ գրավոր	1147	1253	96	104	+8	108.3 %
այդ թվում՝ բանավոր	2636	2836	220	236	+16	107.2 %
անձանցից	4683	5221	390	435	+45	111.5 %

Գրաֆիկ 1. Դիմում-բողոքների քանակական պատկերը՝ միջին ամսական կտրվածքով



Աղյուսակ 1-ում բերված համեմատությունը ցույց է տալիս, որ 2010 թ-ին Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ընդհանուր թվի միջին ամսական տոկոսային հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 8.2 տոկոսով, գրավոր դիմում-բողոքների թիվը՝ 8.3 տոկոսով, քանավոր դիմում-բողոքների թիվը՝ 7.2 տոկոսով, իսկ Պաշտպանին դիմող անձանց թիվը՝ 11.5 տոկոսով:


2010 թ-ի ընթացքում մարդու իրավունքների խախտման վերաբերյալ դիմում-բողոքներ են ստացվել Երևան քաղաքի և Հայաստանի բոլոր մարզերի բնակիչներից, ինչի մասին վկայում է աղյուսակ 2-ում ներկայացված գրավոր դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:

Աղյուսակ 2

	մարզի անվանում	2009թ.		2010թ.	
		քանակ	%	քանակ	%
1.	Երևան	704	61.4	786	62.7
2.	Լոռի	77	6.7	94	7.5
3.	Կոտայք	63	5.5	79	6.3
4.	Շիրակ	61	5.3	50	4.0
5.	Գեղարքունիք	34	2.9	41	3.3
6.	Արարատ	41	3.6	39	3.1
7.	Արմավիր	35	3.1	35	2.8
8.	Տավուշ	31	2.7	33	2.6
9.	Սյունիք	16	1.4	22	1.8
10.	Արագածոտն	21	1.8	20	1.6
11.	Վայոց ձոր	16	1.4	12	0.9
12.	Անիայս <sup>1</sup>	48	4.2	42	3.4
ընդամենը		1147	100	1253	100

<sup>1</sup> Այստեղ նկատի են ունեցվել այն դիմում-բողոքները, որոնցում քաղաքացիները չեն նշել իրենց հասցեները:

**Գրաֆիկ 2. 2010 թ-ի գրավոր դիմում-բողոքների քանակական և տոկոսային պատկերը՝ ըստ  
ՀՀ վարչատարածքային միավորների**




Պաշտպանին հասցեազրված գրավոր դիմում-բողոքների թվաքանակի համեմատությունը ցույց է տալիս, որ ինչպես 2009, այնպես էլ 2010 թ-ին գերակշռում են Երևան քաղաքից ստացվող դիմում-բողոքները: 2010 թ-ին՝ նախորդ տարվա համեմատությամբ, Կոտայքի, Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի և Լոռու մարզերից ստացված դիմում-բողոքների տոկոսային հարաբերակցության աճ է արձանագրվել: Միևնույն ժամանակ, նվազել է Շիրակի, Արարատի, Արագածոտնի, Վայոց Ձորի մարզերից ստացված դիմում-բողոքների քանակը:

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2010 թ-ին ստացված գրավոր դիմում-բողոքների առնչությամբ ընդունված որոշումների, ինչպես նաև դիմումատուի խնդրանքով քննարկումը դադարեցված և ուսումնասիրության ընթացքում գտնվող դիմում-բողոքների մասին վիճակագրական տվյալները:

**Գրավոր դիմում-բողոքների առնչությամբ 2010 թ-ին ընդունված որոշումները**

		2010թ.	
	որոշում	քանակ	%
1.	ընդունվել են քննարկման	469	37.4
2.	ներկայացվել են իրավունքի պաշտպանության հնարավորությունները	145	11.6
3.	փոխանցվել են այլ մարմինների քննարկմանը	89	7.1
4.	քննարկման չեն ընդունվել	343	27.4
5.	քննարկումը դադարեցվել է դիմումատուի խնդրանքով	1	0.1
6.	ուսումնասիրության ընթացքում են	206	16.4

**Գրաֆիկ 3. 2010 թ-ի դիմում-բողոքների քանակական պատկերը՝  
ըստ կայացված որոշումների**



Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2010 թ-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են ոչ պետական մարմինների և կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց վերաբերյալ դիմում-բողոքներ: Ստացվել են նաև անանուն և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին չվկայող կամ դրանց վերականգնման պահանջ չներկայացնող բողոքներ: Դրանց վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կայացվել է բողոքը չքննարկելու մասին որոշում («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս, 9-րդ և 10-րդ հոդվածներ):

Վերոնշյալ հիմնավորումներով աղյուսակ 3-ի 343 դիմումների կապակցությամբ կայացվել է բողոքը չքննարկելու մասին որոշում: Բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս դիմողին բացատրվել է այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգը, իսկ դատական ակտերի հիմնավորվածության և օրինականության դեմ բերված բողոքների դեպքում քաղաքացիներին պարզաբանվել են դրանցից բխող իրավական հետևանքները, ինչպես նաև՝ դատարանների անկախության և նրանց գործունեությանը միջամտելու անթույլատրելիության սկզբունքները:

2010 թ-ի ընթացքում Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների կեսից ավելին եղել են բանավոր դիմում-բողոքները, որոնց մի մասը ստացվել է Պաշտպանի կամ նրա աշխատակիցների կողմից մարզեր, պետական հիմնարկներ և կազմակերպություններ կատարած այցելությունների ընթացքում:

Փորձը ցույց է տալիս, որ 2010 թ-ին նույնպես բանավոր դիմում-բողոքներ ներկայացնողների մի մասը խուսափել է ներկայացնել գրավոր բողոք, ինչպես նաև՝ տրամադրել անձնական տվյալներ:

Աղյուսակ 4-ում նշված են դիմում-բողոքների վիճակագրական տվյալներն՝ ըստ հանրային մարմինների:

2010 թ-ի գրավոր դիմում-քողոքներն ըստ հանրային մարմինների

Հանրային մարմնի անվանում		2010թ.
1.	Ոստիկանություն	221
2.	Դատարաններ	168
3.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	139
4.	Երևանի քաղաքապետարան	73
5.	ՀՀ պաշտպանության նախարարություն	54
6.	ԱԱԲՀ ԻԱ · ԱԾՄՆՀ ՇՀ ՀՅ ՀՅ ԵՎ ՀՅ ՏԱՐԱԾՈՒՅԹ	41
7.	Դատախազություն	34
8.	ՀՀ արդարադատության նախարարություն	33
9.	ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն	33
10.	Քաղաքապետարաններ (բացի Երևանի քաղաքապետարանից)	33
11.	Քրեակատարողական իիմնարկներ	31
12.	Գյուղապետարաններ	27
13.	Մարզպետարաններ	25
14.	ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն	25
15.	Երևանի վարչական շրջաններ	16
16.	ՀՀ կառավարություն	14
17.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	14
18.	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե <sup>2</sup>	13

Հաշվետու տարում ևս դիմում-քողոքների մեծ մասն ուղղված է եղել Ոստիկանության, դատարանների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դեմ:

Աղյուսակ 5-ում նշված է հանրային մարմինների դեմ ուղղված դիմում-բողոքների վիճակագրական տվյալներն՝ ըստ անձանց քանակի:


<sup>2</sup> Աղյուսակում բերված են հանրային այն մարմինները, որոնց դեմ ուղղված դիմում-քողոքներն առավել մեծ թիվ են կազմել:

## Գրավոր դիմում-բողոքներն ըստ անձանց քանակի

	<b>Հանրային մարմնի անվանում</b>	<b>2010 թ.</b>
1.	Երևանի քաղաքապետարան	<b>447</b>
2.	Ոստիկանություն	<b>233</b>
3.	Դատարաններ	<b>185</b>
4.	Գյուղապետարաններ	<b>179</b>
5.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	<b>141</b>
6.	ՀՀ ազգային ժողով	<b>89</b>
7.	ՀՀ կառավարության առընթեր ավիացիայի գլխավոր վարչություն	<b>76</b>
8.	ՀՀ կառավարություն	<b>69</b>
9.	Դատախազություն	<b>56</b>
10.	ՀՀ պաշտպանության նախարարություն	<b>55</b>
11.	Քաղաքապետարաններ (քաղի Երևանի քաղաքապետարանից)	<b>55</b>
12.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<b>52</b>
13.	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	<b>46</b>
14.	ՀՀ ՏԿՆ միզրացիոն գործակալություն	<b>43</b>
15.	ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն	<b>40</b>
16.	ՀՀ արդարադատության նախարարություն	<b>36</b>
17.	Քրեակատարողական հիմնարկներ	<b>31</b>
18.	Մարզպետարաններ <sup>3</sup>	<b>26</b>

<sup>3</sup> Աղյուսակում բերված են հանրային մարմինների դեմ կողեկտիվ դիմում-բողոքները:

## Գրաֆիկ 5. Գրավոր դիմում-քողոքներն՝ ըստ 2010 թ-ին դիմած անձանց



- 1 Երևանի քաղաքապետարան [447]
- 2 Ոստիկանություն [233]
- 3 Դատարաններ [185]
- 4 ՀՀ գյուղապետարաններ [179]
- 5 ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն [141]
- 6 ՀՀ ԱԺ [89]
- 7 ՀՀ կառավարության առընթեր ավիացիայի գլխավոր վարչություն [76]
- 8 ՀՀ կառավարություն [69]
- 9 Դատախազություն [56]
- 10 ՀՀ պաշտպանության նախարարություն [55]
- 11 Քաղաքապետարաններ (բացի Երևանի քաղաքապետարանից) [55]
- 12 ՀՀ կրթության և գիտության նախարարություն նախարարություն [52]
- 13 ՀՀ ԿՍ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե [46]
- 14 ՀՀ ՏԿՆ միգրացիոն գործակալություն [43]
- 15 ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն [40]
- 16 ՀՀ արդարադատության նախարարություն [36]
- 17 Քրեակատարողական հիմնարկներ [31]
- 18 Մարզպետարաններ [26]

## 1.1.2. Խորհրդատվություն

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով՝ Պաշտպանի գործունեության ոլորտում տարբերակվում է խորհրդատվության երկու տեսակ՝ պարտադիր և Պաշտպանի նախաձեռնությամբ իրականացվող:<sup>4</sup>

2010 թ-ի ընթացքում 488 դեպքում տրվել է պարտադիր խորհրդատվություն՝ նախատեսված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով.

1. դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունների ներկայացում (Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ),

2. բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելու վերաբերյալ դիմողին այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգի պարզաբանում (Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս):

2010 թ-ի ընթացքում Պաշտպանի և աշխատակազմի աշխատակիցների կողմից քաղաքացիներին տրվել է խորհրդատվություն ինչպես ընդունելությունների ժամանակ, այնպես էլ՝ հեռախոսով և աշխատանքային այցերի ընթացքում:

Ընթացիկ տարում Պաշտպանի կողմից ստացված դիմումներն, ըստ դրանցում արձարձված խնդիրների և ոլորտների, կարելի է դասակարգել հետևյալ խմբերի:

**Առաջին խումբը կազմում են քաղաքացիական և քաղաքական իրավունքների խախտմանը վերաբերող դիմումները,** որոնց կապակցությամբ տրամադրված խորհրդատվությունները հիմնականում առնչվել են ա) խոշտանգումների կամ դաժան, աննարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի դրսորումներին, բ) ազատության և անձեռնմխելիության իրավունքի ուժնահարման, ձերբակալման և կալանավորման դեպքերին, գ) կալանավորված անձանց փաստաբան չտրամադրելու կամ սահմանված կարգի խախտմամբ տրամադրելու դեպքերին, դ) քաղաքացիություն ձեռք բերելու, անձնագիր ստանալու հարցերին:

Նշենք նաև, որ կալանավորված և դատապարտված անձանցից ստացվել են իրենց արդար դատաքննության իրավունքի խախտման վերաբերյալ բողոքներ:

**Երկրորդ խումբը կազմում են սոցիալ-տնտեսական իրավունքների խախտմանը վերաբերող դիմումները:** Այս կապակցությամբ տրամադրված խորհրդատվությունների շարքում գերակշռել են նպաստների, փախստականների բնակարանային հարցերի, հաշմանդամների իրավունքների, ԽՍՀՄ խնայքանկերում քաղաքացիների կողմից ներդրած ավանդների փոխհատուցման գործընթացի, սեփականության իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներին տրված պարզաբանումները:

<sup>4</sup> Պարտադիր և Պաշտպանի նախաձեռնությամբ իրականացվող խորհրդատվության դեպքերի և եղանակների իրավական վերլուծությունն առավել հանգամանորեն ներկայացված է «Մարդու իրավունքների պաշտպանի 2006թ. տարեկան գեկույցում» (էջ 17-18):

Քաղաքացիներին խորհրդատվություն է տրամադրվել նաև կենսաթոշակի տեսակների, մասնակի կենսաթոշակի նշանակման և տրամադրման առանձնահատկությունների, լիազորագրով կենսաթոշակ ստանալու իրավունքի իրականացմանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Պաշտպանի կողմից քաղաքացիներին տրամադրված խորհրդատվությունների շարքում առանձնանում են հաշմանդամների խնդիրներին առնչվող, այդ թվում՝ հաշմանդամության խմբի փոփոխմանը, հաշմանդամներին տրամադրվող արտոնություններին վերաբերող հարցերը:

Քաղաքացիների սեփականության իրավունքի խախտումների վերաբերյալ 2010 թ-ին Պաշտպանի աշխատակազմը ստացել է ավելի քան 84 դիմում-բողոք (101 անձից): Այս հանգամանքը ևս վկայում է այն մասին, որ շարունակվում են անտեսվել այն մտահոգությունները, որոնց ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է իր նախորդ գեկույցներում:

Դիմում-բողոքների կապակցությամբ խորհրդատվություն է տրամադրվել նաև ՀՀ հողային օրենսգրքի մի շարք դրույթների վերաբերյալ, որոնք առնչվում են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու, այդպիսի հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու, ինչպես նաև նշված հողամասերից ՀՀ կառավարության կողմից սահմանված առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքերին: Իսկ մի շարք դիմումների կապակցությամբ ներկայացվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ սերվիտուտին վերաբերող դրույթները:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքները վերաբերել են ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և նրա ստորաբաժանումների կողմից կատարված գործողությունների բողոքարկման ընթացակարգին առնչվող հարցերին: Նման դեպքերում Պաշտպանի որոշմամբ ներկայացվել է ոլորտի իրավական կարգավորման մասին տեղեկատվություն, ինչպես նաև՝ տվյալ մարմնի գործողությունների (անգործության) բողոքարկման կարգը:

2010 թվականին շարունակել են արդիական մնալ ԽՍՀՄ Խնայբանկում ներդրված ավանդների փոխառությունը, ինչպես նաև փախստականների բնակարանային խնդիրները:

Երրորդ խումբը կազմում են քրեական դատավարության ոլորտում անձի իրավունքների ապահովման խնդիրներին վերաբերող դիմումները, որոնց կապակցությամբ նույնպես դիմողներին տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

Քրեական դատավարության ոլորտում անձի իրավունքների ապահովման վերաբերյալ խորհրդատվություններն, ըստ իրենց բնույթի, կարելի է դասակարգել երեք ենթախմբի:

*Առաջին ենթախումը՝* դիմումատուններին պարզաբանվել են իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները՝ հանցագործության մասին հաղորդման առնչությամբ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ:

*Երկրորդ ենթախումը՝* քրեական գործերի մինչդատական վարույթի ընթացքում ինչպես քրեական հետապնդման մարմինների, այնպես էլ դատարանի կողմից (խոսքը վերաբերում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը) անձի իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ:

*Երրորդ ենթախումը՝* պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծված անկախ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ:

Չորրորդ խումբը կազմում են զինծառայողների իրավունքներին և զինծառայության ոլորտին վերաբերող դիմումները, որոնց կապակցությամբ դիմումատուններին ներկայացվել են ՀՀ զինված ուժերում ծառայությանն առնչվող օրենսդրությանը, զինկոմիսարիատների գործողությունների (անզործության), զինծառայողների ու նրանց ընտանիքի անդամների իրավունքներին վերաբերող հարցերը:

Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ դիմում-բողոքները կրում են քացառապես քաղաքացիական բնույթ, մինչեւ, դիմումատունները կտրականապես հրաժարվում են իրենց իրավունքների դատական պաշտպանության ձևից և դիմում նմանատիպ հարցերի լուծման իրավասություն չունեցող պետական մարմինների:

Բացի վերոգրյալից, խորհրդատվություններ են տրամադրվել քաղաքացիություն ձեռք բերելու, անձնագիր ստանալու, ինչպես նաև ՀՀ-ից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների զինվորական հաշվառման կապակցությամբ իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցերի շուրջ:

**Հինգերորդ խմբում ներառվել են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների միջազգային-իրավական պաշտպանության եղանակների վերաբերյալ տրված պարզաբանումները:**

Ծատ դեպքերում քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնել ՀՀ դատարանների կայացրած վճիռներից, դատավճիռներից և որոշումներից՝ համարելով, որ դրանցով խախտվել են իրենց իրավունքները: Նման դեպքերում Պաշտպանի որոշմամբ նրանց իրազեկվել է, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ

հոդվածի համաձայն՝ Պաշտպանն իրավասու չել միջամտել դատական վարույթին։ Նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումը սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան։

Միաժամանակ քաղաքացիներին տեղեկացվել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված վերջնական որոշման հետ համաձայն չլինելու դեպքում նրանք իրավունք ունեն վերջնական դատական ակտի հրապարակման պահից վեցամյա ժամկետում դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան։ Անհրաժեշտության դեպքում դիմումատուներին հանգամանորեն ներկայացվել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու պայմաններն ու կարգը։

### 1.1.3. Ընդունելություն

Բնակչության հետ Պաշտպանի անմիջական շփումն ապահովելու և դիմումներին հնարավորինս արագ ու արդյունավետ արձագանքելու նպատակով ընթացիկ տարում ևս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից կատարվել է քաղաքացիների ընդունելություն։ Հաշվետու ժամանակահատվածում՝ Պաշտպանն ընդունել է 152 քաղաքցու, այդ թվում՝ ՀՀ մարզեր կատարած այցերի ընթացքում։ Առաջնորդվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի պահանջներով՝ ընդունելության ընթացքում։

- ընդունվել են գրավոր դիմումներ, եթե այցելուների կողմից առաջադրված հարցերը պահանջել են լրացնության ուսումնասիրություններ կամ ստուգումներ,
- տրամադրվել է խորհրդատվություն։

Միաժամանակ, այցելուներին բացատրվել են նրանց խնդրանքները չբավարարելու պատճառները, պարզաբանվել են դիմումների քննարկման կարգն ու ժամկետները։

2010 թ-ին աշխատանքներ են տարվել խախտված իրավունքների դեպքերին տեղեկանալու և առավել արդյունավետ արձագանքելու ուղղությամբ։ Այս առումով լայնորեն օգտագործվել են նաև համացանցի հնարավորությունները։

### 1.1.4. Այցելություններ, արագ արձագանքում

2010 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կամ ներկայացուցիչների կողմից կատարված բազմաթիվ այցելությունները հանդիսացել են անձանց իրավունքների

ինարավոր խախտման կանխարգելման միջոց: Այս տարվա ընթացքում հանրային մարմինների ուսումնասիրությունները փաստում են, որ նախորդ տարիներին կատարած այցելությունների արդյունքում արձանագրված մարդու իրավունքների խախտման դեպքերը, ինչպես նաև իրավունքի խախտման պատճառ հանդիսացող հանգամանքներն էականորեն նվազել են՝ Պաշտպանի միջամտության շնորհիվ: Մասնավորապես, եզակի են ՀՀ ուստիկանությունում նախկինում համատարած բնույթ կրող իրավունքի այնպիսի խախտման դեպքերը, ինչպիսիք են անձանց ձերբակալելուց հետո Երևան քաղաքի վարչության ձերբակալված անձանց պահման վայր տեղափոխելու փոխարեն Երևան քաղաքի վարչության տարբեր բաժիններում օրերով պահելու, կալանավորված անձանց Յ օրվանից ավելի ձերբակալվածների պահման վայրերում պահելու, ինչպես նաև բերման Ենթարկվածներին անհիմն երեք ժամից ավել Ոստիկանության բաժիններում պահելու պրակտիկան:

Այցելությունների ընթացքում արձանագրվել է, որ դեռևս չլուծված են մնում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում՝ գերբնակեցման, կոմունալ-կենցաղային և այլ օրյեկտների բավարար չինելու, մանկատներում և գիշերօքիկ հաստատություններում՝ մասնաշենքների հիմնանորոգման, մեծամասամբ երեխաներին հատկացված ննջասենյակների մակերեսների խիստ անբավարության, պետության կողմից մանկատան երեխաների 18 տարին լրանալուց հետո նրանց բնակարանով և աշխատանքով չապահովելու, Ոստիկանության որոշ բաժինների ԶՊՎ-ներում՝ պահման պայմաններն օրենսդրության պահանջներին չհամապատասխանեցնելու խնդիրները:

Նշված խնդիրների լուծման համար ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը պաշտոնական նամակներով դիմել է իրավասու պետական մարմիններին:<sup>5</sup>

ՀՀ բոլոր մարզեր կատարած այցելությունների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են նաև մարզում տեղակայված ՀՀ ՊՆ գինվորական մասեր ու նրանց ստորաբաժանումներ:<sup>6</sup>

2010 թվականին նույնպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են մեծաթիվ գրավոր և բանավոր դիմում-բողոքներ, որոնցում բարձրացված հարցերի լուծման արդյունավետ միջոցներից է արագ արձագանքումը:

Բազմաթիվ են ոչ աշխատանքային օրերին, ինչպես նաև գիշերային ժամերին քաղաքացիների կողմից Պաշտպանին դիմելու դեպքերը: Նման դեպքերում՝ Պաշտպանի անմիջական դեկավարությամբ աշխատակազմի աշխատակիցներից ձևավորվել են արագ արձագանքման խմբեր՝ Ոստիկանության բաժանմունքներում ձերբակալված անձանց

<sup>5</sup> տե՛ս, [www.ombuds.am](http://www.ombuds.am):

<sup>6</sup> տե՛ս, սույն գեկույցի 4.1. բաժին:

պահման, զանգվածային միջոցառումների անցկացման վայրեր կամ քրեակատարողական հիմնարկներ և գորամասեր այցելելու նպատակով:

Պաշտպանի ներկայացուցիչները ներկա են գտնվել գրեթե բոլոր զանգվածային կամ ոչ զանգվածային միջոցառումներին՝ հանրահավաքներին, երթերին և ցույցերին՝ անկախ դրանց անցկացման ժամից:

Ազատ տեղաշարժվելու իրավունքի հնարավոր սահմանափակումների մասին քաղաքացիների բազմաթիվ ահազանգերի հիման վրա 2010 թ-ին ևս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ իրականացվել են Երևան մտնող մայրուղիների դիտարկումներ:

Բոլոր դեպքերում էլ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացման սահմանափակման փաստ չի հայտնաբերվել: Սակայն 2010 թվականին ևս մի շաբթ քաղաքներից դեպի Երևան մեկնող տրանսպորտի համար նախատեսված կայանատեղերում վաղ առավոտից տարսի մեքենաներից բացի որևէ այլ տրանսպորտային միջոցներ չեն կայանել:

2010 թվականին իրականացված բազմաթիվ զանգվածային կամ ոչ զանգվածային միջոցառումների՝ հանրահավաքների, երթերի և ցույցերի ժամանակ Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբի կողմից արձանագրվել է, որ, հիմնականում, ՀՀ ոստիկանության աշխատակիցների գործողությունները բխել են «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի դրույթներից, սակայն եղել են նաև դեպքեր, երբ իրավարակային միջոցառման անցկացումը դադարեցնելը ՀՀ ոստիկանության կողմից կատարվել է վերը նշված օրենքի 14-րդ հոդվածով սահմանված հիմքերի և կարգի խախտմամբ:

Հաշվետու տարում շարունակվել են քաղաքացիների կամ նրանց շահերը ներկայացնող փաստաբանների կողմից բողոքներն առ այն, որ ՀՀ ոստիկանության տարբեր բաժինների աշխատակիցների կողմից անձինք տարվում և ապօրինի կերպով պահվում են բաժիններում: Որոշ դեպքերում՝ գիշերային ժամերին, արգելվում է նաև պաշտպանյալի հետ փաստաբանների հանդիպումը: Նմանատիպ դեպքերում Ոստիկանությունից Պաշտպանի աշխատակիցներին ոչ միայն հայտնել են, որ քաղաքացիների տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, այլ նաև երբեմն պնդել, որ նման անձ ընդհանրապես բերման չի ենթարկվել, չի իրավիրվել կամ բաժնում չի գտնվել: Մինչդեռ, ահազանգող քաղաքացիները կրկին զանգահարել և հայտնել են, որ համապատասխան պաշտոնյայի հետ Պաշտպանի կամ Պաշտպանի աշխատակազմի աշխատակցի հետ հեռախոսազրույցից հետո միայն վերականգնվել են անձանց խախտված իրավունքները:

Ահազանգող քաղաքացիները շնորհակալություն են հայտնել Պաշտպանի աշխատակազմին:

Դարձյալ մեծ թիվ են կազմել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից ստացվող ահազանգերն այն մասին, որ կալանավորված կամ դատապարտված անձինք հացարու են հայտարարել՝ որպես իրենց իրավունքների պաշտպանության միակ միջոց: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում նման տեղեկության ստացման բոլոր դեպքերում արագ արզագանքման խումբն այցելել է քրեակատարողական հիմնարկ և մեկուսի զրուցել հացարու հայտարարած անձանց հետ: Բոլոր այցելությունների ժամանակ արձանագրվել է, որ հացարու հայտարարած անձինք գտնվում են մշտական բժշկական հսկողության տակ և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի դեմ որևէ բողոք չունեն, իսկ հացարու հայտարարելու պատճառն իրենց կողմից չկատարված արարքի համար անհիմն մեղադրանք առաջադրելը կամ դատավճիռ կայացնելը է, ինչպես նաև՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի չհիմնավորված որոշումները:

Նշված դեպքերում արագ արզագանքման խմբի անդամների կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն:<sup>7</sup>

### 1.1.5. Փորձագիտական խորհուրդ

Պաշտպանին խորհրդատվական օգնություն տրամադրելու նպատակով ստեղծած փորձագետների խորհուրդը (համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հոդված 26-ի) 2010 թ-ին ևս շարունակել է իր աշխատանքները:

2010 թ-ին Խորհրդի կողմից քննարկվել են հասարակական հնչեղություն ստացած հարցեր և օրենսդրության կատարելագործման վերաբերյալ ուսումնասիրություններ, մասնավորապես՝ ազգային փոքրամասնությունների և փախստականների հիմնախնդիրները, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից ներկայացված՝ «Հավաքների մասին» օրենքի նախագծի դրույթները, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի լրամշակման վերաբերյալ հարցերը, ՀՀ զինված ուժերի առավել արդյունավետ քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ խնդիրները, ինչպես նաև՝ կլիմայի փոփոխության մարտահրավերների հակագդեցությանն առնչվող առանցքային հարցերը:

Խորհրդի առանձին փորձագետների հետ քննարկվել են նաև «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ» օրենքի նախագծի խնդրահարույց հարցերը, ինչպես նաև՝ ՀՀ քրեական դատավարության և Վարչական

<sup>7</sup> տե՛ս, [www.ombuds.am](http://www.ombuds.am):

իրավախախումների վերաբերյալ օրենսգրքերի մի շարք հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության և այդ կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու նպատակահարմարության հարցեր:

## 1.2. Դրական արդյունքներով ավարտված գործեր

Ելնելով որոշումների ոչ պարտադիր բնույթից՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը չի կարող փոխարինել քաղաքացիների իրավունքների պաշտպանության մյուս հաստատություններին: Պաշտպանի որոշումները չեն դադարեցնում հանրային մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի գործողությունը, այլ ունեն բացառապես խորհրդատվական բնույթ:

Պաշտպանի գործունեության արդյունավետության հիմնական ցուցանիշները մարդու և քաղաքացու իրավունքների վերականգնման փաստերն են:

2010 թ-ի ընթացքում Պաշտպանի գործունեության արդյունքում արձանագրվել է իրավունքների վերականգնման 123 դեպք (ներառյալ կոլեկտիվ դիմում-բողոքները), որոնց թվում են եղել նաև նախորդ տարիներին քննարկման ընդունված և 2010 թ-ին վերջնական լուծում ստացած գործեր:

Հաճախ Պաշտպանի միջամտությունը անհրաժեշտ, սակայն բավարար չէ վերջնական արդյունքի հասնելու համար, քանի որ խախտման հայտնաբերման մասին Պաշտպանի որոշումները պետք է նաև ընդունվեն և ի կատար ածվեն հասցեատեր պաշտոնատար անձանց կողմից:

Մարդու խախտված իրավունքների լիարժեք վերականգնումը մեծապես կախված է նաև այն բանից, թե խախտման վերաբերյալ Պաշտպանի խորհրդատվական բնույթ ունեցող որոշումները որքանով են կատարվում հասցեատեր պաշտոնյաների կողմից և որքանով են վերջիններիս գործողությունները համապատասխանում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված կարևորագույն սկզբունքներին:

Ստորև ներկայացնում ենք Պաշտպանի միջամտության արդյունքում դրական լուծում ստացած գործերից մի քանիսը:

### Օրինակ 1.

Քաղաքացի Ա. Գ.-ն հայտնել է, որ ՀՀ կառավարության որոշմամբ իրենց համայնքի քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասերի նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ և որոշվել է փոխել հողերի նպատակային նշանակությունը: Նշված որոշմամբ գերակա հանրային շահ է ճանաչվել նաև իր մորը

սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նկատմամբ: Մայրը մահացել է, որից հետո քաղաքացին սահմանված կարգով ստացել է ժառանգության իրավունք, որի մեջ ներառվել է նաև իրացման գոտում գտնվող 0.65 հա վարելահողը:

Դիմումատուն բողոքել է, որ ժառանգության իրավունքի վկայագիրը ներկայացրել է ՀՀ ԿՍ ԱԳԿ ՊԿ տարածքային ստորաբաժանում, որը, սակայն, մերժել է գրանցել նշված վարելահողի նկատմամբ իր սեփականության իրավունք՝ պատճառաբանելով, որ նշված հողամասի նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության:

Հարցի կապակցությամբ Պաշտպանը դիմել է ՀՀ ԿՍ ԱԳԿ ՊԿ նախագահին, ով հայտնել է, որ քաղաքացի Ա.Գ.-ին տրված՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրից ծագող բոլոր միավորների, այդ թվում՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված, տարածքում գտնվող 0.65 հա մակերեսով վարելահողի նկատմամբ իրավունքները ստացել են պետական գրանցում:

Բողոքի քննարկումը դադարեցվել է՝ հարցը դրական լուծվելու հիմքով:

## Օրինակ 2.

Քաղաքացի Ն. Հ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 2001-2006 թթ.-ին ծառայել է ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան Ռազմական ինստիտուտում, 2006 թ-ից տեղափոխվել է թիվ N գորամաս՝ որպես ակումբի պետ և մինչ օրս ծառայել է նշված պաշտոնում: Դիմումատուն հայտնել է, որ մի քանի ամիս առաջ գորամասի հրամանատարն իրեն տեղեկացրել է, որ պայմանագրի ժամկետն ավարտվել է և վերոնշյալ հաստիքը կրճատվում է:

Դիմումատուն միաժամանակ հայտնել է, որ 2010 թ-ի հոկտեմբերի 27-ին գորամասի հրամանատարի հրամանով իրեն զորացրել են, ինչն, ըստ դիմումատուի, անհիմն է:

Պաշտպանի կողմից կայացվել է որոշում՝ բողոքն ուղարկել այն պետական մարմնի քննարկմանը, որի իրավասությանն է պատկանում բողոքում բարձրացված խնդրի լուծումը:

Դիմումատուի համաձայնությամբ դիմում-բողոքն ուղարկվել է ՀՀ պաշտպանության նախարարին:

ՀՀ պաշտպանության նախարարը պատասխան գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ Ն գորամասի նախկին գինծառայող, պահեստագորի կապիտան Ն. Հ.-ն 2010 թ-ի դեկտեմբերի 12-ի հրամանով նշանակվել է ՀՀ ՊՆ Ն գորամասի ակումբի պետի պաշտոնին:

### **Օրինակ 3.**

«Նուրարաշեն» ՔԿՀ-ի դատապարտյալ Հ. Ն.-ի քույրը՝ Ա. Փ.-ն ՀՀ մարդու իրավունք-ների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ եղբայրը գտնվում է «Նուրարաշեն» ՔԿՀ-ում՝ առողջական ծանր վիճակում: Դիմումատուն նշել է, որ եղբոր՝ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխման խնդրով բազմիցս դիմել է քրեակատարողական հիմնարկի վարչակազմին, սակայն մինչ օրս դիմումները թողնվել են անպատասխան:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանի գրությանն ի պատասխան ՀՀ ԱՆ քրակատարողական վարչության պետը հայտնել է, որ 16.11.2010 թ-ի կարգագրով, պլանային կարգով, ՀՀ ԱՆ «Նուրարաշեն» ՔԿՀ-ի կալանավոր Հ. Ն.-ն տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ ստացիոնար հետազոտման և բուժման նպատակով:

### **Օրինակ 4.**

Աբովյան քաղաքի բնակիչ Ն. Հ.-ն, ով ունի չորս անշափահաս երեխա, հայտնել է, որ գտնվում է սոցիալապես ծանր վիճակում, չի կարողանում օգտվել պետության կողմից տրամադրվող աղքատության ընտանեկան նպաստից, քանի որ Աբովյանի քաղաքապետարանը անհիմն մերժում է տրամադրել անհրաժեշտ տեղեկանքը:

Պաշտպանի միջամտության արդյունքում Աբովյանի քաղաքապետարանը Ն. Հ-ին տրամադրել է պահանջվող տեղեկանքը, և վերականգնվել է դիմումատուի՝ նպաստ ստանալու իրավունքը:

Բողոքի քննարկումը դադարեցվել է՝ հարցը դրական լուծվելու հիմքով:

### **Օրինակ 5.**

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Աբովյան փողոցի 68 տան բնակիչ Յ. Գ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ ԴԱՀԿ ծառայությունից չի ստացել անցկացված էլեկտրոնային աճուրդի հետևանքով իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակարանի գնի փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն:

Դիմելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ դիմումատուն խնդրել է աջակցել իր իրավունքների պաշտպանության հարցում:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողն ուղարկել է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր

քաղաքի Արովյան փողոցի թիվ 68 տան հարկադիր էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև գնի փոփոխությունը հավաստող փաստաթղթերի պատճենները:

Պաշտպանի միջամտությամբ հարցը ստացել է դրական լուծում:

### **1.3. Իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն**

Պաշտպանի գործունեությունում առանցքային և կարևոր դեր ունի իրավական ակտերի նախագծերի փորձաքննությունը:

ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» 2007 թ-ի հունիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 42-րդ կետով ամրագրված է, որ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքների նախագծերը նախքան կառավարություն ներկայացնելն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի:

2010 թ-ի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղարկվել է 51 օրենքի նախագիծ և 18 Կառավարության որոշման նախագիծ, որոնք Պաշտպանի աշխատակազմի կողմից ենթարկվել են վերլուծության, և դրանց կապակցությամբ նախաձեռնողների հետ կազմակերպվել են քննարկումներ: Մի շարք նախագծերի վերաբերյալ արվել են հայեցակարգային առաջարկներ: Նախագծերից մի մասի վերաբերյալ Պաշտպանն առաջարկել է դրանք համապատասխանեցնել օրենսդրության տեխնիկայի կանոններին:

Պաշտպանը մշտապես ընդգծել է, որ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի իմաստով որևէ իրավական նորմ չի կարող «օրենք» համարվել, եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, եթե այն ձևակերպված չէ այնպիսի հստակությամբ, որը բույլ կտաքաղաքուն դրա հետ համապատասխանեցնելու իր վարքագիծը: Քաղաքացին պետք է հնարավորություն ունենա անհրաժեշտության դեպքում, օգտվելով խորհուրդներից, կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ տվյալ գործողությունից:

Մի շարք իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ սխալ իրավակիրառ պրակտիկայից խուսափելու համար առաջարկվել է դրանք խմբագրել, շարադրել պարզ և հասկանալի:

Ներկայացված բոլոր իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առանձնակի ուշադրություն է դարձվել այն հանգամանքին, որ նախագծերի դրույթները անհարկի չսահմանափակեն քաղաքացիների իրավունքները և դրանք հակասության մեջ չլինեն հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի հետ:

#### 1.4. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտ

Անժխտելի է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության բափանցիկությունը և հրապարակայնությունը նպաստում է երկրում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների զարգացմանը, բարձրացնում է հասարակության իրազեկման մակարդակը: Այս պարագայում Պաշտպանի և ԶԼՄ-ի սերտ համագործակցությունը տալիս է սպասված արդյունքը: Այդ մասին են վկայում ինչպես տեղական, այնպես էլ արտերկրյա ԶԼՄ-ի բազմաթիվ հրապարակումները:

2010 թ-ի ընթացքում Պաշտպանի գործունեությունը լրացրանելու նպատակով կազմակերպվել են մի շարք մամուլի ասուլիսներ, կլոր սեղաններ, աշխատանքային քննարկումներ, լրագրողների հետ հանդիպումներ, հարցազրույցներ և հեռուստահանդիպումներ:

Նախորդ տարիների նմանությամբ՝ ՍԻՊ գրասենյակի միջոցառումները մեծամասամբ լրացրանվել են պատշաճ մակարդակով:

Այս տարի Պաշտպանը մասնակցել է ոչ պաշտոնական ձևաչափի որոշ հաղորդումների: Հատկանշական են «Շանթ» հեռուստարանկերության «Առավոտը Շանթում» հաղորդումը և «Ա1+» հեռուստարանկերության «Հետզրություն» հաղորդաշարը:

Որոշ պարբերականների կողմից հաճախ իրականացվող հարցախույզների մի շարք անվանակարգերում ներկայացված է եղել նաև ՍԻՊ Արմեն Հարությունյանը: «Հայաստանի գրուցակից» շաբաթաթերթի հարցախույզներից մեկի ամփոփագրով ընթերցողների գնահատմամբ ճանաչվել է Հայաստանի Հանրապետության ամենաազդեցիկ պաշտոնյա:

Կարենորելով ինչպես Հանրապետությունում, այնպես էլ արտերկրում ժամանակավորապես գտնվող մեր համաքաղաքացիների՝ ՍԻՊ գրասենյակի վերաբերյալ տեղեկացվածությունը՝ Պաշտպանը սկսել է համագործակցել «Եվրոպական օմբուդսման» (<http://euro-ombudsman.org>) վեբ-ամսագրի խմբագրակազմի հետ: Ամսագրում պարբերաբար գետեղվել են հասարակական հնչեղություն ունեցող դեպքերի վերաբերյալ Պաշտպանի արձագանքները:

Ի սկզբանե Պաշտպանի ուշադրության կենտրոնում է եղել իրարամերժ մեկնաբանություններ ստացած «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը:

Հաշվի առնելով նշված նախագծի մի շարք վիճահարույց դրույթների շուրջ ոլորտի հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց հնչեցրած մտահոգությունները, ինչպես նաև նկատի ունենալով հեռուստատեսության և ռադիոյի գործունեության ոլորտի պատշաճ օրենսդրական կարգավորման կարևորությունը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է աշխատանքային քննարկում՝ նախագծի հեղինակների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և այլ շահագրգիռ անձանց մասնակցությամբ:

ՀՀ Նախագահի առաջարկով Պաշտպանի դեկավարությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի լրամշակման նպատակով: Աշխատանքային խմբի նիստերի վերաբերյալ տեղեկացվել է հանրությանը, անդրադարձ է եղել նաև ԵԽԽՎ և ԵԱՀԿ միջազգային փորձագետների հետ Խմբի աշխատանքային հանդիպմանը:

#### **1.4.1. Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկատվական նյութերի ամենօրյա պատրաստում և տարածում**

2010 թ-ի ընթացքում Պաշտպանի գործունեության լուսաբանման հաճախականությունը նախորդ տարիների համեմատ աճել է: 2010 թ-ի ընթացքում Պաշտպանի գրասենյակը տարածել է 100-ից ավելի մասուլի հաղորդագրություններ:

2010 թ-ի առաջին կիսամյակում քրեակատարողական հիմնարկներում հաճախակի են դարձել ինքնասապանության և ինքնասապանության փորձերի դեպքերը: Դրանց կապակցությամբ Պաշտպանը պատկան մարմիններին կոչ է արել իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ՝ նշված դեպքերի օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության համար:

Պաշտպանի և իր օտարերկրյա պաշտոնակիցների հետ համագործակցության վերաբերյալ տեղեկատվությունները պարբերաբար զետեղվել են ոչ միայն ՀՀ ՍԻՊ պաշտոնական կայքում, այլև տրամադրվել են ԶԼՄ-ին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մշտապես կարևորել է պաշտոնակիցների՝ միմյանց հետ համագործակցության հարցը: Այս կապակցությամբ 2010 թ-ի նոյեմբերին Պաշտպանը հանդես է եկել կոչով՝ հորդորելով ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպան Յուրի

Հայրապետյանին և ԱՀ մարդու իրավունքների պաշտպան Էլմիրա Սուլեյմանովային ցուցաբերել մարդասիրություն և միջնորդել երկու երկրների իշխանություններին՝ լուծելու հայ Մանվել Սարիբեկյանի ու աղբեջանցիներ Ֆարիդ Ահմեդովի և Մուբարիկ Իբրահիմովի դիակների վերադարձման հարցը:

#### **1.4.2. Հայաստանյան և արտերկրյա ԶԼՄ-ներում տեղ գտած մարդու իրավունքներին վերաբերող նյութերի ամենօրյա մոնիթորինգ**

2010 թ-ի ընթացքում տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գարգացման կարևոր ուղղություններից է եղել նաև հայաստանյան և արտերկրյա մամուլում ու տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների գեկույցներում տեղ գտած տեղեկատվության ուսումնասիրությունը, որա հավաստիության ստուգումը և վերլուծությունը:

2010 թ-ի ընթացքում մամուլի հրապարակումների հիման վրա Պաշտպանի նախաձեռնությամբ գործեր են ընդունվել վարույթ, ինչպես նաև իրականացվել են այցելություններ և տարաբնույթ ուսումնասիրություններ:

Այդ նպատակով Պաշտպանը և նրա աշխատակազմը մշտապես իրազեկված են եղել ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրյա մամուլում հրապարակված նորություններին, նշանակալից իրադարձություններին և այլ երկրների օմբուդսմանների և միջազգային իրավապաշտպան կազմակերությունների հայտարարություններին:

Նմանատիպ աշխատանքների արդյունքում է պարզվել նաև արտերկրյա ԶԼՄ-ների տարածած տեղեկատվությունն այն մասին, որ Աղբեջանի օմբուդսման Էլմիրա Սուլեյմանովան լրագրողների հետ հանդիպման ընթացքում հայտարարել է, որ ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության՝ Եվրոպական Օմբուդսմանների Ինստիտուտին (EOI) անդամակցելու փաստը չի համապատասխանում իրականությանը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հերքել է տվյալ ապատեղեկատվությունը՝ ներկայացնելով հակառակն ապացուցող փաստաթղթեր:

2010 թ-ին ԶԼՄ մոնիթորինգի հետ մեկտեղ իրականացվել է նաև մարդու իրավունքներին վերաբերող նյութերի արխիվի վարում և հրապարակումների կոնտենտ-վերլուծություն:

### **1.4.3. Մամուլի ասուլիսների, Պաշտպանի և նրա աշխատակազմի հետ հարցազրույցների կազմակերպում**

2010 թ-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը իրավիրել է յոթ մամուլի ասուլիս, որոնց ընթացքում լրագրողներին տեղեկատվություն է տրամադրվել մարդու իրավունքներին առնչվող հասարակական հնչեղություն ունեցող խնդիրների և դեպքերի վերաբերյալ իր դիրքորոշման և գործողությունների մասին, ինչպես նաև ներկայացվել են հաշվառու ժամանակահատվածի վիճակագրական տվյալներ, արտահերթ հրապարակային գեկույցներին վերաբերող տեղեկատվական նյութեր:

Պաշտպանի արտահերթ հրապարակային գեկույցները մեծ արձագանք են ստացել մամուլում: Մասնավորապես՝ «Խոսքի ազատության իրավունքը ՀՀ-ում» գեկույցը, լրատվամիջոցների կողմից քննարկվել է մի քանի օր շարունակ:

ՄԻՊ գրասենյակը չի շրջանցել նաև միջին և փոքր բիզնեսի ներկայացուցիչների՝ իրենց աշխատանքային պայմաններին առնչվող բողոքները:

Այս համատեքստում Պաշտպանն անդրադարձել է «Ոսկու շուկայի» վարձակալների բողոքներին՝ մատնանշելով, որ սահմանված հարկային բեռլ նրանց համար անտանելի է դառնում այն աստիճանի, որ գործատուի հետ հակասության մեջ են մտնում. «Այսինքն՝ մարդիկ անելանելի վիճակի մեջ են հայտնվում, բայց փոխարեն մտածեն այդ մարդկանց օգնելու մասին, նրանց տանում են Ոստիկանություն», - ասել է Պաշտպանը՝ ընդգծելով, որ դա տարօրինակ երևոյթ է:<sup>8</sup>

Նշենք, որ Պաշտպանի աշխատակազմի կողմից կազմակերպված բոլոր մամուլի ասուլիսները մեծ արձագանքների են արժանացել տարբեր լրատվամիջոցների և պետական մարմինների կողմից և հաճախ հանգեցրել կոնկրետ արդյունքների: Պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք, մի շարք դեպքերում, հիմք ընդունելով մամուլի ասուլիսներում Պաշտպանի կողմից հնչեցված դիտողությունները, միջոցներ են ձեռնարկել համապատասխան խախտումները վերացնելու ուղղությամբ:

<sup>8</sup> Աղբյուր՝ [Panorama.am](http://Panorama.am) 14:00 25/02/2010/

#### **1.4.4. Մարդու իրավունքների հանրային իրազեկման և բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված գործունեություն**

2010 թ-ի ընթացքում ԱԱՀԾ ծրագրի աջակցությամբ տպագրվել և տարածվել է Պաշտպանի գործունեությանը և մարդու իրավունքներին վերաբերող եռամսյա տեղեկագիր:

Պաշտպանը հանդիպում է ունեցել Բաց Հասարակության Օժանդակության հիմնադրամի ֆինանսավորմամբ Հանրապետության տարբեր դպրոցներում գործող Եվրոպակումբների անդամ չորս դպրոցների 9-րդ դասարանների աշակերտների հետ, Ամերիկայի Հայկական Համագումարի (ԱՀՀ) նախաձեռնությամբ ընդունել է երիտասարդներին:

2010 թ-ին մարդու իրավունքների հանրային իրազեկման և բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացման նպատակով Հանրապետության գրադարաններին բաժանվել է Պաշտպանի գործունեության մասին գրականություն (տեղեկագրեր, արտահերթ գեկույցներ, դասագրքեր):

#### **1.4.5. Պաշտպանի կայքէջի վարում**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքի վարումը շարունակում է մնալ հասարակայնության հետ կապերի զարգացմանն ուղղված գործունեության կարևոր բաղադրիչ:

2010 թ-ի ընթացքում կայքի այցելուների թիվը 2009 թ-ի համեմատությամբ աճել է մոտ 40% և կազմել է 168850, ինչը վկայում է այն մասին, որ Պաշտպանի գործունեությունը եղել և մնում է հանրության ուշադրության կենտրոնում:

Զնափոխվել է նաև կայքի «Մեր մասին» բաժինը:

### **1. 5. Միջազգային համագործակցություն**

Մարդու իրավունքների պաշտպանն ակտիվորեն աջակցում է ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կառուցմանը, ինչն ընձեռում է բարեփոխումներ իրականացնելու, դրանք միջազգային չափանիշներին

համապատասխանեցնելու, միջազգային հանրության աջակցությունը ստանալու հնարավորություններ:

Պաշտպանի հաստատությունն, անդամագրված լինելով միջազգային այնպիսի հեղինակավոր կազմակերպությունների, ինչպիսիք են Օմբուդմանների միջազգային ինստիտուտը և Օմբուդմանների Եվրոպական ինստիտուտը, շարունակում է իր ակտիվ գործունեությունը՝ ապահովելով գրասենյակի նոր անդամակցությունն ու համագործակցությունը արտերկրյա տարրեր օմբուդմանների ընկերակցություններին: Մասնավորապես, 2010 թ-ի հունիսին Մադրիդում կայացած Միջերկրյածովյան Օմբուդմանների ընկերակցության ամենամյա ընդհանուր ժողովի ժամանակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ընտրվել է ընկերակցության լիարժեք անդամ:<sup>9</sup>

Այնուհետև, 2010 թ-ի օգոստոսին Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում տեղի ունեցած գագաթաժողովի ժամանակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն անդամակցել է Ասիական Օմբուդմանների ընկերակցությանը:

Հատկանշական է, որ 2006 թ-ին Միջազգային կոռորդինացիոն կոմիտեի կողմից ՀՀ ՄԻՊ հաստատությանը շնորհվել է անդամակցության «Ա» կարգավիճակ, ինչը ենթադրում է Փարիզյան սկզբունքներին լիակատար համապատասխանություն: ՀՀ ՄԻՊ-ը հետևողական մասնակցել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների միջազգային կոռորդինացիոն կոմիտեի աշխատանքներին: Այսպես, ՀՀ ՄԻ պաշտպանը 2010 թ-ի մարտին հրավիրվել է Ժնև՝ հանձնաժողովի ամենամյա հանդիպման 23-րդ նստաշրջանին, ուր քննարկվել են Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների դերը կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության հարցերում, դրանց ներգրավումը Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային համակարգում, Մարդու իրավունքների կրթական հիմնախնդիրները և այլ հարցեր:

2010 թվականը ՀՀ ՄԻՊ-ի համար առավել կարևորվեց Մարդու իրավունքների ազգային հաստատությունների Եվրոպական խմբի անդամակցությամբ, որի պաշտոնական հրավերի հիման վրա սույն թվականի փետրվար ամսին Շվեյցարիայի Ինտերլեյքեն քաղաքում ՀՀ ՄԻ պաշտպանը մասնակցեց «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ապագան» բարձրաստիճան նախարարական վեհաժողովին:<sup>10</sup> Հատկանշական է, որ Ինքերլեյքենի

<sup>9</sup> Միջերկրյածովյան Օմբուդմանների ընկերակցությունը հիմնադրվել է 2008 թ-ին՝ Միջերկրյածովյան Օմբուդմանների ցանցի հիման վրա: Ընկերակցության նպատակն է ապահովել և պաշտպանել ժողովրդավարության, օրենքի գերակայության և սոցիալական արդարության սկզբունքները, ինչպես նաև՝ տարածել մարդու իրավունքների ոլորտի ազգային և միջազգային օրենսդրությունը, Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագիրը, Ռաֆարի հոչակագիրը և նպաստել դրանց պատշաճ կիրառմանը:

<sup>10</sup> Եվրոպական խումբը՝ բաղկացած 47 երկրների ներկայացուցիչներից, նախարարների վեհաժողովին ներկայացված է դիտորդի կարգավիճակով: Վերջին տարիներին այն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել

նախարարների վեհաժողովում Մարդու իրավունքների ազգային հաստատությունների Եվրոպական խումբը, որը ներառում է Միջազգային կոորդինացիոն կոմիտեի կողմից շնորհված «Ա» կարգավիճակով ավելի քան 20 երկրների Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտներ և Եվրոպայի խորհրդի անդամ երկրների մի շարք մարդու իրավունքների ազգային հաստատություններ, լիազորվում էր ունենալ ընդամենը երեք ներկայացուցիչ՝ ի դեմս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի ներկայացուցիչների:

2010 թ-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես Եվրոպական Օմբուդսմանի Ինստիտուտի (ԵՕԻ) կառավարման խորհրդի անդամ, մասնակցել է Խորհրդի ամենամյա հանդիպումներին, որտեղ քննարկվել են Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունները, մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներով գրաղվող տարրեր կառույցների հետ համագործակցության ձևաչափերը՝ ներառյալ ԵՕԻ կայքի բարելավման հարցերը:

Առանձնահատով ուշադրության է արժանի 2010 թվականին Իսրայելի օմբուդսման և պետական վերահսկիչ պրո. Միխա Լինդենշտրաուսի հետ Պաշտպանի համագործակցությունը, ինչի շրջանակներում 2010 թ-ի հուլիսին պրո. Միխա Լինդենշտրաուսի գլխավորած պատվիրակությունը ժամանեց Հայաստան: Այդ այցելության արդյունքում հիմք որվեց Իսրայել-Հայաստան համագործակցությանը, որն ավելի ամրապնդվեց ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ Երուսաղեմ կատարած պատասխան այցով:

2010 թ-ը կարևորվել է Հայաստան-ԵՄ հարաբերությունների սերտացման և աննախադեպ զարգացումների տեսանկյունից: Մարդու իրավունքների ոլորտում Հայաստան-ԵՄ համագործակցությունը խթանելու նպատակով 2010 թ-ի նոյեմբերին Պաշտպանը պաշտոնական այցով մեկնել է Բրյուսել: Այցի ընթացքում Պաշտպանը ելույթ է ունեցել Եվրոպական խորհրդարանում, հանդիպել է մի շարք քաղաքական գործիչների, այդ թվում՝ Եվրոպական հանձնաժողովի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների բաժնի ղեկավար, Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի հետ արտաքին հարաբերությունների գլխավոր տնօրեն պրո. Գունար Վիեգանդի հետ, ԵՄ Հայաստանի, Ադրբեյջանի և Վրաստանի խորհրդարանական համագործակցության կոմիտեի պատվիրակության ղեկավար պրո. Միլան Կաբրնոչի, ինչպես նաև Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ պրո. Փիթեր Սեմների և Եվրոպական Պառլամենտի մարդու իրավունքների ենթակոմիտեի նախագահ տկն. Հեյդի Հաութալայի հետ:

---

Եվրոպական դատարանի բարեփոխումներին վերաբերող հարցերում՝ բազմաթիվ առաջարկություններ ներկայացնելով մի շարք սկզբունքային խնդիրների վերաբերյալ:

ԵՄ-ի խորհրդատվական խումբն իր ծրագրի շրջանակներում օժանդակություն է ցուցաբերել մարդու իրավունքների հարցերի իրավիճակային ուսումնասիրության գործում: ԵՄԽԽ-ն կոորդինացիոն բնույթի աջակցություն է ցուցաբերել ՍԻՊ-ի նախաձեռնությամբ ստեղծված տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներից և անկախ փորձագետներից կազմված Խոշտանգումների կանխարգելման խորհրդի՝ Խոշտանգումների դեմ ՍԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրության համաձայն ՍԻՊ-ին վերապահված Կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթների իրականացման հարցում:

Հաշվետու ժամանակաշրջանում գործուն և արդյունավետ համագործակցություն է ծավալվել Եվրոպայի խորհրդի հետ, որի շրջանակներում առաջին անգամ Երևանում կազմակերպվել է Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի՝ «Խոշտանգումների դեմ կանխարգելման ազգային մեխանիզմների արդյունավետ ցանցի ստեղծումը՝ «Հավասար հավասարին» ցանցի գործառույթ» ծրագրի շրջանակներում իրականացվող երրորդ թեմատիկ հանդիպումը՝ «Մեթոդաբանություն: Կանխարգելման ազգային մեխանիզմների (ԿԱՄ) այցելությունների նախապատրաստում և ռազմավարության մշակում» խորագրով: Հանդիպմանը մասնակցել են պատվիրակներ ավելի քան երեսուն երկրներից. այն կարևորվել է ՀՀ վարչապետի, միջազգային իրավապաշտպան մի շարք կառույցների դեկավարների մասնակցությամբ:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում 2010 թ-ին ՀՀ ՍԻՊ աշխատակիցները մասնակցել են Պաղովայում (Բուլղարիա) կայացած սեմինար-քննարկմանը:

Կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության շրջանակներում փորձի փոխանակման նպատակով ՀՀ ՍԻ պաշտպանի խորհրդականը 2010 թ-ի նոյեմբերին մասնակցել է Օդեսայում կայացած «Կովկասում, Մոլդովայում և Ուկրաինայում Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի համատեղ՝ «Պայքար վատ վերաբերմունքի և անպատճելիության դեմ» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Խոշտանգումների (վատ) ստորացուցիչ վերաբերմունքի դեպքերի քննությունը և նրանց դեմ պայքարը» խորագրով Կանխարգելման ազգային մեխանիզմների երրորդ արևելանվրոպական կոնֆերանսին:

Ընթացիկ տարում ևս շարունակվել է փոխադարձ վստահության վրա հիմնված համագործակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի մոսկովյան գրասենյակի հետ: 2010 թ-ի ապրիլին Երևանում կազմակերպվել է «Կլիմայի փոփոխության ոլորտում քաղաքականության էթիկական մոտեցումները» խորագրով տարածաշրջանային կլոր սեղան:

Հաշվետու ժամանակաշրջանը նպաստավոր է եղել նաև ՍԱԿ-ի զարգացման ծրագրի (ՍԱԶԾ) հետ հարաբերությունների խորացման առումով, ինչի մասին է վկայում 2010 թ-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տեղի ունեցած ՍԱԶԾ Քրատիսլավյայի տարածաշրջանային գրասենյակի և ՀՀ ՍԻՊ գրասենյակի կողմից համատեղ

կազմակերպված Կովկասի և Կենտրոնական Ասիայի մարդու իրավունքների ազգային հաստատությունների՝ Ենթատարածաշրջանային մակարդակով ներկայացված առաջին հանդիպումը, որը վերաբերել է «Փոքրամասնությունների իրավունքները և սեռերի իրավահավասարության խթանման օրակարգ-անկախ և գործող մարդու իրավունքների ազգային հաստատություններ» խորագրին:

2010 թ-ի հունիսին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանների հարցերով հատուկ գեկուցող Մարզարեթ Սեկազյայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի անկախության ամրապնդման, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ներկայիս խնդիրների և նրանց լուծման ուղիների, մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային և միջազգային կառավարական, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների ու մարմինների հետ համագործակցության հարցեր: Տրվել է նաև ՀՀ-ում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի ընդհանուր գնահատականը:

ՀՀ ՄԻՊ գրասենյակի՝ Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության երևանյան գրասենյակի հետ ակտիվ և փոխահավետ համագործակցությունը հաջողությամբ շարունակվել է նաև 2010 թվականին: Մասնավորապես, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ 2010 թ-ի հունիսին Պաշտպանն աշխատանքային այցով հրավիրվել է Կոպենհագեն՝ ծանոթանալու Դանիայի օմբուդսմենի գործունեությանը:

2010 թ-ի հոկտեմբերին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում տեղի է ունեցել ԵԱՀԿ-ի և «Հանդուրժողականության կենտրոն» ՀԿ-ի «Աջակցություն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին՝ զինված ուժերի առավել արդյունավետ քաղաքացիական վերահսկողություն իրակնացնելու գործընթացում» ծրագրի եզրափակիչ հաշվետվության քննարկումը:

ԵԱՀԿ ֆինանսավորմամբ կատարվել է «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով վերլուծություն: Արդյունքները փաստում են, որ թեև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները մեր հանրապետությունում սակավաթիվ են, այնուամենայնիվ, անհրաժեշտ է մշակել լրացուցիչ մեխանիզմներ՝ ազգային փոքրամասնության ազգային ինքնության պահպանության և խթանման համար:

ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ ՀՀ ՄԻՊ ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդականը 2010 թ-ի սեպտեմբերին մեկնել է Տաջիկստան:

**Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերության (ԳՏՀ/GTZ)** օժանդակությամբ 2010 թ-ի հոկտեմբերին ՀՀ ՄԻՊ-ը հանրությանը ներկայացրեց

«Հայաստանի Հանրապետությունում խաղաղ հավաքների իրավունքի մասին» արտահերթ իրավարակային գեկույցը, որին հաջորդեց ՄԻՊ-ի կողմից «Հավաքների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը: Նախագիծն ուղարկվել է ԵԱՀԿ-ԺՀՍԻԳ-ի և Վենետիկի համաձայնաժողովի փորձաքննության: 2010 թ-ի նոյեմբերին նախագիծը դրվել է հանրային քննարկման, որին մասնակցել են շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչները:

**Եվրոպական հանձնաժողովի** օժանդակությամբ Պաշտպանի գրասենյակը շարունակել է «Մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի միջոցով՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմ՝ համաձայն ՍՍԿ-ի խոշտանգումների և այլ դաժան, աննարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության» եռամյա ծրագիրը: ԵԽ աջակցությամբ ձևավորվել է փորձագետների խումբ՝ ազատազրկման վայրեր այցելելու նպատակով: Արդյունքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից հրապարակվել է գեկույց, որում ներկայացված է ազատազրկման վայրերի վիճակի վերլուծությունը, ոլորտում առկա թերություններն ու որանց վերացմանն ուղղված առաջարկությունները:<sup>11</sup>

**«Ֆրիմի Էքերտ» հիմնադրամի** աջակցությամբ ՄԻՊ-ը կատարել է «Սոցիալական ապահովության իրավունքը և դրա գործնական ապահովումը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով վերլուծություն, որտեղ արձարծվել են հետևյալ հարցերը.

1) Անձի սոցիալական ապահովության իրավունքը միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների համատեքստում,

2) Անձի սոցիալական ապահովության իրավունքը կարգավորող ներպետական օրենսդրությունը, բացերը, սոցիալական ապահովության ոլորտի համար համապարփակ ուղմավարության բացակայությունը,

3) Սոցիալական իրավունքների խախտումները պետական մարմինների ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում,

4) Աշխատանքային պայմանագրային հարաբերությունների քաղաքացիաիրավական քողարկումը /աշխատանքային ստաժի անտեսումը,

5) Գործազրկության դեմ պայքարը որպես աղքատության հաղթահարման և բնակչության սոցիալական վիճակի բարելավման միջոց,

6) Սոցիալական աջակցության տարբեր գործիքների անարդյունավետ կիրառումը, լնտանեկան նպաստ-կենսաթոշակ հարաբերակցությունը:

**Նախորդ տարիների նման 2010 թ-ին ևս ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (ԱՄՆ ՄԶԳ/USAID)** հետ համագործակցությունը շարունակվել է:

<sup>11</sup> սեւ, [www.ombuds.am](http://www.ombuds.am)

Համագործակցության արդյունքում հրատարակվել է «Խոսքի ազատության իրավունքը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով արտահերթ հրապարակային գեկույց:

2010 թ-ի հուլիսին ՀՀ ՍԻՊ աշխատակիցները մասնակցել են ԱՄՆ ՍԶԳ Մարդկային և ինստիտուցիոնալ ներուժի գարգացման ծրագրի աջակցությամբ Ռիգայում կայացած «Քաղաքացիական հասարակության և կառավարության համագործակցությունը քաղաքականության մշակման գործընթացում» մասնագիտացված ուսուցողական ծրագրին:

2010 թ-ի դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ, Պաշտպանը ՍԱԿ-ի երևանյան գրասենյակի ներկայացուցչի և ՀՀ կրթության և գիտության նախարարի հետ մասնակցել է «Ո՛չ, խտրականությանը» խորագրով քաց դասին:

2010 թ-ի մարտին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ընդունել է ԵԽ խոշտանգումների կանխարգելման կոմիտեի ներկայացուցիչներին:

2010 թ-ի մայիսին Պաշտպանն ընդունել է ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Մելուք Չավուշօղլուի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի և տարածաշրջանի մարդու իրավունքների պաշտպանության մարտահրավերները:

Խոսելով մարդու իրավունքների պաշտպանության մարտահրավերների մասին՝ Պաշտպանը կարևորել է հանդուրժողականության մքնոլորտի գարգացման և երկխոսության մշակույթի ձևավորումը: ԵԽԽՎ նախագահը հայտնել է, որ Թուրքիայում ևս նախատեսվում են սահմանադրական փոփոխություններ, որոնց արդյունքում այդ երկրում ստեղծվելու է Օմբուդսմանի հաստատություն:

2010 թ-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և Ֆրանսիայի ու Իսպանիայի Օմբուդսմանների միջև իրականացվող «Աջակցություն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին» թվինին ծրագրի շրջանակներում ՀՀ ՍԻՊ աշխատակիցները մեկնել են Ֆրանսիա և Իսպանիա՝ ծանոթանալու համապատասխան գրասենյակների գործունեությանը:

## 1.6. Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն

2010 թ-ի ընթացքում Պաշտպանը շարունակել է համագործակցությունը բազմաթիվ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնք գրադարձ են մշակութային, քարեգործական, հայրենակցական, ազգային փոքրամասնությունների,

բնապահպանական, իրավապաշտպան, երեխաների, կանաց, փախստականների, հաշմանդամների և այլ հարցերով:

Պաշտպանի հանձնարարությամբ ՍԻՊ ներկայացուցիչները հանդիպել են նաև Հայաստանի Հանրապետության մարզերում գործող հասարակական կազմակերպությունների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են հասարակությանը հուզող, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների գործունեության առնչվող իրատապ խնդիրներ:

Հասարակական բազմաթիվ կազմակերպություններ իրենց մտահոգությունն են հայտնել ՀՀ ազգային ժողովի քննարկմանը ներկայացված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:

Հասարակական կազմակերպությունները հայտնել են իրենց մտահոգությունը ՀՀ կառավարության 2010 թ-ի օգոստոսի 5-ի թիվ 1042-Ն որոշման վերաբերյալ, որով հաստատվում է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի՝ օրենքով նախատեսված առանձին ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության օրինականության վերահսկողության տեսչության կանոնադրությունը և կառուցվածքը: Հասարակական կազմակերպություններն իրենց մտահոգությունն են հայտնել նաև որոշման ընդունման մասնակցային գործընթացի ապահովման առիթով՝ նշելով, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները չեն ներգրավվել այդ որոշման քննարկման գործընթացին, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության կողմից հանրային մասնակցության ապահովման, քաղաքացիական հասարակության զարգացման պարտավորություններին, որդեգրված սոցիալական գործընկերության հիմնարար սկզբունքներին:

Պաշտպանի կողմից մանրամասն քննարկվել են հասարակական կազմակերպությունների բարձրացրած հարցերը, և համապատասխան առաջարկներ են ուղղվել ՀՀ արդարադատության նախարարին:

Ազգային փոքրամասնությունների համայնքների խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ իրենց իրավունքների պատշաճ իրացման հարցերի վերաբերյալ, Պաշտպանի աշխատակիցները տվել են պարզաբանումներ:

Հրատապ հիմնախնդիրների առկայության դեպքում իրականացվել են այցելություններ: Այսպես, Պաշտպանի հանձնարարությամբ նրա ներկայացուցիչները ուսուական համայնքի ղեկավար Ի. Ս.-ի հետ այցելել են ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո գյուղական համայնք՝ ծանրանալու այդտեղ միատարր քնակվող ոուս մոլոկանների հիմնախնդիրներին: Այցելության ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչները հանդիպել են

համայնքի բնակիչներին, տեղում բանավոր խորհրդատվություն են տվել նրանց հուզող հարցերի վերաբերյալ, իսկ առկա հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկացրել են Պաշտպանին:

Առկա խնդիրների լուծման նպատակով Պաշտպանը դիմել է ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ արդարադատության նախարարին և Լոռու մարզպետին:

Լոռու մարզպետին դիմելուց հետո սկսվել են համայնքի դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքներ (ըստ Լոռու մարզպետի՝ «Հարավկովկասյան երկարութի» ՓԲԸ-ի ֆինանսական միջոցներով), և դպրոցականներն ուսումնական տարին սկսել են նորոգված շենքում:

Պաշտպանին են դիմել նաև գերմանական, հրեական, լեհական, ռուսական, վրացական, ուկրաինական, հունական համայնքների հասարակական կազմակերպությունները: Նրանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ Պաշտպանի ներկայացուցիչների կողմից տրվել են պարզաբանումներ:

«Աջակցություն Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին» Թվինինգ ծրագրի շրջանակներում կազմակերպված «Կանանց իրավունքների հիմնահարցեր. մարտահրավերներն ու հեռանկարները» կլոր սեղանի ընթացքում կանանց իրավունքների պաշտպանությամբ գրադարձ հասարակական կազմակերպությունների հետ քննարկվել են կանանց իրավունքների ապահովման ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման հիմնահարցերը, կանանց հանդեպ ընտանեկան և սեռական բռնության կիրառման արգելմանն առնչվող հարցերը, գենդերային բռնության դեմ պայքարում, իրավապահ և արդարադատության մարմինների կարողությունների զարգացման խնդիրները Հայաստանում, քաղաքական, սոցիալական, մշակութային իրավունքների իրացման խնդիրները: Իսպանիայի օմբուդմանի գրասենյակի ներկայացուցիչները կլոր սեղանի մասնակից հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ներկայացրել են Իսպանիայի փորձը այս ոլորտին առնչվող խնդիրների լուծման ուղղությամբ:

Պաշտպանը բազմաթիվ դիմումներ է ստացել հասարակական կազմակերպություններից, որոնց ընթացք է տրվել՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Այդ դիմումները վերաբերել են քաղաքական, սոցիալական, մշակութային, արդար դատարննության իրավունքներին:

Պաշտպանը հանդիպումներ է ունեցել նաև փախստականների հարցերով գրադարձ հասարակական կազմակերպությունների հետ («Վերադարձ Հայք» փախստականների իրավապաշտպան կազմակերպություն, «Սեր տունը Հայաստանն է», «Միասնություն», «Փրկված սրբություններ», Հայաստանի և Արցախի հույնների «Պատրիդա» ՀԿ, «Ահազանգ»,

«Շահումյան-Գետաշեն» հայրենակցական բարեգործական ընկերություն), որոնք ներկայացրել են փախստականների սոցիալական ոլորտին առնչվող խնդիրները: Պաշտպանը դիմել է համապատասխան պետական մարմիններին՝ նրանց կողմից բարձրացված հարցերի լուծման համար:

## ԲԱԺԻՆ 2.

# ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՊԱՏճԱռՆԵՐԸ

## 2.1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

### 2.1.1. Խոշտանգումների արգելում

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատմի: Զերբարկալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այս նորմը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք է, այն մարդու արժանապատվության և անձեռնմխելիության իրավունքների ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկն է:

Խոշտանգումների դեմ պայքարը գերակա ուղղություն է հանդիսանում թե՛ միջազգային, և թե՛ ներպետական մակարդակներում: Խոշտանգումների արգելման սկզբունքն իր ամրագրումն է ստացել ինչպես միջազգային հանրաճանաչ իրավական ակտերում, այնպես էլ ՀՀ ներպետական օրենսդրությունում:

Այս ոլորտի միջազգային-իրավական ակտերի թվում հատկապես պետք է առանձնացնել 2002 թ-ի դեկտեմբերի 18-ին ՍԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատմի դեմ» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը (ՀՀ ազգային ժողովի կողմից վավերացվել է 2006 թ-ի մայիսի 31-ին): 2008 թ-ի ապրիլի 8-ին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը լրացվել է 6.1-րդ հոդվածով, որով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ճանաչվել է վերոնշյալ կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ:

Ինչպես նշվել է Պաշտպանի նախորդ տարեկան գեկույցներում, խոշտանգումների կանխարգելման սկզբունքը, ընդհանուր առմամբ, իր պատշաճ ամրագրումն է ստացել ՀՀ օրենսդրությունում: Այնուամենայնիվ, դեռ կան որոշ խնդիրներ: Ընդ որում, դրանք վերաբերում են ինչպես ներպետական օրենսդրությանը, այնպես էլ՝ իրավակիրառ պրակտիկային:

Դեռևս 2009 թվականի հոկտեմբերին Պաշտպանը դիմել էր ՀՀ կառավարություն՝ ՀՀ քրեական օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկությամբ: ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը թելադրված է ՍԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայով նախատեսված խոշտանգման հատկանիշների՝ ՀՀ քրեական օրենսգրքում պատշաճ իմալեմենտացման անհրաժեշտությամբ: Այս կապակցությամբ դեռևս 2000 թ-ի նոյեմբերի 17-ին ՍԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի վերաբերյալ դիտողությունների 37-րդ կետում մտահոգություն էր հայտնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում տրված «խոշտանգում» հասկացությունը չի պարունակում Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված խոշտանգման մի շարք հատկանիշներ, և առաջարկվել էր խոշտանգման հանցակազմը համապատասխանեցնել Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված բնորոշմանը:<sup>12</sup> Ավելին, ՍԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի՝ 2007 թ-ի նոյեմբերին Կոնվենցիայի 2-րդ հոդվածի առնչությամբ արված ընդհանուր մեկնաբանության մեջ շեշտվում է, որ մասնակից պետությունները պարտավոր են քրեականացնել խոշտանգման հանցակազմը՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված հատկանիշներով:<sup>13</sup>

Նշված նախագծով Պաշտպանի կողմից առաջարկվել էր պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների գլխում սահմանել «Խոշտանգում» հանցակազմ՝ հիմնվելով Կոնվենցիայի և Կոմիտեի կողմից արված ընդհանուր մեկնաբանություններով տրված բովանդակության վրա, տերմինարանական խառնաշփոթը բացառելու նպատակով ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված «կենցաղային» հանցագործությունը և դրա առանձին տարրերը միավորել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով սահմանված «ծեծ» հանցակազմի ներքո, ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «խոշտանգմամբ» բառը և այն նախատեսել նույն հոդվածի 2.1-րդ մասում՝ ապահովելով տարրերակած մոտեցում խոշտանգման և բռնության այլ ձևերի միջև:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելուն, ապա դրանք պայմանավորված են ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորություններով, մասնավորապես՝ խոշտանգման զոհերին փոխհատուցում տրամադրելու պետության պարտավորությամբ:

Ընդ որում, հաշվի առնելով խոշտանգման հանցակազմի՝ տարրեր երկրների քրեական օրենսգրքերում ամրագրման միջազգային պրակտիկան՝ Պաշտպանն առաջարկել էր ՀՀ քրեական օրենսգրքում խոշտանգման հանցակազմի ամրագրման երկու տարրերակ:

<sup>12</sup> Տե՛ս, Concluding observations of the Committee against Torture. Armenia. 17/11/2000. COMMITTEE AGAINST TORTURE. Twenty-fifth session. 13-24 November 2000:

<sup>13</sup> Տե՛ս, Committee against Torture, General comment N2, Implementation of Art. 2 by States parties, [http://www2.ohchr.org/english/bodies/cat/docs/CAT.C.GC.2.CRP.1.Rev.4\\_en.pdf](http://www2.ohchr.org/english/bodies/cat/docs/CAT.C.GC.2.CRP.1.Rev.4_en.pdf)

Սույն թվականի հոկտեմբեր ամսին ՀՀ արդարադատության նախարարության կողմից Պաշտպանի կարծիքին էր ներկայացվել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված՝ խոշտանգման հանցակազմը համապատասխանեցնել ՄԱԿ-ի վերոնշյալ կոնվենցիայի դրույթներին: Ընդ որում, նախագծում ամրագրված դրույթները հիմնականում համապատասխանում են 2009 թ-ի հոկտեմբերին Պաշտպանի կողմից ներկայացված նախագծի առաջարկություններին: Պաշտպանի կարծիքին ներկայացված նախագծի հիմնական տարրերությունները սանկցիաների մեջ են:

2010 թ-ի ընթացքում Պաշտպանի կողմից ստացված բողոքների ուսումնասիրության արդյունքները վկայում են այն մասին, որ իրավակիրառ պրակտիկայում օրենքների պահանջները միշտ չեն, որ լիարժեք կերպով կյանքի են կոչվում: Ընթացիկ տարում ևս Պաշտպանը ստացել է բազմաթիվ դիմում-բողոքներ ՀՀ ԱԱԾ, Ռատիկանության, ՀՔԾ աշխատակիցների կողմից դրսերքած դաժան, անմարդկային, պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և խոշտանգումների, անձանց ծեծի ենթարկելու, բռնությամբ և սպառնալիքի ազդեցությամբ ցուցմունքներ կորզելու վերաբերյալ:

Ընդ որում, հաշվետու տարում խոշտանգումների վերաբերյալ դիմում-բողոքների թիվը զգալիորեն աճել է:

## 2.1.2 Արդար դատաքննության իրավունք

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով ամրագրված յուրաքանչյուրի՝ արդար դատաքննության իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության և ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկն է: Այն միաժամանակ իրավունքի և օրենքի գերակայության սկզբունքի, ժամանակակից իրավական պետության կարևորագույն տարրերից է: Սահմանադրությամբ ամրագրված և երաշխավորված այս իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից, թերևս, ամենակիրառականն է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների ընդհանուր թվի մոտ կեսը կազմում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածով կայացրած վճիռները: ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումները նույնպես վկայում են այն մասին, որ գործերի մեծամասնությունում օրենքի նորմերն անվավեր և հակասող են ճանաչվել՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին չհամապատասխանելու հիմքով:<sup>14</sup>

<sup>14</sup> Տե՛ս, ՀՀ Սահմանադրության մեկնարաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010թ.:

Արդարադատության պատշաճ իրականացումը բնութագրվում է երկու հիմնական կողմերով՝ ինստիտուցիոնալ, այն է՝ անկախ և անկողմնակալ դատական իշխանության, դատարանների առկայությամբ և դատավարական, այն է՝ քաղաքացիական և քրեական գործերի արդար քննությամբ:

2009 թ-ի դեկտեմբերին «Պաշտպանը հանդես եկավ «Արդար դատաքննության իրավունքի ապահովումը ՀՀ-ում» վերտառությամբ արտահերթ իրապարակային գեկույցով: Զեկույցում անդրադարձ է կատարվել կողմերի հավասարությանն ու մրցակցությանը՝ որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրատարի, և դրա իրացմանը քրեական գործերի դատական քննության ընթացքում, ինչպես նաև վերլուծվել են սեփականությանն առնչվող վեճերը քննելիս գործի արդարացի քննության ապահովման հիմնախնդիրները: «Պաշտպանը բազմից նշել է այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում արդար դատաքննության իրավունքի ապահովումը հեռու է բավարար լինելուց: ՀՀ իրավակիրառ պրակտիկայում արդար դատաքննության իրավունքի խախտումները հաճախ պայմանավորված են ՀՀ օրենսդրությունում առկա թերություններով, առանձին հարցերի ոչ լիարժեք իրավական կարգավորմամբ: Բացի այդ, ՀՀ-ում դատարանները դեռևս լիովին չեն ձերբագատվել քրեական հետապնդման մարմնին հարելու՝ նախկին քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված իրենց կարգավիճակից և շատ դեպքերում դեռ շարունակում են կրել դատախազական համակարգի ազդեցությունը: Վերջինս իր հերթին բերում է այն բանին, որ անարդարացիորեն փոխվում է դատարանի՝ իբրև արդարադատությունը մարմնավորողի դերն ու նշանակությունը՝ հանգեցնելով դատարանների նկատմամբ հասարակության վստահության կորստին: Այս առումով անհրաժեշտ է արմատական փոփոխության ենթարկել դատական իշխանության կրողների իրավամտածողությունը, ՀՀ դատական համակարգը պետք է զարգանա ինքնակառավարման ուժեղացման ճանապարհով՝ ապահովելու համար նրա իրական անկախությունն ու անկողմնակալությունը:

Արդար դատաքննության իրավունքն ընդգրկում է այնպիսի բաղադրատարեր, ինչպիսիք են օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանը, գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը, իրապարակային դատաքննության իրավունքը, կողմերի հավասարությունը և մրցակցությունը, անմեղության կանխավարկածը, հանցագործության մեջ յուրաքանչյուր մեղադրվողի իրավունքները և այլն:

Արդար դատաքննության իրավունքը հավասարապես կարևորվում է ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական գործերով արդարադատություն իրականացնելիս: Մարդու իրավունքների ապահովման խնդիրը չափազանց կարևոր է և արդիական՝ պետական գործունեության բոլոր ոլորտներում ու իրավունքի բոլոր ճյուղերում, սակայն այն առավել իրատապ է քրեական դատավարությունում: Եվ որքան էլ կարևոր են հասարակության բարեկեցության ու պետության կայունության ապահովման գործում

հանցավորության դեմ իրականացվող պայքարը և այս ոլորտում ձեռք բերվող հաջողությունները, ամեն դեպքում, պատասխանատվության պետք է ենթարկվեն միայն իրական մեղավորները, ինչի ապահովմանն է կոչված արդար դատաքննության իրավունքը: Հակառակ պարագայում քրեական դատավարությունը կորոցնի իր սոցիալական նշանակությունը՝ հանցավորության դեմ պայքարի արդյունավետ միջոցից վերածվելով հաշվեհարդարի գործիքի: Այս առումով Եվրոպական չափանիշներին համապատասխան օրենսդրության առկայությունն, ինքնին, անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ նշված չափանիշներին համահունչ քրեական դատավարություն ունենալու համար: Անգամ կատարյալ օրենսդրության պայմաններում քրեական դատավարությունը հեռու կլինի ժողովրդավար լինելուց, եթե չապահովվի այդ չափանիշներին համապատասխան կիրառություն:

Արդար դատաքննության իրավունքի երաշխավորման տեսանկյունից, անշուշտ, կարևորվում է կողմերի հավասարության ապահովումը դատավարության մասնակիցների կողմից դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունք դրսերելու համար պատասխանատվության հարցում:

2009 թվականի հունիսին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմում էր ներկայացրել Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներին համապատասխանության հարցը: ՀՀ քրեական օենսգրքի վերոնշյալ նորմի վերլուծությունը ցույց էր տալիս, որ Օրենսդիրը դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսերող սուբյեկտներ է դիտում միայն վկային, տուժողին և պաշտպանին: Վերոգրյալ նորմը անհավասար դրության մեջ էր դնում, մասնավորապես, պաշտպանին՝ դատավարության մյուս մասնակիցների, հատկապես՝ մեղադրողի համեմատ, քանզի նույնային արարքի համար պաշտպանը կարող էր ենթարկվել քրեական հետապնդման, իսկ մեղադրողը և մյուսները՝ ոչ: Բացի այդ, դրանով սահմանափակվում էր դատարանի՝ իր նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսերած մեղադրողին և մյուսներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը: Արդյունքում իրավանորմն անհավասար դրության մեջ էր դնում քրեական դատավարության կողմերին՝ խորականություն սահմանելով նրանց նկատմամբ իրավական վերաբերմունքի մեջ:

ՀՀ քրեական օրենսգրքի նշված նորմը, այդպիսով, հակասության մեջ էր մտնում ինչպես կողմերի հավասարության և մրցակցության վերաբերյալ Եվրոպական չափանիշների, այնպես էլ ՀՀ Սահմանադրության՝ օրենքի առջև բոլորի հավասարության, դատական պաշտպանության իրավունքի, կողմերի հավասարությանը վերաբերող դրույթների հետ:

Այս կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թ-ի հունվարի 14-ի թիվ 851 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ այն կիրառելի չէ նաև դատավարության այլ մասնակիցների նկատմամբ:

Արդար դատարներության իրավունքի տեսանկյունից կարևորվում է նաև այն իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը, որոնք, Սահմանադրության համաձայն, կարող են սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:

Սույն քվականի նոյեմբերի 23-ին Պաշտպանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանում քննության էր առնվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը:

Վիճարկող նորմը սահմանում էր, որ անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի, սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Սակայն բացառություն է նախատեսվում այն դեպքերի համար, եթե խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու և նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքների հիմնական երաշխիքներից է հենց ՀՀ Սահմանադրությունը, որի 3-րդ հոդվածը սահմանում է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը, այլ իրավունքների հետ միասին, հիմքեր է սահմանում նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումների համար: Մասնավորապես՝ այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և

ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը լուրջ միջամտություն է մարդու անձնական կյանքին, բայց որոշ դեպքերում հանցագործությունների դեմ պայքարում օրենքով հստակ նախատեսված դեպքերում և կարգով այն կարող է պայմանավորված լինել օբյեկտիվ անհրաժեշտությամբ: Սակայն Սահմանադրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում ևս այս իրավունքը չի կարող սահմանափակվել կամայականորեն: Սահմանադրությունը հստակ ամրագրում է, որ այս իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ բացառապես դատարանի որոշմամբ:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքն, ի թիվս այլ օրենսդրական ակտերի, պետք է երաշխավորված լինի նաև քրեական դատավարության համապատասխան նորմերով:

Այս իրավունքի ապահովումը՝ որպես սկզբունք, ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածում, որն արգելում է նշված իրավունքներից ապօրինի գրկելը կամ այդ իրավունքները սահմանափակելը: Ավելին, նույն հոդվածը սահմանում է, որ քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Ընդ որում, օրենսդրական համապատասխան երաշխիքների ամրագրումը հավասարապես վերաբերում է ինչպես քննչական գործողությունների, այնպես էլ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմանը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 281-րդ հոդվածն ամրագրում է, որ դատարանի որոշմամբ են կատարվում այն օպերատիվ-հետախուզական գործողությունները, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ: Իր բնույթով լինելով նախնական դատական վերահսկողության դրսնորումներից մեկը՝ օպերատիվ-հետախուզական նշված միջոցառման նկատմամբ դատական վերահսկողության առկայությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ուղղակիորեն պայմանավորված է ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված պահանջով, համաձայն որի՝ յուրաքանչյուրի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմը, ներկայացնելով վերոնշյալ իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական

միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություների քննարկման կարգը, նշված միջոցառումների իրականացման համար դատական որոշում չեր պահանջում, երբ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել: Վիճարկվող նորմից բխում էր, որ եթե խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել, ապա օպերատիվ-հետախուզական գործունեության մարմինը կարող է առանց դատարանի որոշման իրականացնել այդ գործողությունը: Սակայն այս իրավունքի սահմանափակումն առանց դատարանի որոշման, հիմք ընդունելով միայն տվյալ միջոցառումն իրականացնող օպերատիվ-հետախուզական գործունեության մարմնի որոշումը և խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի՝ նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնությունը, ուղղակիորեն հակասում էր ՀՀ Սահմանադրությանը, քանի որ ՀՀ Սահմանադրությունը միանշանակ սահմանում է, որ յուրաքանչյուրի՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ: ՀՀ Սահմանադրությունը նշված կարգից որևէ բացառություն չի նախատեսում:

Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թ-ի նոյեմբերի 23-ի թիվ 926 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերին հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասը:

## 2.1. 3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք

2010 թ-ի ընթացքում կրկին զգալի թիվ են կազմել անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտմանը վերաբերող դիմում-բողոքները: Ընդ որում, զգալիորեն աճել է ՀՀ ոստիկանության դեմ ուղղված դիմում-բողոքների թիվը, որոնք հիմնականում վերաբերել են քաղաքացիներին ՀՀ ոստիկանության տարբեր բաժիններ անհիմն բերման ենթարկելուն և անազատության մեջ ապօրինի պահելուն, այդ ընթացքում Ոստիկանության աշխատակիցների կողմից դրսնորված դաժան, անմարդկային վերաբերմունքի և խոշտանգումների, ծեծի ենթարկելուն, որպես մեղադրյալ ներգրավված անձանցից բռնությամբ և սպառնալիքի ազդեցությամբ ցուցմունքներ կորպելուն և այլնին:

Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի ապահովման առումով ուշագրավ են անձին բերման ենթարկելու հետ կապված հարաբերությունների իրավական

կարգավորման որոշ հարցեր, որոնք մանրամասն քննարկման առարկա են դարձել Պաշտպանի նախորդ գեկույցներում:

Որպես դրական միտում պետք է արձանագրել այն, որ ընթացիկ տարում հազվադեպ են եղել այն դիմում-բողոքները, որոնք վերաբերում են կալանավորված անձանց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Զերբարկալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի դրույթների խախտմամբ ԶՊՎ-ում օրենքով նախատեսվածից ավելի երկար ժամանակ պահելուն:

Ընթացիկ տարում Պաշտպանի աշխատակազմը ստացել է նաև մի շարք ահազանգեր առ այն, որ Ռոտիկանության աշխատակիցների կողմից սահմանափակվել են անձանց՝ իրավաբանական օգնություն ստանալու և պաշտպան ունենալու իրավունքները՝ վերջիններիս արգելանքի վերցնելիս կամ բերման ենթարկելիս: 2010 թ-ի փետրվարին Պաշտպանը գրություն է ուղղել ՀՀ ոստիկանության պետին՝ մեկ անգամ ևս ուշադրություն իրավիրելով վերոնշյալ խնդրի վրա:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ստացված բողոքների վերլուծությունը վկայում է այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի տարարնույթը մեկնաբանությունները հաճախ պրակտիկայում հանգեցնում են մի իրավիճակի, երբ անձը բերման է ենթարկվում քրեական հետապնդում իրականացնող մարմին և առանց կասկածյալի կամ վկայի կարգավիճակ ստանալու պահվում է արգելանքի տակ, հարցաքննվում է որպես վկա, ընդ որում, այդ ամբողջ ընթացքում նրան արգելվում է օգտվել պաշտպան ունենալու իրավունքից՝ պատճառաբանելով կասկածյալի կարգավիճակ չունենալու հանգամանքով: Հաճախ տվյալ անձի նկատմամբ ձերբակալման արձանագրությունը կազմվում և նրան հայտարարվում է այս բոլոր գործողությունների ավարտից շատ ավելի ուշ, ինչից հետո միայն հնարավորություն է տրվում օգտվելու պաշտպան ունենալու իրավունքից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այս դրույթի նման մեկնաբանությունը և դրան համապատասխան ձևավորված իրավակիրառ պրակտիկան հակասում են ինչպես ՀՀ Սահմանադրությանը, այնպես էլ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիային և Եվրոպական դատարանի 5-րդ և 6-րդ հոդվածների կիրառման կապակցությամբ ձևավորված դատական նախադեպերին:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակիորեն երաշխավորում է յուրաքանչյուրի՝ ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքը: Սահմանադրությունը չի պայմանավորում այս իրավունքի իրականացումը ձևական առումով անձին կասկածյալ կամ մեղադրյալ ճանաչելու հանգամանքով, հետևաբար՝ նաև համապատասխան ակտի ընդունմամբ: Անձը պաշտպան ունենալու իրավունքից պետք է

օգտվի ոչ թե ձերքակալման արձանագրությունն իրեն հայտարարելու, այլ փաստացի արգելանքի վերցնելու պահից, հակառակ դեպքում պաշտպան ունենալու իրավունքի իրականացումը կախվածության մեջ կդրվի քրեական հետապնդման մարմնի հայեցողությունից: Փաստացի ձերքակալված լինելու պահից անձի՝ պաշտպան ունենալու իրավունքը ճանաչվել է ինչպես Մարդու իրավունքների ելքոպական դատարանի վճիռներով, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներով:

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է նաև յուրաքանչյուրի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Այս իրավունքի իրականացումը պայմանավորված չէ անձի՝ որպես կասկածյալ կամ մեղադրյալ ճանաչելու հանգամանքով և որևէ պարագայում չի կարող սահմանափակվել՝ ելնելով նրա դատավարական կարգավիճակից:

Ի պատասխան Պաշտպանի գրության՝ քննարկման արդյունքում 03.04.2010 թ-ին ՀՀ ոստիկանության պետն ընդունել է ցուցում «Իրավական ակտի միատեսակ կիրառման մասին», որով ՀՀ ոստիկանության հետաքննություն իրականացնող ստորաբաժանումների պետերին հանձնարարել է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ քերման ենթարկված անձանց խնդրանքով փաստաբան իրավիրելու համար, քերման ենթարկվածին հնարավորություն ընձեռել բացատրություն տալ փաստաբանի մասնակցությամբ, եթե մինչև ձերքակալման արձանագրություն կազմելը կամ խափանման միջոց ընտրելն անհրաժեշտություն է առաջացել անձից վերցնել բացատրություն կամ անցկացնել օպերատիվ հարցում, ինչպես նաև՝ անշեղորեն պահպանել ՀՀ կառավարության 14.06.2007 թ-ի «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշման այլ պահանջները:

#### 2.1.4. Խաղաղ հավաքների իրավունք

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք:

Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքին Պաշտպանը մանրամասն անդրադարձել է 2007, 2008 թվականների տարեկան զեկույցներում: Իսկ սույն թվականին Պաշտպանը հանդես է եկել նաև «ՀՀ-ում խաղաղ հավաքների իրավունքի մասին» արտահերթ հրապարակային զեկույցով:<sup>15</sup>

<sup>15</sup> Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ «ՀՀ-ում խաղաղ հավաքների իրավունքի մասին» արտահերթ հրապարակային զեկույց, Երևան, 2010թ.:

Խաղաղ հավաքների իրավունքն իրավամբ ժողովրդավարության անկյունաքարերից մեկն է, քաղաքացիական հասարակության ձևավորման, զարգացման կարևոր գործիքը: Հավաքների իրավունքի իրականացումը նաև խոսքի ազատության, ընտրելու և ընտրվելու ու այլ իրավունքների և ազատությունների ապահովման կարևոր երաշխիքներից մեկն է: Արտահերթ զեկույցում **Պաշտպանը** վերլուծել է խաղաղ հավաքների իրավունքի օրենսդրական կարգավորումը ՀՀ-ում, ներկայացրել խաղաղ հավաքների իրավունքի միջազգային իրավական կարգավորման չափանիշները, ուսումնասիրել խաղաղ հավաքների իրավունքի օրենսդրության կիրառման պրակտիկան ՀՀ-ում, ինչպես նաև անդրադարձել ՀՀ-ում խաղաղ հավաքների իրավունքի դատական պաշտպանության ընդհանուր պատկերին:

Թեև հավաքներին վերաբերող հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը 2004 թվականից հետո, ընդհանուր առմամբ, համապատասխանեցվեց միջազգային չափանիշներին, սակայն դրանում տեղ գտած երրեմն ոչ հստակ ձևակերպումները, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող դրույթները պատճառ են դառնում հակասական իրավակիրառ պրակտիկայի: Իրազեկումը քննարկող լիազոր մարմինների գործունեությունում բացակայում է միասնականությունը, ինչն իր հերթին շատ դեպքերում հանգեցնում է իրավական անորոշության և խնդիրներ է առաջացնում իրավակիրառ պրակտիկայում: Մասամբ կամ ամբողջությամբ խախտված են հավաքների իրավունքի հետևյալ դեկավար սկզբունքները.

- հօգուտ հավաքների անցկացման կանխավարկածը,
- խաղաղ հավաքներ պաշտպանելու պետության պարտականությունը,
- օրինականությունը,
- համաշխատությունը,
- լավ վարչարարությունը,
- խտրականության բացառումը:

Արդյունավետ չեն կարող համարվել նաև այս իրավունքի դատական պաշտպանության մեխանիզմները:

Սույն թվականի նոյեմբերին տեղի է ունեցել **Պաշտպանի** և ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից ներկայացված «Հավաքների մասին» օրենքի նախագծի քննարկում, որի նախատակն էր վեր հանել նախագծի հնարավոր բացերը և հետագա լրամշակման փուլում վերացնել դրանք:<sup>16</sup> «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ գործող օրենքի համեմատ (26.12.2008թ. խմբագրությամբ) այս նախագիծն ունի էական առավելություններ: Նախագծում հաշվի են առնված ինչպես գործող օրենքի, այնպես էլ դրա կիրառման պրակտիկայի վերաբերյալ տարբեր անձանց և կազմակերպությունների կողմից կատարված քննադատությունները:

<sup>16</sup> Նախագծին կարող եք ծանոթանալ [www.ombuds.am](http://www.ombuds.am) կայքում:

Ներկայացված նախագիծը զգալի առաջընթաց է ինչպես ձևի, այնպես էլ բովանդակության առումով: Այդ նասին են վկայում միջազգային փորձագետների կողմից նախագծին տրված գնահատականները:

Դրական պետք է գնահատել այն, որ օրենքի նախագծի գործողությունն այլև չի տարածվում բոլոր տեսակի «միջոցառումների» վրա, այլ սահմանափակվում է միայն «հավաքներով»: Այս մոտեցումը պետք է դրական գնահատվի, քանի որ մշակութային միջոցառումները, արարողությունները, ավանդական տոնակատարությունները և սպորտային միջոցառումները բոլորովին այլ բնույթ ունեն, քան մարդկանց այն հավաքները, որոնք Սահմանադրության 29-րդ հոդվածում իրավական պաշտպանության տակ են դրվում: Սահմանադրությունը հանրային հավաքները հատուկ պաշտպանության է ենթարկում այն պատճառով, որ դրանք, ըստ էության, նույն համոզմունքներն ունեցող քաղաքացիների քաղաքական հավաքներ են և հատկապես վտանգված են իրենց քաղաքական ու միաժամանակ հանրային բնույթի պատճառով: Դրական պետք է գնահատել նաև այն, որ գործող օրենքով կարգավորված հավաքների համար որպես ընդհանուր հասկացություն գործածված «միջոցառում» բառից հրաժարվելը վերացրել է նաև «հրապարակային միջոցառումների», «հրապարակային զանգվածային միջոցառումների», «հրապարակային ոչ զանգվածային միջոցառումների» և «այլ միջոցառումների» տարբերակումը: Նման տերմինաբանությունը համոզիչ լինել չի կարող, որովհետև այս հասկացությունները սահմանված են խիստ արիեստականորեն, իսկ դրանց՝ իրարից սահմանազատումը մասամբ անհասկանալի է և անհաջող: Այդ տերմինաբանական խնդիրները վերացել են օրենքում «հավաքներ» տերմինով սահմանափակվելու շնորհիվ: Մյուս կողմից, պարզ ու հասկանալի է հավաքների երկու հիմնական տիպերի միջև տարբերակումը՝ իրազեկման ենթակա հավաքներ և իրազեկման ոչ ենթակա հավաքներ, լինեն դրանք փոքր, ինքնաբուխ, թե՝ շտապ հավաքներ:

Այս մոտեցումը հեշտացնում է հիմնական իրավունքի իրականացումը, ուստի, սկզբունքորեն նպաստավոր է քաղաքացիների համար, հետևաբար՝ գերադասելի իրավական պետության սահմանադրական սկզբունքների և ժողովրդավարության տեսանկյունից:

Դրական պետք է գնահատել նաև այն, որ նախագծի ընդհանուր դրույթների վերաբերյալ առաջին գլխում սկզբունքների կարգավորման մասով հղում է արվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին: Հավաքների մասին գործող օրենքի համեմատ էականորեն բարելավվում է նաև վարչական մարմինների կողմից իրազեկման ենթակա հավաքի անցկացման հայտի քննարկման պաշտոնական ավարտի հստակ իրավական կարգավորումը. այստեղ ձևակերպված են վարչական մարմնի որոշման հնարավոր իրավական տարբերակները, ինչպես նաև սահմանված է այն իրավական դրույթունը, որն առաջանում է այն դեպքերում, երբ վարչական մարմինը լուություն

Է պահպանում հայտի վերաբերյալ, ոչինչ չի անում և իրազեկման մասին որևէ որոշում չի կայացնում: Հատկապես կարևորվում է այն, որ այստեղ մանրամասն ընթացակարգային սահմանազատում է իրականացվում հավաքների առնչությամբ իրազեկման համակարգի ու թույլատրման համակարգի միջև: Հավաքների մասին գործող օրենքում այս առանցքային հարցը շատ անորոշ է կարգավորված, ինչը իրավական պետության տեսանկյունից բավարար չէ: Հավաքների մասին գործող օրենքի համեմատ նշանակալի առաջընթաց են հանդիսանում ինքնարուխ և շտապ կարգով անցկացվող հավաքների մասին կարգավորումները: Այս դրույթներն ընդլայնում են հավաքներ անցկացնելու մարդու իրավունքը՝ հավաքների անցկացումը կարգավորող իրավունքը քաղաքացիների ազատության հաշվին խիստ ու նաև կարծրացած ընթացակարգային կարգավորումներին ենթարկելու պետության և վարչական մարմինների ավանդական ու լայնորեն տարածված շահագրգորվածության համեմատ: Դրա շնորհիվ այս դրույթներն ուժիղացնում են նաև Սահմանադրության ժողովրդավարական սկզբունքը՝ պետական կարգի ներսում:

Հավաքների մասին գործող օրենքի համեմատ նշանակալի առաջընթաց է նաև հավաքների անցկացման համար պայմաններ առաջադրելու ինստիտուտը, որը գործող օրենքում բացակայում է: Խոսքը վերաբերում է հավաքի կազմակերպիչներին հավաքի անցկացման որոշակի պայմաններ առաջարկելու և այդ պայմանների վերաբերյալ բանակցելու հարցին: Հավաքների իրավունքի արդյունավետ իրականացման հարցում նման ինստիտուտի առկայությունն անհրաժեշտ է: Գործող օրենքը հնարավորություն չի տալիս լիազոր մարմնին և հավաքի կազմակերպիչներին բանակցելու այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են հավաքի անցկացման վայրը, ժամանակը, եղանակը: Նման հնարավորության բացակայությունը, որպես կանոն, բոլոր այն դեպքերում, երբ իրազեկման մեջ նշված հավաքի վայրը կամ ժամանակը փոփոխելու պարագայում հնարավոր կլիներ հավաքի անցկացում, հաճգեցնում է հավաքի անցկացման մերժմանը: Հավաքների մասին գործող օրենքի համեմատ առաջընթաց է նաև այն վայրերի սահմանափակումը, որտեղ արգելվում է հավաքների անցկացումը: Ելնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայից՝ նախագիծը, ի տարբերություն գործող օրենքի, բխում է նրանից, որ քանի դեռ հավաքը շարունակում է մնալ խաղաղ, չի կարող ցրվել Ոստիկանության կողմից: Նախագծի համաձայն Ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, եթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց սահմանադրական իրավունքների կամ հանրության շահերի նկատմամբ անմիջական վտանգը:

Հավաքի մասնակիցների կողմից հավաքը կամովին դադարեցնելու դեպքում միայն Ոստիկանությունն իրավունք ունի ցրել հավաքը:

## 2.1.5. Խոսքի ազատության իրավունք

2010 թ-ին հրապարակված Պաշտպանի արտահերթ հրապարակային գեկույցով՝ Հանրապետությունում խոսքի ազատության իրավունքի ապահովման վերաբերյալ, իրականացվեց խոսքի ազատության համայիր ուսումնասիրություն թե՛ ներպետական օրենսդրության, թե՛ հեռուստատեսության, ռադիոյի և մամուլի ոլորտում վերջին 15 տարիներին ՀՀ-ում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Հետազոտվեցին խոսքի ազատության հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը՝ ուշադրություն հրավիրելով օրենսդրության մեջ տեղ գտած հակասություններին ու թերություններին, ինչպես նաև՝ խոսքի ազատության վիճակը վատքարացնող դրույթներին: Զեկույցում անդրադարձ է կատարվել նաև լրագրողների իրավունքներին, կոնկրետ օրինակներով վերլուծվել են նրանց իրավունքների խախտումների բնույթը, բովանդակությունը, վեր են հանվել այդ խախտումների պատճառները: Զեկույցում կատարված վերլուծությունից ելնելով՝ հիմնավորվել են մի շարք առաջարկներ, որոնց հետևողական իրականացումը մեծապես կարող է նպաստել խոսքի ազատության ընդհանուր վիճակի բարելավմանը:

Հակիրճ անդրադառնանք խոսքի ազատության ու դրան հարակից իրավունքները և դրանց առնչվող հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտերին վերաբերող խնդիրներին.

1. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի կիրառման հիմնական խնդիրները պայմանավորվել են հեռուստաընկերությունների լիցենզավորման ընթացակարգով, պայմաններով և պահանջներով: Թեպետ Օրենքը կարգավորել է այս հարաբերությունները, սակայն գործնականում դրանք սուբյեկտիվիզմի, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք են տվել: Խոսքը մասնավորապես հետևյալ դրույթների մասին է.

- հեռուստաընկերության և (կամ) ռադիոընկերության բիզնես ծրագիրը և դրա իրատեսականությունը,
- դիմողի՝ բազմակարծությունը խթանելու կարողությունը,
- ֆինանսական հնարավորությունների գնահատման մեխանիզմները,
- դիմումում նշված տվյալները չեն համապատասխանում իրականությանը,
- բացակայում են հեռուստառադիոհաղորդումների կազմակերպման տեխնիկական հնարավորությունները կամ հայտարարված տեխնիկական հնարավորությունները բավարար չեն,
- դիմողի ներկայացրած բիզնես ծրագրի իրատեսականությունը և (կամ) ֆինանսավորման աղբյուրները փաստաթղթային առումով հիմնավորված չեն:

Այդ դրույթներն ունեն պարզեցման, հստակեցման կարիք՝ սուբյեկտիվ մեկնաբանությունների կատարման հնարավորությունը բացառելու նպատակով:

Մանրամասն անդրադարձ է կատարվել նաև Հեռուստատեսության և ուղիղոյն ազգային հանձնաժողովի կազմավորման կարգին, անկախության երաշխիքներին:

Ներկայացվել են համապատասխան առաջարկություններ մասնավորապես օրենսդրական փոփոխությունների կատարման ուղղությամբ, որոնք նպատակ ունեն կազմավորել այնպիսի հանձնաժողով, որը կարտացողի երկրի քաղաքական-հասարակական բազմազանությունը և կապահովի ՀՌԱՀ-ում ՀԿ-ների և մասնագիտական ընկերակցությունների ներկայացուցիչների մասնակցությունը:

Հանրային հեռուստատեսության խորհրդի գործունեության հասցեականության և անկախության երաշխիքների ամրապնդման առումով ևս ներկայացվել են համապատասխան առաջարկություններ: Մասնավորապես առաջարկվել է, որ Խորհուրդն անցկացնի տարբեր կուսակցությունների համար եթերի մատչելիության և դրանց գործունեության լուսաբանման շարունակական դիտարկում, որի արդյունքները պետք է հրապարակվեն: Առաջարկվել է մշակել անհրաժեշտ մեխանիզմներ՝ ոլորտի հասարակական կազմակերպություններին ու ստեղծագործական միավորումներին Խորհրդի ձևավորման կարգում մասնակից դարձնելու համար:

Միջազգային կազմակերպությունների և փորձագետների կողմից ներկայացված եզրակացությունների լույսի ներքո մանրամասն անդրադարձ է կատարվել նաև թվային հեռարձակման ներդրման հարաբերությունների կարգավորման խնդիրներին:

«Հեռուստատեսության և ուղիղոյն մասին» ՀՀ օրենքի լրամշակման նպատակով ստեղծված աշխատանքային խումբը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գլխավորությամբ, իրականացնում է հենց թվային հեռարձակմանը անցում կատարելու անհրաժեշտ իրավական կարգավորումների լրամշակումը՝ մասնավոր մուլտիպլեքս օպերատորների գործունեության իրավական հիմքերի սահմանման, լիցենզավորման ընթացակարգերի հստակեցման, ՀՌԱՀ-ի և Հանրային հեռուստատեսության խորհրդի անկախության երաշխիքների ամրապնդման, թվային հեռարձակմանը անցում կատարելու հետ կապված այլ հարցերի կարգավորման նպատակով:

2. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը բերել է հիմնականում հետևյալ վիճահարույց կարգավորումների բացահայտմանը. Օրենքը, սահմանելով գրաբննության ամենավտանգավոր ձևի՝ նախնական համաձայնեցման արգելքը, այդուհանդերձ, նախատեսում է լրատվության միջոցի տարածման արգելման հնարավորությունը: Անհասկանալի է այն մեխանիզմը, որով կարելի է ստուգել լրատվության միջոցի բովանդակությունը՝ մինչև դրա տարածումը: Այդ իսկ պատճառով առաջարկվել է օրենքով նախատեսել պատասխանատվություն՝ որոշակի դեպքերում որոշակի

տեղեկատվության տարածման համար, սակայն լրատվության միջոցի որևէ թողարկման տարածման արգելը դիտարկվել է անթույլատրելի: Այս հանգամանքն օրենքի համապատասխան դրույթն ընդհանրապես հաշվի չի առնում, իր ձևակերպումների մեջ այն հատակ ու որոշակի չեւ կարող է որևէ մարմնի, այդ թվում և դատարանին, գրաբնություն իրականացնելու հնարավորություն ընձեռել:

3. Զեկույցում կրկին անդրադարձ է կատարվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին, որի կիրառման խնդիրները Պաշտպանի կողմից մշտապես ներկայացվել են տարեկան գեկույցներում, ինչպես նաև՝ իրավասու պետական մարմիններին՝ դրանց հրատապ լուծման նպատակով:

Չնայած Օրենքն արդեն երկար ժամանակ է, ինչ գործում է, սակայն Կառավարությունը դեռևս չի ընդունել օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ակտերը, որոնք պետք է հեշտացնեն Օրենքի կիրառումը: Խոսքն Օրենքում նշված երկու կարգերի մասին է. հոդված 5-ում՝ «Տեղեկատվության գրանցում, դասակարգում ու պահպանում» և 10-ում՝ «Տեղեկատվության տրամադրման պայմաններ»:

Հոդված 5-ը և 10-ը տեղեկատվության ազատության կարևոր երաշխիքներ են և չպետք է ենթակա լինեն փոփոխությունների կամ լրցումների:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը մասնավորապես վերաբերում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրմանը, որը պետք է իրականացվի ՀՀ կառավարության սահմանած կարգով: Մինչդեռ, 2003 թ-ի նոյեմբերի 15-ից մինչև օրս, Կառավարության որոշմամբ նման կարգ չի սահմանվել: Արդյունքում որոշ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ հրաժարվում են ըստ պահանջի տեղեկատվություն տրամադրել՝ պատճառաբանելով նշված կարգի բացակայությունը:

Բացի այդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն տեղեկատվության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան, սակայն մինչ օրս ՀՀ կառավարության կողմից սահմանված չէ այդ մարմինը:

Զեկույցով վերլուծվել են նաև լրագրողների հավատարմագրման կարգին վերաբերող իրավական ակտերը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, Վարչական իրավախախումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված՝ խոսքի ազատության իրավունքի հետ առնչվող դրույթները:

Կատարվել է նաև մամուլում խոսքի ազատության սահմանափակման դեպքերի, հեռուստատեսության և ռադիոյի ներկա վիճակի, ինչպես նաև խոսքի ազատության

սահմանափակման դեպքերի՝ կապված «Ա1+» հեռուստաընկերության հետ, «Ազատություն» ռադիոկայանի գործունեության խոչընդոտումների վերլուծություն:

Եզրափակիչ մասում կատարվել են հատակ հետևողաբար ներկայացվել առաջարկություններ՝ ոլորտի բարելավման ուղղությամբ, այդ թվում՝ խոսքի ազատության սահմանափակման երևոյթների դեմ համակարգային պայքարի միջոցառումների մշակման մասով:

## 2.2 Տնտեսական և սոցիալական իրավունքներ

### 2.2.1. Աշխատանքային իրավունքներ

2010 թ-ը բնորոշվեց աշխատանքային օրենսդրության շրջադարձային փոփոխություններով, որոնք, ըստ օրենսդրական նախագծերի փաթեթի հեղինակների հիմնավորումների, պայմանավորված էին գործարար միջավայրի բարելավման, աշխատանքային հարաբերությունների ծագման և դրանց կարգավորման մեխանիզմների պարզեցման անհրաժեշտությամբ: Արդյունքում, սակայն, այս փոփոխությունների փաթեթը հանգեցնում էր աշխատողների իրավունքների անհամաշափ սահմանափակմանը՝ գործառումների գործունեության դյուրացման հաշվին, մասնավորապես՝ բերելով աշխատողի իրավական վիճակի անորոշության, աշխատանքային պայմանագրի բովանդակության բացահայտման հետ կապված հնարավոր վեճերի առաջացման, աշխատողի խախտված իրավունքների պաշտպանության հնարավորությունների նվազման:

1. «ՀՀ աշխատանքային օրենսդրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի՝ առաջին ընթերցմամբ (27.04.2010թ.) ընդունված նախագծում հստակորեն տարբերակված էին բանավոր և գրավոր աշխատանքային պայմանագրերը, որոնք հավասարապես դիտվում էին որպես աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք: Ակնհայտ է, որ բանավոր պայմանագրի դեպքում էականորեն նվազում է այդ պայմանագրի պայմանների բովանդակության բացահայտման և աշխատողի խախտված իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունը:

Աշխատանքային հարաբերությունների որոշակիության ապահովման, գործնականում թե՛ աշխատողի, և թե՛ գործառուի կողմից աշխատանքային պայմանագրի պայմանների կատարման, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ Պաշտպանն առաջարկել էր նախատեսել աշխատանքային պայմանագրի միայն գրավոր ձևով կնքման իրավական հնարավորություն: Աշխատանքային

օրենսգրքի տեքստից ընդհանրապես հանվեց «քանավոր աշխատանքային պայմանագիր» հասկացությունը և որպես աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք նախատեսվեց միայն գրավոր աշխատանքային պայմանագիրը կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտը:

Միևնույն ժամանակ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածով անօրինական ճանաչվեց առանց օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրի կատարվող աշխատանքը:

Դրա արդյունքում Աշխատանքային օրենսգրքի երկու հոդվածների միջև առաջացավ ակնհայտ հակասություն: Սի դեպքում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտը համարվում է աշխատանքային հարաբերությունների ծագման օրինական հիմք, իսկ մյուս դեպքում առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կատարվող աշխատանքը, նույնիսկ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի առկայության պայմաններում, փաստորեն, համարվում է անօրինական:

Այս պայմաններում միանգամայն անկանխատեսելի է, թե ինչ ուղղությամբ կգնա իրավակիրառ պրակտիկան և արդյոք ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխան դրույթները իրավակիրառ պրակտիկայում, դրանց տրվող իմաստով, համապատասխանելու են իրավական որոշակիության սկզբունքին, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մյուս պահանջներին:

2. Նախագծի առաջին տարբերակում առաջարկվող փոփոխությամբ սահմանվում էին մինչև տասնվեց տարեկան անձանց՝ ժամանակավոր աշխատանքներում ընդգրկելու, ինչպես նաև մինչև տասնչորս տարեկան անձանց՝ ստեղծագործական աշխատանքների կատարմանն ընդգրկելու կարգերը:

Օրենսգրքի 17-րդ հոդվածում առաջարկվող 2.2 մասով սահմանվում էր մինչև տասնչորս տարեկան անձանց՝ ստեղծագործական աշխատանքների կատարմանն ընդգրկելու կարգը:

Առաջարկվող կարգի առնչությամբ Պաշտպանը բարձրացրեց նշված դրույթի՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Նվազագույն տարիքի մասին ԱՍԿ թիվ 138 կոնվենցիայի պահանջներին ուղղակի հակասության խնդիրը:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն իրավասու մարմինը՝ գործատուների և աշխատողների շահագրգիռ կազմակերպությունների առկայության դեպքում դրանց հետ խորհրդակցելուց հետո, կարող է անհատական դեպքերում շնորհված քույլտվությունների ճանապարհով բացառություններ անել Կոնվենցիայի 2-րդ հոդվածով գրադադարությունը կամ աշխատանքը արգելող դրույթներից այնպիսի նպատակի համար, ինչպիսին է մասնակցությունը գեղարվեստական ելույթներին: Տրված քույլտվությունը պետք է

սահմանափակի այդպիսի աշխատանքի ժամաքանակը և սահմանի այն պայմանները, որոնցում կարող է իրականացվել զբաղվածությունը կամ աշխատանքը:

Հետևաբար, բացի Նախագծով նախատեսված անձանց համաձայնությունից, մինչև 14 տարեկան անձանց համապատասխան ստեղծագործական աշխատանքներում ընդգրկելու համար պետք է նախատեսվեր նաև իրավասու մարմնի թույլտվությունը (որպես այդպիսի մարմին կարող է հանդես գալ խնամակալության և հոգաբարձության մարմինը), իսկ թույլտվությամբ պետք է սահմանվեր նաև օրական առավելագույն աշխատաժամանակը և այն պայմանները, որոնցում կարող է իրականացվել աշխատանքը: Ավելին, աշխատանքի ընդունման թույլտվությունը պետք է տրվեր միայն համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների հետ խորհրդակցելուց հետո:

Այսուհետև, վերը նշված դրույթների և ԱՍԿ կոնվենցիայի միջև հակասության վերացման փոխարեն Նախագծից ընդհանրապես հանվեցին մինչև 14 տարեկան անձանց ստեղծագործական աշխատանքներում ընդգրկելու հնարավորությունը՝ սահմանելով ԱՍԿ թիվ 138 կոնվենցիայի պահանջներին համապատասխանող կարգ՝ հատկապես ելեկով տվյալ կատեգորիայի անձանց՝ փաստացի նման աշխատանքներում ներգրավված լինելու իրողությունից:

Գտնում ենք, որ ՀՀ աշխատանքային օրենսդրությունը պետք է նախատեսի մինչև 14 տարեկան անձանց ստեղծագործական աշխատանքներում ընդգրկելու հնարավորությունը՝ սահմանելով ԱՍԿ թիվ 138 կոնվենցիայի պահանջներին համապատասխանող կարգ՝ հատկապես ելեկով տվյալ կատեգորիայի անձանց՝ փաստացի նման աշխատանքներում ներգրավված լինելու իրողությունից:

3. Նախագծով նախատեսվում էր փոփոխության ենթարկել նաև գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը: Մասնավորապես հոդվածում ավելացվում էին պայմանագրի լուծման մի շաբթ նոր հիմքեր, որոնցից մի քանիսի առնչությամբ Պաշտպանը հանդես եկավ խիստ քննադատությամբ, որը հիմնականում վերաբերում էր հետևյալ հիմքերին.

- աշխատողի կողմից քաղաքացիների սահմանադրական իրավունքները ուժնահարող գործողություններ կատարելուն,
- իր և այլոց համար անօրինական եկամուտներ ստանալուն կամ այլ անձնական դրդապատճառներով պաշտոնական դիրքը օգտագործելուն, ինչպես նաև՝ կամայականություն դրսևորելուն:

Վերոգրյալ ձևակերպումները ներառող հիմքերը, իրենց մեջ պարունակվող իրավական անորոշությունից ելնելով, ցանկության դեպքում կարող էին ենթարկվել ամենակամայական մեկնաբանությունների՝ ի վերջո դառնալով գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման «օրինական» հիմք: Ավելին, Նախագծով այս հիմքերի առկայությունը չէր պայմանավորվում իրավասու մարմնի որոշմամբ:

Պայմանագրի լուծման հիշատակված հիմքերը նախատեսող դրույթները, բարերախտաբար, հանվեցին Նախագծի վերջնական տարրերակից:

Աշխատանքային օրենսդրության փոփոխությունների փաթեթի վերաբերյալ Պաշտպանի կողմից ներկայացվել էին նաև մի շարք այլ դիտողություններ: Մասնավորապես՝ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրերի կնքման հիմքերի ոչ սպառիչ ցանկի նախատեսման, երեխա խնամող կանանց՝ օրենքով սահմանված երաշխիքների և արտոնությունների ծավալի նվազեցման, աշխատողներին ներքին և անհատական իրավական ակտերին ծանոքացնելու գործատուի պարտականության, արհեստակցական միությունների և աշխատողների ժողովի կողմից ընտրված մարմնի, նրանց իրավունքներին և գործունեությանն առնչվող դրույթների վերաբերյալ, որոնք ընդունվել են մասնակիորեն:

Պաշտպանի՝ դեռևս 2009 թ-ի տարեկան գեկույցում բարձրացվել են նաև մի շարք այլ հիմնախնդիրներ՝ աշխատանքային պայմանագրի լուծման կարգի, օդային երթևեկության առավել բարդության որոշման կանոնակարգերի սահմանման անհրաժեշտության վերաբերյալ, որոնք այսօր ել շարունակում են մնալ արդիական:

2010 թ-ի ընթացքում Պաշտպանի կողմից աշխատանքային իրավունքների վերաբերյալ ստացված բողոքները հիմնականում վերաբերել են հետևյալ խնդիրներին.

- զբաղվածության գործակալությունների կողմից թույլ տրվող չարաշահումներին,
- աշխատանքից ազօրինի ազատման դեպքերին,
- աշխատանքային պայմանագրերի լուծման ընթացակարգերի խախտմանը,
- հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար չվճարմանը,
- աշխատանքային հարաբերություններում գործատուների կողմից դրսևորվող կամակայականություններին՝ կապված աշխատաժամանակին և հանգստի ժամանակին վերաբերող ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված պահանջների անտեսման հետ:

Այս բողոքները հիմնականում փոխանցվել են Աշխատանքի պետական տեսչություն՝ հսկողություն սահմանելով քննարկման հետագա ընթացքի նկատմամբ, քանի որ դրանց ըստ էության լուծումը դուրս է եղել Պաշտպանին վերապահված լիազորությունների շրջանակից:

## 2.2.2. Սոցիալական ապահովության իրավունք

2009 թ-ի տարեկան գեկույցում վերհանված խնդիրները՝ կենաքաղակային հարաբերությունների թերի օրենսդրական կարգավորման, մասնավորապես՝ «Գիտական և

գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի կիրառման կարգի վերաբերյալ իրենց արդիականությունը պահպանել են նաև այսօր: Նման կարգի բացակայության հետևանքով որոշ կատեգորիայի անձինք դեռևս զրկված են մնում օրենքով իրենց վերապահված իրավունքի իրականացման հնարավորությունից:

Մեկ այլ համակարգային խնդիր, որին Պաշտպանն առնչվել է նախորդ տարվա ընթացքում, պայմանավորված է կենսարոշակային օրենսդրությունում պարբերաբար կատարվող փոփոխություններով, որոնց կատարման ընթացքում հաշվի չեն առնվում նախորդ իրավակարգավորման պայմաններում աշխատած, այժմ արդեն կենսարոշակառու հանդիսացող անձանց իրավունքների պահպանման երաշխիքները:

Սպահովագրական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները Օրենսդրի կողմից պարբերաբար ենթարկվել են փոփոխությունների: Արդյունքում, այս ցանկից մասնավորապես հանվել է նպատակային ասպիրանտուրայում սովորելու ժամանակահատվածը: Թեև «նպատակային ասպիրանտուրա» հասկացությունը գործող օրենսդրությամբ այլևս նախատեսված չէ, սակայն նախկինում նպատակային ասպիրանտուրայում սովորելու ժամանակահատվածը հաշվառվում էր կենսարոշակի իրավունքի իրականացման համար անհրաժեշտ աշխատանքային ստաժում:

Հաշվի առնելով կենսարոշակային օրենսդրության առանձնահատկությունը՝ Օրենսդրի կողմից նախկինում սահմանված պայմանների փոփոխումը պետք է իրականացվի այնպիսի եղանակով, որպեսզի պահպանվի քաղաքացիների վստահության սկզբունքը օրենքի և պետության գործողությունների նկատմամբ, որը ենթադրում է իրավական կարգավորման ողջամիտ կայունություն և կամայական փոփոխությունների կատարման անթույլատրելիություն գործող նորմերի համակարգում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, քաղաքացիներին հնարավորության ընձեռում՝ որոշակի անցումային շրջանում փոփոխություններին համակերպվելու համար: Դրանով են պայմանավորված քաղաքացիների օրինական ակնկալիքները, որ իրենց կողմից ձեռք բերված իրավունքը, գործող օրենսդրության համաձայն, կհարգվի իշխանությունների կողմից և կիրականացվի:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է հետևյալ սկզբունքը. «Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»: Կենսարոշակային օրենսդրության պարագայում, երբ անձը կենսարոշակի իրավունքը ձեռք է բերում աշխատանքային գործունեության իրականացումից սկսած շատ ավելի ուշ՝ կենսարոշակային տարիքի հասնելուց հետո, վատթարացնող օրենքի՝ հետադարձ ուժ չունենալու սկզբունքը պետք է ենթադրի հետևյալը. այն անձինք, ովքեր կենսարոշակային իրավունքներ են ձեռք բերել մինչև նոր իրավական կարգավորման

ներմուծումը, պետք է պահպանեն նախկինում ձեռք բերված կենսաթոշակի իրավունքները՝ ձեռքբերման պահին գործող օրենսդրության նորմերին և պայմաններին համապատասխան:

Նշված մեխանիզմը պետք է ստանա օրենսդրական ամրագրում, և վերջինիս կիրառման նպատակով պետք է մշակվի համապատասխան մոդել:

2010 թ-ին սոցիալական ապահովության իրավունքին առնչվող հաջորդ կարևոր խնդիրը պայմանավորվեց «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, որով զգալի փոփոխության ենթարկվեցին ժամանակավոր անաշխատունակության նպաստների տրամադրման կարգը և պայմանները, նշված օրենքով սահմանվեց ժամանակավոր անաշխատունակության նպաստի առավելագույն չափ (նվազագույն ամսական աշխատավարձի հնգապատիկի չափով): Օրենքով նախատեսվեց նպաստի հաշվարկման նոր կարգ՝ ոչ թե օրացուցային, այլ ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի աշխատանքային օրերի հաշվարկից ելնելով, որի արդյունքում տարվա հինգ ամիսների ընթացքում ժամանակավոր անաշխատունակության ծագման պարագայում նվազեց տրամադրվող նպաստի չափը: Ժամանակավոր անաշխատունակության նպաստների սահմանման և տրամադրման կարգում օրենքով նախատեսվեցին նաև մի շարք այլ փոփոխություններ:

Մինչ օրենքի ընդունումը հղության ու ծննդաբերության նպաստների տրամադրման կարգը սահմանվում էր «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով: Ըստ այդ օրենքի՝ հղության ու ծննդաբերության նպաստի հաշվարկը կատարվում էր միջին աշխատավարձի 100 տոկոսի չափից ելնելով, այն է՝ միջին աշխատավարձը բաժանվում էր մեկ ամսվա միջին օրերի և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության օրացուցային օրերի թվով (140): Վերոգրյալ սկզբունքով հաշվարկվող նպաստի առավելագույն չափ օրենքով սահմանված չէր: Նույն օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ժամանակավոր անաշխատունակության բոլոր դեպքերի համար գործատուն վարձու աշխատողներին ապահովագրական նպաստը վճարում է տվյալ ամսվա համար հաշվարկված սոցիալական վճարների հաշվին:

Ի տարբերություն վերոնշյալ օրենքի՝ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանվեց նպաստի առավելագույն չափ՝ միջին ամսական աշխատավարձի չափից ելնելով (եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձի չափը գերազանցում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի հնգապատիկը, ապա նպաստը հաշվարկվում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հնգապատիկից՝ սույն հոդվածով սահմանված կարգով):

Կարենորվում է նաև այն հանգամանքը, որ ինչպես նախկին իրավակարգավորման համաձայն, այնպես էլ նոր օրենքով (հոդվ. 24) սահմանված է, որ նպաստի՝ վճարման ենթակա գումարները գործատուն վճարում է տվյալ ամսվա համար հաշվարկված սոցիալական վճարների հաշվին: Ընդ որում, նպաստի իրավունքը պայմանավորվում է օրենքով սահմանված կարգով և չափով պարտադիր սոցիալական ապահովության վճարների կատարման հանգամանքով (հոդվ. 4, 2-րդ մաս):

Օրենքով նախատեսված՝ հղիության ու ծննդաբերության նպաստի առավելագույն չափի սահմանման վերաբերյալ դրույթը վատրարացրեց այն կանանց վիճակը, որոնց միջին աշխատավարձը զգալիորեն գերազանցում է սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հնգապատիկը (հոդվ. 22):

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրների շարքում առանձնացվում է ընտանիքը, մայրությունը և մանկությունը պաշտպանելու և հոգանակորելու խնդիրը: Հենց այս սահմանադրական նորմից ելնելով՝ ՀՀ-ն երաշխավորել է կանանց համար հղիության և ծննդաբերության արձակուրդի տրամադրում և համապատասխան ժամանակահատվածի համար նպաստի վճարում: Հետեւաբար, նպաստի չափերը պետք է լինեն քավարար, որպեսզի ապահովեն Սահմանադրությամբ ամրագրված խնդիրների լուծումը:

Հաշվի առնելով առկա սոցիալ-ժողովրդագրական իրադրությունը՝ վերջին ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունը առանձնակի ուշադրություն է դարձնում ծնելիության խնդրին՝ այդ նպատակով սահմանելով երեխաներ ունենալուն խթանող միջոցներ: Հղիության և ծննդաբերության արձակուրդի տրամադրումը և վճարումը կարևորագույն երաշխիք է կանանց համար՝ հնարավորություն տալով ոչ միայն համատեղել աշխատանքը մայրության հետ, այլև ապահովել մոր և երեխայի առողջության պաշտպանությունը՝ դրանով իսկ խթանելով ժողովրդագրական քաղաքականության նպատակների իրականացումը:

Հղիության ու ծննդաբերության նպաստի առավելագույն չափ սահմանելիս Օրենսդիրը պետք է հաշվի առնի իրականացվող սոցիալական քաղաքականության խնդիրները, նպաստի խիստ որոշակի ժամկետով նախատեսված լինելու հանգամանքը, երեխայի ծննդին անմիջապես նախորդող և հաջորդող ժամանակահատվածում կնոջ վրա ազդող գործոնների համալիրը և նպաստի կարևորությունը կնոջ ու երեխայի կյանքի համար:

Աշխատող կանանց համար վարձատրվող արձակուրդի, համապատասխան նպաստների տրամադրման պարտավորության վերաբերյալ դրույթներ առկա են մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ ՍՍԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում (հոդվ. 11), Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում (հոդվ. 8) և այլն: Ընդ որում, Սոցիալական

իրավունքների եվրոպական կոմիտեն, քննարկելով Հայաստանի Հանրապետության գեկույցը՝ սոցիալական խարտիայի դրույթների կիրառման վերաբերյալ, 2007 թ-ին հրապարակված եզրակացությամբ այդ ժամանակ գործող ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ հղության ու ծննդաբերության նպաստի չափը ճանաչել է Խարտիայի 8-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող:

Հարկ է նշել նաև, որ քննարկման փուլում է գտնվում Հայաստանի Հանրապետության կողմից Աշխատանքի միջազգային կազմակերպության Մայրության պաշտպանության մասին թիվ 183 կոնվենցիային միանալու հարցը (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ): ՀՀ-ի կողմից վերոգրյալ կոնվենցիային միանալու դեպքում պետք է հաշվի առնեն հղության և ծննդաբերության նպաստի չափի սահմանման վերաբերյալ Կոնվենցիայի պահանջները: Մասնավորապես, վերոգրյալ կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ծննդաբերության և հղության նպաստների չափը սահմանելիս պետք է հաշվի առնեն աշխատող կնոջ նախորդ վաստակի չափը, սահմանվող նպաստը պետք է պակաս չինի վերջինիս վաստակի առնվազն երկու երրորդից: Իսկ եթե մասնակից պետությունը նպաստի չափը սահմանելիս կիրառում է հաշվարկման այլ մեթոդ, ապա նման պարագայում նպաստի չափը պետք է համաչափ (համեմատելի) լինի նախորդ եղականակով (հաշվարկ՝ աշխատող կնոջ վաստակից ելնելով) հաշվարկվող նպաստի չափի հետ: Ավելին, Աշխատանքի միջազգային կամակերպության թիվ 191 ընդհանուր հանձնարարականով կոչ է արվում հնարավորինս բարձրացնել ծննդաբերության և հղության նպաստի չափը՝ հասցնելով աշխատող կնոջ կողմից նախկինում ստացվող աշխատավարձի (վաստակի) չափին:

Մեկ այլ հիմնախնդիր, որի լուծման հրատապության վրա Պաշտպանն արդեն տարիներ շարունակ հրավիրում է իրավասու մարմինների ուշադրությունը, վերաբերում է կազմակերպության լուծարման պարագայում՝ աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխառուցման հարցին: Թեև այդ ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր (կազմակերպության ֆինանսական միջոցների կապիտալացման կարգի նախատեսում), սակայն խնդիրը մինչ օրս մնում է չլուծված:

Սոցիալական ապահովության իրավունքին առնչվող համակարգային խնդիր է դարձել նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների և երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թ-ի ՍՊՀ համաձայնագրին՝ ՀՀ օրենսդրության համապատասխանության հարցը: Համաձայնագրի գործողությունը տարածվում է քաղաքացիական և Հայրենական մեծ պատերազմների

հաշմանդամների ու մասնակիցների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների և անձանց այն խմբերի վրա, որոնց, համաձայն նշված Համաձայնագրին կից 1-ին Հավելվածի՝ տրամադրված են արտոնություններ՝ նախվիճ ԽՍՀՄ օրենսդրությամբ: Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է չսահմանել արտոնությունների և երաշխիքների նվազ ծավալ, քան նախատեսված են Համաձայնագրին կից 2-րդ Հավելվածով:

Այնուամենայնիվ, Պաշտպանի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում բոլոր այն անձանց խմբերը և արտոնությունների ծավալը, որը նախատեսված է Համաձայնագրով: Այս ուղղությամբ Պաշտպանի կողմից կատարվում են համապատասխան աշխատանքներ:

Պաշտպանին ուղղված բողոքները 2010 թ-ի սոցիալական ապահովության իրավունքի համատեքստում հիմնականում պայմանավորված են եղել կենսաթոշակների հաշվարկման, վերահաշվարկի կարգի, առանձին կատեգորիաների անձանց՝ սահմանված արտոնությունների վերացման, ավանդների դիմաց փոխհատուցման կարգի, ընտանեկան նպաստների վճարման դադարեցման, հաշմանդամության կարգի անհիմն փոփոխման կամ չսահմանման և այլ հարցերով:

### 2.2.3. Սեփականության իրավունք

2010 թ-ի ընթացքում շարունակվել են բողոքներ ստացվել հասարակության և պետության կարիքների համար օտարված գոտիներում գտնվող տարածքների սեփականատերերից և այլ գույքային իրավունքներ ունեցող անձանցից, որոնք վերաբերել են թե՛ փոխհատուցման խնդիրներին, և թե՛ պետության կողմից կառուցապատողների նկատմամբ պատշաճ հսկողության բացակայությանը: Ստացվել են նաև մի շարք այլ բողոքներ, որոնք այս կամ այն ձևով առնվել են սեփականության իրավունքին և պայմանավորված են եղել համապատասխան մարմինների, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց գործառույթների ոչ պատշաճ իրականացմամբ:<sup>17</sup>

Ինքնակամ կառույցների օրինականացման առնչությամբ առկա օրենսդրական խնդիրները մանրամասն քննարկվել են նախորդ երկու տարիների գեկույցներում,

<sup>17</sup> մանրամասն՝ տես Զեկույցի համապատասխան բաժիններ:

մասնավորապես՝ Կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումներում և դրանցով հաստատված կարգերում համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտության տեսանկյունից: Այս որոշումների համատեքստում Պաշտպանի կողմից առաջարկվել էր սահմանել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից կառուցված ինքնական կառույցների նկատմամբ պետության կամ համայնքի սեփականությունը ճանաչելու և պետական գրանցման ժամկետներ՝ դրանց օրինականացման գործընթացի ապահովման համար:

Պաշտպանի կողմից բարձրացվել էր նաև «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում գույքային իրավունքներ ունեցող անձանց կողմից տասնյակ տարիներ օգտագործվող շենք-շինությունների օրինականացման հարցը, քաղաքաշինության ոլորտի օրենսդրությանն առնչվող խնդիրները՝ դրանց կանոնակարգման ոչ հստակ մեխանիզմների առնչությամբ: Այնուամենայնիվ, պետք է փաստենք, որ համապատասխան ոլորտներում դրական տեղաշարժեր այդպես էլ չեն արձանագրվել:

«Իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման մասին» ԵԽ Նախարարների կոմիտեի Rec(2004)6 հանձնարարականի պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Պաշտպանը ներկայացրել էր առաջարկություններ, որոնք այդպես էլ մնացել են անպատասխան: Խոսքը, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության դեմ սեփականության իրավունքի խախտման առնչությամբ ներկայացված բողոքների քննարկման արդյունքներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացրած վճիռների մասին է:

Մեկ այլ հիմնախնդիր, որի հետ առնչվել է Պաշտպանը 2010 թ-ի ընթացքում, կապված է եղել «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի կիրառման հետ: ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1328-Ն որոշմամբ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի ուժով անհատույց տրամադրվող անհատական բնակելի տների կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսի առավելագույն չափ է սահմանվել 300 քմ, թեև ՀՀ կառավարությունը տվյալ լիազորությունով օժտվել է միայն 27.04.2010 թ-ին՝ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով:

Կարծում ենք, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի մասով Կառավարությանը նման իրավասությամբ օժտելն իրավաչափ չէ, քանի որ համաձայն նշված Օրենքի 1-ին հոդվածի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված և սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (ներառյալ՝ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում) այն անհատական բնակելի տները և դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշիանական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա սույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, ով (ովքեր) տիրապետում է (են)այդ գույքը՝ որպես սեփականություն»:

Հետևաբար, ՀՀ կառավարությանը Օրենքի 3-րդ հոդվածով փոխանցվող հողամասի առավելագույն չափ սահմանելու լիազորություն վերապահելու և 13.11.2008թ. ՀՀ կառավարության թիվ 1328-Ն որոշման 1-ին կետով Օրենքով փոխանցվող հողամասի առավելագույն չափ՝ 300 քմ, սահմանելու հետևանքով սահմանափակվում է անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքը։ Կարծում ենք՝ նման սահմանափակումը համահունչ չէ օրենքի ոգուն, քանի որ եթե բնակելի տների և դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունների կառուցման և սպասարկման համար հատկացվել են որոշակի մակերեսով հողամասեր, պետք է իրավունքը ճանաչվի հատկացված հողամասի, այլ ոչ թե՝ 300 քմ մակերեսի չափով։

Պրակտիկայում լինում են դեպքեր, երբ քաղաքացիները դիմում են նախկին գործադիր կոմիտեների որոշումներով կամ այլ ակտերով հատկացված հողամասերի նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով, սակայն իրավունքները վերականգնվում են միայն 300 քմ մակերեսով հողամասի չափով՝ անկախ նրանից, թե նախկինում որքան հողամաս է հատկացված եղել։

## **2.2.4. Առողջության պահպանման իրավունք**

2010 թվականի ընթացքում առողջության պահպանման իրավունքին առնչվող դիմումները հիմնականում վերաբերել են պետականվերի շրջանակում անվճար բուժօգնություն, դեղորայք, ուղեգորեր չտրմադրելուն, հոգեբուժական ստացիոնարներում բուժվող անձանց իրավունքների խախտմանը, «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխսպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում նշված կենդանի դոնորների ընտրության շրջանակների սահմանափակումներին:

Առողջության պահպանման իրավունքին առնչվող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ Պաշտպանի կողմից իրականացվել են հետևյալ գործողությունները:

2010 թ-ին Պաշտպանի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ սահմանադրական դատարան՝ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխսպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ: «Դիակային դոնորից օրգաններ և հյուսվածքներ վերցնելու համաձայնության նախապայմանը» ՀՀ Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ փոխսպատվաստման նպատակով դիակից օրգաններ և հյուսվածքներ չեն կարող վերցվել միայն այն դեպքում, եթե տվյալ անձն իր կենդանության օրոք, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրաժարվել է մահից հետո հանդես գալ որպես օրգանների և հյուսվածքների դոնոր: Պաշտպանի կարծիքով առկա իրավական կարգավորումը պայմաններ է ստեղծում իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նորմի կամայական մեկնաբանման, կիրառման և չարաշահման համար: Այնինչ, դիակային դոնորից օրգաններ և հյուսվածքներ վերցնելու հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը պետք է լինի միանշանակ ու հստակ, հաշվի առնի նաև բարոյականության նորմերը, հասարակության իրավական կրթվածության, զարգացածության և տեղեկացվածության մակարդակները:

ՀՀ սահմանադրական դատարանի 14.09.2010 թ-ի որոշմամբ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխսպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը, այն մասով, որով առնչվում է Հայաստանում չիրականացվող փոխսպատվաստման հանգամանքներում դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուն, ճանաչվեց ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասին և 14-րդ հոդվածին հակասող և անվավեր: Վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխսպատվաստման հանգամանքներում դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուն, ճանաչվեց ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասին և 14-րդ հոդվածին հակասող և անվավեր: Վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխսպատվաստման հանգամանքներում դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուն, ճանաչվեց ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասը, 4-րդ և 9-րդ հոդվածները ճանաչվեցին ՀՀ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման շրջանակներում: ՀՀ սահմանադրական

դատարանի վերոգրյալ որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումները պետք է հիմք հանդիսանան տվյալ ոլորտում իրականացվելիք իրավաստեղծ գործունեության ուղղորդման համար:

2010 թ-ի լնթագրում առողջության պահպանման իրավունքին առնչվող կարևոր օրենսդրական նախագծերից էր շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում էր քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթի կարգը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու համատեքստում: Նախագիծը ներկայացվեց նաև Պաշտպանի կարծիքին: Տրվել են բազմաթիվ հայեցակարգային դիտողություններ:

Նախնառաջ, շեշտադրվել է մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման համաշափության պահանջը:

Անձի ազատության իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով սահմանված կարգով՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով: Սակայն այդ իրավունքի սահմանափակման հիմքերը և կարգը պետք է սահմանվեն օրենսդրությամբ՝ բավարար որոշակիությամբ, և համապատասխանեն համաշափության պահանջներին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իրավական որոշակիության սկզբունքն առավելապես կարևորվել է հենց անձի ազատության իրավունքի սահմանափակման համատեքստում: Մասնավորապես, անձի ազատությունից զրկման հիմքերը և պայմանները պետք է հստակորեն սահմանվեն ներպետական օրենսդրությամբ, որը պետք է կանխատեսելի լինի իր կիրառման մեջ: Այնուամենայնիվ, նախագծում կան մի շարք ձևակերպումներ, որոնք բավարար որոշակիություն չեն պարունակում, ինչպես նաև առկա են հիմնահարցեր, որոնք լրացուցիչ օրենսդրական կարգավորման կարիք ունեն:

Որպես ելակետային հիմք նշվել է, որ անձին հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու օրենսդրական կարգը պետք է կառուցվի հետևյալ սկզբունքի շուրջ. անձին հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելը արդարացված կարող է համարվել հիվանդության տարածման կանխարգելմանն ուղղված մյուս բոլոր հնարավոր միջոցների անբավարար լինելու պարագայում:

Առաջին հերթին հարկադիր բժշկական հետազոտության և բուժման կարգի կիրառումը պետք է պայմանավորված լինի անձի՝ հոժարակամ բժշկական հետազոտություն և (կամ) բուժում անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու հանգամանքով: Ընդ որում, պետք է օրենսդրությամբ հստակ սահմանված լինի.

- հիվանդության և դրա հետևանքների մասին անձին ծանուցելու կարգը,

- բուժհաստատության կողմից անձին հոժարակամ հետազոտության և բուժման ենթարկելուն ուղղված անհրաժեշտ գործողությունների իրականացման կարգը,
- քաղաքացու կողմից բժշկակամ հետազոտություն և (կամ) բուժում անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու վարքագծի դրսերման եղանակները:

**Քանի** որ անձին հարկադիր բուժման ենթարկելու կարգը պետք է կիրառվի միայն այն դեպքում, եթե հիվանդության տարածումը կանխարգելելուն ուղղված մյուս բոլոր հնարավոր միջոցները, այդ թվում՝ հոժարակամ բուժման անցնելու ուղղությամբ բուժհաստատության կողմից ձեռնարկված գործողությունները անարդյունավետ և անբավարար կհամարվեն, քաղաքացու կողմից որոշակիորեն դրսերված վարքագծի պայմաններում (հետազոտությունից և բուժումից հրաժարում, խուսափում, բուժման ընթացքի ընդհատում և այլն) առավել քան կարևորվել է առաջարկվող հարկադիր հետազոտության և (կամ) բուժման կարգին նախորդող բոլոր ընթացակարգերի, հարկադիր բուժման ենթարկելու հիմքերի ու պայմանների մասնակրկիտ և հատակ օրենսդրական կանոնակարգումը:

Անձը պետք է հատակ գիտակցի, թե որ հիմքերի առկայության, ինչ պայմանների խախտման և ինչպիսի վարքագծի դրսերման պարագայում կարող են վրա հասնել համապատասխան իրավական հետևանքները:

Այս համատեքստում կարևորվել է ինչպես օրենսդրությամբ անձին կամավոր հիմունքներով բժշկական հետազոտության և բուժման ենթարկելու ուղղությամբ բուժհաստատության պարտականությունների մանրամասն կանոնակարգումը, այնպես էլ բժշկական հետազոտություն և (կամ) բուժում անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու քաղաքացու վարքագծի հնարավոր դրսերման ձևերը:

Փաստորեն, միայն շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում ներառված հիվանդությամբ վարակված լինելու հանգամանքը դեռևս բավարար չէ առաջարկվող հարկադիր բուժման ենթարկելու կարգը կիրառելու համար: Այս սկզբունքը պետք է հետևողականորեն ամրագրվի քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթի իրականացման կարգը սահմանող նախագծում:

Առաջարկվող 177<sup>1</sup> հոդվածում տեղ գտած՝ «հիմնավոր կասկածներ, որ տվյալ քաղաքացին վարակված է այդ հիվանդությամբ» արտահայտությունը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին և պրակտիկայում կարող է հանգեցնել ամենատարբեր մեկնաբանությունների և կամայական կիրառման: Օրենսդրությամբ պետք է սահմանվեն բոլոր այն դեպքերը, որոնք կարող են վկայել շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ՝ քաղաքացու վարակված լինելու հիմնավոր կասկածի մասին:

Առաջարկվող 177<sup>3</sup> հոդվածում տարանջատված չեն քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներին ներկայացվող պահանջները: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր դեպքում դիմումները պետք է համապատասխանեն տարրեր պահանջների: Կարծում ենք, որ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ վարակված լինելու պարագայում դիմումին պետք է կցվի նաև համապատասխան բժշկական եզրակացություն: 177<sup>5</sup> հոդվածի 4-րդ մասում տեղ գտած՝ «շրջապատի համար հատուկ վտանգ ներկայացնող հիվանդություններ» արտահայտությունը կարիք ունի հետագա հստակեցման, քանի որ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը հաստատող Կառավարության որոշմամբ հատուկ վտանգ ներկայացնող հիվանդությունները՝ որպես առանձին խումբ, առանձնացված չեն:

Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը, որը հաստատված է ՀՀ կառավարության որոշմամբ, ներառում է հիվանդությունների բավականին լայն շրջանակ, որոնց թվում է, օրինակ, գրիպը:

Պաշտպանի կարծիքով առաջարկվող հարկադիր բուժման կարգի ներմուծման հետ միասին անհրաժեշտ է վերանայել համապատասխան հիվանդությունների ցանկը՝ շրջապատի համար իրական վտանգ ներկայացնելու տեսանկյունից, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրանցից յուրաքանչյուրի առկայությունն առաջարկվող լրացումների ընդունման դեպքում կարող է հանգեցնել քաղաքացու նկատմամբ հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու կարգի կիրառմանը:

Նախագծով կարգավորված չեն եղել նաև քաղաքացուն հարկադիր բուժման ենթարկելու ժամկետները, պարբերական դատական վերահսկողության իրականացման կարգը, մինչդեռ նման պահանջն, ըստ էության, բխում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներից:

Նախագիծը ներկայացված առաջարկությունների ու դիտողությունների հիման վրա լրամշակվել է և այժմ գտնվում է քննարկման փուլում:

## 2.2.5. Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունք

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածով ամրագրվում է. «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը», իսկ ՀՀ Սահմանադրության 33.2-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և

բարելավել շրջակա միջավայրը: Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2010 թ-ի ընթացքում բնապահպանական խնդիրները մշտապես գտնվել են Պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Պաշտպանի կողմից կատարված բնապահպանության ոլորտի ուսումնասիրությունների արդյունքներով պետք է արձանագրել, որ մարդու իրավունքների պաշտպանության տեսակետից այստեղ դեռևս լուրջ խնդիրներ կան: Դրանք օրենսդրության և, հատկապես, իրավակիրառ պրակտիկայում տեղ գտած թերացումների հետևանք են:

2010 թ-ին Պաշտպանի կողմից կատարվել է ՀՀ-ում մարդու էկոլոգիական իրավունքների իրացման վիճակի վերլուծություն: Վերլուծությունում անդրադարձ է կատարվել շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության իրավունքին, շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցությանը, էկոլոգիական օրենսդրության խախտման համար կիրառվող իրավաբանական պատասխանատվության արդյունավետության խնդիրներին, բնապահպանական հարցերով արդարադատության մատչելիությանը և այլնին: Կատարված վերլուծությունը հնարավորություն ընձեռեց անել մի շարք հիմնարար եզրակացություններ: Նշված ոլորտը բավականին ընդգրկուն է, ուստի, վերլուծության ընթացքում և ստորև ներկայացվող եզրակացությունները, մի շարք դեպքերում, ունեն ընդհանուր բնույթ ու ավելի խորը ուսումնասիրության և վերլուծության կարիք ունեն:

Անհրաժեշտ է կատարելագործել բնապահպանական տեղեկատվության մատչելիությունն ապահովող օրենսդրության ամբողջ համակարգը, սահմանել բնապահպանական տեղեկատվության հասկացությունը, կատարել անհրաժեշտ փոփոխություններ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում (քննարկման ենթակա է նաև «Բնապահպանական տեղեկատվության մատչելիության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման հարցը), համակարգային փոփոխության ենթարկել բնապահպանական մոնիթորինգի, կադաստրի, հաշվառման օրենսդրական և ենթաօրենսդրական բազան, ձևավորել և վերագինել գործող ինստիտուցիոնալ այն կառույցները, որոնք կհավաքագրեն և կապահովեն բնապահպանական տեղեկատվության շրջանառությունը, տարատեսակ ուսուցումների, ճիշտ կադրային քաղաքականության, պետական ծառայողների իրավական կրթության միջոցով վերացնել այն սուբյեկտիվ խոչընդոտները, որոնք առկա են բնապահպանական տեղեկատվության մատչելիության ճանապարհին, կատարելագործել տեղեկատվության ակտիվ տարածման միջոցները:

Մտահոգիչ է նաև այն, որ բնապահպանական տեղեկատվության տարածման մասով գրանցվել են հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքների

խախտումներ, սակայն վերջիններիս կողմից դատական և վարչական կարգով բողոքներ չեն ներկայացվել, ինչի պատճառներն առանձին ուսումնախորության անհրաժեշտություն ունեն:

Հասարակայնության մասնակցության հարցերի պատշաճ իրավական կարգավորումը նախևառաջ ենթադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանը վերաբերող օրենսդրության բարեփոխման բազմակողմանիորեն հիմնավորված հայեցակարգի մշակում, որի հիման վրա համապատասխան լրացումներ և փոփոխություններ կկատարվեն «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» մասին ՀՀ օրենքում և կձևավորվի պատշաճ ենթաօրենսդրական բազա:

Ի թիվս նշվածի՝ անհրաժեշտ է հստակեցնել Օրենքի կարգավորման առարկան և ըստ այդմ տարբերակել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (տնտեսական գործունեության) և շրջակա միջավայրի վրա հայեցակարգերի ազդեցության գնահատման գործընթացներին հասարակայնության մասնակցության ընթացակարգերը՝ ելնելով այդ գործընթացներից յուրաքանչյուրի առանձնահատկություններից և ակնկալվող արդյունքներից: Դա ենթադրում է նաև օրենքի սկզբունքների, խնդիրների ու նպատակների վերանայում և վերաձևակերպում: Օրենքի հասկացությունների համակարգում ներառել «հասարակայնություն» եզրույթի բնորոշումը, որը թույլ կտա հստակեցնել օրենքով նախատեսված իրավունքների և պարտականությունների կրողների շրջանակը: Ըստ նախատեսվող գործունեության տեսակների ազդեցության աստիճանի (ցածր, միջին և բարձր)` պետք է տարբերակել հասարակայնության մասնակցության գործընթացին ներկայացվող իրավական պահանջները, սահմանել հասարակայնությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու կարգը և պայմանները (գործընթացի յուրաքանչյուր փուլում տեղեկատվության շրջանակը, տրամադրման ժամկետները, միջոցները, տեղեկատվության տարածման եղանակներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու սուբյեկտների կազմը): Անհրաժեշտ է հստակ տարանջատել ոլորտի կառավարման մարմինների լիազորությունները: Նախ՝ անհրաժեշտ է վերանայել ՀՀ կառավարության 653-Ն և 385-Ն որոշումները, երկրորդ՝ սահմանել հասարակական լսումների կազմակերպման համար պատասխանատու սուբյեկտների լիազորությունների շրջանակը՝ թերացումներից և շահերի բախումից խուսափելու նպատակով: ՀՀ վարչական օրենսդրությամբ պետք է նախատեսել պատասխանատվություն «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքից բխող հասարակական լսումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ պահանջների խախտման համար:

Ոլորտի իրավական կարգավորման բարձր արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է, որպեսզի հասարակայնության մասնակցության կառուցակարգի

բարեփոխման առնչությամբ արտահայտված վերոհիշյալ մոտեցումները ներդաշնակեցվեն և օրգանապես կապվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և հայեցակարգերի ազդեցության փորձաքննության (ռազմավարական էկոլոգիական գնահատում) ինստիտուտների կատարելագործման սկզբունքների հետ: Քննարկվող ինստիտուտների համալիր իրավական կարգավորման նպատակին հասնել կարելի է համապատասխան օրենսդրական փաթեթի մշակման ճանապարհով, որը կներառի ինչպես «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ գործող օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու, այնպես էլ նշված օրենքից բխող և դրա իրականացումն ապահովող ենթաօրենսդրական բազա ձևավորելու վերաբերյալ իրավական ակտերի նախագծեր:

Էկոլոգիական օրենսդրության խախտման համար կիրառվող իրավաբանական պատասխանատվության արդյունավետության բարձրացումը պահանջում է ոչ միայն իրավական, այլ նաև կազմակերպական համալիր փոփոխություններ: Էկոլոգիական օրենսդրության խախտման համար կիրառվող քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն նախատեսող օրենսդրության բարեփոխման հայեցակարգը պետք է խարսխված լինի իրավաբանական պատասխանատվության արդյունավետության գնահատման չափանիշների վրա՝ ոլորտի առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է էկոլոգիական օրենսդրության խախտումների դեպքում քաղաքացիների, իրավաբանական անձանց և պետության շահերի առավել արդյունավետ պաշտապանության համար օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոններից նախատեսել որոշակի բացառություններ (օրինակ՝ հայցային վաղեմության հատուկ ժամկետներ), որոնք հնարավորություն կտան պետական մարմիններին համարժեք արձագանքել էկոլոգիական օրենսդրության խախտումներին: Անհրաժեշտ է նաև մշակել էկոլոգիական իրավախախտումների հետևանքով բնակչության առողջությանը պատճառված վնասի հաշվարկման մեթոդիկա, ըստ առանձին բնական ռեսուրսների՝ մշակել պատճառված վնասների հաշվարկման մեթոդիկա, վերանայել շրջակա միջավայրի պահպանության ոլորտի օրենսդրության պահանջների խախտման համար կիրառվող վարչական տույժերի սանկցիաների չափերը, համակարգել էկոլոգիական օրենսդրության խախտման համար պատասխանատվություն նախատեսող վարչական օրենսդրության նորմերը՝ հիմք ընդունելով մշակված միասնական չափանիշներ, ապահովել որպես տույժ գանձված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործումը՝ ստեղծելով հատուկ ֆոնդեր (այս պրակտիկան հաջողությամբ գործում է մի շարք զարգացած պետություններում):

Իրավաբանական պատասխանատվության կիրառման արդյունավետությունը գնահատելու և ոլորտի բարեփոխման հետագա քայլեր իրականացնելու համար նպատակահարմար է նաև մշակել հատուկ մեթոդիկա, որը բազմակողմանիորեն և

ամբողջական կարտացոլի էկոլոգիական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման պատվերը: Նման մեթոդիկայի մշակումը ուղղակիորեն պայմանավորված է էկոլոգիական իրավախախտումների մասով վարվող վիճակագրությամբ, քանի որ այսօր առկա վիճակագրական պատվերը թույլ չի տալիս համակողմանի պատկերացում կազմել էկոլոգիական իրավախախտումների համար կիրառվող իրավաբանական պատասխանատվության վերաբերյալ: Արտահայտված մոտեցումները չեն սպառում էկոլոգիական օրենսդրության խախտման համար կիրառվող իրավաբանական պատասխանատվության արդյունավետության բարձրացմանն ուղղված անհրաժեշտ միջոցների շրջանակը, այլ ընդգծում են մի շարք առանցքային ուղղություններ, որոնք պետք է դրվեն պատասխանատվության արդյունավետության բարձրացմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակման հիմքում:

Արդարադատության մատչելիության իրավունքի մասով կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները թույլ են տալիս արձանագրել, որ մարդու էկոլոգիական իրավունքների արտադատական և դատական պաշտպանության ընթացակարգերը հստակ չեն, մի շարք իրավական ինստիտուտներ, որոնք կապահովեն այդ իրավունքների պաշտպանությունն ընդհանրապես, օրենսդրութեան ամրագրում չեն ստացել: Ի հավելումն այս ամենին՝ բացակայում է իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ որևէ համակարգված տեղեկատվություն, որը հնարավորություն կընձեռի գնահատելու իրավակիրառ գործունեության արդյունավետությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ անձի էկոլոգիական իրավունքների պաշտպանություն իրականացվում է վարչական-դատավարական, քաղաքացիական-դատավարական, քրեական-դատավարական օրենսդրության շրջանակներում: Եթե անձի այլ իրավունքների պաշտպանության տեսանկյունից նշված իրավական ակտերում ամրագրված ընթացակարգերը բավարար են (առկա թերություններով հանդերձ), ապա անձի բնապահպանական իրավունքների պաշտպանության ապահովման համար դրանք լրացման կարիք ունեն՝ հաշվի առնելով ՀՀ նյութական էկոլոգիական օրենսդրության առանձնահատկությունները:

## ԲԱԺԻՆ 3.

### ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՏ ՀԱՆՐԱՅԻՆ ՍԱՐՍԻՆՆԵՐԻ

#### 3.1. ՀՀ Նախագահի աշխատակազմ

ՀՀ Նախագահի աշխատակազմի դեմ ուղղված դիմում-բողոքները վերաբերել են քաղաքացիների դիմումներին պատշաճ ընթացք չտալուն, վերահսկողական ծառայության կողմից ընդունելություն չկատարելուն, ՀՀ Նախագահին ուղղված դիմումներն այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ վերահսկեազրելուն, որոնց դեմ իրենք բողոքում են:

**Օրինակ 1.** Երևան քաղաքի բնակիչ Վ.Կ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 01.06.2010 թ-ին դիմել է ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայություն, դիմումին կցել է համապատասխան փաստաթղթեր և խնդրել ընդունելություն՝ դիմումում նշված որոշ հարցերի պարզաբանման նպատակով:

Դիմումը ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության կողմից չի ուղարկվել ուսումնասիրության այն պատճառաբանությամբ, որ բարձրացված հարցի լուծումը դուրս է ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության իրավասությունների շրջանակից, ինչի մասին ընդունելությունների ժամանակ քաղաքացիներին բազմից տեղեկացվել է:

Դիմելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ խնդրել է աջակցել ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության դեկավարի մոտ ընդունելության կազմակերպման հարցում:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության դեկավարը հայտնել է, որ քաղաքացի Վ.Կ-ն և «Կաթումալեկտ» ՊՓԲԸ-ի տնօրենը հրավիրվել են ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայություն։ Շահագրգիռ կողմերի հետ քննարկվել են նրանց հուզող հարցերը և առաջարկվել են հարցի լուծման տարրերակներ։

Նկատի ունենալով, որ բողոքի քննարկման արդյունքում դիմումատուի կողմից բարձրացված հարցը ստացել է դրական լուծում՝ բողոքի քննարկումը դադարեցվել է։

### 3.2. ՀՀ ազգային ժողով

ՀՀ ազգային ժողովի դեմ ուղղված դիմում-բողոքները վերաբերել են տարբեր օրենքների այն դրույթներին, որոնցով, ըստ դիմումատուների, սահմանափակվել են իրենց իրավունքները կամ իրենք հայտնվել են ծանր սոցիալական վիճակում:

Քաղաքացին հայտնել է, որ 03.08.2010թ., 06.09.2010թ. և 16.10.2010թ. դիմումներ է հասցեագրել ՀՀ ԱԺ նախագահին: Դիմումները մուտքագրվել են ընդհանուր բաժնում, սակայն որևէ պատասխան չի ստացել, ինչի հետևանքով խախտվել են իր իրավունքները:

Հարցի կապակցությամբ Պաշտպանը պարզաբանում է պահանջել ՀՀ ԱԺ աշխատակազմի դեկավարից:

Բողոքը գտնվում է քննարկման փուլում:

### 3.3. ՀՀ կառավարություն

ՀՀ կառավարության դեմ ուղղված բազմաբնույթ բողոքները վերաբերել են քննակարանային խնդիրներին, սեփականության նկատմամբ գերակա՝ հանրային շահ ճանաչելուն, սեփականության իրավունքի խախտումներին և այլնին: Քաղաքացիները դիմում-բողոքներով հայտնել են, որ չեն կարողանում օգտվել Կառավարության տարբեր որոշումներով իրենց վերապահված իրավունքներից: Եղել են նաև ավանդների դիմաց տրամադրվող փոխհատուցումների, կոռպերատիվների փայատերերի կողմից կառավարության որոշմամբ սահմանված ժամանակացույցով նախատեսված գումարները չստանալու վերաբերյալ բողոքներ:

**Օրինակ 1.** Արմավիրի մարզի Գայ համայնքի 3 ֆերմերները Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել են, որ 1991 թվականից սեփականության իրավունքով իրենց պատկանող հողատարածքներում հիմնել են խաղողի այգիներ, մշակել դրանք, ստացել բարձր բերքատվություն և եկամուտներ: ՀՀ կառավարության 03.12.2009թ. թիվ 1443-Ն որոշմամբ համայնքում սահմանվել է բույսերի կարանտին: Առաջին փորձաքննության ժամանակ հայտնել են, թե իբր իրենց այգիներում հայտնաբերվել է «ֆիլոքսերա» վնասատու, ապա բողոքների հիման վրա կրկնակի կատարված փորձաքննության արդյունքում տեղեկացրել են, որ վնասատուն հայտնաբերվել է միայն խաղողագործներից մեկի այգում: Չնայած այդ հանգամանքին՝ ներկայում իրենց ստիպում են ոչնչացնել բարձր բերքատվությամբ խաղողի այգիները՝ առաջարկելով չնչին փոխհատուցում:

Գրությանն ի պատասխան՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարն, ի թիվս այլ տեղեկությունների, հայտնել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում բույսերի պաշտպանության և խաղողագործության մասնագետները բազմիցս քննարկել են «ֆիլոքսերա» վնասատոի վերացման և տարածման կանխարգելման բոլոր հնարավոր տարրերակները և հանգել այն եզրակացության, որ ներկայումս միակ արդյունավետ միջոցը կարանահն միջոցառումների իրականացումն է, որի ժամանակ վարակված այգիներում վագերն արմատախիլ են արվում, տեղում այրվում, իսկ տարածքն ամբողջությամբ ախտահանվում է:

Տեղական խաղողի սորտերի վրա հիմնականում զարգացել է «ֆիլոքսերա» վնասատոի արմատային ձեղ, որը տարածվել է կտրոնների, ոռոգման ջրի, ձեռքի, ինչպես նաև տեխնիկայի վրա կուտակված հողի միջոցով:

ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 3-ի N1443-Ն որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքում սահմանվել է բույսերի կարանտին և իրականացվել են բուսասանիտարական միջոցառումներ՝ «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան: Վճարատոի հետագա տարածումը կանխարգելելու նպատակով տեղադրվել են ախտահանիչ ուղեգործեր և ուղեփակոցներ, սահմանափակվել է բույսերի, կարգավորվող առարկաների, ինչպես նաև դրանց հետ առնչվող փոխադրամիջոցների ելքն ու մուտքը կարանտին գոտի: Այդ իսկ պատճառով վնասատուն արագ չի տարածվել:

Ինչ վերաբերում է փոխադրուցման խնդիրներին, ապա ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 3-ի N1443-Ն որոշմամբ վնասի փոխադրուցումը հաշվարկվել է մեկ տարվա համար, քանի որ խաղողի այգիների քանդման երկրորդ տարվանից հողատերերը կարող են իրենց հողատարածքներում մշակել հացահատիկային, այնուհետև բանջարանոցային և բուսանային մշակաբույսեր, որոնք ապահովում են բարձր բերքատվություն:

**Օրինակ 2.** ՀՀ Կոտայքի մարզի Արտավագ համայնքի բնակիչները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել են, որ ՀՀ կառավարության 25.02.2010թ. թիվ 241-Ն որոշմամբ 95.87549 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ ելնելով ՀՀ Կոտայքի մարզում քաղցրահամ և հանքային ջրերի արդյունահանման ու շշալցման գործարանի կառուցման վերաբերյալ ներդրումային առաջարկի իրականացման անհրաժեշտությունից:

Բնակիչները հայտնել են, որ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված հողատարածքի կազմի մեջ է մտնում թվով 136 ընտանիքի հողատարածք: Ընդ որում, ըստ բնակիչների՝ ՀՀ կառավարության 25.02.2010թ. թիվ 241-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Կոտայքի մարզի Արտավագ համայնքի վարչական սահմաններում գտնվող բացառիկ՝

գերակա հանրային շահ ճանաչված տարածքների հատակագծի և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հողատարածքի մակերեսների միջև գոյություն ունի անհամապատասխանություն: Մասնավորապես, որոշման համաձայն բացառիկ՝ գերակա հանրային շահը ճանաչվել է 95.87549 հեկտար հողատարածքի նկատմամբ, իսկ, ըստ բնակչիների, հատակագծում ընդգրված է 1300 հա հողատարածք:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարը հայտնել է, որ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արտավազի գյուղական համայնքի վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության թիվ 241-Ն որոշման հավելված հանդիսացող հատակագծում առանձնացված է քաղցրահամ և հանքային ջրերի արդյունահանման ու շշալցման գործարանի կառուցման համար անհրաժեշտ ամբողջ տարածքը (շուրջ 1300 հա): Նշված տարածքն իր մեջ ներառում է ինչպես համայնքային և պետական, այնպես էլ մասնավոր սեփականություն հանդիսացող 95.87549 հա գումարային մակերես ունեցող 136 հողամաս: Համաձայն ՀՀ կառավարության որոշման՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչվել են միայն մասնավոր սեփականություն հանդիսացող հողամասերը (նշված հողամասերի ցանկը համապատասխան ծածկագրերով, մակերեսների չափսերով և սեփականատերերի անուններով ներկայացված է ՀՀ կառավարության որոշման Հավելված 1-ում):

Քաղցրահամ և հանքային ջրերի արդյունահանման ու շշալցման գործարանի կառուցման համար անհրաժեշտ ամբողջ տարածքը և դրա մասը կազմող մասնավոր սեփականություն հանդիսացող հողամասերը ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման հավելված հանդիսացող (Հավելված 2) հատակագծում տարանջատված են և ունեն համապատասխան տարբերանշաններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանվել է, որ գերակա հանրային շահ ճանաչված տարածքների հատակագծի և ՀՀ կառավարության որոշման մեջ նշված տարածքների միջև անհամապատասխանություն չկա:

Բողոքի քննարկումը դադարեցվել է:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների՝ ՀՀ տարբեր մարզեր կատարվող այցելությունների ընթացքում ի հայտ են գալիս մարդու իրավունքներին վերաբերող խնդիրներ, որոնց լուծման կապակցությամբ գրություններ են հասցեագրվել համապատասխան մարմիններին:

27.10.2010 թ-ին Սյունիքի մարզ կատարած այցելության ընթացքում մարզի Աշտավան համայնքի 10 բնակչիների բողոքը քննարկվել է մարզպետարանում:

Դիմումատուները հայտնել էին, որ համայնքի վարչական տարածքում գտնվող «Տոլորս» ջրամբարի՝ ջրի բարձրացման հետևանքով ողողվում են ջրամբարի հարևանությանը սեփականության իրավունքով իրենց պատկանող վարելահողերը, որի պատճառով չեն կարողանում դրանք մշակել:

Զննարկման ընթացքում պարզվել է, որ ՀՀ Սյունիքի մարզպետարանը, հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կարծիքները, դեռևս 16.10.2008 թիվ 12-2766 գրությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Ա. Գևորգյանին է ուղարկել «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի համայնքային սեփականություն և քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասերի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագիծը: Զնայած Աշոտավան համայնքի 10 ընտանիքին պատկանող ընդհանուր 6.20 հեկտար հողատարածքների համարժեք փոխհատուցումը (շուկայական արժեքից տասնիննա տոկոս ավելի գումարը), ըստ մարզպետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակցի, կազմում է մոտ երեք միլիոն ՀՀ դրամ, սակայն մինչ օրս ՀՀ կառավարության որոշումը չի ընդունվել, և խնդիրը մնացել է շրուծված:

Պաշտպանը ՀՀ վարչապետին 05.11.2010 թիւ հասցեազրած գրությամբ խնդրել է հանձնարարել ուսումնասիրել բարձրացված հարցը և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Ստացված պատասխանով ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Ա. Գևորգյանը հայտնել է, որ ՀՀ Սյունիքի մարզի Աշոտավան համայնքի մի խումբ բնակիչների կողմից բարձրացված հարցը քննարկվել է ՀՀ Էներգետիկայի նախարարության, ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՀՀ ԿԱ առնեքեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գերատեսչությունները նպատակահարմար են գտել շրջանառության մեջ դնել «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի համայնքային սեփականություն և քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասերի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը 2009 թվականին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ներկայացվել էր ՀՀ կառավարության քննարկմանը, սակայն չեր ընդունվել, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կարծիքը՝ հողամասերի արժեքների փոխհատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սղության պատճառաբանությամբ և Աշոտավան գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող «Տոլորս»

ջրամբարի ափապաշտպան միջոցառումների իրականացման և սանիտարական գոտու ստեղծման անհրաժեշտությունը՝ նշված գերատեսչությունների կարծիքներն ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ հարցը կրկին անգամ համատեղ քննարկելու և ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված տարրերակը սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու համար:

ՀՀ ԿԱ առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն 07.12.2010թ. թիվ Ե/9/5209-10 գրությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աշոտավան գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողամասերի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված տարրերակը ներկայացրել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Կարելի է ենթադրել, որ շատ դեպքերում քաղաքացիների սեփականությունը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելը հետապնդում է ոչ թե հանրային շահ, այլ՝ թիզնես ծրագրի նպատակ: Եթե նշված վայրում նախատեսվեր կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր կամ որևէ արտադրական շինություն, կարծում ենք, այն վաղուց իրացված կլիներ: Մինչդեռ մարդիկ, զրկված լինելով իրենց սեփականությունն օգտագործելու հնարավորությունից, չեն կարողանում ստանալ համարժեք փոխհատուցում, չնայած այն հանգամանքին, որ ավելի քան երկու տարի է, ինչ որոշման նախագիծը մարզպետարանից ուղարկվել է ՀՀ կառավարություն:

**Օրինակ 3.** ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի «Հայզազարդ» Բանավանի բնակիչ Ն. Հ.-ն ու մի շարք այլ քաղաքացիներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմում-բողոքով հայտնել են, որ մոտ 25 տարի է՝ բնակվում են վերը նշված հասցեում՝ առանց մշտական հաշվառման: Տնակները ժամանակավոր իրենց է հատկացվել «Հայզազարդ» ընկերության կողմից՝ հետագայում բնակարանով ապահովելու պայմանով:

Տնակների շուրջ հողակտորներում տնկել են ծառեր, ստեղծել կոմունալ հարմարություններ: Հետագայում դրանք սեփականաշնորհելու խնդրանքով բազմիցս դիմել են համապատասխան մարմիններին, սակայն մերժում են ստացել՝ պատճառաբանությամբ, որ տարածքը պատկանում է «Հայ՛՛ուսազարդ» ՓԲԸ-ին: 2009 թվականին ՀՀ կառավարության միջամտությամբ «Հայ՛՛ուսազարդ» ՓԲԸ-ի ղեկավարությունը տարածքը հանձնել է Առինջ համայնքին՝ բնակիչներին հատկացնելու նպատակով: Մոտ մեկ ամիս առաջ, առանց բնակիչների համաձայնության և առանց համապատասխան փաստաթղթերի, ուղարկած բնակիչների իրավունքները, «Հայզազարդ» Բանավանի տնակները տեղափոխվել են նախկինում աղբավայր ծառայած մի վայր, որն ամբողջությամբ

գտնվում է բարձր լարմամբ հոսանքալարերի տակ: Տարածքը գուրկ է կոմունալ տարրական հարմարություններից՝ տնակներում չկա խմելու ջուր, սանիանգույց, կոյուղի և չի իրականացվում աղբահանություն: Տնակների տեղափոխումից ի վեր բնակիչները՝ հատկապես երեխաները, ճեղք են բերել բազմաթիվ ինֆեկցիոն հիվանդություններ: Տնակների զբաղեցրած նախկին տարածքը հատկացվել է այլ անձի և ներկայումս պարսպապատվում է:

Քաղաքացիների դիմում-բողոքում բարձրացված խնդրի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 30.08.2010 թ-ի գրությամբ ՀՀ վարչապետին խնդրել է հանձնարարել ճեղնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ստեղծված իրավիճակը շտկելու համար: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանը, ի պատասխան, 03.11.2010 թ-ի գրությամբ հայտնել է, որ Ն. Հ.-ի ու մի շարք այլ քաղաքացիների դիմում-բողոքը քննարկման նպատակով ՀՀ կառավարության կողմից վերահսկեազրվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարություն:

Դիմումի վերաբերյալ «Հայզազարդ» և «Հայ՛՛ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություններից և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահից ստացված գրությունների քննարկման արդյունքում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարությունը հայտնել է հետևյալը.

«Հայզազարդ» Բանավանի բնակիչների խնդրո առարկա է հանդիսացել 1987 թ-ին «Հայզազարդ» ԱՄ համակարգում ՀԽՍՀ Արովյանի շրջանի վարչական տարածքում գազի աշխատողների համար ժամանակավոր ստեղծված (հողօգտագործման ժամկետը՝ մինչև 1989թ.) բանվորական հանրակացարանը:

Հետագայում բանվորական հանրակացարանը կորցրել է իր սկզբնական գործառնական նշանակությունը՝ չնայած նրան, որ բնակիչները շարունակել են ապրել ընկերության կողմից տրամադրված վագոն-տնակներում:

Առինջ համայնքի «Հայզազարդ» Բանավանի վագոն-տնակները ներկա դրությամբ հաշվառված չեն «Հայզազարդ» և «Հայ՛՛ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունների հաշվեկշիռներում, իսկ բնակիչները ներգրավված չեն «Հայ՛՛ուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բնակարանային պայմանների բարելավման ցուցակներում:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն տեղեկացրել է, որ ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի վարչական տարածքում «Հայզազարդ» Բանավան հասցեով գրանցված կամ հաշվառված գույք չկա: Տարածքը ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1207-Ն որոշմամբ դասվել է համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի շարքին, որից 19.28 հա հողատարածքը 2010 թվականին աճուրդով օտարվել է քաղաքացի Գ. Ծառուկյանին»:

Մարզերում շարունակում են չլուծված մնալ վթարային շենքերի ամրացման, վերանորոգման կամ դրանց անհնարինության դեպքում բնակիչներին բնակարաններով ապահովելու հարցերը:

21.10.2010 թ-ին **Պաշտպանի** աշխատակազմի աշխատակիցների՝ ՀՀ Վայոց Զորի մարզ կատարած այցելության ընթացքում պարզվել է, որ մարզում կան բազմաթիվ վթարային շենքեր և անհատական բնակելի տներ, որոնք հրատապ վերանորոգման կարիք ունեն: Նույնիսկ կան դեպքեր, երբ վթարային տան օրեցօր փլուզվելու պատճառով բնակիչներն արդեն տևական ժամանակ բնակվում են հարևանների և հարազատներում:

Չնայած մարզպետարանը խնդրի լուծման կապակցությամբ յուրաքանչյուր տարի հայտ է ներկայացնում ՀՀ կառավարությանը, սակայն 2008 թվականից այդ նպատակների համար մարզպետարանին գումար չի հատկացվել: Խնդիրը փորձել է մեղմել «Առաջ Հայատան» հիմնադրամը, որը քանդելով որոշ վթարային տներ (կամ դրանց մի հատվածը)` սկսել է նոր տան կառուցման շինարարական աշխատանքներ: Սակայն կարճ ժամանակ անց շինարարությունը դադարեցվել է՝ որոշ դեպքերում բնակիչներին գրկելով նաև կոմունալ հարմարություններից:

10.11.2010 թ-ին **Պաշտպանի** ներկայացուցիչների՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաք կատարած այցելության ընթացքում պարզվել է, որ թեև Վանաձորում երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած, բնակարան չստացած ընդամենը 61 ընտանիք է մնացել, սակայն առկա են բնակարանային այլ խնդիրներ, որոնք նույնպես լուծման կարիք ունեն: Բանն այն է, որ քաղաքում կա 84 վթարային շենք՝ 3280 բնակարանով: Դրանց մեծ մասը նախկինում գնահատվել է 4-րդ կարգի վթարային, սակայն հետագայում, առանց որևէ ամրացման շինարարական աշխատանքների կատարման, գնահատվել է իբրև 3-րդ կարգի վթարային: Վթարային շենքերի բնակիչների մեծ մասն ապրում է տնակներում և այլ ժամանակավոր կացարաններում, սակայն ըստ գործող իրավական ակտերի՝ ընդգրկված չեն անօթևանների հերթացուցակներում:

Քաղաքաշինական խնդիրներին վերաբերող հարցերի քննարկման ընթացքում պարզվել է, որ Վանաձոր քաղաքը մինչ օրս չունի գլխավոր հատակագիծ՝ չնայած, որ նախագիծը 2004 թվականին ներկայացվել է ՀՀ կառավարությանը:

«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի գործողությունը Երևան քաղաքից բացի բոլոր մյուս համայնքների վրա տարածելն ունեցել է իր դրական ազդեցությունը: Սակայն Օրենքի կիրառման ընթացքում առաջացել են որոշակի խնդիրներ: Օրենքի ուժով սեփականության անհատույց փոխանցման համար պարտադիր պայման է շինությունը մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցած լինելը: Վանաձոր քաղաքում առաջին քարտեզագրման

աշխատանքները սկսվել են 2003 թվականի վերջին և ավարտվել 2004 թվականին: Քաղաքայիտարանում չեն կարողանում որոշել շինության՝ մինչև 2001 թ-ի մայիսի 15-ը կառուցված լինելու փաստը, որի հետևանքով առաջանում են անհարկի ձգձգումներ: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ օրենքի փոփոխությունից հետո (27.04.2010թ.) օրինականացման խնդրանքով դիմած 160 անձից միայն 20-ն են դեռ ստացել սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականներ: Բացի դրանից, որոշված չեն այն պաշտոնատար անձը կամ համապատասխան մարմինը, որը պետք է տրամադրի շինության կառուցման տարերվի վերաբերյալ տեղեկանքը:

Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել օրենքի որոշ դրույթները:

Հարկ է նշել, որ մինչ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը Երևանի քաղաքապետը և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահն ընդունել են պաշտոնական պարզաբանումներ, ինչպես նաև՝ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին նորմատիվ իրավական ակտեր: Իրավական տեսանկյունից, սակայն, բաց է մնում այդ իրավական ակտերը մյուս համայնքների վրա տարածել կամ չտարածելու հարցը:

Նկատի ունենալով, որ առաջին քարտեզագրման աշխատանքները տարբեր համայնքներում իրականացվել են տարբեր ժամանակաշրջաններում և վերոնշյալ օրենքի կիրարկման վերաբերյալ առաջանում են խնդիրներ՝ Պաշտպանը գրությամբ խնդրել է ՀՀ վարչապետին հանձնարարել ուսումնասիրել բարձրացված հարցերը և ոլորտը կարգավորելու ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:

Գրությանն ի պատասխան՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ Վանաձորի քաղաքապետի կողմից 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ հաստատված ցուցակում հաշվառված է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած 69 ընտանիք, որից 8 ընտանիքի բնակարանային պայմանները բարելավվել են 2008-2009 թվականներին իրականացրած ԲԳՎ ծրագրի շրջանակներում: Վերոնշյալ ծրագրի շրջանականներում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 7 ընտանիք չունի բնակարանային պայմանների բարելավման իրավասություն, իսկ 32 ընտանիք բացակայում է հանրապետությունից: Արդյունքում, 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ լուծում են պահանջում 22 ընտանիքի բնակարանային խնդիրները, որոնցից 12 ընտանիք համարվում է Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ 73 հասցեում մասնավոր, կառուցապատողի կողմից

կառուցվող շենքից բնակարան ստանալու համար քաղաքապետի հետ կնքված պայմանագրեր ունեցող, իսկ 10 ընտանիք՝ 2009 թվականի ԲԳՎ ծրագրին մասնակցելու ցանկություն չհայտնած: Նշվել է, որ ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի նիստի N23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած հայեցակարգի դրույթներին համապատասխան մինչև 2013 թվականը Վանաձոր քաղաքում երկրաշարժի հետևանքով դեռևս անօթևանի կարգավիճակում գտնվող անձանց բնակարանային խնդիրներն իրենց լուծումը կստանան պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրերի շրջանակներում»:

3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի վերականգնման վերաբերյալ հայտնել են, որ Վանաձոր քաղաքում առկա է 3-րդ կարգի վթարայնություն ունեցող 84 բնակելի շենք, որոնց վերականգնման-ամրացման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափն, ըստ խոշորացված հաշվարկների, կազմում է մոտ 21.0 մլրդ. դրամ: Հաշվի առնելով, որ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով, ինչպես նաև 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով նմանատիպ շենքերի վերականգնման-ամրացման համար չափարանակներ չեն հաստատվել՝ հետևաբար, հանրապետության բնակավայրերում առկա 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող 420 բազմաբնակարան շենքերի վերականգնման-ամրացման խնդրին հնարավոր է անդրադառնալ հետագա տարիներին՝ ՀՀ պետական բյուջեով այդ ուղղությամբ միջոցներ նախատեսելու դեպքում:

Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի վերաբերյալ տեղեկացվել է, որ քաղաքապետարանի պատվերով 2004 թվականին «Հայնախազիծ» ԲԲԸ-ի կողմից մշակվել է քաղաքի գլխավոր հատակագիծը, որից հետո ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի թիվ 609-Ն որոշման համաձայն ներկայացվել է շահագրգիռ գերատեսչությունների համաձայնեցմանը: Ստացված առաջարկությունները մարզպետարանը ներկայացրել է Վանաձորի քաղաքապետարան, իսկ վերջինս՝ «Հայնախազիծ» ԲԲԸ: Գլխավոր հատակագիծը մինչ այսօր չի լրամշակվել և գտնվում է «Հայնախազիծ» ԲԲԸ-ում: Նախարարությունը կարծում է, որ դրանում իր մեղավորության մասնաբաժինն ունի նաև Վանաձորի քաղաքապետարանը՝ համապատասխան շահագրգուվածություն չցուցաբերելու առումով: Հարկ ենք համարում նշել նաև, որ վերջին տարիներին քաղաքում իրականացված շինարարության արդյունքում գլխավոր հատակագիծը դարձել է ոչ պիտանի, և անհրաժեշտ է քաղաքի համար կազմել նոր գլխավոր հատակագիծ:

Ըստ նախարարության՝ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման կապակությամբ օրենսդրական

հստակեցումների անհրաժեշտություն չկա, քանի որ ՀՀ կառավարության 2000 թվականի հուլիսի 27-ի «Ինքնակամ կառուցված շենքերը, շինությունները, ինքնակամ զբաղեցված հողամասերը, տիրագործ (լրված) անշարժ գույքը հաշվառելու մասին» թիվ 422 որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի պահանջների համաձայն՝ ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի ընթացիկ հաշվառումը իրականացնում է համայնքի ղեկավարը, հետևաբար համայնքի ղեկավարն էլ իրավասու և նման տեղեկանք տրամադրելու:

Ընթացիկ տարում Պաշտպանին են դիմել նաև ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրում իրականացնող վարորդներ, ովքեր իրենց բողոքն են հայտնել «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված ամսական դրույքաշափի վերաբերյալ:

Ըստ դիմումատունների՝ բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների մի քանի հարյուր վարորդներ ներկայիս տնտեսական ճգնաժամի հետևանքով կանոնավոր աշխատանք չունենալու պատճառով հայտնվել են սոցիալական ծանր վիճակում, և ամսական միջին կտրվածքով 50000 դրամ հարկային պարտավորություն սահմանելն ավելի է սրում իրավիճակը:

Քաղաքացիների՝ 19.01.2010 թ-ին ՀՀ վարչապետին ուղղված դիմումին պատասխանել է ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Ալավերդյանը՝ հայտնելով, որ ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների դեպքում հաստատագրված վճարի ամսական չափը յուրաքանչյուր 1 տոննայի համար կազմում է 2200-3800 դրամ:

Դիմումատունները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առաջարկել են ՀՀ կառավարության միջոցով ՀՀ ազգային ժողովին ներկայացնել իրենց խնդրանքը՝ հաստատագրված վճարները ժամանակավորապես չհարկելու կամ սահմանված չափերը նվազեցնելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը ՀՀ վարչապետին ուղղված 30.03.2010 թ-ի գրությամբ խնդրել է հանձնարարել ուսումնասիրել բարձրացված հարցը:

ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահը 20.04.2010 թ-ին պատասխան նամակով հայտնել է, որ բեռնափոխադրում իրականացնող մի խումբ վարորդների դիմումի կապակցությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում քննարկվել է ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրում իրականացնելու համար հաստատագրված վճարի կասեցման կամ հաստատագրված չափի նվազեցման հարցը: Հարցը քննարկվել է նաև ՀՀ ԱԺ մի խումբ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ

օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (որով առաջարկվում էր մոտ 50 տոկոսով իջևնել հաստատագրված վճարի չափը) հետ:

Ավտոտրանսպորտային քեռնափոխադրումների համար սահմանված հաստատագրված վճարների դրույքաչափերը վերջին անգամ փոփոխվել և գործում են 2002 թ-ի հունվարից: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տվյալներով 2009 թ-ին քեռնափոխադրումներ իրականացնող հաստատագրված վճար մուծողների թիվը կազմել է մոտ 263, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերների թիվը՝ 97, իսկ հայտարարագրված քեռնատար ավտոմեքենաների թիվը կազմել է ընդամենը 1048 և հաշվարկվել է հաստատագրված վճար՝ մոտ 255.4 մլն դրամ: Անհատ ձեռնարկատերների կողմից հայտարարագրված ավտոմեքենաների թիվը կազմել է 117 և հաշվարկվել է հաստատագրված վճար՝ 13.8 մլն դրամի չափով:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ավտոտրանսպորտային գործունեությունը հաստատագրված վճարով ժամանակավորապես չհարկելու կամ այդ գործունեությունից հաստատագրված վճարի չափը նվազեցնելու վերաբերյալ մի խումբ վարորդների կողմից բարձրացված հարցը համարել է չիհմնավորված:

Բողոքներ են եղել նաև ՀՀ կառավարության որոշ նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ, որոնց հետևանքով սահմանափակվում են անձանց սեփականության իրավունքները: Մասնավորապես՝ ՀՀ կառավարությունը, դեկավարվելով ՀՀ Սահմանադրության 8-րդ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածներով, 07.05.2005 թ-ին ընդունել է թիվ 719-Ն որոշումը, որի 1-ին կետով սահմանվել է, որ ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի առկայության դեպքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

Որոշման 2-րդ կետով ամրագրվել է, որ ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի առկայության դեպքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցվում են՝

- ա) օրենքով սահմանված կարգով հատկացված կամ ձեռք բերված, ինչպես նաև սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից՝ ինքնակամ զբաղեցված հողամասերի առկայության դեպքում (բացառությամբ քաղաքային բնակավայրերի),
- բ) օրենքով սահմանված հատկացված կամ ձեռք բերված, ինչպես նաև սեփականության իրավունքով պատկանող հողամասում կամ հողամասին կից՝ ինքնակամ զբաղեցված հողամասում (բացառությամբ քաղաքային բնակավայրերի) ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների առկայության դեպքում:

Նույն կետի վերջին պարբերությունում նշվել է, որ պետական գրանցման ենթակա չեն ամբողջությամբ ինքնակամ զբաղեցված հողամասերը և դրանց վրա ինքնակամ կառուցված շենքերը, շինությունները, ինչպես նաև քաղաքային բնակավայրերում սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից ինքնակամ զբաղեցված հողամասերը և (կամ) ինքնակամ զբաղեցված հողամասում ինքնակամ կառուցված շենքերը, շինությունները, որոնց հետագա կարգավիճակը որոշվում է ՀՀ քաղաքացիական և հողային օրենսգրքերով սահմանված կարգով:

Տարօրինակ է այն հանգամանքը, որ Կառավարության վերոնշյալ որոշման ընդունման հիմք նշված է ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը (Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը), սակայն որոշմամբ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում՝ այն չտարածելով քաղաքային բնակավայրերում սեփականություն ունեցող անձանց վրա (որոշումը քաղաքային բնակավայրերում տարածվում է միայն բազմաբնակարան շենքերի մասով):

Իսկ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եթե քաղաքային բնակավայրում անձը նոտարի կողմից հաստատված, ըստ օրենքի, ժառանգության իրավունքի և սեփականության իրավունքի վկայագրերը սեփականության իրավունքի գրանցման խնդրանքով ներկայացնում է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում, սակայն սեփական հողամասին կից զբաղեցրած է լինում նաև զավթած հողամաս (անկախ դրա չափից), իրավունքի պետական գրանցումը մերժվում է հետո վերոնշյալ որոշման առկայությամբ: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն ժառանգության հիման վրա, այլ նաև օրինական ուժի մեջ մտած վճիռներով և այլ ակտերով ծագած իրավունքների գրանցմանը:

Կարծում ենք, որ ՀՀ կառավարության 07.05.2005թ. թիվ 719-Ն որոշման հետևանքով խախտվում է անձանց սեփականության իրավունքը:

Խնդիրներ են առաջանում նաև կենսաքոշակ ստանալու սահմանադրական իրավունքի իրացման ոլորտում:

ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պետական կենսաքոշակ նշանակելու համար անձն իր գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը, այդ բվում՝ անձնագիրը, ներկայացնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության այն ստորաբաժանում, որը գտնվում է իր հաշվառման վայրում: Սակայն պրակտիկայում պատահում են դեպքեր, երբ, անձն ընդունում է ՀՀ քաղաքացիություն, սակայն անձնագիրը տրվում է որոշ ժամանակ անց (մեկ, երկու ամիս): Նման դեպքերում, թեև քաղաքացին ներկայացնում է ՀՀ ոստիկանության

անձնագրերի և վիզաների վարչության կողմից տրված տեղեկանք՝ ՀՀ քաղաքացիություն ստացած լինելու վերաբերյալ, սակայն անձնագիրը չունենալու պատճառով զրկվում է ՀՀ Սահմանադրությամբ իրեն տրված՝ կենսաթոշակ ստանալու իրավունքից:

**Օրինակ 1.** ՀՀ Կոտայքի մարզի բնակիչ Վ. Ս-ն (ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Զովունի) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ մինչև 29.07.2008 թ-ն եղել է Ուկրաինայի Հանրապետության քաղաքացի: Ուկրաինայի քաղաքացիությունից հրաժարվելուց հետո դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար և ՀՀ Նախագահի 13.10.2009 թիվ 265 հրամանագրով ստացել ՀՀ քաղաքացիություն: Անձնագիրը ստացել է 22.12.2009 թ-ին: Թեև ՀՀ քաղաքացիություն ստանալու փաստը հավաստող տեղեկանքը ներկայացրել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովագրության պետական ծառայության Եղվարդի տարածքային բաժին, սակայն մինչև 2010 թ-ը կենսաթոշակ չի ստացել:

### 3.3.1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Այս մարմնի դեմ ուղղված բողոքները վերաբերել են աշխատանքից ապօրինի ազատելուն, աշխատանքից ազատելու վերաբերյալ ՊԵԿ նախագահի հրամանը վերացնելու, հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար չվճարելու և համապատասխան պաշտոնում վերականգնելու վերաբերյալ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռները ժամանակին կամ ընդհանրապես չկատարելուն, գույքը չմաքսագերծելուն և այլնին:

**Օրինակ 1.** Մամուլի հրապարակումների համաձայն՝ «ԶԱՊ» ՍՊԸ-ին պատկանող Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստալենկերությունը՝ տեխնիկական վերազինման ժամանակացույցին համապատասխան, ներկրել է նոր տեխնիկական սարքավորումներ, որոնց մաքսագերծման գործընթացն արհեստականորեն ձգձգվել է, չնայած որ հ/ը-ն կատարել է ապրանքի մաքսագերծման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթային պարտավորությունները և պատրաստ է եղել կատարել մուծումները:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Շիրակի տարածաշրջանային մաքսատան պետը Գյումրիի «ԶԱՊ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն Կ. Հարությունյանի դիմումին ի պատասխան 07.04.2010թ. թիվ 165 գրությամբ հայտնել է, որ մաքսային ձևակերպումների կասեցումը կատարվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրիի տարածքային հարկային տեսչության գրության և տեղեկանքի հիման վրա:

Նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են

կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով՝ Պաշտպանը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահին հասցեազրած գրությամբ խնդրել է հայտնել, թե հարկային տեսչության ո՞ր գրության և տեղեկանքի հիման վրա են կասեցվել Գյումրիի «ԶՍՊ» ՍՊԸ-ին պատկանող բեռի մաքսային ձևակերպումները։ Նման իրավական ակտ չինելու դեպքում առաջարկվել է միջոցներ ձեռնարկել ՍՊԸ-ի իրավունքները վերականգնելու կապակցությամբ և քննարկել համապատասխան պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու հարցն ու արդյունքների մասին տեղեկացնել։

Պետեկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ S. Բարսեղյանը 19.04.2010 թ-ի պատասխան նամակով հայտնել է, որ համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի՝ եթե հարկային պարտավորության չափը հինգ հարյուր հազար դրամ և ավելի է կազմում, հարկային մարմնի դեկավարն իրավունք ունի արգելանք դնել մինչև դատարանի կողմից վճռի կայացումը։ Հարկային մարմնի կողմից հարկ վճարողի գույքի արգելադրումից հետո՝ 30-օրյա ժամկետում, դատարանի վճիռը չապահովելու դեպքում հարկ վճարողի գույքը համարվում է արգելանքից հանված։

«ԶՍՊ» ՍՊԸ հարկային պարտավորությունը կազմում է 822000 դրամ, այդ իսկ պատճառով հարկային մարմնի դեկավարի 07.04.2010թ. թիվ ԱՀ 007519 հանձնարարականով արգելանք է դրվել ընկերության կողմից ներմուծված գույքի վրա։

Դիմումատուի կողմից Պաշտպանին է ներկայացվել Գյումրիի տարածքային հարկային տեսչության իրավաբանական և հարկադիր գանձումների բաժնի պետին և հարկային ստուգումների բաժնի գլխավոր հարկային տեսչին տրված՝ Պետեկամուտների կոմիտեի նախագահի 07.04.2010թ. թիվ ԱՀ 007519 հանձնարարագիրը։ Վերոնշյալ պաշտոնատար անձանց հանձնարարվել է «ԶՍՊ» ՍՊԸ-ին պատկանող գույքի վրա ընդհանուր՝ 822 հազար դրամ, չկատարված պարտավորությունների չափով արգելանք դնել։

Հանձնարարագրի հիման վրա վերոնշյալ պաշտոնատար անձինք իրենց 08.04.2010թ. թիվ 007519 որոշմամբ արգելանք են դրել «ԶՍՊ» ՍՊԸ-ի թվով 5 բանկերում բացված 7 բանկային հաշիվների վրա՝ 822.2 հազար դրամի չափով։

Այս կապակցությամբ լրացուցիչ գրություն է ուղարկվել Կոմիտեի նախագահին, որով նշվել է հետևյալը։

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի համաձայն՝ չկատարված հարկային պարտավորության չափը հինգ հարյուր հազար և ավելի դրամ կազմելու դեպքում ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով հարկային մարմնի դեկավարն իրավունք ունի հարկ վճարողի հարկային պարտավորությանը համարժեք գույքի վրա արգելանք դնել մինչև դատարանի կողմից վճռի կայացումը։

Սույն հոդվածով նախատեսված արգելանքն առաջնահերթության կարգով կիրառվում է նախ՝ հարկ վճարողի բանկային հաշիվների նկատմամբ, ապա՝ հարկ վճարողի անշարժ գույքի նկատմամբ, այնուհետև՝ հարկ վճարողի այլ ակտիվների նկատմամբ:

2. Գյումրիի տարածքային հարկային տեսչության իրավաբանական և հարկադիր գանձումների բաժնի պետի և հարկային ստուգումների բաժնի գլխավոր հարկային տեսուչի 08.04.2010թ. համատեղ թիվ 007519 որոշմամբ արգելանք է դրվել հենց «ՀԱՊ» ՍՊԸ-ի տարրեր բանկերում ունեցած հաշվարկային հաշիվների վրա, հետևաբար՝ Պետեկամուտների կոմիտեի նախագահի տեղակալի՝ Պաշտպանին հասցեազրած գրությամբ նշված պարզաբանումը, որ որոշմամբ արգելանք է դրվել ընկերության կողմից ներմուծված գույքի վրա, չի բխում ո՛չ ՊԵԿ նախագահի հանձնարարագրից, ո՛չ ել՝ արգելանք դնելու մասին վերոնշյալ որոշումից: Ներմուծված ապրանքի վրա արգելանք չէր կարող դրվել նաև այն պատճառարանությամբ, որ դրանից առաջ պետք է արգելանք դրվեր ընկերությանը պատկանող անշարժ գույքի նկատմամբ, սակայն դրա անհրաժեշտությունը չի առաջացել, քանի որ բանկային հաշիվներում եղած միջոցները, ըստ դիմումատուի, գերազանցել են չկատարված հարկային պարտավորության չափը: Անհրաժեշտ է նաև նշել, որ եթե ներմուծված ապրանքի վրա դրվեր արգելանք, ապա պետք է կասեցվեր քեզի մաքսագերծման գործընթացը, իսկ կասեցման նման հիմք նախատեսված չէ:

3. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողի հարկային պարտավորությանը համարժեք գույքի վրա արգելանք դնելու իրավունք ունի միայն հարկային մարմնի դեկավարը, սակայն այս դեպքում արգելանք է դրվել Գյումրիի տարածքային հարկային տեսչության աշխատակիցների կողմից: «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11.1 հոդվածից բխում է, որ հարկային մարմնի դեկավարը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահն է: Հետևաբար, արգելանք կարող էր դրվել միայն ՊԵԿ նախագահի որոշմամբ:

4. Ինչ վերաբերում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածին համապատասխան ընդունված ՀՀ կառավարության 11.05.2002թ. թիվ 520 որոշմանը, որով հարկային պարտավորության դիմաց գույքի վրա արգելանք դնելու իրավունք է վերապահվել հարկային մարմնին, այլ ոչ թե՝ հարկային մարմնի դեկավարին, ինչը նախատեսված է օրենքով, ապա տվյալ պարագայում, համաձայն «Քրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ պետք է կիրառվի օրենքը, այլ ոչ թե՝ Կառավարության որոշումը:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը խնդրել է գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ ներկայացնել պարզաբանում, մասնավորապես՝ թե հարկային մարմնի դեկավարի ո՞ր որոշմամբ է արգելանք դրվել «ՀԱՊ» ՍՊԸ-ի ներկրած գույքի վրա, նման որոշման բացակայության դեպքում ապահովել քեզի մաքսագերծումը, իսկ առկայության դեպքում ուղարկել դրա պատճենը: Պարզաբանումներին կից Պաշտպանը խնդրել է նաև

հայտնել, թե բանկային հաշիվների վրա ինչու է արգելանք դրվել Գյումրիի տարածքային հարկային տեսչության աշխատակիցների որոշմամբ, այն դեպքում, եթե նման որոշման իրավասությունը վերապահված է միայն հարկային մարմնի դեկավարին:

Գրությանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահը 26.05.2010 թ-ի գրությամբ հայտնել է, որ «Զապ» ՍՊԸ-ի գույքի և դրամական միջոցների վրա արգելանքը դրվել է ՊԵԿ նախագահի 08.04.2010թ. հանձնարարագրի հիման վրա: Հայտնել է, նաև, որ ՀՀ վարչական դատարանի 05.05.2010թ. թիվ ՎԴ-5/0406/05/10 կատարողական թերթի համաձայն ԳԱՀԿ ծառայության Շիրակի մարզային քաժնի դեպոզիտ հաշվին է մուտքագրվել կատարողական թերթով նշված 822.2 հազար դրամը:

Գումարը դեպոզիտ հաշվին մուտքագրվելուց հետո 01.04.2010թ. թիվ C1816 հայտարարագրով հայտարարագրված ապրանքները 20.05.2010 թ-ին բաց են բողնվել «Զապ» ՍՊ ընկերությանը:

### **3.3.2. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**

2010 թվականին ևս ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների դեմ ուղղված բողոքները վերաբերել են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով ճանաչված իրավունքները չգրանցելուն, ժառանգության իրավունքների գրանցումները տարբեր պատճառաբանություններով մերժելուն, չափագրման ընթացքում թույլ տրվող սխալներին, պատշաճ տեղեկատվություն չտրամադրելուն, իրավունքների գրանցումը մերժելիս օրենսդրությանը համապատասխան չհիմնավորելուն և այլնին:

**Օրինակ 1.** Երևան քաղաքի բնակիչը դիմումով հայտնել է, որ համաձայն ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 09.10.2007 թվականի վճռի՝ Հ. Ս-ի և Մ. Մ-ի հայցը բավարարվել է նաև ակտով. անվագեր է ճանաչվել Երևան քաղաքում գտնվող և Ե.Մ-ի անվամբ որպես սեփականություն գրանցված 464 քմ ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ կատարված պետական գրանցումը՝ 74.3 քմ ընդհանուր հողատարածքի մասով, և ճանաչվել է Հ. Ս-ի և Մ. Մ-ի սեփականության իրավունքը՝ Երևան քաղաքում գտնվող և նրանց սեփականության իրավունքով պատկանող բնակելի տներով զրադարձած, համապատասխանաբար, 83.8 քմ և 59 քմ ընդհանուր մակերեսով հողամասերի նկատմամբ:

Ըստ դիմումատուի՝ կադաստրի Մարաշ տարածքային ստորաբաժանման աշխատակիցներն, անտեսելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի պահանջները, առանց իր համաձայնության և ներկայության, նախապես իրեն տեղյակ չպահելով, իր հողատարածքում կատարել են չափագրման աշխատանքներ՝ ինչը կասկածի տակ է դնում նրանց անաշառությունն ու օբյեկտիվությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմումը քննարկման է ընդունել և գլուխյանը խնդրել է ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ նախագահին դիմումում նշված տեղեկությունների վերաբերյալ ներկայացնել պարզաբանում:

Ի պատասխան՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ նախագահը հայտնել է, որ նշված տան կադաստրային գործերի ուսումնասիրությունից պարզել է, որ 11.09.2009 թ-ին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մարաշ տարածքային ստորաբաժանում են դիմել Հ. Ա.-ն և Մ. Մ.-ն՝ նշված հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու նպատակով՝ ներկայացնելով ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանի 09.10.2007թ. թիվ 07-2993 վճիռը: 13.09.2009 թ-ին Կոմիտեի աշխատակազմի Մարաշ տարածքային ստորաբաժանման աշխատակիցների կողմից կատարվել են Այգեստան 11 փողոց, թիվ 66 բնակելի տան չափագրման (տեղագննման) աշխատանքները, կազմվել են սահմանված կարգով համապատասխան ուրվագծեր, որոնցում առկա են սեփականատերերի ստորագրությունները, որից հետո Հ. Մ.-ին տրամադրվել է թիվ 2612806, իսկ Մ. Մ.-ին՝ թիվ 2612805 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականները:

Կոմիտեի աշխատակազմի Մարաշ տարածքային ստորաբաժանման աշխատակիցների կողմից Այգեստան 11 փողոց, թիվ 66 հասցեում 13.09.2008 թ-ից հետո մինչ օրս չափագրման (տեղագննման) աշխատանքներ չեն իրականացվել, իսկ Ի. Գ.-ի կողմից չափագրման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ որևէ դիմում չի ներկայացվել:

Բողոքը քննարկման փուլում է:

**Օրինակ 2.** Երևան քաղաքի բնակչութի Ն. Ե-ն Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ Եղվարդի քաղաքային խորհրդի կողմից 14.10.1992թ. հողի օգտագործման իրավունքի թիվ 2306 ժամանակավոր վկայականի համաձայն իրեն հատկացվել է 0,43 հա վարելահող՝ անջրդի 2-րդ կարգ՝ կադաստրային 134-137/II ծածկագրի տակ և ցույց է տրվել հատկացված տարածքը: 1998 թ-ի մայիսի 1-ին Ն. Ե-ի անվամբ տրվել է թիվ 016620 հողի սեփականության իրավունքի պետական ակտը, որը գրանցվել է հողի սեփականության իրավունքի պետական ակտերի հաշվառման մատյանում՝ 379 համարի ներքո: Այնուհետև, 2003 թ-ին Ն. Ե-ին տրվել է հողի նկատմամբ թիվ 2442450 սեփականության իրավունքի գրանցման վկայականը, որի համաձայն վերջինիս հատկացված հողակտորը գրանցվել է թիվ 452-011 կադաստրային ծածկագրի ներքո:

Քաղաքացու պնդմամբ՝ թիվ 452-011 կադաստրային ծածկագրի ներքո գտնվող հողատարածքը չի համապատասխանում թիվ 2306 հողի օգտագործման իրավունքի ժամանակավոր վկայականի համաձայն իրեն տրամադրված հողատարածքին՝ այն շուրջ 1000 մետր հեռու է այն տարածքից, որն ի սկզբանե ցույց է տրվել իրեն հողի հատկացումից հետո։ Քաղաքացու կարծիքով թիվ 134-137/II ծածկագրով հողատարածքը յուրացվել է ոմանց կողմից և փոխարենն իրեն տրամադրվել է թիվ 452-011 ծածկագրով հողատարածքը։

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմումը քննարկման է ընդունել և գրությամբ խնդրել է ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ նախագահին դիմումում նշված տեղեկությունների վերաբերյալ պարզաբանում ներկայացնել։

Պատասխան դեռ չի ստացվել։

Բողոքների մի մասը վերաբերել է առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում (հատկապես մարզերում) և դրանից հետո քարտեզագրման արդյունքում կատարված՝ քաղաքացիներին պատկանող հողամասերի փաստաթղթային տեղի և դիրքի որոշակի փոփոխությունների պատճառով առաջացած անհջտություններին, որի հետևանքով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ու քաղաքացիների միջև վեճեր են առաջանում։

Ընթացիկ տարում շարունակել են ստացվել նաև խորհրդային տարիներին Հանրապետության տարբեր շրջաններում՝ ՀԽՍՀ մինիստրների խորհրդի տարբեր որոշումներով, կուեկտիվ այգեգործության կազմակերպման նպատակով հատկացված հողամասերի սեփականության իրավունքների գրանցումները մերժելու վերաբերյալ բողոքներ։<sup>18</sup>

Պաշտպանի հետևողականության շնորհիվ 03.09.2010 թ-ին ընդունվել և սեպտեմբերի 23-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետությունում այգեգործական հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները կանոնակարգելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1129-Ն որոշումը, որով սահմանվել է, որ հողամասի բաժանման սխեմայի հիման վրա այգեգործության նպատակով հատկացված և ներկայումս, ըստ հողային հաշվեկշռի, բնակավայրերի նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների գրանցման համար հիմք է հանդիսանում մինչև 1994 թվականի հունվարի 1-ը տրամադրված այգեգործի գրքույկը՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի «ա» կետի կիրառման իմաստով, իսկ հողամասի բաժանման սխեմայի հիման վրա այգեգործության նպատակով հատկացված և ներկայումս համայնքին սեփականության իրավունքով փոխանցված՝ գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ դատական

<sup>18</sup> Մանրամասն՝ տես նախորդ Զեկույցի միևնույն բաժին։

կարգով քաղաքացիների սեփականությունը ճանաչվելու դեպքում այս որոշման ուժով տվյալ հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխաված՝ բնակավայրերի հողերի, որի հիման վրա համայնքի դեկավարի կողմից սահմանված կարգով տրամադրվում է հողամասի գլխավոր հատակագիծ:

Կարծում ենք, որ Կառավարության այս որոշումը կարող է լուծել վերոնշյալ խնդիրները:

Եղել են նաև դեպքեր, երբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում գտնվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժվել է տարբեր պատճառաբանություններով:

**Օրինակ 1.** Երևանի Խանջյան նրբանցք 10/5 տան բնակիչ Յ. Ա.-ի դիմումի քննարկման արդյունքում 19.10.2010 թ-ին Պաշտպանի կողմից կայացվել է մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու և դրանք վերացնելու նպատակով անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու առաջարկ ներկայացնելու մասին որոշում:

Երևանի Խանջյան, Ֆիրդուս փողոցների, Տիգրան Մեծի պողոտայի, Հանրապետության նրբանցքի և հարակից այլ տարածքների (33-րդ քաղամաս) 161 բնակիչ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմում-բողոքում հայտնել է, որ ՀՀ կառավարության 25.01.2007թ. թիվ 108-Ն որոշմամբ իրենց գույքի գտնվելու վայրերի տարածքներում ճանաչվել են բացառիկ՝ գերակա հանրային շահ և պետք է օտարվեն պետության և հասարակության կարիքների համար:

Բնակիչներից շատերի հողամասերը համարվում են ինքնակամ գրաղեցված, իսկ շեմք-շինությունները՝ ինքնակամ կառույցներ, չնայած որ կառուցվել են իրենց պատերի կողմից և ունեն տասնյակ տարիների վաղեմություն:

Մինչև «Ինքնակամ կառուցված շեմքերի, շինությունների և ինքնակամ գրաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ընդունումը բնակիչները բազմից դիմել են իրավասու մարմիններին, սակայն իրենց իրավունքները տարբեր պատճառաբանություններով (հիմնականում ՀՀ կառավարության որոշմամբ իրացման գոտում գտնվելու) չեն ճանաչվել:

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈՍԿ տնօրենի հետ հանդիպման ընթացքում խնդրել են Կոնդ և Կողեռն թաղամասերի օրինակով ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով և իրացման գործընթացը սկսելուց առաջ ընդունել որոշում, որով քաղամասի բնակիչներին հնարավորություն կտրվի սեփականաշնորհել իրենց կողմից տասնյակ տարիներ օգտագործվող անշարժ գույքը: Նրանց խնդրանքը մերժվել է:

Բողոքի քննարկման ընթացքում դիմումատուների գույքային իրավունքները վերականգնելու կապակցությամբ դեռևս 2007 թվականին Պաշտպանի կողմից առաջարկներ են ներկայացվել Հայաստանի Հանրապետության վարչապետին և Երևանի քաղաքապետին:

Երևանի քաղաքապետը 30.07.2007 թիվ Պաշտպանին հասցեազրած գրությամբ հայտնել է, որ Երևան քաղաքի գերակա հանրային շահ ճանաչված իրացման գոտիների խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներ իրականացնելու, մասնավորապես՝ 33-րդ թաղամասի բնակիչների կողմից բարձրացվող հարցերն ուսումնասիրելու, գույքային միավորների գույքազրման և չափագրման աշխատանքներին նպաստելու համար «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 13.07.2007թ. (արձանագրություն թիվ 96) և Երևանի քաղաքապետի 16.07.2006թ. թիվ 2100-Ա որոշումներով ստեղծվել է միջզերատեսչական հանձնաժողով: Հանձնաժողովի աշխատանքները, որոնց ներգրավվել են նաև թաղամասի բնակիչների թվով 6 ներկայացուցիչները, արդեն իսկ մեկնարկել են և տարածքում սկսվել են չափագրման և գույքազրման աշխատանքներ, առանց որոնց հնարավոր չեր լինի ձևակերպել քաղաքացիների սեփականության իրավունքը տարիներ շարունակ իրենց կողմից օգտագործվող և մինչ օրս կարգավիճակ չունեցող գույքային միավորների նկատմամբ:

Արդյունքում, Երևանի քաղաքապետն իր 14.08.2007թ. թիվ 2818-Ա, 30.08.2007թ. 3175-Ա, 14.09.2007թ. 3472-Ա և 22.10.2007թ. թիվ 4316-Ա որոշումներով վերականգնել է թվով 151 քաղաքացու գույքային իրավունքը:

Վերոնշյալ որոշումներով ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանմանն առաջարկվել է գրանցել որոշումներին կից հավելվածներում նշված քաղաքացիների սեփականության իրավունքը շենք-շինությունների ու հողամասերի նկատմամբ և նրանց տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներ:

Երևան քաղաքի Խանջյան նրբանցքի 10/5 բնակարանի բնակիչ Յ. Ա-ն Պաշտպանին հասցեազրած լրացուցիչ դիմումներով հայտնել է, որ Երևանի քաղաքապետի որոշումներից ծագած իրավունքները գրանցելու և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար դիմել է ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանում, սակայն 30.11.2007թ. և 07.11.2008թ. գրություններով պետական գրանցումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ չգրանցված գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ Երևանի քաղաքապետի որոշումը հակասում է ՀՀ օրենսդրությանը: Առաջին դեպքում տեղեկացվել է, որ իր կառույցների կարգավիճակը կարող էր կարգավորվել ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումների, իսկ 07.11.2008թ. գրությամբ՝ ՀՀ կառավարության 20.12.2007թ. թիվ 1529-Ա որոշման համաձայն:

Այդ կապակցությամբ Պաշտպանը 07.03.2008 թ-ին ՀՀ ԿՍ ԱԳԿ պետական կոմիտեի նախագահ Մ. Մարտիրոսյանին հասցեազրած թիվ 1-0255 գրությամբ առաջարկել է քննարկել Երևանի քաղաքապետի վերոնշյալ որոշումներից ծագած իրավունքները գրանցելու և քաղաքացիներին սեփականության իրավունքի գրանցման վկայականներ տրամադրելու հարցը և տեղեկացնել ձեռնարկված միջոցառումների մասին:

Գրությանն ի պատասխան՝ ՀՀ ԿՍ ԱԳԿ պետական կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուսայանը 20.03.2008թ. թիվ ԱՄ-4/1037 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետի 14.08.07թ. N 2818-Ա, 30.08.07թ. N 3175-Ա, 06.09.07թ. N 3296-Ա, 14.09.07թ. N 3472-Ա, 24.09.07թ. N 3699-Ա, 02.10.07թ. N 3883-Ա և 05.10.07թ. N 3986-Ա որոշումներով Երևանի 33-րդ քաղամասի (Ֆիրդուս) 151 միավոր անշարժ գույքի՝ հողամասերի և շենք-շինությունների նկատմամբ ճանաչվել են անձանց սեփականության իրավունքները: Նշված որոշումներով վերականգնվել են նաև քաղաքացիներին պատկանող թվով 47 միավոր անշարժ գույքի՝ բնակելի տանը և դրա սպասարկման համար առանձնացված հողամասին կից՝ ինքնակամ գրադեգված հողամասերի նկատմամբ իրավունքները, ինչպես նաև օրինականացվել են այդ հողամասերում ինքնակամ կառուցված շենք-շինությունները (այդ թվում՝ քաղաքացի Յ. Ա.-ին պատկանող անշարժ գույքը): Սակայն, նշված 47 միավորի մասով որոշումները չեն բխում ՀՀ օրենսդրության պահանջներից, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 731-Ն և N 912-Ն որոշումներով սահմանվել է հատկացված հողամասերին կից ինքնակամ գրադեգված հողամասերի և դրանցում առկա շենք-շինությունների օրինականացման այլ կարգ: Այդ պատճառով էլ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից նշված միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժվել է:

Միաժամանակ նշվել է, որ ՀՀ կառավարության 20.12.2007թ. N 1529-Ն որոշմամբ քույլատրվել է Երևանի քաղաքապետին հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ենթակա տարածքներում սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող անհատական բնակելի տներին կից՝ մինչև 2001 թ-ի մայիսի 15-ը զավթած պետական սեփականություն հանդիսացող հողամասերը և (կամ) զավթած հողամասերի վրա ինքնակամ կառուցներն օտարել այդ քաղաքացիներին: Ուստի, ՀՀ կառավարության նշված որոշման պահանջներին համապատասխան՝ քաղաքապետի կողմից քաղաքացիներին (այդ թվում՝ քաղաքացի Յ. Ա.-ին) գույք օտարելու վերաբերյալ որոշում կայացվելու և այն սահմանված կարգով կադաստրի մարմնին ներկայացվելու դեպքում կկատարվի իրավունքների պետական գրանցում և կտրամադրվեն համապատասխան անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականներ:

Դիմումի քննարկման արդյունքում ձեռք բերված տվյալները վկայում են, որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Կենտրոն տարածքային ստորաբաժանումը Երևանի քաղաքապետ Ե. Զահարյանի 30.08.2007թ. N 3175-Ա և 22.10.2007թ. N 4316-Ա որոշումներից ծագած իրավունքները չգրանցելով թույլ է տվել դիմումատուի իրավունքների խախտում՝ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, մասնավորապես՝ օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի դրույթները տարածվում են պետական գրանցման ենթակա գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վրա՝ անկախ սեփականության ձևից:

Տվյալ դեպքում կադաստրը միայն ծագած իրավունքները գրանցող պետական մարմին է և ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ չի կարող անձանց համար սահմանել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև այլ օրենքներով չնախատեսված պարտականություններ:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով արգելվում է այլ պատճառներով գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մերժումը, քան նրանց, որոնք սահմանված են այդ օրենքով, այդ բվում՝ աննպատակահարմարության պատճառաբանությամբ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն մերժումը պետք է լինի օրենքի կամ նորմատիվային ակտի խախտման պարտադիր նշումներով:

3.Ա.-ի իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանման գրությունում նշված չէ, թե որ օրենքի կամ նորմատիվային ակտի պահանջներն են դիմումատուն խախտել, ավելին՝ ինչպես ասվեց, երկու պատասխաններում նշվել են տարբեր իրավական ակտեր, որոնց համաձայն կարող էր կարգավորվել կառույցների կարգավիճակը:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք:

Միաժամանակ, հարկ է նշել, որ միատեսակ հանգամանքներում ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 21.12.2006թ. (քաղաքացիական գործ թիվ 3-2440 (ՎԴ)) քննելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական գործներով վերաբննիչ դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 06-2811 քաղաքացիական գործով կայացված վճռի դեմ՝ ըստ Լ. Ղ.-ի դիմումի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոր Նորքի տարածքային ստորաբաժանման, Երրորդ անձ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 18.11.2005 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 2453-Ա որոշման 3-րդ կետի պահանջը կատարելու, Երևան քաղաքի Նոր Նորքի 9-րդ միկրոշրջանի թիվ 14 շենքի մոտ գտնվող 51,9 քմ ավտոտնակի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջների մասին, գտել է, որ վեճի հիմք հանդիսացող Երևանի քաղաքապետի 18.11.2005 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 2453-Ա որոշումը վարչական ակտ է, որը չի վիճարկվում, չի հաստատվել դրա առոչինչ լինելը, չի ճանաչվել ոչ իրավաչափ՝ անվավեր, չի կորցրել իր ուժը, հետևաբար, յուրաքանչյուր ոք, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն, պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ Երևանի քաղաքապետի որոշումն ընդունվել է Սահմանադրությամբ կամ օրենքներով իր լիազորությունների շրջանակում: Պետք է եզրակացնել, որ Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանի 30.08.2007թ. N 3175-Ա և 22.10.2007թ. N 4316-Ա որոշումները իրավաչափ են, և որևէ անձ, մասնավորապես՝ պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել այդ ակտի իրավաչափությունը:

Դատարանը նշել է, որ նշված պատճառաբանությամբ հիմնավոր չեն դատարանի կողմից «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջների սխալ մեկնաբանման և ՀՀ վարչապետի 2005 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 936-Ա որոշման պահանջները չկիրառելու մասին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից բողոքում նշված պատճառաբանությունները:

Ելնելով ինչպես վերոնշյալ, այնպես էլ մի շարք այլ հանգամանքներից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի և Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա (աետական մարմնի ակտով) ծագած՝ Լ. Ղ.-ի գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի վճռաբեկ բողոքը մերժվել է, և ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը բողնվել է օրինական ուժի մեջ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայեցողական լիազորություններ իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաշխատության և կամայականության արգելքի սկզբունքով, ինչպես նաև՝ հետապնդել օրենքով կանխորշված այլ նպատակներ:

Կամայականության արգելքի սկզբունքը բխում է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով ամրագրված հավասարության և խորականության արգելքի սկզբունքներից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք, և եթե առկա է նման հիմք, ապա վարչական մարմինը պարտավոր է անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետազայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը Երևանի քաղաքապետի 30.08.2007թ. N 3175-Ա և 22.10.2007թ. N 4316-Ա որոշումներով քաղաքացի Յ. Ա.-ի գույքի նկատմամբ ծագած իրավունքները չգրանցելու մասով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Կենտրոն տարածքային ստորաբաժանման դեկավարի անգործությունը դիտել է մարդու իրավունքների խախտում: Քաղաքացի Յ. Ա.-ի խախտված իրավունքը վերականգնելու՝ գույքի նկատմամբ ծագած իրավունքը գրանցելու նպատակով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Ե. Զախարյանին առաջարկվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Որոշմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի նախագահը 11.11.2010թ-ի գրությամբ Պաշտպանին հայտնել է (պատճենն ուղարկվել է ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի Կենտրոն տարածքային ստորաբաժանման ղեկավարին), որ Երևանի քաղաքապետի 30.08.2007թ. N 3175-Ա և 22.10.2007թ. N 4316-Ա որոշումներից ծագող իրավունքների պետական գրանցման համար քաղաքացի Յ. Ա.-ի կողմից սահմանված կարգով կոմիտեի աշխատակազմի Կենտրոն տարածքային ստորաբաժանում դիմում ներկայացվելու դեպքում տարածքային ստորաբաժանման կողմից դիմումին ընթացք կտրվի՝ Պաշտպանի գրության պահանջներին համապատասխան:

Դիմումատու Յ.Ա.-ն 29.11.2010թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ գույքի նկատմամբ ճանաչված իրավունքները ստացել են պետական գրանցում և իրեն տրամադրվել է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական:

Նկատի ունենալով, որ ընթացիկ տարում հաճախակի են դարձել այն դեպքերը, երբ դիմում-բողոքների քննարկման ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներից պահանջվող տեղեկատվության կապակցությամբ պատասխանվում են, որ հարցումը ստանալու համար Պաշտպանը պետք է կատարի համապատասխան վճարում՝ Պաշտպանը 06.10.2010 թ-ին ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի նախագահին գրություն է հասցեագրել՝ հայտնելով, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են իրենց իրավասությանը վերաբերող պահանջվող նյութեր և փաստաթղթեր, ինչպես նաև բողոքը քննարկելու համար անհրաժեշտ ցանկացած տեղեկություն տրամադրել Պաշտպանին՝ անվճար և անարգել: Գրությամբ առաջարկվել է հարցի կարգավորման կապակցությամբ միջոցներ ձեռնարկել:

Պատասխան գրությամբ տեղեկացվել է, որ բարձրացված հարցի կապակցությամբ Կոմիտեի կողմից շրջաբերական է ուղարկվել Կոմիտեի աշխատակազմի բոլոր տարածքային ստորաբաժանումներին՝ պահանջելով, որպեսզի Պաշտպանի և իր աշխատակազմի կողմից պահանջվող տեղեկատվությունը տրամադրվի անվճար:

### **3.3.3. ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն**

Վարչության դեմ ստացված բողոքները հիմնականում վերաբերել են աշխատանքային իրավահարաբերություններին:

**Օրինակ 1.** Օդային երթևեկության կառավարման (այսուհետ՝ ՕԵԿ) ծառայության արհեստավարժ կարգավարների արհեստակցական կազմակերպության նախագահը և դիմումը ստորագրած 76 անձ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել են, որ 13.12.2003թ. ՀՀ կառավարության թիվ 1907-Ն որոշմամբ ավիակարգավարի մասնագիտությունը դասվել է առողջության համար առանձնապես վճասակար, առանձնապես ծանր աշխատանքների և մասնագիտությունների շարքին, ինչը հնարավորություն էր տալիս ավիակարգավարներին ստանալ հավելավճար՝ աշխատավարձի 100%-ի չափով: ՀՀ կառավարության 22.07.2004թ. թիվ 1091-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել, և այդ աշխատանքը դասվել է առողջության համար վճասակար աշխատանքների և մասնագիտությունների շարքին, որի հետևանքով հավելավճարը կազմել է 50%: Կառավարության որոշումը պարունակում է իմպերատիվ պայմաններ, այն է՝ օդային երթևեկության առավելագույն ինտենսիվություն կամ օդային երթևեկության բարդություն: Թեև «Զվարթնոց» օդանավակայանը, ըստ դիմողների, ստեղծման օրվանից դիտվել է որպես բարդ օդային երթևեկություն ունեցող օդանավակայան, վերոնշյալ հասկացությունների սահմանման բացակայությունը գործատուին կամայականությունների առիթ է տվել: Մասնավորապես, 28.10.2004 թ-ին ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը ներկայացրել է թիվ 1 պաշտոնական պարզաբանումը, որով սահմանել է, որ ՀՀ տարածքում չկան նշված դասի օդանավակայաններ:

Որպես տվյալ պարզաբանման հիմք նշվել է Եվրոկոնտրոլի կողմից ընդունված ինչ որ կանոնակարգ, որը, սակայն, ըստ դիմողների՝ ոչ միայն կանոնակարգ չէ և պարտադիր կատարման ենթակա չէ Եվրոպական Միության երկրների համար, այլև «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի համաձայն՝ ՀՀ կառավարության և (կամ) պետական կառավարման մարմինների կողմից չի ճանաչվել որպես ներպետական հասարակական հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտ, այն է՝ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով չի ինկորպորացվել ներպետական իրավական համակարգ, պաշտոնապես չի հրատարակվել:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է ուղարկել ՀՀ վարչապետին, ում հանձնարարականով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվել է համատեղ քննարկում: Քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումում նշված խնդրո առարկան, մասնավորապես՝ օդանավակայանի դասի

սահմանումը, դուրս է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասություններից:

Այսուհետև նախարարը Պաշտպանին գրավոր հայտնել է, որ հաշվի առնելով 2010 թ-ի հունիսի 24-ին ընդունված «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՕ-120-Ն ՀՀ օրենքը, որի պահանջներից է առողջության համար վնասակար աշխատանքների և մասնագիտությունների ցանկի սահմանումը, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ ՀՀ կառավարության 2003 թ-ի դեկտեմբերի 11-ի թիվ 1907-Ն որոշման գործողությունը դադարեցվել է:

Վերլուծելով նշված պատասխանը՝ պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական տեղեկատվության համակարգում ՀՀ կառավարության 11.12.2003թ. որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ տեղեկատվություն չկա: Սակայն նկատի ունենալով, որ ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ դրա գործողությունը դադարեցված է՝ պարզ չե՝ ծանր, վնասակար արտադրություններում, աշխատանքներում, մասնագիտություններում, առավել վնասակար արտադրություններում, աշխատանքներում, մասնագիտություններում և պաշտոններում ընդգրկված անձինք ներկայումս գրկված են օրենսդրությամբ նախատեսված հավելավճարներից, թե՛ ոչ:

Ելնելով վերօքյալից՝ մեկ անգամ ևս գրություն է ուղարկվել ՀՀ վարչապետին՝ խնդրելով հանձնարարել ուսումնասիրել խնդիրը, ինչպես նաև նոր նախագծի մշակման ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել ավիակարգավարների՝ մինչ այդ եղած երաշխիքների վերականգնանը և անհրաժեշտության դեպքում քննարկել ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից 2004 թ-ի հոկտեմբերի 28-ին տրված թիվ 1 պաշտոնական պարզաբանման՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանության հարցը:

Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, ի թիվս այլ տեղեկությունների, հայտնել է, որ ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի նիստում ընդունվել է «Ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի N 876-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը

կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշումը: Ըստ այդ որոշման՝ ավիակարգավարների աշխատանքը նույնպես դասվել է առողջության համար վճասակար աշխատանքների և մասնագիտությունների շարքին, սակայն որպես իմպերատիվ պայման մնացել է օդային երթևեկության առավելագույն ինտենսիվությունը կամ օդային երթևեկության բարդությունը:

Նշվել է նաև, որ ինչ վերաբերում է օդակայանների գոտիներում, օդակայանադիսպետչերական շրջանային, տեղական կենտրոններում օդային երթևեկության առավելագույն ինտենսիվությամբ կամ օդային երթևեկության բարդությամբ անմիջականորեն երթևեկության կառավարում իրականացնող աշխատողներին, կարգավարներին (դիսպետչերներին), կարգավար-հրահանգիչներին, ավագ կարգավարներին, թոփքների ղեկավարներին հավելավճարներ տրամադրելուն, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության առներ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից 2004 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1 պաշտոնական պարզաբանման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օդային տարածքում (այդ թվում «Զվարթնոց», «Շիրակ», «Էրեբունի» և «Ստեփանավան» օդանավակայանների օդային տարածքներ) օդային երթևեկության սպասարկման բարդությունն ըստ ինտենսիվության դասվում է «ցածր բարդությամբ» դասին և չի հանդիսանում օդային երթևեկության առավելագույն ինտենսիվությամբ կամ օդային երթևեկության բարդությամբ կառավարման տարածք, ուստի, նշված խմբի անձանց հավելումներ չեն վճարվում:

Այս կապակցությամբ հերթական գրությունն է ուղարկվել ՀՀ վարչապետին՝ խնդրելով մեկ անգամ ևս հանձնարարել ուսումնասիրել 2004 թ-ի հոկտեմբերի 28-ին ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից տրված թիվ 1 պաշտոնական պարզաբանման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և այդ բնագավառի միջազգային փաստաթղթերին:

Դեռևս պատասխան չի ստացվել:

**Օրինակ 2.** ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին են դիմել 2009 թ-ի հուլիսի 15-ին Թեհրան-Երևան շվերքի ժամանակ զոհված անձնակազմի անդամներ Գ. Բ-ի և Ս. Ս-ի այրիները՝ բողոքելով, որ իրավասու մարմինների անգործության պատճառով չեն կարողանում ստանալ իրենց անուսինների մահվան կապակցությամբ տրամադրվող ապահովագրական վճարները:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու ակնկալիքով Պաշտպանը հարցում է կատարել ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետին: Վերջինս հայտնել է, որ ըստ իրանական «Կասպիական ավիաուղիներ» ավիաընկերության տրամադրած տեղեկատվության՝ 2009 թ-ի հուլիսի 15-ին

Թեհրան-Երևան շվերթի ժամանակ զոհված անձնակազմի անդամների մահվան կապակցությամբ նախատեսված ապահովագրական վճարները կատարվել են:

### **3.3.4. ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն**

ՀՀ ԱԱԾ մարմինների և դրանց աշխատակիցների գործողությունների դեմ ուղղված դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են այդ մարմինների կողմից քաղաքացիներին, ըստ վերջիններիս, անհիմն բերման ենթարկելու և նրանց նկատմամբ կիրառվող քրեադատավարական և օպերատիվ-հետախուզական գործողությունների ոչ հիմնավորված և ապօրինի լինելու դեպքերին:

2010 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմում-բողոք է ստացել այն մասին, որ իր մոտ թմրանիցոց պահելու կասկածանքով քաղաքացին բերման է ենթարկվել ՀՀ ԱԱԾ, որտեղ նրան ենթարկել են ծեծի, պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Դրա հետևանքով քաղաքացին այն պահին, երբ աշխատասենյակում մենակ է գտնվել, իր կյանքին վերջ տալու նպատակով ՀՀ ԱԱ Երևան քաղաքի վարչության 2-րդ հարկի աշխատասենյակից դուրս է նետվել: Արդյունքում ստացել է աջ և ձախ ոտքերի բեկորային կոտրվածքներ և տեղափոխվել հիվանդանոց:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ ԱԱԾ-ից հայտնել են, որ գրավոր բացատրություններ ստանալու նպատակով քաղաքացին բերման է ենթարկվել ՀՀ ԱԱԾ ԵրթՎ վարչական շենքի թիվ 78 աշխատասենյակ, որտեղ նրա առողջական վիճակը կտրուկ վատացել է, վերջինս պահանջել է կանչել շտապօգնություն: Օպերատիվ աշխատակիցների կողմից իրավիրվել է 1-03 ծառայության վերակարգը, որը նախնական հետազոտել է քաղաքացուն և նշելոր նրա ընդհանուր վիճակը բավարար է, իսկ բողոքները կարող են պայմանավորված լինել թմրանյութերի կախվածությամբ: Այնուհետև քաղաքացին ասել է, որ շնչելու օդ չկա, խնդրել է թույլ տալ նատել աշխատասենյակի բաց պատուհանի մոտ և դեղահար է պահանջել: Օպերաշխատակիցը գնացել է կողքի սենյակից դեղահար և ջուր բերելու, երբ վերադարձել է աշխատասենյակ, նկատել է, որ քաղաքացին դուրս է նետվել բաց պատուհանից:

Հարկ ենք համարում նշել, որ միջադեպը տեղի է ունեցել այն պատճառով, որ բերման ենթարկված անձի նկատմամբ ԱԱԾ աշխատակիցների կողմից չի իրականացվել պատշաճ հսկողություն, ինչպես նաև չի դրսերվել անհրաժեշտ գգնություն և աշալրջություն: ԱԱԾ համապատասխան աշխատակիցները ենթարկվել են կարգապահական տույժի:

2010 թվականի սեպտեմբերին **Պաշտպանին** մեկ այլ դիմում-քողոք է հասցեագրվել այն մասին, որ ՀՀ ԱԱԾ աշխատակիցներն, առանց քացատրության, անձին տարել են փորձագիտական կենտրոն, նրանից վերցրել են անձնագիրը, պահանջել տալ փորձանմուշներ: Փորձաքննության արդյունքների հիման վրա քաղաքացին զրկվել է աշխատանքից: Հետագայում նույն անձը, համաձայն չինելով փորձաքննությունների արդյունքների հետ, պահանջել է կրկնակի փորձաքննություն՝ մեկ այլ փորձագիտական կենտրոնում: Սակայն ԱԱԾ աշխատակիցները կրկնակի փորձաքննությունը նշանակել են նույն կենտրոնում, իսկ եզրակացության արդյունքների մասին անձին չեն տեղեկացրել: Անձը փորձանմուշներ է հանձնել հանրապետական այլ փորձագիտական կենտրոնում, որի արդյունքներով ժխտվել են ԱԱԾ մարմինների կողմից նշանակված փորձաքննության արդյունքները:

**Նշանակած դիմում-քողոքը գտնվում է քննարկման փուլում:**

Ընթացիկ տարում նույնպես ստացվել են քողոքներ այն մասին, որ քաղաքացիներից վերցնում են անձնագրեր՝ առանց օրինական հիմքերի: Այս կապակցությամբ ևս **Պաշտպանի** կողմից գրություններ են ուղարկվել ԱԱԾ:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման 19-րդ կետի համաձայն՝ ազատազրկման դատապարտված անձանցից և այն կասկածյալներից, մեղադրյալներից, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է չհեռանալու մասին ստորագրությունը կամ կալանքը, հետաքննության կամ նախաքննության մարմինները, նաև՝ դատարանը, ժամանակավորապես վերցնում են անձնագրերը: Կասկածյալների և մեղադրյալների անձնագրերը վերադարձվում են խափանման միջոցի վերացման դեպքում:

Կալանքի տակ չգտնվող կասկածյալներին և մեղադրյալներին հետաքննության կամ նախաքննության մարմիններն անձնագրի փոխարեն տալիս են անձը հաստատող փաստաթուղթ՝ առանց ՀՀ-ից մեկնելու թույլտվության, որի ձևը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության առնեթեր ՀՀ ոստիկանությունը:

### **3.4. ՀՀ ոստիկանություն**

Նախորդ տարվա համեմատ 2010 թ-ին ՀՀ ոստիկանության համակարգի դեմ ուղղված դիմում-քողոքների թվի զգալի աճ է նկատվել: Պետք է նշել, որ ընթացիկ տարում ՀՀ ոստիկանության աշխատակիցների գործողությունների (անգործության) ու որոշումների դեմ

ուղղված դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են քաղաքացիներին ՀՀ ոստիկանության տարրեր բաժիններ անհիմն բերման ենթարկելուն և անազատության մեջ պահելուն, այդ ընթացքում Ոստիկանության աշխատակիցների կողմից դրսորած դաժան, անմարդկային վերաբերմունքին և խոշտանգումներին, հանցագործությունների մասին հաղորդումներին քրեաղատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգով ընթացք չտալուն, որպես մեղադրյալ ներգրավված անձանցից բռնությամբ և սպառնալիքի ազդեցությամբ իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ կորզելուն, քաղաքացու օրինական պահանջով անձնագիր չտրամադրելուն:

Պետք է նշել, որ խոշտանգումների մասին դիմում-բողոքների քննության ընթացքում գրեթե անհնար է բացահայտել, թե իրականում ինչ է կատարվել: Ոստիկանության աշխատակիցների կողմից բռնությունների, խոշտանգումների փաստերի մասին Պաշտպանի ուղարկած գրություններին Ոստիկանության կողմից, որպես կանոն, տրվել է պատասխան, որ բողոքներում բերված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը և հիմնավորված չեն: ՀՀ ոստիկանությունից ստացված պատասխանները հաճախ ունեցել են հետևյալ հակիրճ և ոչ սպառիչ բովանդակությունը. «ՀՀ ոստիկանության շտաբի կողմից կատարված ստուգմամբ պարզվել է, որ գրությունում նշված հանգամանքները իրականությանը չեն համապատասխանում» կամ՝ «ՀՀ ոստիկանությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացու նկատմամբ բռնության գործադրելու հանգամանքներ չեն հաստատվել»:

Հարկ է նշել, որ նման գործելառն շարունակվել է նաև 2010 թ-ի ընթացքում:

Պրակտիկան ցույց է տալիս նաև, որ անձանց ծեծի ենթարկելը, բռնությունն ու խոշտանգումները կիրառվում են հիմնականում ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով:

Եղել են դեպքեր, երբ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են Ոստիկանության բաժին, որտեղ հայտնաբերել են կապտուկներով և մարմնի վրա խոշտանգման հետքերով քաղաքացիներ: Բերման ենթարկվածների հետ Պաշտպանի ներկայացուցիչների առանձնազրույցի ընթացքում նրանք հայտնել են, որ ծեծի են ենթարկվել բաժնի աշխատակիցների կողմից, ինչի հետևանքով ստացել են գլխի վնասվածք (վերք-քերծվածքի տեսքով), որը արձանագրվել և լուսանկարվել է ՍԻՊ ներկայացուցիչների կողմից:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա. Օսիկյանը թիվ 35/1706 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ոստիկանության շտաբում իրականացվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1 հոդվածի պահանջները չպահպանելու համար ՀՀ

ոստիկանության պետի 05.11.2010թ. թիվ 2332-Ա հրամանով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետի հետախուզության գծով տեղակալին հայտարարվել է «նկատողություն»:

Նշենք նաև, որ Ոստիկանության մարմին բերման ենթարկվածների մատյանի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ առանձին դեպքերում բերման ենթարկված քաղաքացիներից ոմանք մատյանում նշված չեն: Եղել են նաև դեպքեր, երբ բերման ենթարկվածների մատյանում նշված է, որ նրանք բերման են ենթարկվել և ազատ են արձակվել, սակայն ՄԻՊ աշխատակիցների այցելության ժամանակ այդ անձինք դեռ Ոստիկանության բաժնում են եղել:

2010 թ-ին շարունակվել է այն արատավոր պրակտիկան, որի մասին նշվել է դեռևս նախորդ տարվա զեկույցում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրվել են դիմում-բողոքներ այն մասին,որ Ոստիկանության բաժինները, հանցազրծությունների վերաբերյալ հաղորդումներ ստանալու դեպքում, չեն դեկավարվել ՀՀ քր. դատ. օր-ի 181-րդ հոդվածով նախատեսված պահանջներով: Նման դեպքերում որոշում կայացնելու փոխարեն նրանք բավարարվել են միայն նշված հաղորդումներն, այսպես կոչված, երկրորդ մատյանում հաշվառելով:

Ոստիկանության բաժինների դեկավարների կողմից հղում է կատարվում ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ-ի թիվ 12/354 հրամանին, ըստ որի՝ հաղորդումները, պատահարները հաշվառվում են ոստիկանության գրասենյակում մուտքի գրանցման մատյանում, զեկուցվում են բաժանմունքի պետին, այնուհետև գրանցվում հերթապահ մասի թիվ 2-րդ ստուգված տեղեկությունների հաշվառման մատյանում:

Պետք է նշել, որ ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999 թ-ի թիվ 12/354 հրամանը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից և գրանցված չէ ՀՀ արդարադատության նախարարության կողմից: Ուստի, այն իրավական ուժ չունի:

Վերոգրյալի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին և ՀՀ ոստիկանապետին առաջարկվել է քննարկել ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ-ի թիվ 12/354 հրամանի գործողությունը դադարեցնելու նպատակահարմարության հարցը: Ոստիկանությունից ստացվել է հետևյալ պատասխանը. «Երևան քաղաքի վարչությանը, մարզային վարչություններին և նրանց ենթակա բաժիններին ցուցում է տրվել հանցազրծությունների մասին հաղորդումների քննարկման ընթացքում դեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի պահանջներով: 1999թ-ի թիվ 12/354 համատեղ հրամանը ենթակա ստորաբաժանումների կողմից կիրառվելու է այնքանով, որքանով այն չի հակասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին»:

Այնուամենայնիվ, չնայած Պաշտպանի գրություններին ի պատասխան ՀՀ ոստիկանությունից փաստում են, որ ընթացիկ տարում Ոստիկանությունն առաջնորդվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, սակայն ՍԻՊ աշխատակազմի կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս շարունակվում է այդ արատավոր պրակտիկան: Չատ հաճախ միայն Պաշտպանի միջամտելուց հետո են բացահայտվում նման դեպքերը, և ծառայողական քննությունների արդյունքում մեղավոր անձինք ենթարկվում են կարգապահական պատասխանատվության:

Ինչպես 2009 թվականին, հաշվետու տարում նույակես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ ոստիկանության համագործակցության արդյունքում ՀՀ ոստիկանության պետի համապատասխան իրամաններով կարգապահական պատասխանատվության են ենթարկվել Ոստիկանության տարբեր բաժինների մի քանի աշխատակիցներ:

Նախորդ տարիների համեմատ ընթացիկ տարում կրծատվել են այն դիմում-բողոքների քանակը, որոնք վկայում էին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137 հոդվածի դրույթների խախտմամբ ԶՊՎ-ում կալանավորված անձանց նախատեսվածից ավելի երկար պահելու մասին:

Դրական տեղաշարժին էականորեն նպաստել են Մարդու իրավունքների պաշտպանի՝ Ոստիկանապետին ուղղված գրությունները: ՀՀ ոստիկանապետի 29.01.2009թ. ցուցումով Ոստիկանության իրավասու ծառայություններին հանձնարարվել է ՀՀ ոստիկանության համակարգի ԶՊՎ-ներում կալանավորված անձանց պահելիս խստագույնս առաջնորդվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Զերբարկալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

Մի շարք դիմում-բողոքներ ուղղված են եղել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, ինչպես նաև անձնագրային բաժինների ու դրանց աշխատակիցների գործողությունների (անգործության) դեմ: Մեծամասնություն են կազմել անձի օրինական պահանջով անձնագիր չտրամադրելու վերաբերյալ դիմումները, երբ մերժումը պատճառաբանվում է անձի՝ մշտական բնակության վայր կամ քաղաքացիություն չունենալու կամ այլ պետության քաղաքացի հանդիսանալու հանգամանքով:

Պաշտպանի աշխատակազմ հասցեագրված՝ քաղաքացուն անձնագիր չտրամադրելու վերաբերյալ մի շարք դիմում-բողոքներ Պաշտպանի միջամտությամբ դրական լուծում են ստացել:

Պաշտպանին հասցեագրվել են բազմաթիվ դիմում-բողոքներ, որոնցով դիմումատունները խնդրել են պաշտպանի միջնորդությունը՝ դադարեցնելու իրականացվող քրեական հետապնդումը, փոխելու դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռները և այլն:

Նմանատիպ դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում Պաշտպանի կողմից կայացվել է բողոքը չբնարկելու մասին որոշում:

Ընթացիկ տարում Պաշտպանի աշխատակազմ են մուտքագրվել նաև այնպիսի դիմում-բողոքներ, որոնցով բարձրացված հարցերի ուսումնասիրությունը վկայել է դիմողի՝ Պաշտպանի լիազորություններին, ինչպես նաև իր իրավունքներին և ազատություններին, դրանց պաշտպանության երաշխիքներին, Ոստիկանության՝ քրեական դատավարությունում և դրանից դուրս հանդես եկող մարմինների ու պաշտոնատար անձանց՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններին ոչ բավարար չափով տեղյակ լինելու մասին։ Վերոնշյալ դեպքերում Պաշտպանի կողմից կայացվել է դիմողին՝ իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին որոշում։

Պաշտպանին հասցեագրած մի շարք բողոքներ փոխանցվել են ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ԿԱԾ ԱԱԾ քննչական վարչության, ՀՀ հատուկ քննչական ծառայության և Ոստիկանության քննարկմանը՝ խնդրելով արդյունքների մասին հայտնել ինչպես Պաշտպանին, այնպես էլ՝ դիմումատուին։ Այդպիսիք վերաբերել են հանցագործության մասին հաղորդումներին, ինչպես նաև Ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացվող ոչ իրավաչափ գործողություններին։

Պետք է նշել, որ փոխանցված գործերի վերաբերյալ Դատախազությունից, ՀՀ ԿԱԾ ԱԱԾ քննչական վարչությունից և ՀՀ ոստիկանությունից պատասխանները, որպես կանոն, ստացվել են ողջամիտ ժամկետում։

### 3.5. ՀՀ դատախազություն

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ։

Դատախազության աշխատակիցները որոշ դեպքերում թերի են կատարում հսկողություն իրականացնելու իրենց սահմանադրական գործառույթը՝ ժամանակին չեն վերացնում նախաքննության մարմինների կողմից թույլ տրված խախտումները։ Մարդու իրավունքների խախտումները հաճախ պայմանավորված են հենց այդ հանգամանքով։

Բողոքների մեծ մասը վերաբերել է քրեական գործերի նախաքննության ընթացքում քննչական և այլ դատավարական գործողությունները օրենքի պահանջների խախտումներով կատարելուն, գործով ձեռք բերված ապացույցները բազմակողմանի և օրյեկտիվ հետազոտման չենթարկելուն, օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները

մեղադրանքի հիմքում դնելուն, ինչպես նաև նշված գործունեության օրինականության նկատմամբ ոչ պատշաճ դատախազական հսկողություն իրականացնելուն:

Պաշտպանի հանձնարարությամբ այցելություններ են կատարվել ՀՀ ոստիկանության մի շարք բաժիններ, որտեղ մատյանների ուսումնասիրությամբ պարզվել է, որ անձինք Ոստիկանության բաժին բերման ենթարկվելուց, ձերբակալվելուց, իսկ այնուհետև՝ կալանավորվելուց հետո օրենքով սահմանված ժամկետից ավելի ժամանակով պահվել են Ոստիկանության համապատասխան բաժնի ձերբակալվածների պահման վայրերում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենգրքի 137 հոդվածի և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի կոպիտ խախտում է:

Ընթացիկ տարում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ՀՀ գլխավոր դատախազությունից գրությամբ տեղեկացրել են, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Թամազյանի 23.04.2010թ. թիվ 17/12-13-10 հանձնարարականով հետազայում նման բնույթի խախտումները բացառելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների և բաժինների պետերին, ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և վարչական շրջանների դատախազներին հանձնարարվել է կալանավորվածներին պահելու վայրերից կալանավորված անձին քննչական գործողություններ կատարելու կապակցությամբ ԶՊՎ-ներ կամ այլ վայրեր տեղափոխելու նպատակով կայացվող որոշումներում ու տրվող ցուցումներում պարտադիր կարգով նշել քննչական գործողության տեսակը և տալ տեղափոխման անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան հիմնավորում: Միաժամանակ նշվել է, որ վերոնշյալ հանձնարարականով հանձնարարվել է նաև կալանավորված անձանց կալանավորվածներին պահելու վայրերից տեղափոխել միայն այն դեպքում, եթե քննչական գործողության բնույթից ելնելով՝ հնարավոր չէ դրա կատարումը կալանավորվածներին պահելու վայրերի՝ դրա համար նախատեսված համապատասխան տարածքներում և պայմանավորված է նրանց այլ վայրեր տեղափոխելով:

Ի տարբերություն նախորդ տարվա՝ ընթացիկ տարում նմանատիպ բողոքներ չեն ստացվել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է դիմել ՀՀ դատախազության կենսաթոշակառու՝ հայտնելով, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 55-րդ հոդվածի կիրառման ընթացքում ծագել են հարցեր, որոնց հետևանքով խախտվում է ոչ միայն իր, այլ նաև բազմաթիվ այլ անձանց իրավունքները: Մասնավորապես՝ ՀՀ գլխավոր դատախազության ֆինանսատեսական վարչությունը, կամայականորեն մեկնարանելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի պահանջները, դատախազներին չի վճարում դասային աստիճանների համար նախատեսված հավելավճար, մինչդեռ Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ

դատախազի աշխատավարձը բաղկացած է պաշտոնային դրույքաչափից, հավելավճարներից և օրենքով նախատեսված այլ վճարներից:

Նույն Օրենքի 55-րդ հոդվածի 12-րդ կետը սահմանում է դասային աստիճանի համար տրվող հավելավճարի չափը, իսկ 13-րդ կետը՝ երկարամյա ծառայության համար տրվող հավելավճարի չափը, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատած տարիների քանակը և ունեցած դասային աստիճանը:

Քաղաքացին նշել է նաև, որ ՀՀ գլխավոր դատախազության ֆինանսատնտեսական վարչության՝ Օրենքի նման մեկնաբանման հետևանքով խախտվում են ոչ միայն այդ պահին աշխատող, այլ նաև ՀՀ դատախազության կենսաթոշակառուների իրավունքները և օրինական շահերը:

Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը հայտնել է, որ ՀՀ գլխավոր դատախազի 2007թ. թիվ 299 հրամանով այդ կենսաթոշակառուն ազատվել է ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի պաշտոնից և ուղարկվել երկարամյա ծառայության կենսաթոշակի: Հայտնվել է նաև, որ կենսաթոշակի գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ իհվանդության վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը լիարժեք չեն, և դեկավարվելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով՝ ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. թիվ 166 հրամանով կենսաթոշակառուին վճարվող երկարամյա ծառայության կենսաթոշակը դադարեցվել է: Սակայն տվյալ գործով առկա է ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, որով ՀՀ գլխավոր դատախազի վերը նշված հրամանը առողջինչ է ճանաչվել:

Այս դիմում-բողոքը դեռևս գտնվում է քննարկման փուլում:

### 3.6. ՀՀ հատուկ քննչական ծառայություն

Հատուկ քննչական ծառայություն ապօրինի բերման ենթարկելու, ինչպես նաև Ոստիկանության բաժիններում ծեծի և խոշտանգման դեպքերի կապակցությամբ քաղաքացիների կողմից ներկայացված դիմում-բողոքների կապակցությամբ Պաշտպանի բոլոր գրություններին 2010 թ-ին նույնպես Ծառայությունը տվել է հետևյալ պատասխանը. «Ուսումնասիրությամբ պարզվել է, որ դիմումատուի պնդումներն այն մասին, որ Ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել են ծեծի, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, հիմքից զուրկ են, ստուգվել և չեն հաստատվել, չեն

համապատասխանում իրականությանը և քրեական պատասխանատվությունից ազատվելու նպատակ են հետապնդում»:

ՀԶԾ-ում նման դեպքերում, որպես կանոն, բացատրություն վերցնում են միայն Ոստիկանության աշխատակիցներից, ովքեր պնդում են, որ դիմումատուի կողմից նշվածը իրականությանը չի համապատասխանում: Առանձին դեպքերում կատարում են նաև առերես հարցաքննություններ, որի ընթացքում Ոստիկանության աշխատակիցները նույնը պնդում են նաև դիմում-բողոք ներկայացրած քաղաքացիներին, ինչը հաճախ նրանց նկատմամբ ճնշում գործադրելու միջոց է հանդիսանում: Երբեմն իրենց մեղքի բաժինն ունեն նաև այն տուժողները, ովքեր հետազայում իրենց ցուցմունքը փոխում են:

Արդյունքում, Ոստիկանության աշխատակիցների կողմից քաղաքացիների նկատմամբ բռնի և հակաօրինական գործողություններ կատարելու դեպքերը ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից կատարված քննությամբ չեն հիմնավորվում, և որոշում է կայացվում քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ նախաքննություն իրականացնող մարմինը պարտավոր է առաջնորդվել Քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված սկզբունքով, այն է՝ գործի հանգամանքների հետազոտման ուղղությամբ ձեռնարկել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն: Միայն այդ դեպքում կարող են բացահայտվել Ոստիկանության աշխատակիցների հակաօրինական գործողությունները:

Եղել են դեպքեր, երբ քաղաքացիները դիմել են Ոստիկանություն՝ հաղորդմամբ, որ ենթարկվել են ծեծի և խոշտանգումների՝ ներկայացնելով իրենց մարմնի վրա առկա խոշտանգման հետքերը և կապտուկները: Սակայն Ոստիկանության աշխատակիցներն անգործություն են ցուցաբերում և անմիջապես փորձաքննություն չեն նշանակում: Փորձաքննությունը նշանակվում է այն ժամանակ, երբ ծեծի և խոշտանգումների հետքերն արդեն վերացել են:

Հարկ ենք համարում նշել, որ ընթացիկ տարում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Հատուկ քննչական ծառայությանն ուղղված մի շարք գրություններ, որոնք բովանդակում են քաղաքացու հաղորդումը Ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված հանցագործությունների մասին, Հատուկ քննչական ծառայությունն իր հերթին ուղարկում է Ոստիկանություն՝ որպես գրություն-հաղորդում, ծառայողական քննություն կատարելու, նշված հանգամանքները ստուգելու և հետազա ընթացքը լուծելու համար: Իհարկե, նման գործելառը չի կարելի արդարացված համարել:

### **3.7. Դատական պրակտիկայի դիտարկում (մոմիթորինգ)**

2010 թվականի դատական նիստերի դիտարկումները վերհանեցին օրենսդրական բացքողումներ, արդարադատության իրականացման ընթացքում տեխնիկական խոչընդոտմեր, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի բարելավման խնդիրներ: Միևնույն ժամանակ, մարդու իրավունքների պաշտպանության առումով, դիտարկման արդյունքներով առկա է դրական տեղաշարժ:

#### **3.7.1. Օրենսդրական թերությունների ազդեցությունը արդար դատաքննության իրականացման արդյունավետության վրա**

2009 թվականի տարեկան գեկույցում «Պաշտպանն անդրադարձել էր Հանրապետության դատարանների որոշ շենքերում վկաների համար առանձին սպասարահների բացակայությանը՝ մատնանշելով դրա հնարավոր ազդեցությունն արդար դատաքննության իրականացման վրա: Այս խնդիրը դեռևս լուծված չէ, հատկապես մարզերում գտնվող որոշ դատարաններում:

ՀՀ Նախագահի 2009 թվականի ապրիլի 21-ի թիվ ՆԿ-59-Ն «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» կարգադրության համաձայն ընթանում են օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ:

Արդար դատաքննության իրավունքի ապահովման շատ խնդիրներ լուծում կստանան վերը նշված ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում:

Անձի դատամատչելիության իրավունքի իրականացման համար կարող է խոչընդոտ առաջացնել դատական կարգադրիչների գործառույթների օրենսդրական բացը:

Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ դատական կարգադրիչն իրավունք ունի գննության ենթարկելու դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց և նրանց իրերը: Օրենքով սահմանված չէ դատական կարգադրիչի կողմից գննություն կատարելու կարգը:

Ըստ ՀՀ օրենսդրության՝ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն է (218-րդ հոդված) սահմանում գննում կատարելու կարգը:

Հետևաբար, դատական կարգադրիչի կողմից զննում կատարելու դեպքում դրա իրականացման եղանակը և պայմաններն օրենքով սահմանված չինելու պարագայում դատական կարգադրիչի գործողությունները կարելի է դիտարկել այօրինի և հակադրավական:

### **3.7.2. Անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման օրենսդրական հիմքերը և գործնական կիրառումը**

Դեռևս օրակարգային իրատապ հիմնախդիր է պետության միջոցների հաշվին քաղաքացիական և վարչական գործերով սոցիալապես անապահով անձանց իրավաբանական օգնության տրամադրումը: «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով փորձ է արվում լուծել այդ խնդիրը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված է փաստաբանական գործունեության վճարովի լինելը: Սույն հոդվածով ամրագրված է. «Պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնություն քրեական գործերով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և նախատեսված դեպքերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և հետևյալ դեպքերում.

- 1) ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով,
- 2) խեղման կամ առողջության այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրող մահվան հետևանքով պատճառված վնասի փոխառուցման վերաբերյալ գործերով»:

Այդպիսով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածով սպառիչ կերպով նախատեսված են այն դեպքերը, երբ քաղաքացիական գործերով անվճար իրավաբանական օգնություն տրվում է պետության միջոցների հաշվին: Միևնույն ժամանակ, այդ սահմանափակ ցանկը հաճախ սոցիալապես անապահով վիճակում գտնվող անձանց հնարավորություն չի տալիս դիմել դատարան: <sup>19</sup>

Պետք է նկատել, որ ո՞չ քննարկվող հոդվածով, ո՞չ էլ Զրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չեն այն դեպքերը, երբ քրեական գործերով փաստաբանական ծառայությունները մատուցվում են պետության միջոցների հաշվին:

<sup>19</sup> Այս խնդիրին Պաշտպանն անդրադարձել է 2007թ., 2008թ. և 2009թ. տարեկան գեկույցներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է անձին անվճար իրավաբանական օգնություն տրամադրել՝ ելնելով նրա գույքային դրությունից: Սակայն վերոնշյալ դրույթը ևս առաջացնում է խնդիրներ, որին Պաշտպանն անդրադարձել է դեռևս 2009 թ-ի տարեկան գեկույցում: Կարծում ենք՝ խնդիրը կարող է լուծվել, եթե «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարվի համապատասխան օրենսդրական փոփոխություն:

Նշենք, որ պետության միջոցների հաշվին անվճար իրավաբանական օգնության տրամադրումն իրականացվում է ՀՀ փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից:

ՀՀ օրենսդրությամբ նաև պետք է հստակեցվի «սոցիալապես անապահով» եզրույթը, որը իրավակիրառ մարմնին հնարավորություն կտա լուծելու պետության միջոցների հաշվին իրավաբանական օգնություն տրամադրելու խնդիրը:

Դատարանի կողմից կարող են պատճառաբանված որոշում կայացնելու հիմք դառնալ անձի սոցիալապես անապահով լինելու վերաբերյալ այս կամ այն մարմիններից տրված տեղեկանքները: Միևնույն ժամանակ, պետք է նկատել, որ օրենսդրական այսպիսի բացի պայմաններում դատարանի կողմից ցանկացած մերժումը կարող է դիտարկվել որպես պաշտպան ունենալու իրավունքի ուսնահարում:

Մինչդեռ, համաձայն ՀՀ Սահմանադրության, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումների՝ քրեական գործով պաշտպան ունենալու իրավունքն արդար դատաքննության իրավունքի իրականացման կարևոր երաշխիքներից է:

### 3.7.3. Դատավորի վարքագծի նկատմամբ հսկողական մեխանիզմների կատարելագործում

Դատաիրավական բարեփոխումների ընթացքում առանցքային նշանակություն ունի դատավորի վարքագծի պատշաճ դրսերումն՝ արդարադատություն իրականացնելիս և ոչ դատական գործունեության ընթացքում:

ՀՀ դատավորների վարքագծի կանոնները Եվրոպական միության չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի 2010 թ-ի ապրիլի 23-ին տեղի ունեցած նիստում ընունվել է «Դատավորի վարքագծի կանոնները» և

ուժը կորցրած է ճանաչվել «Դատավորի վարքագծի կանոնագիրքը» հաստատելու մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 77 որոշումը:<sup>20</sup>

«Դատավորի վարքագծի կանոնների» 1-ին կանոնի համաձայն դատավորը պարտավոր է դրսեորել վարքագծի բարձր չափանիշներ՝ ապահովելով դատական համակարգի նկատմամբ հասարակության վատահությունը:

«Դատավորի վարքագծի կանոնները» կարելի է դիտարկել դատաքննության ընթացքում արդար դատաքննության իրականացման կարևոր երաշխիք: Այսպես, «Դատավորի վարքագծի կանոնների» 16-րդ կանոնի համաձայն:

«Մինչև գործի քննության ավարտը դատավորը պարտավոր է՝

ա) ձեռնպահ մնալ փաստերի կամ օրենքների այնպիսի մեկնաբանությունից, որը կարող է գործի լուծման ակնհայտ կանխորշվածության տպավորություն ստեղծել,

բ) չարտահայտել իր դրական կամ բացասական վերաբերմունքը դատավարության կողմերի հանդեպ,

գ) չցուցաբերել այնպիսի վարքագիծ (միմիկա, ժեստիկուլյացիա, հեգնանք և այլն), որը դատավարության մասնակիցների կողմից կարող է ընկալվել որպես նախատրամադրվածության դրսեորում,

դ) խուսափել գործի հանգամանքների վերաբերյալ հայտարարություններից, հրապարակային ելույթներից ու մեկնաբանություններից,

ե) չմիջամտել ձայնագրման համակարգի անխափան աշխատանքին,

զ) նիստերը վարել օրենքով սահմանված հանդերձանքով,

է) խուսափել ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ կարծիք հայտնելուց»:

Կարծում ենք՝ այս կանոնում նշված պարտավորությունների կատարման հսկողական մեխանիզմ կարող է լինել դատական նիստերի ձայնագրառումը, որոշ դեպքերում նաև՝ տեսաձայնագրումը:

Մինչեռ, այս պարտավորության կատարման համար, ինչպես նաև արդար և հրապարակային դատաքննության իրականացման վրա կարող է բացասական ազդեցություն ունենալ այն հանգամանքը, որ ոչ բոլոր դատարաններում են դատական նիստերը ձայնագրառվում, հատկապես՝ նարզերի ընդհանուր իրավասության դատարաններում:

Դատական նիստերի ձայնագրառման բացակայության պայմաններում հնարավոր չի լինում նաև ապացուցել դատավորի կողմից վարքագծի կանոնների խախտումները, որոնց վերաբերյալ Պաշտպանը ստացել է բողոքներ:

<sup>20</sup> [www.court.am // http://www.court.am/upload/file/Varqagic-%20endunvac-23\\_04\\_10.pdf](http://www.court.am/upload/file/Varqagic-%20endunvac-23_04_10.pdf)

### **3.7.4. Պաշտպանի իրավասությունը դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ դիմողին առաջարկություններ կամ խորհրդատվություն տալու առումով**

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն Պաշտպանն իրավասու է դիմողին տալ առաջարկություններ կամ խորհրդատվություն՝ դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ:

Այս իրավասության սահմաններում դիմումատունները ստացել են համապատասխան առաջարկություններ և խորհրդատվություն, որոնց հիման վրա փորձել են ինքնուրույն պաշտպաննել սեփական իրավունքները: Եղել են դեպքեր, երբ դիմումատունները, ինքնուրույն պաշտպաններով սեփական իրավունքները, հասել են իրենց խնդրի լուծմանը, ինչի մասին տեղեկացրել են Պաշտպանին:

Քաղաքացիական իրավական վեճերի դեպքում մարդիկ ձգտում են ինքնուրույն՝ առանց փաստաբանի, պաշտպաննել սեփական իրավունքները միայն երկու պարագայում. ա) սոցիալապես անապահով վիճակը և փաստաբանական ծառայությունների դիմաց համապատասխան վճարումների կատարման անհնարինությունը, թ) անվատահությունը փաստաբանի գործունեության նկատմամբ:

Առաջին դեպքին առնչվող օրենսդրական բացքորումներին անդրադարձ է եղել դեռևս 2009 թ-ի տարեկան գեկույցում, և այս հարցը, կարծում ենք, իր լուծումը կստանա «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություն կատարելու արդյունքում:

Հաճախ քաղաքացիներն անվատահություն են հայտնում փաստաբանական գործունեության նկատմամբ: Պատճառը դիմումատունների կողմից գործի վարման ընթացքում փաստաբանի՝ հնարավոր ռազմավարական քայլերի ոչ ճիշտ ընկալումն է, կամ՝ փաստաբանի պարտականությունների ոչ արդյունավետ ու լիարժեք կատարումը:

Փաստաբանի վարքագծից դժգոհելու դեպքում դիմումատուին բացատրվում է ՀՀ փաստաբանների պալատին դիմելու միջոցով իր իրավունքների պաշտպանության հնարավորությունը:

### **3.7.5. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ փոխելու վերաբերյալ իրավակիրառ պրակտիկան**

Խնդրին **Պաշտպանն անդրադարձել** է դեռևս իր նախորդ տարեկան գեկույցներում: Սասնավորապես նշվել էր, որ իրավակիրառ պրակտիկայում դատարանների կողմից չեն պահպանվում ՀՀ քրեադատավարական օրենսգրքի 135-րդ և 136-րդ հոդվածների պահանջները: Այսինքն, խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է պատճառաբանված լինի, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում (ՀՀ քր.դատ.օր.-ի 136-րդ հոդված):

Դատարանը, քննարկելով որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ փոխելու մասին միջնորդությունները, պետք է հաշվի առնի ներկայացված փաստարկների հիմնավորվածությունը, որոնց շարքում են քննությունից թաքնվելը, քննությանը խոչընդոտելը, միջամտությունը արդարադատության իրականացմանը, նոր իրավախախտման կատարման ռիսկը, հասարակական կարգին սպառնացող ռիսկը (ՀՀ քր.դատ.օր.-ի 135-րդ հոդված):

ՀՀ վճռաբեկ դատարանը, որը Սահմանադրությամբ կոչված է ապահովելու օրենքների միատեսակ կիրառումը, Ա. Ա-ի գործով իր 31.10.2008թ. որոշմամբ անդրադապ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու ու գրավի կիրառմամբ անձին կալանքից ազատ արձակելու և գրավի անթույլատրելիության խնդիրներին: Վճռաբեկ դատարանը բավականին կարևոր եզրահանգումներ է կատարել այս որոշման մեջ, որոնք պետք է պարտադիր լինեն ՀՀ դատարանների համար:

Մինչ օրս, սակայն, դատարանները շարունակում են նախկին՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան:

Պետք է նշել, որ Վճռաբեկ դատարանի այս որոշումը պարզաբանում է միայն խափանման միջոց կիրառելու պրակտիկայի որոշ հարցեր, և կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և գրավից բացի մյուս այլնտրանքային միջոցների կիրառման պրակտիկան դեռևս բարելավելու խնդիր կա: ՀՀ արդարադատության խորհուրդը կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ձևավորել է նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկա:<sup>21</sup>

<sup>21</sup> սեւ, [www.court.am](http://www.court.am)

### **3.7.6. Սեփականության իրավունքի պաշտպանությանն առնչվող խնդիրների վերաբերյալ**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նախորդ տարեկան գեկույցներում անդրադարձել է բացառիկ՝ հանրային գերակա շահ ճանաչված տարածքների սեփականատերերի իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրներին:

Պաշտպանը մշտապես ընդգծել է ներպետական մեխանիզմներով խնդրի լուծման առավելությունների մասին՝ պետության միջազգային հեղինակության և պետական բյուջեի պահպանման առումով:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված որոշումները դեռևս կատարման փուլում են (օրինակ՝ 2009 թ-ի հունիսի 23-ին կայացրել է որոշում «Մինասյանն ու Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի» գործով), և Հայաստանի Հանրապետության կողմից դրանց կատարման ավարտից հետո առավել կհստակեցվեն սեփականության իրավունքի պաշտպանության խնդիրների լուծման ճանապարհները՝ բացառելով այս բնագավառում մարդու իրավունքների խախտումները:

### **3.7.7. Փաստաբանների պաշտպանվածության վերաբերյալ**

Դեռևս իր 2008 և 2009 թթ-ի տարեկան գեկույցներում Պաշտպանն անդրադարձել էր փաստաբանների՝ իրենց կողմից մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում պաշտպանվածության խնդրին և դրան առնչվող համակարգային հիմնախնդիրներին: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկման ընթացքում չափազանց կարևոր է քննորշել՝ փաստաբանությունը իրավապաշտպան գործունեություն է, թե՝ ձեռներեցություն: Այս հիմնարար սկզբունքի ձևակերպումից է կախված փաստաբանական գաղտնիության, փաստաբանների անկախության, հաշվետվողականության և նրանց գործունեությանն առնչվող մյուս սկզբունքների ու խնդիրների ձևակերպումը:

Արդար դատաքննության իրավունքի ապահովման, ինչպես նաև արդարադատության նկատմամբ հանրության վստահության բարձրացման համար կարևոր նախապայման է կայացած փաստաբանությունը:

Պաշտպանը դիմել էր ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի (18 ապրիլի 2003 թվականի, ՀՕ-528-Ն) 343-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ

հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 27-րդ հոդվածի 1-ին մասին, 42-րդ հոդվածի 2-րդ մասին և 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու համար: Սահմանադրական դատարանը 2010 թ-ի հունվարի 14-ին կայացրել է որոշում, որի համաձայն. «ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով կիրառելի չէ նաև դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, ճանաչել Հայաստանի Հանրապետության 14.1-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր»:<sup>22</sup>

Դիտարկումների արդյունքում պարզվել է, որ փաստաբանի կողմից մատուցվող ծառայությունները որոշ դեպքերում չեն գոհացնում պաշտպանյալներին կամ վստահորդներին:

Տվյալ դեպքերում դիմումի հիման վրա ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը իրավասու է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցել և գործը հանձնել կարգապահական հանձնաժողովին՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ եզրակացություն ստանալու համար:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխմորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը ՀՀ օրենսդրությամբ շարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով և պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Որոշ դեպքերում հենց փաստաբաններն են թերանում և բարեխիղճ չեն մատուցում ծառայությունները: Այդ փաստերի առկայության կամ այլ խախտումների պարագայում փաստաբանները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ դադարեցվել է փաստաբանական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ լիցենզիան:

### 3.8. Պատական նիստերի դիտարկում (մոնիթորինգ)

#### 3.8.1. Քաղաքացիների դիմումների հիման վրա Պատական նիստերի դիտարկում

Դիմումատունները հաճախ են դիմում իրենց մասնակցությամբ դատական նիստերի դիտարկում անցկացնելու խնդրանքով: Ներկայացված շատ դիմումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դիմումատունները, չունենալով դատավարական ընթացակարգերի

<sup>22</sup> Մանրամասն՝ տես [www.concourt.am](http://www.concourt.am)

վերաբերյալ համապատասխան իրավական գիտելիքներ, աջակցություն են խնդրում Պաշտպանից: Նրանց տրամադրվում է համապատասխան խորհրդատվություն իրենց դատավարական իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ, միևնույն ժամանակ, բացատրվում է Պաշտպանի կողմից դատական վարույթին շմփամտելու օրենսդրական պահանջը:

### **3.8.2.ՀՀ դատարանների արդարացման դատավճիռների վերաբերյալ**

Պաշտպանը 2009 թ-ի տարեկան գեկույցում անդրադարձել է դատարանների կողմից կայացված արդարացման դատավճիռներին: Պետք է նկատել, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկումների ժամանակ կարծիք է հայտնվում, որ կայացված արդարացման դատավճիռների քանակը չափորոշիչ է դատարանների արդարացիության աստիճանը որոշելու համար: Նախորդ տարվա համեմատ 2010 թ-ին ավելացել է արդարացման դատավճիռների քանակը:

Իրավունքի զարգացման առումով արադարացման դատավճիռները կարևոր եզրահանգումներ են պարունակում:

2010 թ-ի հոկտեմբերի 5-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը քրեական գործով իրապարակեց դատարանի դատավճիռն՝ ըստ Ն. Պ.-ի մեղադրանքի: Դատարանը Ն. Պ.-ին ճանաչեց անմեղ և անպարտ: Նշենք, որ դատարանն այս որոշումը կայացրել է Վճռաբեկ դատարան ներկայացված բողոքը մասնակիորեն բավարարելուց և նոր քննության համար այս դատարան ուղարկելուց հետո: Սույն գործով Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլ հարցերի, անդրադարձել է նաև Ն. Պ.-ի՝ պաշտպանության իրավունքի խախտումներին, սույն գործով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությանը և կատարել արժեքավոր հետևություններ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ «քրեական դատավարության ընթացքում հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձի պաշտպանության իրավունքի ապահովման՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականության իրավական հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր»:

### **3.9. ՀՀ արդարադատության նախարարություն և ստորաբաժանումներ**

Քաղաքացիները հիմնականում բողոքել են Արդարադատության նախարարության համակարգի ստորաբաժանումների՝ ԴԱՀԿ ծառայության և ԶԿՍԳ գործակալության, ինչպես նաև նոտարների գործողությունների կամ անգործության դեմ:

Ընթացիկ տարում **Պաշտպանին** են դիմել քաղաքացիներ, ովքեր հայտնել են, որ 2008 թ-ին ԶԼՄ-ներից տեղեկացել են, որ Հայոց Սեծ Եղեռնին զոհ դարձածների ժառանգները կարող են ներկայանալ Արդարադատության նախարարություն՝ փաստաթղթերը ձևակերպելու և դրամական հատուցումներ ստանալու համար:

Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգներին պետք է տրվեն հատուցումներ՝ հիմք ընդունելով Լոս-Անջելեսի կենտրոնուկան դատարանի 09.12.09 թ-ի որոշումը:

Ըստ դիմումատուների՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացրել են Արդարադատության նախարարություն, սակայն խնդրանքը մերժվել է:

Քաղաքացիներին մանրամասն տեղեկատվություն տրամադրելու ակնկալիքով **Պաշտպանը** դիմել է **ՀՀ արդարադատության նախարարին**:

**ՀՀ արդարադատության նախարարը** հ. 01/851-10 գրությամբ հայտնել է, որ դեռևս 2007 թվականի հունիս ամսից **ՀՀ արդարադատության նախարարությունում, հաշվի առնելով խնդրի քաղաքական բնույթն ու բարդ իրավիճակում քաղաքացիներին պատշաճ իրավական անհատույց օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը, սեփական նախաձեռնությամբ սկսվել էր ֆրանսիական «Ա.Ք.Ս.Ս.» ապահովագրական ընկերության գործով դիմումների ընդունման գործընթացը: Արդարադատության նախարարությունում դիմումների ընդունման վերջնաժամկետը մինչև 2007 թ-ի դեկտեմբերի 20-ն էր, իսկ անհատական նախաձեռնությամբ քաղաքացիները դրանք կարող էին ուղարկել մինչև 2008 թ-ի հունվարի 7-ը: Ընդ որում, այդ բացթողնված ժամկետը, նույնիսկ հարգելի պատճառներով, վերականգնման ենթակա չէ, քանի որ դա սահմանվում է ոչ թե նախարարության, այլ ապահովագրական ընկերության կողմից:**

**ՀՀ արդարադատության նախարարությունը** հիշյալ գործընթացի ժամանակ սույն օժանդակում էր դիմում ներկայացնող քաղաքացիներին, մասնավորապես՝ ստեղծված իրավախորհրդատվական հանձնաժողովի միջոցով հայցեր էին պատրաստվում, ստուգվում հայցին կցվող փաստաթղթերի բավարար կամ անբավար լինելու փաստը, աջակցում ձեռք բերելու անհրաժեշտ այլ փաստաթղթերը, որոնք կհաստատեին դիմումատուի և նրա նախնու միջև ազգակցական կապը: Ընդ որում, փոխհատուցումները տրվում են ոչ թե ցեղասպանության բոլոր զոհերի ժառանգորդներին, այլ միայն այն անձանց, ում նախնիների անուն-ազգանունները ներառված են «Ա.Ք.Ս.Ս.» ապահովագրական ընկերության կողմից ներկայացված ցանկում, անհրաժեշտ է, որ դիմումների նախնիներն ավանդ ունենան

«ԱԶՍԱ» ապահովագրական ընկերությունում, որը երեք՝ «Յունյոն Վի», «Լա Կոնֆիանս» և «Լա Պատերնել», ապահովագրական ընկերությունների իրավահաջորդն է: Լու-Անցելեսի դատարանի որոշումը անհատական որոշում չէ և չի վերաբերում կոնկրետ քաղաքացու, այդ որոշմամբ հաստատվել է միայն այն, որ «ԱԶՍԱ» ապահովագրական ընկերությունը պետք է վերադարձնի վերը նշված երեք ընկերությունների ապահովագրական գումարները այն ավանդատունների ժառանգորդներին, ովքեր ապահովագրական գումար ունեն այդ ընկերություններում և ներառված են այդ ընկերության կողմից ներկայացված ցուցակում:

Ուստի, որևէ քաղաքացու դիմումի ընդունումը, որը բավարարում էր այս պահանջներին, ՀՀ արդարադատության նախարարությունում չէր կարող մերժվել: Բացի այդ, նախարարությունը հայցի ընդունումը մերժելու իրավասություն չի էլ ունեցել, այլ միայն աջակցություն է ցուցաբերել: Նույնիսկ այն դեպքում, եթե դիմումը ներկայացվում էր դեկտեմբերի 20-ից հետո, նրանց տրամադրվել է հայցի ձևու ու պարզաբանվել, որ վերջիններս անհատական նախաձեռնությամբ կարող են ուղարկել իրենց դիմումները: Հետևաբար, դիմումատունների փաստարկներն անհիմն են և իրականությանը չեն համապատասխանում:

ՀՀ ԱՆ առաքելությունը ֆրանսիական «ԱԶՍԱ» ապահովագրական ընկերության գործով արդեն իսկ ավարտվել է. այն վերաբերում էր միայն իրավաբանական խորհրդատվությանը, հարցերի նախապատրաստմանը և ըստ հասցեի ուղարկելուն: Մինչև 2008 թ-ի հունվարի 7-ը շուրջ 3840 դիմում նախարարության կողմից պատշաճ կարգով ուղարկվել է կարգավորող հանձնաժողովին:

Հայցերի բավարարման կամ մերժման և գումարների փոխհատուցման վերաբերյալ նախարարությունը որևէ պարտավորություն կամ գործառույթ չունի: Ուղարկված դիմումները դատարանի որոշմամբ ուսումնասիրել են երեք ֆրանսահայերից կազմված խորհուրդը (Հ. Չոհրաբյան, Զ. Գարրիելյան, Ս. Շնորհըյան), իսկ ժառանգորդ ճանաչվելու կամ շճանաչվելու փաստը, գումարի փոխհատուցում ստանալու կամ չստանալու հարցը հաստատվել է միայն ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Կենտրոնական շրջանային դատարանի դատավոր Քրիստինա Սնայդերի որոշմամբ: Դատական գործընթացի ավարտվելուն պես նրանք անմիջական նամակագրական կապ են հաստատել դիմումատունների հետ, բնականաբար, արդեն առանց նախարարության միջնորդության և գիտության: Այդ նամակով նրանք պետք է տեղեկացվեին իրենց հայցի բավարարման կամ մերժման մասին:

Վերոնշյալ տեղեկատվությունը տրամադրվել է դիմումատուններին:

Վերջին տարիներին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին են դիմել բազմաթիվ քաղաքացիներ, որոնց բողոքները վերաբերել են ՀՀ արդարադատության նախարարության

հարկադիր կատարման ծառայության կողմից էլեկտրոնային աճուրդի միջոցով իրացվող գույքի արժողության իջեցմանը:

Տվյալ հարաբերությունները կարգավորվում են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքներով:

Ընդհանուր առմամբ, հարկադիր աճուրդում վաճառվող լոտի մեկնարկային գինը սահմանվում է գնահատված լոտի գնի 75 տոկոսի չափով, իսկ եթե աճուրդը չի կայացել գնորդ չինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով:

Հաճախ պարտապանի գույքն էլեկտրոնային աճուրդի իրացումից հետո չի բավարարում անգամ պարտավորությունների կատարման համար, առավել ևս անշարժ գույքի դեպքում, որը պարտապանի միակ օթևանն է:

Այսպես, բնակարանի մեկնարկային գին է սահմանվել 11.000.000 ՀՀ դրամ, իսկ բնակարանի իրացվել է ընդամենը 1.000.000 ՀՀ դրամից փոքր-ինչ ավել չափով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Պաշտպանը գրություն է ուղարկել ՀՀ վարչապետին՝ խնդրելով հանձնարարել ուսումնասիրել բարձրացված հարցը և հնարավորության դեպքում հանդես գալ օրենսդրական փոփոխության նախաձեռնությամբ, քանի որ նման իրավիճակները կարող են կոռուպցիոն ռիսկերի հանգեցնել:

Այս կապակցությամբ ՀՀ արարադատության նախարարը հայտնել է, որ պատրաստակամ է քննարկել յուրաքանչյուր առաջարկ:

Միաժամանակ նշել է, որ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում հարկադիր էլեկտրոնային աճուրդով պարտապանի գույքի իրացման կարգն օրենսդրական փոփոխությունների հիման վրա գործում է 2006 թ-ի հոկտեմբերի 1-ից:

«Առցանց աճուրդ» համակարգը, որով ՀՀ-ում կատարվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդ, սպասարկվում է բանկային և պետական կառույցներում գործընթացների մոդելավորում և ավտոմատացում, ինչպես նաև տարբեր երկրներում բանկային սարքավորումների ներդրում և տեխնիկական սպասարկում իրականացնող «Սմարտ-Տեխ» ընկերության կողմից, և ինչպես որևէ պետական մարմնի, այնպես էլ որևէ այլ անձանց՝ օրենքով չնախատեսված միջամտություն աճուրդի ընթացքին, բացառվում է:

Օրենքով սահմանված կարգով վարույթի կողմերին ներկայացվող՝ արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշման մեջ նշվում է աճուրդի անցկացման ինտերնետային կայքի մասին, ինչպես նաև տեղեկացվում է երկրորդ և յուրաքանչյուր հետագա աճուրդի դեպքում լոտի գնի փոփոխման՝ օրենքով սահմանված կարգի վերաբերյալ:

Աճուրդի մասնակիցները հնարավորություն ունեն «Արքա» համակարգի միջոցով, բացառելով հարկադիր կատարողի հետ շփումը, ինքնուրույն գրանցվել և մասնակցել աճուրդին:

Բացի այդ, եթե նախկինում գործող հարկադիր աճուրդի ընթացքը, որպես կանոն, տևում էր մի քանի րոպե, ապա հարկադիր էլեկտրոնային աճուրդի դեպքում լուսի սակարգությունների տևողությունը կազմում է 10 օր և ավարտվում է դրան հաջորդող աշխատանքային օրը:

Այսպիսով, «Առցանց աճուրդ» համակարգը, որով կատարվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդը, մեխանիզմներ ունի, որոնք ապահովում են գործընթացի առավելագույն թափանցիկությունը և դրանով իսկ՝ յուրաքանչյուրի կողմից դրանց ընթացքը վերահսկելու հնարավորությունը, ինչն անխուսափելիորեն նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը:

Ուսումնասիրելով վերոգրյալ պատասխանը՝ Պաշտպանը նշել է, որ իրեն հասցեազրկած դիմում-բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանք վերաբերում են ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության կողմից էլեկտրոնային աճուրդի միջոցով իրացվող գույքի արժեքի անհամեմատ իջեցմանը, որի հետևանքով վաճառքից ստացված գումարները չեն բավարարում պարտավորությունները մարելու համար, ինչի պատճառով դժոհ են մնում ինչպես պարտապանը, այնպես էլ՝ պահանջատերը:

Պաշտպանի կողմից առաջարկվել է կատարել միջազգային փորձի ուսումնասիրություն, ստեղծել համապատասխան հանձնաժողով և գտնել խնդրի լուծման այնպիսի տարրերակ, որի հետևանքով չեն առաջանա իրավիճակներ (կամ համեմատաբար կրծատվեն այդպիսի դեպքերը), երբ գնահատված լուսն անհամեմատ ցածր արժեքով է վաճառվում՝ միաժամանակ զրկելով պարտապանին ամբողջությամբ իր պարտավորությունները մարելու հնարավորությունից: Դրա արդյունքում կնվազեն նաև կոռուպցիոն ռիսկերը:

Ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարը հայտնել է. «Հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և անցկացման մեխանիզմների կատարելագործման խնդիրը մշտապես եղել և մնում է ինչպես նախարարության, այնպես էլ ԴԱՀԿ ապահովող ծառայության դեկավարության ուշադրության կենտրոնում: Հետևաբար, ՀՀ արդարադատության նախարարությունը պատրաստակամ է հանգամանալից քննարկելու հարկադիր էլեկտրոնային աճուրդի գործընթացն էլ ավելի կատարելագործելուն միտված բոլոր շահագրգիռ կազմակերպությունների և մարմինների կողմից արված օրենսդրական ցանկացած առաջարկ»:

Սակայն ՀՀ արդարադատության նախարարության կողմից միջազգային փորձի ուսումնասիրություն չի կատարվել, չի ստեղծվել համապատասխան հանձնաժողով և չեն գտնվել խնդրի լուծման տարբերակներ:

Այսուհետև Պաշտպանի կողմից առաջարկվել է խնդրի լուծման երկու տարբերակ՝

1. լուսի գնի նվազեցման սահմանափակում՝ օրենսդրությամբ այն սահմանելու միջոցով (օրինակ՝ գնահատված արժեքի 50 տոկոսի չափից ոչ պակաս),

2. լուսի գնի երկու կամ երեք անգամ նվազելու դեպքում պարտապանին և պարտատիրոջը հնարավորություն ընձեռել գույքը վաճառել ինքնուրույն՝ տրամադրելով երկամսյա ժամկետ՝ հակառակ դեպքում տվյալ պահին գործող օրենսդրությամբ հարկադիր աճուրդով այն իրացնելու պայմանով:

Այս կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարն օրենսդրության լուսի գնի նվազեցման սահմանափակում սահմանելու (օրինակ՝ գնահատված արժեքից 50 տոկոս չափից ոչ պակաս) առաջարկի վերաբերյալ հայտնել է, որ նախկինում «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում էր, որ հինգերորդ աճուրդից հետո անշարժ գույքի գնի իջեցում չի կատարվում վեց ամսվա ընթացքում, որից հետո աճուրդային գործընթացը շարունակվում է սույն օրենքով սահմանված կարգով:

Օրենքի սույն դրույթն անարդյունավետ լինելու պատճառով վերացվել է 2005 թվականի հուլիսի 7-ի՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, քանի որ գործնականում որևէ լուս այդ ժամանակահատվածում՝ վեցամսյա ժամկետով «սառեցված գնով» ԴԱՀԿ ծառայությունում, փաստացի, չի վաճառվել: Բացի այդ, կատարողական թերթի պահանջների կատարման ժամկետներն անհարկի ձգձգելու կապակցությամբ սարեցման նման գործընթացը հարուցել էր պահանջատերերի արդարացի դժգոհություններ:

Լուսի գնի նվազեցման սահմանափակում սահմանելու մասին վերոհիշյալ առաջարկը նույնպես կարող է հանգեցնել կատարողական թերթի պահանջների կատարման ժամկետների չարդարացված երկարածզման, ինչը չի բխում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ պահանջատերերի իրավունքներից և օրինական շահերից, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ողջամիտ ժամկետում կատարելու անհրաժեշտությունից: Դրանով՝ տնտեսական տեսանկյունից, խախտվում են աճուրդի կազմակերպման հիմքերը, այն է՝ առաջարկի և պահանջարկի շուկայական հարաբերությունների ձևավորումը:

Լոտի գնի երկու կամ երեք անգամ նվազելու դեպքում պարտապանին՝ պահանջատիրոջը գույքը ինքնուրույն վաճառելու հնարավորություն ընձեռելու համար երկամսյա ժամկետ տրամադրելու մասին առաջարկի վերաբերյալ տեղեկացվել է, որ օրենտրական նման փոփոխության անհրաժեշտություն չկա, քանի որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անցկացնում է «Առցանց աճուրդ» համակարգով, և կողմերը ազատ են այդ համակարգի միջոցով ցանկացած շահագրգիռ անձի (անձանց) ներգրավելու տվյալ լոտի սակարկությունների գործընթացին:

Աճուրդի մասնակիցները հնարավորություն ունեն «ԱրԶա» համակարգի միջոցով, բացառելով հարկադիր կատարողի հետ որևէ շփումը, ինքնուրույն գրանցվել և մասնակցել աճուրդին:

Այսպիսով, «Առցանց աճուրդ» համակարգը, որով կատարվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդը, արդեն լծակներ ունի, որոնք ապահովում են գործընթացի առավելագույն թափանցիկությունը և դրանով իսկ՝ յուրաքանչյուրի կողմից ազատորեն մասնակցելու հնարավորությունը:

Բացի այդ, յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդ իրականացվում է բռնագանձման վերաբերյալ դատարանի վճռի և վերջինիս հիման վրա տրված կատարողական թերթի պահանջների (որոնք պարտապանի կողմից արդեն իսկ կամավոր չեն կատարվել) շրջանակներում: Իսկ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա արգելանք դնելը, այն առգրավելը և հարկադիր իրացնելը: Հետևաբար, օրենքի ընդհանուր տրամաբանության տեսանկյունից այդ փուլում գույքի իրացման գործառույթը կարող է վերապահվել միայն օրենքով նախատեսված հարկադրանքի միջոցներ կիրառելու լիազորությամբ օժտված մարմնին՝ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը:

Միաժամանակ նշվել է, որ ՀՀ արդարադատության նախարարությունում կատարվում են համալիր ուսումնասիրություններ՝ Պաշտպանի կողմից բարձրացված հարցի լուծման առնչությամբ, այդ թվում՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առումով: Ներկայումս ուսումնասիրվում է նաև արտասահմանյան երկրների փորձը:

Խնդիրը Պաշտպանի ուշադրության ներքո է:

### 3.9.1. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն

2010 թ-ին նախորդ տարիների նման Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության գործունեության դեմ ստացված դիմում-բողոքները վերաբերել են դատական

ակտերի պահանջները օրենքով սահմանված ժամկետներում չկատարելուն, կատարման անհիմն ձգձգումներին, որոշ դեպքերում՝ հայցնեայ, թերի կատարմանը, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռները հարկադիր կատարողների կողմից տարաբնույթ մեկնարանելուն և այլնին:

Պաշտպանի տարեկան զեկույցներում բազմիցս նշվել է, որ հատկապես այն դեպքերում, երբ պարտապանը պետական մարմին կամ պաշտոնատար անձ է, ով չի կատարում վճոի պահանջը, հարկադիր կատարողների կողմից չեն կիրառվում ներգործության միջոցներ, այդ թվում՝ վարչական պատասխանատվության ենթարկելը:

Ընթացիկ տարում դիմումներ են ստացվել նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից վճոի չկատարման, հատկապես՝ աշխատանքի վերականգնման և հարկադիր պարապուրդի վճարման վերաբերյալ: Ինչքան էլ տարօրինակ լինի, աշխատանքի վերականգնումը մերժվում է այդ պաշտոնը թափուր չլինելու պատճառաբանությամբ (հայտնի են դեպքեր, երբ որոշ ժամանակ տվյալ պաշտոնը եղել է թափուր, իսկ հետագայում այդ պաշտոնին նշանակվել է այլ անձ), սակայն հարկադիր պարապուրդի գումարները վճարվում են:

Պաշտպանի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազին՝ առաջարկելով միջոցներ ձեռնարկել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարող պաշտոնատար անձի գործողություններին իրավական գնահատական տալու կապակցությամբ: Կատարված ուսումնասիրության արդյունքում ՀՀ դատախազությունը գտել է, որ դատական ակտը չկատարելու մեջ դիտավորություն չկա, ինչը հետագայում բողոքարկվել է դատական կարգով և նույն դիրքորոշումն է հայտնել նաև դատարանի վճռով:

Կարծում ենք՝ տվյալ պարագայում խախտվում է ՀՀ Սահմանադրության 19-րդ և Մարդու իրավունքների և իմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածներով նախատեսված քաղաքացու արդար դատաքննության իրավունքը:

Ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքն ընդգրկում է նաև այն ընթացակարգերը, որոնք հետևում են քննության ավարտին, այն է՝ որոշումների կատարումը: Արդարադատության մատչելիության իրավունքը կրում է երևակայական բնույթ, եթե պարտադիր իրավական ուժ ունեցող դատական որոշումը թողնվի անկատար:

Որոշ դատական ակտերի չկատարման վերաբերյալ (որտեղ պարտապանը Երևանի քաղաքապետարանն է) գրություն է ուղարկվել նաև ՀՀ Նախագահի օգնականին, սակայն պատասխան դեռ չի ստացվել:

**Օրինակ 1. Քաղաքացի Ռ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից տրված**

կատարողական թերթի համաձայն Գ. Պ.-ից հօգուտ իրեն պետք է բռնագանձել 90.000 ՀՀ դրամ:

16.06.2004 թ. կատարողական վարույթն ավարտվել է, որովհետև պարտապանը չուներ որևէ գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել:

Հետագայում քաղաքացի Ռ. Հ.-ն կատարողական թերթը ներկայացրել է նոր կատարման, սակայն տեղյակ չէ, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել վճռի կատարման ուղղությամբ:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը հայտնել է, որ պարտապան Գ. Պ.-ին հայտնաբերելու ուղղությամբ 08.05.2009 թ-ին և 07.09.2009 թ-ին Աջափնյակ և Դավիթաշեն բաժնի հարկադիր կատարողի կողմից ստուգվել է պահանջատեր Ռ. Հ.-ի նշած՝ պարտապանի ժամանակավոր բնակության հասցեն:

Այցելությամբ պարզվել է, որ նշված բնակարանը վարձակալել է Գ. Պ.-ի կնոջ հայրը: Վերջինս բանավոր հայտարարել է, որ Գ. Պ.-ն նշված հասցեում չի բնակվել և իր ունեցած տեղեկությունների համաձայն շուրջ մեկ ամիս է, ինչ կալանավորված է և գտնվում է «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում:

Նշված փաստը ճշտելու համար ԴԱՀԿ ծառայության Շիրակի մարզային բաժնի կողմից հարցում է կատարվել «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ:

Հետագայում կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը հայտնել է, որ պահանջատեր Ռ. Հ.-ն 09.02.2010 թ-ին կատարողական վարույթը կարճելու մասին դիմում է ներկայացրել ԴԱՀԿ ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժին:

11.02.2010-ին կատարողական վարույթը «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն կարճվել է:

Գրությանը կից ներկայացված՝ ԴԱՀԿ ծառայությանը հասցեագրած դիմումով Ռ. Հ.-ն հայտնել է, որ պարտապանը պարտավորություններն ամբողջությամբ կատարել է:

Բողոքի քննարկումը դադարեցվել է, քանի որ Պաշտպանի միջամտությամբ հարցը ստացել է դրական լուծում:

**Օրինակ 2.** ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղի բնակիչ Ռ. Վ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ իր տղան իրեն դուրս է հանել տանից, ինչի հետևանքով հայտնվել է փողոցում: Դիմել է դատարան, որի կողմից տրված կատարողական թերթի համաձայն Գ. Վ.-ին, Գ. Վ.-ին, Հ. Վ.-ին և Ս. Վ.-ին պետք է վտարել Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղում գտնվող սեփականության իրավունքը Ո. Վ.-ին պատկանող տնից, ինչպես նաև հանել նշված բնակելի տան հաշվառումից:

Կատարողական թերթը հանձնել է ԴԱՀԿ ծառայություն, սակայն մինչ օրս որևէ գործողություն չի ձեռնարկվել:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանի կողմից ուղարկված նամակին ի պատասխան՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը հայտնել է, որ կատարողական թերթի պահանջի համաձայն պարտապանները հանվել են նշված հասցեի հաշվառումից:

Պարտապաններին վտարելու կապակցությամբ, տեղեկացվել է, որ հարկադիր կատարողի կողմից բազմից ծեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ կատարողական թերթի պահանջները կատարելու համար, սակայն նշված տաճ դրանք միշտ փակ է եղել, ինչի վերաբերյալ գյուղապետարանի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմվել են համապատասխան արձանագրություններ: Գյուղապետի կողմից տրված տեղեկանքների համաձայն՝ պահանջատեր Ռ. Վ.-ն մշտապես չի բնակվում Տավոչի մարզի Արծվաբերդ գյուղում:

Միաժամանակ տեղեկացվել է, որ նոր վտարման օր է նշանակվել 04.06.2010 թ-ն, ինչի մասին պատշաճ ծանուցվել է կողմերին:

01.07.2010 թ-ին գրություն է ուղարկվել ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին՝ խնդրելով հայտնել՝ կատարվել է կատարողական թերթի պահանջը, թե՝ ոչ:

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը հայտնել է, որ կատարողական գործողությունները փաստացի կատարվել են, և պահանջատերը դիմում է ներկայացրել կատարողական վարույթը կարճելու մասին:

Պաշտպանի միջամտությամբ հարցը ստացել է դրական լուծում:

### 3.9.2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

Այս մարմնի դեմ ուղղված բողոքներն ընթացիկ տարում ավելացել են: Քաղաքացիները բողոքել են, որ ԶԿԱԳ գործակալության համապատասխան բաժանմունքներից անհիմն պատճառաբանություններով չեն կարողանում ստանալ անհրաժեշտ փաստաթորթեր, մասնավորապես՝ ծննդյան վկայական, տեղեկանքներ և այլն:

**Օրինակ 1. Քաղաքացի Յ. Հ-ն բողոքել է, որ շուրջ երկու տարի է՝ իր երեխայի ծննդյան վկայականը չի կարողանում հետ ստանալ ՀՀ ԱՆ ԶԿԱԳ գործակալության Արովյան քաղաքի տարածքային բաժանմունքից, որտեղ այն ներկայացրել է իր որդու՝ ԱՀ-ի նկատմամբ հայրության ճանաչման կապակցությամբ:**

Ա.Հ.-ն ծնվել է 1999 թ-ին Ո-Դ-ում, որտեղ էլ տրվել է նրա ծննդյան վկայականը: 2007 թ-ին դժբախտ պատահարի հետևանքով զոհվել է երեխայի հայրը, ինչից հետո երեխայի հայրությունը որոշվել է դատական կարգով: Պահանջվող փաստաթղթերը դիմումատուն ներկայացրել է ՔԿԱԳ գործակալության Արովյան քաղաքի տարածքային բաժանմունք, սակայն նրան մերժել են տալ ծննդյան վկայականը: Ստացել է միայն հայրության ճանաչման վկայականը:

Գործի կապակցությամբ Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարը հայտնել է, որ համապատասխան գրություն և փաստաթղթեր են ուղարկվել Ո-Դ-ի ՔԿԱԳ քաժին, սակայն ստացվել է մերժողական պատասխան:

Քանի որ դիմումատուի հայտնած տեղեկությունների համաձայն՝ Ո-Դ-ից ստացված մերժողական պատասխանը պայմանավորված է եղել ՀՀ-ից ուղարկված փաստաթղթերի ոչ պատշաճ լրացմամբ, Պաշտպանը մեկ այլ գրությամբ ՀՀ արդարադատության նախարարին առաջարկել է ներկայացնել Ո-Դ համապատասխան ՔԿԱԳ մարմնի գրության պատճենները՝ մերժման հիմքերը պարզելու և դիմումատուի գործի ընթացքը լուծելու նպատակով:

Ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունից հայտնել են, որ Արովյանի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից հայրության ճանաչման մասին ակտային գրանցման մեջ կատարվել են փոփոխություններ:

Գործի քննարկումը դադարեցվել է՝ հարցը դրական լուծում ստանալու հիմքով:

**Օրինակ 2.** Քաղաքացի Ժ. Մ.-ն հայտնել է, որ 1967 թ-ին իրանից ընտանիքով տեղափոխվել են Հայաստան: Ստացել է ԽՍՀՄ անձնագիր, իսկ 2006 թ-ին ՀՀ քաղաքացու անձնագիր: Ներկայումս քաղաքացիական գործարք կատարելու համար իրեն անհրաժեշտ է ծննդյան վկայական, որն ինքը չունի, իր ծնողները չեն դիմել իր համար նոր ծննդյան վկայական ստանալու համար, իսկ ՔԿԱԳ մարմինները մերժում են ծննդական կամ համապատասխան տեղեկանք տալ:

Գործը քննարկման փուլում է:

### 3.9.3. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ

2010 թվականին ևս ՄԻՊ աշխատակազմը չի ստացել քրեակատարողական հիմնարկներում գտնվող կալանավորների և դատապարտյալների նկատմամբ ԱՆ ՔՀ

աշխատակիցների կողմից ուժ գործադրելու, անհարգալից վերաբերմունքի արժանացնելու վերաբերյալ բոլորներ: Սակայն ՄԻՊ աշխատակիցների կողմից պարբերաբար կատարվող այցելությունները և ներկայացված դիմում-բողքներում բարձրացված հարցերի ուսումնասիրությունը փաստում է, որ այս ոլորտում դեռևս կան մի շարք խնդիրներ:

Դրանք հիմնականում վերաբերում են կալանավորված անձանց պատշաճ բուժօգնություն չտրամադրելուն, կալանավորին մի խցից մեկ այլ խուց չտեղափոխելուն, տեսակցությունների սահմանափակումներին և այլնին:

Դիմում-բողքներում բարձրացված հարցերի զգակի մասն ուղղված է եղել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն առավել մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի գործողությունների, անգործության ու որոշումների դեմ, որոնց կապակցությամբ դիմումատուններին բացատրվել են իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները:

### 3.10. ՀՀ պաշտպանության նախարարություն

2010 թ-ին ստացված դիմում-բողքների բովանդակությունը գրեթե չի փոխվել: Դրանք հիմնականում վերաբերել են ՀՀ ՊՆ տարածքային զինկոմիսարիատների կողմից օրենքի խախտումով գորակոչ իրականացնելուն, զինվորական հաշվառման վերցնելը կամ հաշվառումից հանելն անհիմն մերժելուն, ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից գորակոչվողի առողջության վերաբերյալ սխալ եզրակացություն կազմելուն, ժամկետային զինծառայողի նկատմամբ ոչ հոգատար վերաբերմունք ցուցաբերելուն, «Սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթները ոչ ճիշտ կիրառելուն, վատառողջ անձին գորակոչելուն, վաղաժամկետ գորացրելուն և այլնին:

Բողքներ են եղել գորամասերում ժամկետային զինծառայողների նկատմամբ անմիջական իրամանատարների և ծառայողների կողմից բռնություններ կիրառելու, ծառայության ընթացքում առաջացած առողջական խնդիրներ ունեցող ժամկետային զինծառայողներին ոչ պատշաճ բուժօգնություն տրամադրելու վերաբերյալ:

Եղել են նաև պահեստագոր անցած զինծառայողների կենսաթոշակի ոչ ճիշտ հաշվարկման, ժամկետային զինծառայողների ընտանիքների բժշկական օգնության ծախսերը չհատուցելու վերաբերյալ դիմում-բողքներ:

Դժգոհություններ են եղել նաև այն մասին, որ զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերված հիվանդության և մահվան պատճառի միջև առկա պատճառական կապի

չհաստատման հետևանքով քաղաքացու ընտանիքը զրկվում է կերակրողին կորցնելու կապակցությամբ իրեն հասանելիք կենսաքոշակի իրավունքից:

Պաշտպանության նախարարության դեմ ուղղված բողոքները վերաբերել են նաև զինծառայողների սոցիալական պաշտպանության և բնակարանային հարցերին, զինծառայության ընթացքում ստացած վնասվածքի հետևանքով հաշմանդամության կարգ չստանալուն և այլ խնդիրներին:

Պետք է նշել, որ ընթացիկ տարում ՀՀ ՍԻՊ աշխատակազմի և Պաշտպանության նախարարության սերտ համագործակցության արդյունքում ավելացել է դրական լուծում ստացած դիմում-բողոքների թիվը:

**Օրինակ 1.** Երևան քաղաքի բնակիչ Պ. Մ-ն Մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրկած դիմումով հայտնել է, որ իրեն մերժել են զինվորական հոսպիտալում որպես կույր ազատամարտիկ բուժելու հարցում՝ պատճառաբանելով, որ հոսպիտալում ազատ տեղեր չկան:

Պ. Մ-ն խնդրել է Մարդու իրավունքների պաշտպանի միջնորդությունը՝ վերը նշված խնդրի լուծման գործում:

Դիմումի ուսումնասիրության ընթացքում Պ. Մ-ն հայտնել է, որ արդեն տեղավորվել է զինվորական հոսպիտալ՝ համապատասխան բուժում ստանալու համար և խնդրել է բողոքի քննարկումը դադարեցնել:

**Օրինակ 2.** ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի բնակիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրկած դիմումում հայտնել է, որ որդին 1996 թվականին զորակոչվել է ՀՀ ազգային բանակ և ծառայել թիվ N զորամասում: 1997 թվականի դեկտեմբերի 30-ից համարվում է անհայտ կորած և տարիներ շարունակ կատարված որոնողական աշխատանքները որևէ արդյունք չեն տվել: Դատարանի վճռով 2006 թ-ին մահացած է ճանաչվել:

Դիմումատուն 2007 թվականից հաշվառված է բնակարանի բարելավման կարիք ունեցողների հերթացուցակում: Սկզբնական շրջանում հաշվառված է եղել համապատասխան ցուցակի 1323 հերթական համարով, այնուհետև ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչությունում իրեն հայտնել են, որ հաշվառված է Շիրակի մարզպետարանի կողմից ՊՆ ուղարկված բնակարանի բարելավման կարիք ունեցողների հերթացուցակի 1730 հերթական համարով:

Քաղաքացին նշել է, որ իրեն չի տրամադրվել անհրաժեշտ տեղեկատվություն այն մասին, թե արդյոք Շիրակի մարզում կան 1323 զոհված զինծառայողների անօրենան ընտանիքների անդամներ, թե դա համապատասխան արտոնություն ունեցող բոլոր անձանց ցուցակն է, որպես զոհվածի ծնող առավելություն ունի հաշմանդամ դարձած

զինծառայողների նկատմամբ, թե՝ ոչ, ներկայումս ո՞ր հերթում է գտնվում, որքա՞ն անձանց բնակարանային խնդիր է լուծվել և ի՞նչ ժամկետում կարող է իր հարցը լուծում ստանալ:

Վերոնշյալի կապակցությամբ Պաշտպանը պարզաբանում է պահանջել Պաշտպանության նախարարից:

Ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալը հ. 510-1-373 գրությամբ հայտնել է հետևյալը. «Ս. Ի-ն հաշվառված է 2007 թ-ին Շիրակի մարզպետարանի կողմից ՊՆ ուղարկված բնակարանի կարիքավորների ցուցակում: ՊՆ ԶՍՊ վարչությունում բնակարանի կարիքավորների ընդհանուր ցուցակում, ըստ հերթականության, ընդգրկվում են ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացվածները, Ս.Ի-ն հաշվառված է ընդհանուր ցուցակի թիվ 1077 հերթական համարով: Զոհված (մահացած) զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքները բնակարանային պայմանների բարելավման հարցում որևէ առավելություններ չունեն հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) նկատմամբ: Ս. Ի-ի բնակարանային հարցին ընթացք կտվի ըստ սահմանված կարգի՝ 2003-2006 թթ-ին բնակարանային հաշվառման մեջ գտնվող զոհված (մահացած) և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելուց հետո»:

Ստացված տեղեկատվությունը տրամադրվել է դիմումատուին, և բողոքի քննարկումը դադարեցվել է:

### 3.11. ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

Ընթացիկ տարում ՀՀ տարածքային կառավարման նախարարության դեմ ստացվել է մեկ դիմում-բողոք:

**Օրինակ 1.** Գեղարքունիքի մարզի Առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրենը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումով հայտնել է, որ Գեղարքունիքի մարզի Առևտրաարդյունաբերական պալատում ահազանգեր են ստացել Սևանի ափամերձ տարածքի Սևան-Գավառ հատվածում գործող ձեռնարկություններից և տարածքի բնակիչներից: Սևան-Գավառ ավտոճանապարհի Լճաշեն համայնքի վարչական տարածքին հարող շուրջ երկու կիլոմետր ճանապարհահատվածի վերանորոգման պատճառով այժմ ժամանակավորապես այլընտրանքային ճանապարհ է գործարկվում: Այս չի համապատասխանում ճանապարհաշինարարական նորմերին. չկան ճանապարհային երթևեկության նշաններ, առկա են վտանգավոր ոլորաններ, ավտոճանապարհը նեղ է

Երկկողմանի երթևեկության համար, բացակայում են ճանապարհի եզրային հենայուները, մինչդեռ ավտոճանապարհը լեռնային վայրում է, ոելինֆը՝ կտրտված, իսկ ավտոճանապարհի եզրը կտրուկ վարդճանքաց իջնում է ներքև:

Այս ավտոճանապարհը մայրաքաղաքի հետ կապում է մի շարք համայնքներ՝ ավելի քան 200 000 բնակչությամբ: Այն տարանցիկ ճանապարհ է, ունի կարևոր ռազմավարական նշանակություն (ռազմական, առողջապահական, բնապահպանական, տուրիստական), միայն այս ավտոճանապարհով է հնարավոր կապվել մի շարք սահմանամերձ տարածքների հետ:

Անձրևի տեսքով տեղումների դեպքում ավտոճանապարհը դառնում է գրեթե անանցանելի, կտրուկ աճում է ավտոճանապարհային պատահարների ռիսկը: Նման ռելինֆային պայմաններում, երբ առկա են կտրուկ ոլորաններ, մերկասառույցն ավելի է բարձրացնում պատահարների ռիսկայնությունը: Անգամ տասը սանտիմետր ձյան տեսքով տեղումների դեպքում ավտոճանապարհն անանցանելի կդառնա: Նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, որ այդ ավտոճանապարհը ձմռան ընթացքում երթևեկության համար լիովին ոչ պիտանի է դառնում:

Հիմնախնդրի մասին տեղյակ են պահել Գեղարքունիքի մարզպետին, ով իր պատասխան նամակում նշել է, որ մարզպետարանը տարածքների վերանորոգման համար արդեն կնքել է կապալի պայմանագիր և իրավասու չէ պայմանագրով հաստատված ժամանակացույցում փոփոխություններ կատարել:

Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալը հայտնել է, որ ճանապարհը շրջանցելու նպատակով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «ճանախագիծ» ինստիտուտի ՍՊԸ-ի կողմից ընտրվել է Լճաշեն համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող միակ շրջանցիկ ճանապարհը:

Միաժամանակ տեղեկացրել է, որ աշխատանքներ են իրականացվում, որպեսզի մինչև ձյան տեղումները, ավարտին հասցվեն ճանապարհի հողային պաստառի աշխատանքները, որը հնարավորություն կտա ավտոտրանսպորտի երթևեկությունը կազմակերպել հիմնանորոգվող ճանապարհով:

### 3.11.1. Միգրացիոն պետական ծառայություն

Բողոքների մեծ մասը ստացվել են Աղբքեցանի Հանրապետությունից բնագաղթած և փախստականի կարգավիճակ ունեցող անձանցից, որոնք հիմնականում վերաբերել են բնակարանային խնդիրներին: Դեռևս կան շատ ընտանիքներ, որոնք բնակվում են կոմունալ հարմարություններից և բնակվելու համար տարրական պայմաններից զորկ ժամանակավոր

կացարաններում: Դիմումներ են ստացվել նաև փախստականի ճամփորդական փաստաթղթի ժամկետը չերկարացնելու կամ ընդհանրապես չտրամադրելու վերաբերյալ:

2010 թվականի ընթացքում բնակարանային խնդիրներին վերաբերող բողոքների մի մասը վերաբերել է այն բանին, որ զբաղեցված տարածքները սեփականաշնորհվում են այն անձանց, ովքեր ստիպում են ազատել զբաղեցրած տարածքը կամ տեղափոխվել այլ շինություններ, որոնց հարմարությունները գտնվում են ավելի վատ վիճակում:

**Օրինակ 1.** Երևան քաղաքի «Նախրի» հյուրանոցի թվով 34 փախստական ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել են, որ 1988 թվականից բնակվում են «Նախրի» հյուրանոցում, ուր կարողացել են ստեղծել կյանքի համար համեմատաբար նպաստավոր պայմաններ (վերանորոգել են սանհանգույցները և այլն):

15.09.2010 թ-ին հյուրանոցի այն մասը, որտեղ բնակվում են իրենք, վաճառվել է: Այժմ իրենց հյուրանոցի այդ մասից տեղափոխում են մեկ այլ շենք: Սակայն հյուրանոցի այդ հատվածն ավելի վատթար վիճակում է. 3-4 հոգուց բաղկացած ընտանիքին տրամադրվում է 12 քմ մակերեսով սենյակ՝ առանց խոհանոցի: Բացի այդ, ըստ դիմումատունների, այս ընթացքում հյուրանոցում պետք է անցկացվեն կապիտալ վերանորոգման աշխատանքներ: Բանն այն է, որ փախստականների մեջ երեխաները, հաշմանդամներն ու կենսաթոշակառուները շատ են, և վերանորոգման աշխատանքների հետևանքով առաջացած աղմուկը, փոշին կիսանգարեն և ավելի կրարդացնեն իրավիճակը:

Այս կապակցությամբ՝ Պաշտպանի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ ՏԿՆ միգրացիոն գործակալության պետին՝ առաջարկելով պարզաբանումներ ներկայացնել և հայտնել, թե երբ են նախստեսվում լուծել «Նախրի» հյուրանոցում բնակվող փախստականների բնակարանային խնդիրները:

ՀՀ ՏԿՆ միգրացիոն գործակալության պետը պատասխան գրությամբ հայտնել է, որ ներկա դրությամբ դեռևս չի լուծվել 2004 թ-ի մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված առաջնահերթ ծրագրի նախնական շահառու շուրջ 1100 փախստական ընտանիքների բնակապահովության հարցը, որոնց գերակշիռ մասը բնակվում է Երևան քաղաքի ժամանակավոր կացարաններում, այդ թվում՝ նաև «Նախրի» հյուրանոցում, որտեղ բնակվում են դիմումատունները:

«Նախրի» հյուրանոցում կատարվող վերանորոգման աշխատանքների վերաբերյալ կայացվել է որոշում՝ փախստական ընտանիքներին տեղափոխել հյուրանոցի մեկ թևից մյուս թևը: Այդ մասին Ծառայությանը տեղեկացրել է Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնարրամի գլխավոր տնօրենը՝ իր հոկտեմբեր ամսվա գրությամբ՝ նշելով, որ փախստական ընտանիքների տեղափոխության դեպքում նրանց համար կստեղծվեն նույն կենցաղային պայմանները, նույնիսկ կկատարվեն վերանորոգման աշխատանքներ:

Փախստական ընտանիքներին տրամադրվող սենյակների հարցի վերաբերյալ նշել է, որ մեկ սենյակից մյուսը տեղափոխվելը կարող է կատարվել միայն փախստականի համաձայնությամբ: Եթե նոր սենյակը նախկինին համարժեք չլինելու կամ այլ պատճառներով փախստականը չի համաձայնում, ապա հարցը պետք է լուծվի դատական կարգով, որի դեպքում Ծառայությունը հնարավորին չափով կպաշտպանի փախստականի շահերը դատարանում:

Իսկ ինչ վերաբերում է կոնկրետ այն հարցին, թե երբ է նախատեսվում լուծել «Նախրի» հյուրանոցում բնակվող փախստականների բնակարանային խնդիրները, տեղեկացրել է, որ Ծառայության կողմից այդ նպատակով, ինչպես միջնաժամկետ պետական ծախսային ծրագրում, այնպես էլ տարեկան բյուջեներում համապատասխան միջոցներ նախատեսելու մասին բազմիցս բարձրացված հարցին, ցավոք, լուծում չի տրվել և ինչպես 2010, այնպես էլ 2011 թ-ին ՀՀ պետական բյուջեում փախստականների բնակարանային ապահովության համար որևէ միջոցներ չեն նախատեսվել:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքի քննարկումը դադարեցվել է:

**Օրինակ 2.** Դիմումատու Կ.Զ-ն հայտնել է, որ ծնվել է ՌԴ-ում: Հայրն ունեցել է փախստականի կարգավիճակ, ինչի հիման վրա նրան 25.09.2004 թ-ին տրվել է փախստականի անձնագիր, որի ժամկետն ավարտվել է 2007 թ-ին: 20.08.2010 թ-ին դիմել է Սիզորացիոն պետական ծառայություն՝ վավերականության ժամկետի երկարաձգման նպատակով, սակայն պատասխանել են, որ քանի որ նա ծնվել է ՌԴ-ում, ՀՀ-ում չունի փախստականի կարգավիճակ: Կ. Զ-ից վերցվել է փախստականի անձնագիրը և չի վերադարձվել, ինչի հետևանքով նա անձը հաստատող որևէ փաստաթուղթ չունի:

Բողոքը գտնվում է քննարկման փուլում:

**Օրինակ 3.** ՀՀ Կոտայքի մարզի բնակիչ Է. Հ-ն ներկայացրած դիմումով հայտնել է, որ ծնվել է Աղրբեջանի Հանրապետությունում և ունի փախստականի կարգավիճակ: 2009 թ-ի սեպտեմբերին մասնակցել է «Erasmus Mundus» ծրագրին և 2010 թվականի փետրվարի 5-ին ստացել Բուլղարիայում սովորելու հրավեր:

Շամփորդական փաստաթուղթը վավեր է եղել մինչև 2010 թ-ի նոյեմբերի 26-ը: Ծրագրի տևողությունը 10 ամիս է, և Բուլղարիայի դեսպանատունը պահանջել է ճամփորդական փաստաթորթի վավերականության ժամկետը երկարաձգել այնքան, որ դասընթացների ավարտից հետո այն վավեր լինի ևս 6 ամիս:

2010 թ-ի փետրվարի 15-ին Է. Հ-ն դիմել է Բուլղարիայի դեսպանատուն և վավերականության ժամկետի պատճառով մերժվել:

Փաստաթորթի ժամկետը երկարաձգելու խնդրանքով դիմել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն ծառայություն, սակայն դիմումը մերժվել է:

Այս կապակցությամբ՝ Պաշտպանի կողմից կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ միզրացիոն ծառայության պետը հայտնել է, որ ճամփորդական փաստաթղթի վավերականության ժամկետը չի կարող երկարաձգվել, քանի որ այդ փաստաթղթը վավեր է մինչև 2010 թ-ի նոյեմբերի 26-ը: Այն երկարաձգելու համար քաղաքացին կարող է դիմել ՀՀ ՏԿՆ միզրացիոն պետական ծառայություն փաստաթղթի վավերականության ժամկետը լրանալուց հետո՝ համաձայն 03.12.2009 թ-ի ՀՀ կառավարության թիվ 1417-Ն որոշմանը հաստատված «Փախստականին տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթը տալու կարգ»-ի 5-րդ կետի:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միզրացիոն ծառայությունից բանավոր հայտնել են, որ ճամփորդական փաստաթղթի վավերականության ժամկետը երկարաձգումը փաստացի իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

Պաշտպանի կողմից ՀՀ ոստիկանապետին ուղարկված գրությամբ առաջարկվել է հայտնել՝ մինչ փախստականի ճամփորդական փաստաթղթի ժամկետը լրանալը կարող է արդյոք այն երկարաձգվել ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետը հայտնել է, որ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի՝ իրավական ակտերի պաշտոնական պարզաբանումներ կարող են տալ ՀՀ կառավարության լիազորած իրավական ակտը կիրառող գործադիր իշխանության մարմինը՝ ընդ որում, մեկ բնագավառի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավունք ունի միայն մեկ մարմին:

Հաշվի առնելով, որ տվյալ պարագայում սահմանափակվում է փախստականների՝ «իրենց տարածքից դուրս ճամփորդելու» իրավունքը, (Փախստականի կարգավիճակի մասին կոնվենցիայի 28-րդ հոդվածի համաձայն՝ «...պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինականորեն մնացող փախստականներին պետք է ճամփորդական փաստաթղթեր տան իրենց տարածքից դուրս ճամփորդելու նպատակով...»), իսկ ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք՝ Պաշտպանի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ վարչապետին՝ խնդրելով հանձնարարել ուսումնասիրել բարձրացված հարցը՝ հաշվի առնելով, որ նմանատիպ դեպքերը կարող են կրկնվել:

Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ ՀՀ ՏԿՆ միզրացիոն պետական ծառայության պետը հայտնել է, որ ճամփորդական փաստաթղթի վավերականության ժամկետը երկարաձգելու համար է. Հ.-ն պետք է դիմի Միզրացիոն պետական ծառայություն, որի վերաբերյալ նրան տեղեկացվել է:

Իսկ ՀՀ ոստիկանության պետի տեղակալը հայտնել է, որ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն փախստականին տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը վավերական է երկու տարի, որից հետո փախստականի դիմումի հիման վրա լիազոր մարմինը յուրաքանչյուր անգամ փաստաթորքի վավերականության ժամկետը երկարաձգում է ևս երկու տարով:

Է. Հ.-ի ճամփորդական փաստաթուղթը նրա դիմելու պահին վավեր է եղել մինչև 2010 թվականի նոյեմբերի 26-ը, ուստի, դիմումը մերժվել է՝ հիմք ընդունելով վերը նշված օրենքի դրույթը:

Հարցը դեռևս գտնվում է քննարկման փուլում:

### **3.11.2. ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե**

ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի դեմ ուղղված բողոքները վերաբերել են ջրամատակարարման որակին և ջրամատակարարող կազմակերպությունների նկատմամբ անհրաժեշտ վերահսկողություն շիրականացնելուն:

**Օրինակ 1.** ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքի բնակիչ Ա. Մ-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ իրեն 1970-ի թիվ 21 ակտով Տաշիր քաղաքում հատկացրել են հողամաս՝ առանձնատուն կառուցելու նպատակով: 1971-1973թթ-ին ավարտին է հասցրել առանձնատան կառուցման աշխատանքները: 1974-ին իր տան բակով անցկացվել է Տաշիր-Կաթնաղբյուր ջրատարը, որը ցանկացած պահի կարող է վթարվել, ինչի հետևանքով կվտանգվի իր և իր ընտանիքի կյանքն ու առողջությունը: Քաղաքացին հայտնել է, որ ջրատարի տեղափոխման հարցով բազմից դիմել է պետական մարմիններին: Սակայն թե՛ Լոռու մարզպետը, թե՛ Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալը, գրավոր պատասխաններով հայտնել են, որ «Կաթնաղբյուր-Տաշիր» ջրատարի տեղափոխման շինարարական աշխատանքներն ընդգրկվել են «Հայջրմուղույուղի» ՓԲԸ միջոցների հաշվին 2008 թ-ին իրականացվող աշխատանքների ցանկում, որը նախատեսված է սկսել 2008 թ-ի օգոստոսին: Անցել է երկու տարի, սակայն հարցին լուծում չի տրվել:

Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահը հայտնել է, որ ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքի Անտառային փողոցի թիվ 33 տան տնամերձ հողամասով անցնող «Կաթնաղբյուր-Տաշիր» ջրատարի տեղափոխման աշխատանքներն ընդգրկված են Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ Տաշիր քաղաքում իրականացվող

ջրամատակարարման բարելավման ծրագրում: Ներկայումս նախագծային աշխատանքներն ընթացքի մեջ են, իսկ շինարարական աշխատանքները նախատեսված է սկսել ընթացիկ տարվա աշնանը:

### **3.12. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու դրա ստորաբաժանումների դեմ ուղղված բողոքները վերաբերել են ավանդների դիմաց տրվող փոխհատուցումներին, անհիմն պատճառաբանություններով «Փարոս» ծրագրից զրկելուն, աշխատանքային պարտականությունները կատարելիս ստացած վճառվածքի դիմաց տրամադրման ենթակա գումարները չստանալուն, կենսաթոշակների սխալ վերահաշվարկներին, հաշմանդամության կարգի անհիմն փոփոխություններին կամ չսահմանելուն, աշխատանքային ստաժը ոչ ճիշտ հաշվարկելուն, աշխատանքից անհիմն ազատելուն և այլնին:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված են Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական իմունիքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանությունը ենթադրում է տնտեսական, սոցիալական և իրավական միջոցառումների համակարգ, որը հաշմանդամների համար ապահովում է կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու, փոխարինելու (փոխհատուցելու) պայմաններ և ուղղված է հասարակական կյանքում նրանց մասնակցության համար մյուս քաղաքացիներին համարժեք հնարավորությունների ապահովմանը: Այս միջոցառումների համակարգում կարևոր տեղ է գրավում «Բժշկական վերականգնումը, (հողված 8): Վերջինս տարբեր հիվանդությունների, վճառվածքների, ֆիզիկական, մտավոր և այլ խանգարումների բուժման միջոցառումների համակարգ է, որի նպատակը հաշմանդամության հանգեցրած խեղումների և հիվանդությունների զարգացումն ու ծանրացումը կանխելն է: Բժշկական վերականգնումը ներառում է վերականգնողական

բուժումը, վերակառուցողական վիրաբուժությունը, պրոթեզաօրթոպեդիկ օգնությունը, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովումը, որոնք իրականացվում են հիվանդանոցային, ամբողատոր կամ առողջարանային բուժման միջոցով՝ ՀՀ առողջապահության նախարարության համակարգի մարմնների, գերատեսչական, ապահովագրական, բարեգործական և այլ բուժական հիմնարկների կողմից:

Վերոնշյալ օրենքի 11-րդ հոդվածով սահմանվում է հաշմանդամների բժշկական և առողջարանային սպասարկումը, ինչը երաշխավորվում է հաշմանդամներին պետական բյուջեի միջոցների հաշվին որակյալ անվճար բժշկական օգնություն պետական բժշկական հիմնարկներում:

ՀՀ առողջապահության ոլորտի կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում անվճար բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի մեջ են մտնում նաև 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամները, հաշմանդամ երեխաները (մինչև 18 տարեկան), ինչպես նաև հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաները (մինչև 18 տարեկան):

1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխաներն ըստ դեղատոմսերի ապահովում են անվճար դեղորայքով, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50 տոկոս գեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից:

Հաշմանդամներն ունեն ամբողատոր-պոլիկլինիկական հիմնարկներում և դեղատներում առաջնահերթ կարգով ապահովվելու սպասարկման իրավունք:

Պետք է նկատել, որ իրավակիրառ պրակտիկայում առաջանում են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց պատճառով հաշմանդամները հաճախ չեն կարողանում օգտվել օրենքով իրենց վերապահված իրավունքներից և զրկվում հասանելիք արտոնություններից օգտվելու հնարավորությունից:

### **3.12.1. ՀՀ սոցիալական ապահովագրութան պետական ծառայություն**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցության շրջանակներում նկատվել են որոշակի դրական տեղաշարժեր: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ հաճախ վերականգնվել են քաղաքացիների՝ սահմանադրության երշախավորված սոցիալական ապահովության իրավունքները: Մասնավորապես կենսաթոշակի վերահաշվարկի արդյունում կատարվել են սխալի ուղղումներ և որոշ պետական ծառայողներ ենթարկվել են պատասխանատվության:

**Օրինակ 1.** ՀՀ Արարատի մարզի քնակիչը դիմել էր Պաշտպանին՝ հայտնելով, որ կենսաթոշակի վերահաշվարկման ժամանակ թույլ էր տրվել սխալ, և այն ուղղելու խնդրանքով քաղաքացու դիմումը մնացել էր անպատճախան: Արդյունքում, պետական ծառայողի անգործության պատճառով խախտվել է իր սոցիալական ապահովության իրավունքը:

Պաշտպանի պահանջած պարզաբանմանն ի պատճախան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովագրության պետական ծառայության պետի տեղակալը հայտնել է, որ կենսաթոշակի գործում եղած փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել էր, որ համաձայն «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» օրենքի 11 հոդվածի՝ որպես հինգերորդ երեխայի մոր՝ 07.04.1994 թվականին նրան կենսաթոշակ նշանակելիս, ինչպես նաև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի համաձայն 17.07.2003 թվականի կենսաթոշակը վերահաշվարկելիս երեխաներին խնամելու ժամանակահատվածը չի հաշվառվել ապահովագրական ստաժում, որի հետևանքով քաղաքացին զրկվել է հասանելիք կենսաթոշակի մի մասից:

Ուսումնասիրության արդյունքում հաստատվել է քաղաքացու բողոքի համապատասխանությունն իրականությանը: Արդյունքում տարածքային բաժնին ցուցում է տրվել վճարել նրան հասանելիք կենսաթոշակի գումարային տարրերությունը, իսկ պատասխանատու անձանց՝ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկել:

Մեկ այլ դիմումի քննարկման արդյունքում Պաշտպանի միջամտությամբ վերականգնվել է նաև քաղաքացու՝ իր անձին վերաբերող տեղեկություններ ու փաստաթղթեր ստանալու իրավունքը:

**Օրինակ 2.** Երևան քաղաքի մի քնակիչ, դիմելով Պաշտպանին, հայտնել էր, որ կենսաթոշակի նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելիս, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացրել էր նաև թվով չորս տեղեկանքի քնօրինակ, որոնց կրկնօրինակներն այժմ չի կարողանում հետ ստանալ: Քաղաքացին իր դիմումով հայտնել է, որ ի պատասխան իրեն տրամադրել են քաղաքածքներ, այլ ոչ թե՝ փաստաթղթերի կրկնօրինակները:

Բողոքի քննարկման ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովագրության պետական ծառայությունը տրամադրել է քաղաքացուն անհրաժեշտ տեղեկանքների կրկնօրինակները:

### **3.12.2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն**

Խնդիրների շարքում է մնում նաև քաղաքացիների զբաղվածության հարցը: Աշխատանք փնտրելիս անձինք հաճախ հանդիպում են այնպիսի երևույթների, որոնք լուրջ մտահոգությունների տեղիք են տալիս:

2010 թվականին «Քառասուն պլյուս» կանաց հասարակական կազմակերպության նախագահը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 2009 թ-ի հունիս ամսից բնակչության կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ կազմակերպությունը կատարել է ուսումնասիրություն, որի ընթացքում պարզել է, որ աշխատանքի տեղափորման բազմաթիվ գործակալություններ չեն լուծում իրենց կանոնադրական խնդիրները և գործնականում հետապնդում են միայն մեկ՝ առանց ծառայություն մատուցելու շահույթ ստանալու նպատակ:

Հաճախ առաջարկվում է աշխատանք, որը գոյություն չունի, սակայն գանձվում է համապատասխան ծառայություն մատուցելու համար նախատեսված գումարը և այնուհետև փակում են գրասենյակը և «անհետանում»: Գտնել գործակալությունը բավականին բարդ է լինում, քանի որ կատարվում է անվանափոխում, փոխվում է հասցեն և այլն՝ միաժամանակ շարունակելով նույն գործունեությունը:

Առավել վտանգավոր իրավիճակ է ստեղծվում այդ գործակալությունների կողմից արտերկրում աշխատանք առաջարկելու դեպքում:

Դիմումատուի կարծիքով աշխատանքի տեղափորման գործակալությունների գործունեությունը պատշաճ չի վերահսկվում, օրենսդրությամբ ամրագրված չեն դրանց գործունեությունը կարգավորող հստակ մեխանիզմներ: Կատարած ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գործակալությունները չունեն տվյալներ, թե քանի աշխատանք փնտրող է դիմել և նրանցից քանիսն են իրենց միջամտությամբ ընդունվել աշխատանքի:

Հաշվի առնելով վերոգրյալ՝ Պաշտպանի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ վարչապետին՝ խնդրելով հանձնարարել ուսումնասիրել խնդիրը և համապատասխան ընթացք տալ:

Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հայտնել է, որ նախարարություն է հրավիրվել «Քառասուն պլյուս» կանաց հասարակական կազմակերպության նախագահը: Նրա հետ քննարկվել են աշխատանքի տեղափորման ծառայությունները մատուցող ոչ պետական կազմակերպությունների գործունեությանը վերաբերող խնդիրները: Նաև տեղեկացվել է, որ ՀՀ ազգային ժողովում են գտնվում «Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: «Քառասուն պլյուս» ԿՀԿ-ի կողմից բարձրացված հարցերի կարգավորման հնարավորություններին անդրադարձ կկատարվի ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում կազմակերպած քննարկումների ընթացքում:

### 3.12.3. Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն

2010 թվականին ավելացել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի (այսուհետ՝ ԲՍՓՀ) գործունեության վերաբերյալ Պաշտպանին ուղղված բողոքները:

Դիմումատունները հայտնել են, որ հաշմանդամության կարգ սահմանելու համար իրենցից պահանջվում են որոշակի գումարներ: Մի քանի տարի շարունակ հաշմանդամության կարգ ունեցող անձանց անհայտ պատճառներով հերթական փորձաքննության ընթացքում զրկում են կարգից կամ փոխում կարգը, չնայած որ առողջական վիճակը չի բարելավվում, այլ հակառակը՝ վատթարանում է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԲՍՓՀ-ի գործունեությունը խիստ մասնագիտական է՝ Պաշտպանի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ վարչապետին՝ խնդրելով հանձնարարել ստեղծել համապատասխան մասնագետներից կազմված հանձնաժողով՝ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության գործունեությունը ստուգելու համար:

ՀՀ վարչապետի հանձնարարականով բարձրացված հարցերը քննարկվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի, ԲՍՓ գործակալության պետի, մասնագետների և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կողմից: Քննարկման արդյունքում որոշվել է ընդլայնել ՀՀ ԲՍՓ գործակալության և Պաշտպանի գրասենյակի միջև համագործակցությունը, պարբերաբար կազմակերպել հանդիպումներ: Համաձայնություն է կայացվել այն մասին, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից ստացված յուրաքանչյուր հարցադրման և դիմունողների վերաբերյալ կներկայացվեն մանրամասն գրավոր, անհրաժեշտության դեպքում՝ նաև բանավոր պարզաբանումներ:

Պաշտպանի առաջարկության համաձայն որոշվել է նաև, որ ՀՀ կառավարության 2003 թ-ի հունիսի 13-ի թիվ 780-Ն որոշմամբ հաստատված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող չափանիշներից բխող հաշմանդամության

սահմանման և բժշկասոցիալական փորձաքննության սկզբունքների վերաբերյալ ԲՍՓ գործակալության պարզաբանումները (տարրեր հիվանդությունների դեպքում), որպես մեթոդական ուղեցույց օգտագործելու համար, համաձայնեցվեն ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան մասնագետների հետ:

Հետագայում Պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարարության կոլեգիայի նիստին, որի օրակարգում ընդգրկված է եղել նաև ՀՀ ԲՍՓ գործակալության հաշվետվությունը:

**Օրինակ 1.** Տավուշի մարզի Բերդ քաղաքի բնակչության Վ. Զ-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 13.07.1988 թ-ին ստացել է հաշմանդամության 2-րդ կարգ և հաշմանդամության նպաստից օգտվել է 1 տարի, քանի որ իրեն տեղեկացրել են, որ ինքը չի կարող աշխատել և միաժամանակ թոշակ ստանալ: Հետագայում իմանալով, որ տվյալ տեղեկությունը սխալ է՝ 2010 թ-ի մարտին Բերդ քաղաքի բժշկական կենտրոնում անցել է բժշկական հետազոտում և ներկայացել տարածքային ԲՍՓՀ: Այնտեղ իրեն հայտնել են, որ կարգ նշանակելու համար անհրաժեշտ է Երևանի տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի ինստիտուտից բերել համապատասխան էպիկրիզ, որից հետո հաշմանդամության կարգ կսահմանեն:

Բերդ քաղաքի բժշկական կենտրոնի ուղեգործ մեկնել է Երևանի տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի ինստիտուտ, որտեղ հայտնել են, որ հետազոտման համար անհրաժեշտ է վճարել 30.000 ՀՀ դրամ: Սակայն ինքը չի կարող կատարել այդ վճարումը:

Վ.Զ-ն խնդրել է աջակցել իր իրավունքների պաշտպանության հարցում:

Քանի որ դիմումին կից ներկայացված ուղեգործ տրված էր պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բուժօգնության և հետազոտման կազմակերպման համար, դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը հարցմամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարին:

Ի պատասխան՝ Առողջապահության նախարարը հայտնել է, որ հարցը քննարկվել է ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության աշխատակիցների հետ, ինչի արդյունքում պարզվել է, որ քաղաքացին ներկայում ընդգրկված չէ ՀՀ կառավարության 04.03.2004 թ-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում և չի կարող օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնությունից: Ուստի, ՀՀ Տավուշի մարզի «Բերդի ԲԿ» ՓԲԸ-ի պոլիկլինիկայի կողմից պետք է տրվեր ոչ թե ՀՀ առողջապահության նախարարի 14.12.2009 թ-ի թիվ 2001-Ա հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար

բժշկական օգնություն և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բուժօգնության և հետազոտման կազմակերպման ուղեգիր», այլ՝ նույն հրամանով սահմանված «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների բժիշկների միջոցով սոցիալապես անապահով ու հասուլ խմբերում չընդգրկված անձանց հիվանդանոցային բժշկական օգնության և հետազոտման ուղեգիր»:

Միաժամանակ տեղեկացվել է, որ «բժշկասոցիալական փորձաքննության իրավասու պետական մարմնի ուղեգրով լրացուցիչ բժշկական հետազոտության ենթարկվողները» նույնապես ընդգրկված են վերը նշված որոշմամբ հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում: Եթե ՀՀ ԱՆ «Վճարվածքաբանության և օրթոպեդիայի ԳՀՀ» ՓԲԸ-ի ախտորոշումը ճշտելու կամ փորձաքննության նպատակով Վ.Զ.-ի ուղեգիրը տրվեր բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի կողմից, քաղաքացու անհրաժեշտ հետազոտությունը կամ ստացիոնար բուժումը կիրականացվեր անվճար՝ պետպատվերի շրջանակում:

Այս կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետի տեղակալը՝ Պաշտպանի պահանջած պարզաբանմանն ի պատասխան հայտնել է, որ Տավուշի մարզի Բերդ քաղաքի բնակչութիւն Վ. Զ-ին 1988 թ-ին սահմանվել է հաշմանդամության երկրորդ խումբ, նա հերթական վերափորձաքննության չի ներկայացել: Վ. Զ-ն 2010 թ-ին բանավոր կարգով դիմել է Տավուշի ԲՍΦ հանձնաժողով՝ հաշմանդամության խումբը վերականգնելու խնդրանքով: Նրան տրվել է անձի վերափորձաքննության վերաբերյալ համապատասխան պարզաբանում՝ միաժամանակ ուղղորդելով առողջապահական կազմակերպություն՝ առողջության խաթարումը հավաստող բժշկական փաստաթղթեր ձեռք բերելու համար:

Ինչ վերաբերում է ԲՍΦՀ կողմից տրամադրվող ուղեգրին, ապա հանձնաժողովը դրա իրավունքը չուներ:

**Օրինակ 2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի բնակիչ Ա. Բ-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ իր որդին 2005 թ-ի և 2007 թ-ի փորձաքննության արդյունքում հաշմանդամ է ճանաչվել՝ երկու տարի ժամկետով: 14.12.2009 թ-ի հերթական վերափորձաքննության ժամանակ հաշմանդամ չի ճանաչվել: Քաղաքացին հայտնել է, որ կայացված եղբակացությունը 29.01.2010 թ-ին իր կողմից բողոքարկվել է սահմանված կարգով, սակայն բողոքը մերժվել է: Քաղաքացին պնդում է, որ որդու առողջական վիճակի մեջ դրական տեղաշարժ չի արձանագրվել: Ուստի, իր համար անհասկանալի է նման եղբակացության հիմնավորվածությունը:**

Դիմումում նշված հարցերի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հայտնել է, որ Ա. Բ-ի որդուն՝ Պ. Բ-ին, Գեղարքունիքի

14.12.2009 թ-ին վերափորձաքննության արդյունքում, ելնելով օբյեկտիվ զննության տվյալներից, Պ. Բ-ին «հաշմանդամ երեխա» կարգավիճակ չի տրվել, քանի որ առկա ախտաբանական վիճակը չի բերում կենսագործունեության սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության, ուստի, հիմք չկա «հաշմանդամ երեխա» կարգավիճակ սահմանելու համար (Հիմք՝ ՀՀ կառավարության 13.06.03 թ-ի թիվ 780-Ն որոշում, 02.03.06 թ-ի 276-Ն որոշման 3-րդ կետ):

22.01.10 թ-ին Գեղարքունիքի մարզի թիվ մեկ ԲՍՓՀ որոշումը ՀՀ ԲՍՓ գործակալության փորձաքննության բաժնին սահմանված կարգով բողոքարկվել է: 26.01.10 թ-ի վերափորձաքննության արդյունքում Գեղարքունիքի մարզի թիվ մեկ ԲՍՓՀ որոշումը բողնվել է անփոփոխ, քանի որ այն կայացվել է ՀՀ-ում հաշմանդամության սահմանված չափորոշիչներին համապատասխան:

Գրությամբ նաև տեղեկացվել է, որ քաղաքացի Ա. Բ-ին գրավոր պարզաբանվել է վերոնշյալի մասին և հայտնվել, որ որոշումը կարող է սահմանված կարգով բողոքարկվել դատական կարգով:

Բողոքի քննարկումը դադարեցվել է:

### 3.12.4. Աշխատանքի պետական տեսչություն

Ընթացիկ տարում քաղաքացիների բողոքները չեն պակասել: Հատկանշական է, որ քաղաքացիները հաճախ գերադասում են դիմել ոչ թե դատարան, այլ Մարդու իրավունքների պաշտպանին, ինչը վկայում է Պաշտպանի ինստիտուտի նկատմամբ հանրային վստահության մասին:

**Օրինակ 1.** Երևան քաղաքի բնակիչն իր դիմում-բողոքով հայտնել է «Երևան» հեռուստաընկերությունում աշխատելու ընթացքում ընկերության դեկավարության կողմից կատարված անօրինությունների և իր աշխատանքային իրավունքների ուժնահարման բազմաթիվ դեպքերի մասին:

Դիմումը փոխանցվել է ՀՀ աշխատանքի պետական տեսչության քննարկմանը, հարուցվել է վարչական վարույթ, որի ժամկետը երկարաձգվել է:

Կատարվում է ուսումնասիրություն:

**Օրինակ 2.** Եղբայրներ Ս. և Ս. Խ.-ն ուսուցիչներ են և աշխատել են դպրոցում, բողոքել են, որ ապօրինի ազատվել են աշխատանքից՝ իրենց ընտանիքի հետ մարզպետի ունեցած թշնամական վերաբերմունքի պատճառով:

Բողոքը քննարկման նպատակով փոխանցվել է ՀՀ աշխատանքի պետական տեսչություն:

Գործը քննարկման փուլում է:

### **3.13. ՀՀ կրթության և գիտության նախարարություն**

Նախարարության դեմ ուղղված բողոքներով քաղաքացիներն իրենց դժգոհություններն են հայտնել ընդունելության քննությունների, աշխատանքից ազատելու, դպրոցի տնօրենների անօրինական գործողությունների, մասնավոր բուհերի լիցենզիաների գործողության ժամկետը դադարեցնելու, բուհերի նկատմամբ պատշաճ վերահսկողություն շիրականացնելու, մարզերում դպրոցների վատթար վիճակի վերաբերյալ:

**Օրինակ 1.** ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է մուտքագրվել քաղաքացի Ֆ. Զ.-ի դիմումն առ այն, որ նա 2006 թ-ին ընդունվել է Երևանի Ս. Հերացու անվան պետական բժշկական համալսարան՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության» կանոնների: 2009-ին «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հիման վրա ձեռք է բերել ՀՀ քաղաքացիություն՝ ստանձնելով ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքներն ու պարտականությունները և հաշվառվել զինկոմիսարիատում:

Այնուհետև դիմել է համալսարանի դեկանարությանը՝ խնդրելով զեղչել օտարերկրացի ուսանողների համար սահմանված ուսման վարձը (1.000.000 ՀՀ դրամ՝ այն համապատասխանեցնելով ՀՀ քաղաքացիների համար սահմանված վարձավճարի չափին (800.000 ՀՀ դրամ): Ստացել է մերժում՝ պատճառաբանությամբ, որ իր և համալսարանի միջև կնքված պայմանագիրը ենթակա չէ փոփոխման:

Նույն խնդրանքով դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարին, սակայն նախարարի՝ համալսարանի ռեկտորին ուղղված նամակը, նույնպես վերոնշյալ պատճառաբանությամբ մերժվել է:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարը հայտնել է, որ իր կողմից բուհին ուղարկված գրության վերաբերյալ ստացվել է բացասական պատասխան: Գրությանը կից ներկայացված՝ Երևանի Մշիթար Հերացու

անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր Գ. Քյալյանի նամակի պատճենի համաձայն՝ համալսարանում ուսման վարձերի չափերը սահմանվում են ռեկտորատի կողմից, և հիմք ընդունելով օրենսդրությունը՝ սահմանվել են վարձաշափեր՝ տարբերակելով միասնական (կենտրոնացված) համակարգով համալսարան ընդունված ուսանողների և «ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության» կանոններով համալսարան ընդունված ուսանողների վարձաշափերը։ Ընդ որում, կենտրոնացված համակարգով համալսարան կարող են ընդունվել և՛ ՀՀ, և՛ օտարերկրյա քաղաքացիները։ Նշվել է, որ ներկայումս համալսարանում առկրում են կենտրոնացված համակարգով համալսարան ընդունված օտարերկրյա քաղաքացիներ։

Ֆ. Զ.-ն համալսարան է ընդունվել «ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության» կանոններով սահմանված կարգով, հետևաբար, ՀՀ քաղաքացիություն ստանալու հանգամանքն իրավական հիմք չէ նրա ուսման վարձի չափը փոփոխելու և կենտրոնացված համակարգով համալսարան ընդունված ուսանողների վարձավճարին հավասարեցնելու համար։

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ հայտնվել է, որ Ֆ. Զ-ի խնդրանքը ենթակա է մերժման։

Ուեկտորի կարծիքով կենտրոնացված համակարգով բուհ ընդունվող ուսանողների նկատմամբ պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերել։ Մասնավորապես՝ վերջիններս պետք է ունենան որոշակի արտոնություններ, այդ թվում՝ վարձավճարի չափի նասով, քանի որ կենտրոնացված համակարգով ընդունվածների համեմատ բուհ են ընդունվում առավել բարդ մրցույթային կարգով։

Քաղաքացի Ֆ. Զ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է ներկայացրել նաև ՀՀ ազգային ժողովի գիտության, կրթության, մշակութային, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ա. Դավթյանի գրությունն՝ ուղղված Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր Գ. Քյալյանին։ Նամակում նշված է, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը, որի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով, և այդպիսի ակտ հանդիսացող «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի այն դրույթը, որի համաձայն ՀՀ քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերից, ազգությունից, ուսայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները։

Նշվել է նաև որ Ֆ. Զ-ն, հաշվառվելով Հայկական քանակում, կրում է ՀՀ քաղաքացու պարտականություն։ Առաջարկվել է վերանայել նրա՝ որպես օտարերկրյա քաղաքացու հետ

կնքած պայմանագիրը և սահմանել ՀՀ քաղաքացու համար սահմանված պայմաններ: Ի հավելումն վերոգրյալի՝ կարծիք է հայտնվել, որ պայմանագիրը վերանայելու համար կան բավարար իրավական իիմքեր:

Հաշվի առնելով, որ նմանատիպ իրավիճակները կարող են մասսայական բնույթ կրել տարբեր ոլորտներում՝ Պաշտպանը գրություն է ուղարկել ՀՀ վարչապետին՝ խնդրելով ուսումնասիրության հանձնարարել բարձրացված հարցը՝ լուծման տարրերակներ գտնելու նպատակով:

Ի կատարումն ՀՀ վարչապետի 15.09.2010թ. թիվ 02/14.1/11055-10 հանձնարարականի՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունում քննարկվել է ֆ. Զ-ի ուսման վարձավճարը զեղչելու հարցը: Գրություն է ուղարկվել Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր Գ. Քյալյանին՝ վերը նշված հարցը կրկին քննության առնելու և համապատասխան լուծում տալու համար:

Պատասխան գրությամբ Գ. Քյալյանը կրկին հայտնել է, որ ֆ. Զ-ի պահանջը՝ ուսման վարձավճարի գեղչի կապակցությամբ, բավարարել հնարավոր չէ:

Հաշվի առնելով, որ նմանատիպ դեպքերը կարող են կրկնվել՝ Պաշտպանը կարծիք է հայտնել, որ խնդիրը պահանջում է իրավական կարգավորում և հարցն անհրաժեշտ է քննարկել այդ տեսակետից:

Այս կապակցությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարը հայտնել է, որ հարցը կարգավորվում է 2004 թ-ի դեկտեմբերի 14-ի «Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՕ-62-Ն ՀՀ օրենքով, որի 5-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվել է լրացում՝ 2010 թվականի հունիսի 23-ի «Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-112-Ն ՀՀ օրենքով և լրացվել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «ՀՀ երկրադարձացիները բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվում են ՀՀ քաղաքացիների կամ օտարերկրացիների համար ՀՀ կառավարության սահմանված պայմաններով՝ իրենց ընտրությամբ»: Հետևաբար, երկրադարձացիները ՀՀ քաղաքացու համար սահմանված կարգով բուհ ընդունվելու դեպքում կօգտվեն օտարերկրացի ուսանողների համար սահմանված արտոնություններից: Տվյալ դեպքում ֆ. Զ-ի ուսման վճարի խնդիրը պետք է լուծվի երկրորդ տարրերակով, քանի որ նա բուհ է ընդունվել «ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության» կանոններով սահմանված կարգով, և պայմանագիր է կնքվել նրա և բուհի միջև: Բուհի և ֆ. Զ-ի միջև ծագած քաղաքացիական հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենգործի 466-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Կարծում ենք, որ խնդրին ամբողջական լուծում չի տրվել: Բացի այդ, տվյալ օրենսդրական փոփոխությամբ չի բացառվել հետագայում նման խնդրների առաջացումը: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրության և «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը բավարար հիմք են նման հարցերի լուծման համար:

**Օրինակ 2.** Դպրոցի ուսուցչուի Բ. Ա.-ն դիմումով հայտնել էր, որ բարձրագույն կրթությամբ տարրական դասարանների դասվար է, ունի 35 տարվա մանկավարժական ստաժ, նախորդ տարի մասնակցել է դպրոցի տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին: Աշխատած տարիների ընթացքում աշխատանքային մեծ ակտիվություն է ցուցաբերել, վայելել է աշակերտների և ծնողների սերն ու հարգաճքը:

Դիմումատուն բողոքել է, որ իրենց համայնքի երկու դպրոցներից ոչ մեկում դասաժամեր չունի՝ չնայած համապատասխան կրթությանը և աշխատանքային ստաժին:

Բողոքը քննարկման նպատակով փոխանցվել է ՀՀ ԿԳ նախարարին՝ վերահսկողություն սահմանելով դրա ընթացքի նկատմամբ:

Ի պատասխան՝ ՀՀ ԿԳ նախարարը հայտնել է, որ համայնքի ավագ դպրոցի հնարավորությունների սահմաններում քաղաքացուն տրամադրվել է առավելագույնը՝ դպրոցի տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի (դաստիարակչական աշխատանքի կազմակերպչի) պաշտոնը (0.50 դրույք) և 2 դասաժամ:

**Օրինակ 3.** ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի բնակիչ Վ. Թ-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 2010 թվականի մարտի 9-ից մինչև 18-ը Վանաձորի զինկոմիսարի հրամանով անցել է զորակոչային բժշկական հանձնաժողով և ուղարկվել Երևանի «Նորք» բժշկական կենտրոն՝ ստացիոնար հետազոտման: Այդ ընթացքում հարգելի պատճառով բացակայել է դասերից և երկու անգամ չի ներկայացել կուրսային աշխատանքի պաշտպանությանը, ինչի պատճառով դեկանատի միջնորդությամբ, ԵՊՀ ոեկտորը համալսարանից նրան հեռացնելու հրաման է տվել:

Վ. Թ-ն դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ԵՊՀ ոեկտորին և դեկանին, սակայն որևէ պատասխան չի ստացել:

Դիմելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ խնդրել է աջակցել իր իրավունքների պաշտպանության հարցում:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարը հայտնել է, որ Վ. Թ-ի նախորդ դիմումների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել է բուհին:

Բուհից ստացված պարզաբանումների համաձայն՝ Վ. Թ-ին հնարավորություն է տրվել լուծարքային շրջանում վերահանձնելու կուրսային աշխատանքը, սակայն նրա կողմից ներկայացվել է արտագրված կուրսային աշխատանք:

Վ.Թ.-ն ԵՊՀ ռեկտորի հրամանով ս/թ մարտի 22-ին հեռացվել է բուհից՝ կուրսային աշխատանքը չկատարելու պատճառով:

Համաձայն Վանաձորի զինվորական կոմիսարիատի կողմից տրված տեղեկանքի՝ Վ.Թ.-ն ս/թ մարտի 9-ից 18-ն ազատվել է դասերից՝ «Նորք» թժկական կենտրոնում ստացիոնար հետազոտում անցնելու պատճառով, սակայն վերոնշյալ տեղեկանքը նրա կողմից բուհ է ներկայացվել այն ժամանակ, երբ նրան հեռացրել են բուհից:

Նշել է նաև, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիմողին բազմիցս տեղեկացրել է բուհից հեռացման պատճառների մասին և բացատրել ուսանողական իրավունքների վերականգնման կարգը:

Բողոքի քննարկումը դադարեցվել է:

Ընթացիկ տարում տարբեր լրատվամիջոցներով անդրադարձ է կատարվել բուհ ընդունվելու հայտ ներկայացրած 39 դիմորդի խնդրին, ովքեր, ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության պարզաբանման, դպրոցն ավարտել են օրենսդրության խախտմամբ:

Զանդրադառնալով էքստերն քննություն հանձնելու հնարավորության իրավական կողմին՝ Պաշտպանը 15.06.2010 թ-ին ՀՀ կրթության և գիտության նախարարին գրություն է հասցեազրել, որում առաջադրվել են հետևյալ հարցերը.

- արդյոք դպրոցն օրենսդրության խախտմամբ ավարտելու հանգամանքը չէր կարող պարզ դառնալ բուհ ընդունվելու հայտ ներկայացնելիս՝ համապատասխան փաստաթղթերը հանձնելու փուլում,

- դպրոցն ավարտելու համար ո՞ր դասարանում պետք է ուսումը շարունակեն այդ աշակերտները,

- ինչո՞ւ քննություններին մասնակցելն արգելելու մասին պատշաճ չեն ծանուցվել դիմորդները (ըստ մանուլում հրապարակված տեղեկությունների՝ այդ մասին հեռախոսազանգով են տեղյակ պահել),

- 39 աշակերտի էքստերն փոխադրման քննությունները տեղի են ունեցել ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.11.2009 թվականի N 949-Ն հրամանից առաջ, թե հետո,

- եթե 39 դիմորդից ոմանք կարողացել են հանձնել միասնական քննություններ, ապա դա չի ժիշտում էքստերն կարգով փոխադրվելը մեկ տարով կասեցնելու նախարարության այն պատճառաբանությունը, որ ավագ դպրոցի եռամյա ծրագիրը հնարավոր չէ յուրացնել մեկ տարում,

- արդյոք 39 աշակերտի էքստերն փոխադրումը տեղի է ունեցել ՀՀ կրթության և գիտության նախարարի 29.01.2007 թվականի N 39-Ն հրամանով հաստատված «Էքստերն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգի 6-րդ կետի

համաձայն, ըստ որի՝ 10-րդ դասարանի աշակերտների համար՝ մինչև տվյալ ուսումնական տարվա հունվարի 10-ը, աշակերտի ծնողը, դաստեկը և երեքից ոչ պակաս դասավանդող ուսուցիչ միասին գրավոր դիմում են դպրոցի տնօրենին՝ սովորողին դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրելու խնդրանքով։ Մանկավաժական խորհուրդը քննարկման հիման վրա ընդունում է որոշում՝ երաշխավորելու և նախարարությանը միջնորդելու աշակերտին դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրելու վերաբերյալ։ Մանկավաժական խորհրդի որոշումը դպրոցի տնօրենի կից գրությամբ, աշակերտի առաջադիմության վերաբերյալ փաստաթղթերի հետ միասին (եռօրյա ժամկետում) ներկայացվում է նախարարություն և մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) կրթության վարչություն՝ փոխադրական քննություններ հանձնելու համար։ Քննություններն անց են կացվում նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից, որը նախագահում է ՀՀ կրթության և գիտության նախարարը։

- պաշտոնատար անձանց քույլ տված սխալների հետևանքով ինչո՞ւ պետք է տուժեն աշակերտները, ովքեր որևէ իրավական ակտ չեն խախտել։

Նկատի ունենալով, որ նամակում բարձրացված հարցերը հրատապ լուծման կարիք են ունեցել, նաև այն, որ դեռևս հնարավորություն է եղել 39 դիմորդին քույլատրելու մասնակցել ընդունելության քննություններին՝ խնդրվել է քննարկել բարձրացված հարցերը և հնարավորինս սեղմ ժամկետում տեղեկացնել արդյունքների մասին։

ՀՀ կրթության և գիտության նախարարը 21.06.2010 թ-ի նամակով հայտնել է, որ ՀՀ կրթության պետական տեսչության կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 2009-2010 ուսումնական տարվա ընթացքում 10-րդ և 11-րդ դասարանների շուրջ 3500 աշակերտ, իրենց դիմումների համաձայն, տարբեր պատճառներով դուրս են եկել դպրոցից։ Ուսումը համապատասխան դպրոցներում ընդհատած աշակերտների անվանացանկը համադրվել է ԳԹԿ՝ միասնական քննություններին մասնակցելու հայտ ներկայացրած աշակերտների անվանացանկի հետ։ Պարզվել է, որ նրանցից 39-ը դիմորդներ են՝ ազատված տարբեր դպրոցների 10-րդ կամ «թոփքով» 11-րդ դասարանների աշակերտների համակարգից։ Նրանք ԳԹԿ միասնական քննություններին մասնակցելու հայտագրվածների անվանացանկերում հայտնվել են այլ դպրոցներից։

Ուսումն ընդհատած կամ «թոփքով» 11-րդ դասարան հրամանագրված և դպրոցի աշակերտական համակազմից հանվածների հետագա ուսումը կկազմակերպվի 12-ամյա կրթական ծրագրերին համապատասխան դասարաններում։

ՀՀ կրթության և գիտության նախարարն իր բազմաթիվ հրապարակային ելույթներում, մամուլի ասուլիսներում, ինչպես նաև Ազգային ժողովի ամբիոնից հորդորել էր տնօրեններին

և ծնողներին զերծ մնալ ապօրինի գործողություններից և տեղեկացրել, որ հարցը վերահսկվում է և գտնվում է նախարարության ուշադրության կենտրոնում:

2006 թվականից «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվել է 12 տարի ընդհանուր տևողությամբ միջնակարգ կրթություն, որն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ հետևյալ հաջորդական աստիճաններով՝ տարրական դպրոց՝ 1-4-րդ, միջին դպրոց՝ 5-9-րդ, ավագ դպրոց՝ 10-12-րդ դասարաններ: Նույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով՝ 2009-2010 ուսումնական տարվանից անցում է կատարվել եռամյա ավագ դպրոցի, և ավարտվում է 11-ամյա միջնակարգ կրթությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալ հաստատումները և դեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ կետով նախարարությանը վերապահված իրավասություններով՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2007 թ-ի հունվարի 29-ի թիվ 39-Ն հրամանով հաստատված կարգի 6-րդ կետում լրացում է կատարվել, համաձայն որի՝ 2009-2010 ուսումնական տարում՝ ՀՀ ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում կասեցվել են էքստերն փոխադրական քննությունները: Այսինքն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 2009-2010 ուստարում չի կազմակերպելու և անցկացնելու գործող կարգի 6-րդ կետով նախատեսված 10-րդ դասարանից 11-րդ դասարան էքստերն փոխադրական քննություններ:

Դեռևս 2009-2010 ուսումնական տարվա սկզբից քաղաքացիների կողմից, ԶԼՄ-ներով և այլ աղբյուրներով ահազանգեր են եղել առ այն, որ հանրակրթական ուսումնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կատարվում են ապօրինի «քոիչքներ»՝ 9-րդ դասարանն ավարտած աշակերտները հրամանագրվում են 11-րդ դասարանում: Մինչդեռ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 10-րդ կետի՝ հանրակրթական ծրագրի նախորդ աստիճանը կամ տվյալ ուսումնական տարվա ծրագիրը չյուրացրած սովորողին չի թույլատրվում անցնել հանրակրթության հաջորդ աստիճան կամ դասարան:

Կրթության պետական տեսչության կողմից կազմվել և հրապարակվել է խնդրո առարկա հարցի ուսումնասիրության գործողությունների և միջոցառումների ծրագիր, համաձայն որի՝ Հանրապետության հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններից տեղեկություններ են հավաքագրվել աշակերտների շարժի (ընդունելություն, փոխադրում, տեղափոխություն), ինչպես նաև 10-րդ և 11-րդ դասարաններում փաստացի սովորողների վերաբերյալ: Ըստ նշված ծրագրի՝ իրականացվել են նաև փաստաթղթային ուսումնասիրություններ, որոնց արդյունքում բացահայտված «քոիչքներ»-ին օրենքով սահմանված կարգով լուծումներ են տրվել, իսկ բազմաթիվ

աշակերտներ իրենք են իրենց ուսումը կամավոր շարունակել համապատասխան դասարաններում:

Նկատի ունենալով, որ 2009-2010 ուսումնական տարվանից անցում է կատարվել եռամյա ավագ դպրոցի և ավարտվում է 11-ամյա միջնակարգ կրթության տևողությունը՝ տվյալ դեպքում էքստերն կարգով փոխադրումը կստացվեր ոչ թե 1, այլ՝ 2 տարով։

Հաշվի առնելով, որ միջնակարգ հանրակրթական ծրագրերի ավարտին իրականացվում է հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին սովորողների համապատասխանության ստուգում՝ պետական ամփոփիչ ատեստավորում՝ միայն միասնական քննություններին մասնկացությունը չի ապացուցում, որ դիմորդը լիարժեք յուրացրել է եռամյա ավագ դպրոցի ծրագիրը։ Մասնավորապես, տվյալ դեպքում, հաշվառված չինելով որևէ հանրակրթական ուսումնական հաստատությունում, նշված դիմորդները չեն կարող մասնացել մյուս առարկաների ավարտական պետական քննություններին և ամփոփիչ գնահատականներ ունենալ։ Արդյունքում չեն կարող ստանալ միջնակարգ կրթության ատեստատներ և բուհ ընդունվել։

2009-2010 ուսումնական տարում հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարաններում էքստերն փոխադրական քննություններ չեն իրականացվել։ Հիշյալ 39 դիմորդները 2009-2010 ուսումնական տարվա ընթացքում ազատված են եղել տարբեր դպրոցների 10-րդ կամ «քոիչքով» 11-րդ դասարան հրամանագրված աշակերտական համակազմից։ Ինչ վերաբերում է քաղաքացու՝ անկախ տարիքից կրթություն ստանալու իրավունքին, ապա սահմանված կարգով կազմակերպվել և անցկացվում են հիմնական և միջնակարգ կրթական ծրագրերին համապատասխան էքստերն ավարտական քննություններ։

Ուսումն ընդհատած կամ «քոիչքով» 11-րդ դասարան հրամանագրված և դպրոցի աշակերտական համակազմից հանվածները ցանկության դեպքում կշարունակեն իրենց հետագա ուսումը եռամյա ավագ դպրոցի համապատասխան դասարաններում՝ առանց որևէ խոչընդոտների։ Իսկ այն պաշտոնատար անձինք, ովքեր բույլ են տվել ՀՀ օրենսդրության խախտումներ, օրենքով սահմանված կարգով պատասխանատվության կենթարկվեն։

Ուսումնասիրության վերջնական արդյունքները և դրանցից բխող խնդիրների վերաբերյալ ընդունված համապատասխան որոշումները կիրապարակվեն։

2010 թվականին Պաշտպանին են դիմել նաև «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի մի խումբ դասախոսներ՝ նշելով ռեկտորի կողմից իրենց աշխատանքային իրավունքների կողմից խախտումների մասին։

Սակայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի համաձայն բողոքը չի քննարկվել, քանի որ այն լուծման ենթակա է եղել դատական կարգով և դիմողներն իրենց աշխատանքային իրավունքները պաշտպանելու համար դիմել են դատարան:

### 3.14. ՀՀ առողջապահության նախարարություն

2010 թվականի ընթացքում առողջապահության նախարարության դեմ ուղղված դիմում-բողոքները վերաբերել են պետպատվերի շրջանակում անվճար բուժօգնություն, դեղորայք, ուղեգործ չտրամադրելուն, հոգեբուժական ստացիոնարներում բուժվող անձանց իրավունքների խախտմանը, տեղեկատվություն չտրամադրելուն, աշխատանքային իրավահարաբերություններին և այլնին:

**Օրինակ 1.** ՀՀ Նախագահի աշխատակազմից «Պաշտպանին է վերահասցեագրվել ցմահ ազատազրկման դատապարտված Է. Մ.-ի դիմումը, որում նշվել է, որ Է. Մ.-ի կինն ունի երիկամային անբավարարություն և դիալիզի միջոցով է գոյատևում: Մինչ հիվանդանալը կինը երեխայի հետ հաճախ է այցելել Է. Մ.-ին, սակայն հիվանդության սրացումից հետո նա գրկվել է տեսակցության հնարավորությունից:

Ըստ դիմումատուի՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ ելքն իր երիկամներից մեկը կնոջը փոխպատվաստման միջոցով տրամադրելն է: Սակայն «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում նշված են կենդանի դոնորների ընտրության շրջանակների սահմանափակումները, որի համաձայն փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելը քաղաքացուց (կենդանի դոնորից) չի թույլատրվում, եթե քաղաքացին պատիժ է կրում ազատազրկման վայրում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզվել է, որ որոշ երկրներում նման սահմանափակումներ չկան կամ ազատազրկման դատապարտված անձից (կենդանի դոնորից) կարող են օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցվել միայն նրա հարազատներին փոխպատվաստելու համար: Այդ դեպքում նշվում է հարազատների շրջանակը:

Հաշվի առնելով վերոգրյալ՝ «Պաշտպանը գրությամբ դիմել է ՀՀ վարչապետին՝ խնդրելով հանձնարարել ուսումնասիրել բարձրացված հարցը և հնարավորության դեպքում հանդես գալ օրենսդրական փոփոխության նախաձեռնությամբ:

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարը հայտնել է, որ բարձրացված հարցն ուսումնասիրվել է ՀՀ առողջապահության և ՀՀ արդարադատության նախարարությունների

կողմից: Նշվել է, որ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխառության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը սահմանված կարգով դրվել է շրջանառության մեջ:

**Օրինակ 2.** Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Քուչակ թաղամասի 20 շենքի բնակիչ Զ. Մ-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումին կից ներկայացրել է ՀՀ վարչապետին և Երևանի քաղաքապետին ուղղված 153 անձի կողմից ստորագրված բողոքի պատճենը՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել հարցի լուծման կապակցությամբ:

Դիմումում նշվել է, որ Ավանի Քուչակ, Նարեկացի, Հովհաննիսյան և Իսահակյան թաղամասերը միացնող տարածքում կառուցվել և շահագործման է հանձնվել հայ-ռուսական համատեղ ձեռնարկությանը պատկանող Էլեկտրակայան-կաթսայատուն, որի առաջացրած աղմուկը լսվում է 700-800 մետր շառավղով: Աղմուկի հետևանքով շրջակա շենքերի բնակիչները զրկվել են անդրբից: Նույնիսկ փակ պատուհաններից անընդհատ լսվող ձայնը անտանելի է դարձնում իրենց կյանքը:

Բազմիցս դիմել են թաղապետարան, սակայն հարցին լուծում չի տրվել:

ՀՀ վարչապետին և Երևանի քաղաքապետին ողղված բողոքում խնդրել են.

- անձամբ ծանոթանալ ստեղծված իրավիճակին,
- դադարեցնել Էլեկտրակայան-կաթսայատան շահագործումը,
- Էլեկտրակայան-կաթսայատան հետագա ճակատագիրը որոշելու նպատակով ստեղծել մասնագիտական-փորձագիտական հանձնաժողով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմումը քննարկման է ընդունել և գրությամբ խնդրել է ՀՀ առողջապահության նախարարին՝ հանձնարարել ուսումնասիրել դիմումում նշված տեղեկությունները և պարզաբանում ներկայացնել:

ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալի կողմից ստացվել է պատասխան գրություն, ըստ որի՝ ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում պարզվել է, որ Քուչակ 19 շենքի թիվ 10 բնակարանում, 20 շենքի թիվ 1 բնակարանում, Հ. Հովհաննիսյան թաղամասի 50 շենքի թիվ 23 բնակարանում և մի շարք այլ բնակարաններում աղմուկի մակարդակը գերազանցել է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-1.1.3 սանիտարական նորմերի պահանջները: Արձանագրված խախտումների հիման վրա «Հայուսկողեներացիա» ՓԲԸ-ին առաջարկվել է մինչև ձայնամեկուսիչ ծածկի տեղադրումը ձեռնարկել համապատասխան միջոցառումներ: Միաժամանակ, «Հայուսկողեներացիա» ՓԲԸ-ի տնօրենի նկատմամբ վարչական տույժ է կիրառվել, և կազմակերպության տնօրինությունը գրավոր պարտավորվել է դադարեցնել կաթսայատան գործունեությունը ս.թ.

ապրիլի 6-ից ժամը 22.00-ից մինչև առավոտյան ժամը 6.00-ն: Սակայն ՀՀ ԱՆ աշխատակազմի **ՊՀՀ** տեսչության կողմից 10.04.2010 թ-ին և 13.05.2010 թ-ին իրականացված կրկնակի ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Հայուսկողեներացիա» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական կաթսայատան գործունեության դադարեցումը գիշերային ժամերին խիստ անկանոն բնույթ է կրում՝ չպահպանելով պարտավորությամբ ստանձնած դադարեցման ռեժիմը:

Գրությամբ նաև հայտնվել է, որ հաշվի առնելով այն փաստը, որ «Հայուսկողեներացիա» ՓԲԸ-ի կողմից դեռևս չեն կատարվել կողեներացիոն սարքավորման ճայնամեկուսիչ ծածկի տեղադրման աշխատանքները՝ ՀՀ ԱՆ աշխատակազմի **ՊՀՀ** տեսչության կողմից կիրականացվեն լրացուցիչ ուսումնասիրություններ և կճնաբարկվեն համապատասխան միջոցառումներ՝ հարցը կարգավորելու նպատակով:

### 3.15. ՀՀ բնապահպանության նախարարություն

Նախարարության դեմ ուղղված բողոքները վերաբերել են տարբեր վայրերում իրականացվող ծառահատումներին, Էկոլոգիական տարբեր խնդիրներին, արգելավայրերի նկատմամբ անհրաժեշտ վերահսկողության բացակայությանը, դրանցում իրականացվող ինքնակամ շինարարության դեպքերին, Սևանա լճի հիմնահարցերին:

Բնապահպանական խնդիրները մշտապես եղել են **Պաշտպանի** ուշադրության կենտրոնում: Այդ կապակցությամբ կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, քննարկումներ:

«Չորրորդ իշխանություն» օրաթերթի 09.02.2010 թ-ի համարում տպագրված հոդվածի հիման վրա, ըստ որի՝ ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի քաղաքային հիվանդանոցին հարակից տարածքում հատվել է մոտ 10 հաստարուն ծառ, **Պաշտպանը** 10.02.2010 թ-ի գրությամբ ՀՀ բնապահպանության նախարարին խնդրել է հայտնել՝

- վերոգրյալը համապատասխանում է իրականությանը, թե՝ ոչ,
- եթե համապատասխանում է, օրինական է, թե՝ ոչ,
- եթե ծառահատումն իրականացվել է ապօրինի, ասա ինչ միջոցներ են ձեռնարկվել դեպքի հանգամանքները պարզելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Նախարարը 16.02.2010 թ-ի պատասխանով տեղեկացրել է, որ նշվածը համապատասխանում է իրականությանը և այն կատարվել է Եղվարդի քաղաքապետի իրավասության սահմաններում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Պատասխանին կցվել են նաև «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և Եղվարդի քաղաքապետի գրությունների պատճենները:

Հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրենը քաղաքապետին հասցեազրած գրությամբ հայտնել է, որ ծրագրի շրջանակներում Սաղե և ՇՄՇ-23 կազմակերպությունների կոնսորցիոնը ներկայումս իրականացնում է վեց մայր ջրանցքի վերականգնման աշխատանքներ՝ ներառյալ Եղվարդի քաղաքի վարչական տարածքում գտնվող Արգիշտիամի մայր ջրանցքների հատվածը:

Խնդրել է աջակցել նշված շինարարական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործում:

Թեև գրության մեջ ծառահատման մասին որևէ նշում չկա, սակայն քաղաքապետը պատասխան գրությամբ հայտնել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աջակցությունը՝ միաժամանակ նշելով, որ աշխատակազմը չի առարկում, որպեսզի ջրանցքի օտարման գոտում կատարվեն անհրաժեշտ ծառահատման աշխատանքներ:

Չնայած Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման ու պահպանման կապակցությամբ յուրաքանչյուր տարի ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի կողմից իրականացվող միջոցառումներին՝ այդուհանդերձ, այս ոլորտում դեռևս հիմնախնդիրներ կան:

2010 թվականի հուլիսի 19-ին և 20-ին մամուլում հոդվածներ են հրապարակվել Սևանա լիճը սնուցող աղբյուրներից մեկի՝ Արգիճի գետի վրա կառուցվող հիդրոէլեկտրակայանի վերաբերյալ: Ըստ լրատվամիջոցների՝ այդ հիդրոէլեկտրակայանի կառուցումը կարող է հարեան համայնքները ոռոգման ջրից զրկելու պատճառ դառնալ, ինչպես նաև վնաս հասցնել Սևանի ձկնաշխարհին, քանի որ Արգիճը Սևանի ջրավազանի ձկների ճվադրման համար կայուն վայր է:

Հրապարակումներով փաստվել է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը հիդրոէլեկտրակայանի կառուցման թույլտվություն է տվել «Հիդրոկորպորացիա» ՍՊԸ-ին, որն իր հերթին այն վաճառել է «Զանգեզուր Էքսպին» ՍՊԸ-ին: Սիամամանակ նշված է եղել, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության փաստաթղթերի բացակայության պատճառով, արգելել է որևէ գործունեության իրականացնել: Բացի այդ նշվել է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը թույլատրել է 250 մմ խողովակներով ջրատար

կառուցել, սակայն խողովակները 530 մմ տրամագծով են, ինչը ենթադրում է ավելի մեծ քանակությամբ ջրի օգտագործում:

Մամուլում հրապարակված տեղեկությունների հակասական լինելու պատճառով՝ Պաշտպանը գրություն է ուղարկել ՀՀ բնապահպանության նախարարին՝ խնդրելով հայտնել՝ արդյոք գոյություն ունի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացություն և առկայության դեպքում ուղարկել դրա, ինչպես նաև կառուցապատման վերաբերյալ մյուս փաստաթղթերի պատճենները:

ՀՀ բնապահպանության նախարարը հայտնել է, որ խնդրը տեղում ուսումնասիրվել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ համայնքին պատկանող ոռոգման ցանցի վերանորոգման շինարարական աշխատանքները կատարվել են «Զանգեզուր Էքսիմպ» ՍՊԸ-ի կողմից՝ 2009 թ-ին:

Ներկայումս Գայլաձոր վտակից դեպի Աղնջաձոր տանող գործող մեկ ջրատար կա (250մմ), որը կառուցվել է դեռևս խորհրդային տարիներին: Աղնջաձոր համայնքի դեկավարի և տեղի բնակիչների պնդմամբ գոյություն է ունեցել նաև երկրորդ ջրատարը, որը ՀՀ Վայոց Զորի մարզի Աղնջաձոր համայնքի ավագանու խնդրանքով վերակառուցման նպատակով ամբողջովին ապամոնտաժվել է «Զանգեզուր Էքսիմպ» ՍՊԸ-ի կողմից: Նշված աշխատանքները կատարվել են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ և համապատասխան շինարարական բույլտվության բացակայությամբ:

ՀՀ բնապահպանության նախարարության միջամտությամբ ներկայումս Գայլաձորի վտակի տարածքում շինարարական աշխատանքները դադարեցված են:

2006 թ-ի դեկտեմբերի 12-ին, ՀՀ Վայոց Զորի Աղնջաձոր համայնքի դեկավարի հայտի հիման վրա, սահմանված կարգով տպագրվել է հայտարարություն: Հայտարարության վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարությունը բողոքներ չի ստացել և 2006 թ-ի դեկտեմբերի 19-ին ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից տրվել է ջրօգտագործման բույլտվություն, որի գործունեության ժամկետը լրացել է 2009 թվականի դեկտեմբերի 19-ին:

2010 թ-ի հուլիսի 9-ին Աղնջաձոր համայնքի դեկավարի կողմից ՀՀ բնապահպանության նախարարին գրավոր տեղեկանք է ներկայացվել, որով հիմնավորվում է Գայլաձորի վտակի ջրային ռեսուրսներից ոռոգման համար օգտվելու անհրաժեշտությունը, քանի որ համայնքի տարածքում այլ ջրային ռեսուրսներ չկան: Նույն օրը համայնքի դեկավարի կողմից ՀՀ բնապահպանության նախարարություն դիմում է ներկայացվել ջրօգտագործման բույլտվության գործունեության ժամկետի երկարաձգման խնդրանքով:

Իսկ «ՄԵԿ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի իրավահաջորդ «Զանգեզուր Էքսիմպ» ՍՊԸ-ի վերաբերյալ բնապահպանության նախարարությունը հայտնել է, որ ընկերությունը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիայի հիման վրա ՀՀ Վայոց Չոր մարզի Աղճազոր համայնքի վարչական տարածքում Կապոյտ Բերդ վտակի վրա իրականացնում է «ԴԵԶՊԱՆԱՐԴ» ՓՀԷԿ-ի շենքի և ջրատարի կառուցման աշխատանքները։ Նշված աշխատանքների իրականացման համար «Զանգեզուր Էքսիմպ» ՍՊԸ-ին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրվել է Եղեգիս գետի Կապոյտ Բերդ վտակի ջրային ռեսուրսներից օգտվելու ջրօգտագործման թույլտվություն։ Ներկայացված բողոքների ուսումնասիրության և հարցին սահմանված կարգով լուծում տալու համար ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ։

Նախարարը հայտնել է նաև, որ իր հրամանով Գեղարքունիքի և Վայոց Չորի մարզերում ջրօգտագործողների կողմից Արգիճի գետից ջրային ռեսուրսների օգտագործման վիճակարույց հարցերի ուսումնասիրման համար աշխատանքային խումբ է ստեղծվել, որի կազմում ընդգրկված են ներկայացուցիչներ բնապահպանության նախարարությունից, տարածքային կառավարման նախարարության ջրտնտպետկոմից, Վայոց Չորի և Գեղարքունիքի մարզպետարաններից, ովքեր աշխատանքների իրականացման համար նախօրոք կազմված ժամանակացույցով 2010 թ-ի հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը ուսումնասիրել են իրավիճակը։

Օգոստոսի 4-ին բնապահպանության նախարարությունում տեղի է ունեցել աշխատանքային խմբի ընդլայնված նիստ, որին մասնակցել են նաև նշված մարզերի Արգիճի գետից ջրառ իրականացնող համայնքների, «SOS Արգիճի» հասարակական նախաձեռնության ներկայացուցիչները։

Քննարկման արդյունքում աշխատանքային խումբը որոշել է բնապահպանության նախարարին ներկայացնել հետևյալ առաջարկները։

1. Արգիճի գետը ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված իշխան, կողակ, բեղլու ձկնատեսակների համար պահպանության, բնական վերարտադրության, ձվադրման և բնակմիջավայր է։ Արգիճի գետի Գայլաձոր վտակում ծովի մակերևույթից 2300 մ բարձրության վրա առաջացել է կողակ ձկնատեսակի տեղային պոպուլյացիա, որը ապրում, զարգանում, վերարտադրվում է գետում և չի խառնվում Սևանա լճի պոպուլյացիաների հետ, ուստի, գետերի կենդանական աշխարհի պահպանությունն ապահովելու նպատակով Արգիճի գետի և նրա Գայլաձոր վտակի տարեկան միջին ջրատվության 20-25%-ը անհրաժեշտ է պահպանել՝ որպես էկոթողք, իսկ մնացած՝ ըստ ջրօգտագործման առաջնահերթությունների, տալ ջրօգտագործողներին,

2. հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին՝ իրականացնելու գեղարքունիքի մարզի 5 համայնքների և Վայոց Զորի Աղնջաձոր համայնքի կողմից ներկայացված ջրօգտագործման թույլտվությունների հայտերի գնահատում՝ ըստ փաստացի ռողջու հողատարածների, մշակաբույսերի և սահմանված կարգով մինչև 2010 թ-ի ավարտը ապահովել ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը,

3. համապատասխան իրավասություն ունեցող մարմինների քննարկմանը ներկայացնել ապօրինի կառուցված շինությունների խնդիրը,

4. հանձնարարել ՀՀ բնապահպանարքան նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալությանը և բնապահպանական պետական տեսչությանը՝ խստացնել հսկողությունը ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրաբանակների նկատմամբ:

Աշխատանքային խմբի հավանության արժանացած առաջարկությունները ներկայացվելու են նաև ՀՀ Նախագահին առընթեր Սեանա լճի հիմնահարցերի հանձնաժողովին:

**Օրինակ 1.** Բնապահպանական խնդիրներով զբաղվող թվով 45 հասարակական կազմակերպությունից բաղկացած Էկոլոգիական հասարակական դաշինքի (այսուհետ՝ Դաշինք) «Սոս Խոսրով» աշխատանքային խումբը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ Ելնելով Հանրապետության կայուն զարգացմանը վնասող այս խնդիրի կարևորությունից՝ անհրաժեշտ է համարում վերանայել «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքի մի հատվածի վրա «Գիլան» պետական արգելավայրը հիմնելու վերաբերյալ 24.05.2007 թ-ի ՀՀ կառավարության թիվ 673 որոշումը և վերականգնել արգելոցի տարածքի ամբողջականությունը:

Դաշինքի աշխատանքային խումբը նշել է նաև, որ վերոնշյալ որոշումն ընդունվել է Օրիուսի կոնվենցիայի դրույթի կոպիտ խախտումներով. հաշվի չի առնվել Հանրապետության առաջատար մասնագետների և հասարակության կարծիքը:

Նոր հիմնված «Գիլան» արգելավայրի տարածքը գտնվում է «Խոսրովի անտառ» արգելոցի կենտրոնում, և այդ հատվածի կարգավիճակի փոփոխությունը (հսկողության և պահպանման ռեժիմի իջեցումը) վտանգավոր նախադեպ է դառնում ամբողջ արգելոցի մասնատման համար՝ սկիզբ դնելով «Խոսրովի անտառ» պետական արգելոցի վերացմանը:

Դաշինքի կողմից այդ որոշումը քննարկվել է նաև ՀՀ ԳԱՍ բուսաբանության ինստիտուտի, Կենդարանության և Հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի համապատասխան մասնագետների հետ: Քննարկման արդյունքում արձանագրվել է, որ Կառավարության վերոնշյալ որոշումը հակասում է «Հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքներին,

ՀՀ կողմից վավերացված կենսաբազմազանության պահպանության մասին ՍԱԿ-ի կոնվենցիայի, Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիայի, Վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոպայի կոնվենցիայի և այլ միջազգային փաստաթղթերի դրույթներին: Այն նաև հակասում է GEF, UNDP, WWF և այլ բազմաթիվ միջազգային դուռը կազմակերպությունների քաղաքականությանը և կարող է հարցականի տակ դնել Հայաստանի Հանրապետությանը տրվող նրանց ֆինանսական աջակցությունը:

Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ բնապահպանության նախարարը հայտնել է, որ ՀՀ կառավարության 2007 թ-ի մայիսի 24-ի՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում «Գիլան» պետական արգելավայր ստեղծելու մասին» թիվ 673-Ն որոշմամբ, բուսական և կենդանական աշխարհի պահպանությունը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կազմում ստեղծվել է 118 հեկտար տարածքով «Գիլան» պետական արգելավայր: Այդ որոշմամբ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հողերի նպատակային նշանակության փոփոխություն չի կատարվել:

«Գիլան» պետական արգելավայրի տարածքը նախկինում բնակեցված է եղել աղբքեզանցիների կողմից և այնտեղ եղել են շինություններ, ենթակառուցվածքներ և ամբողջությամբ մարդածին, արհեստական լանջաֆուններ, որոնց վերականգնումը, ինչպես նաև նշված շինությունների ապամոնտաժումը և արհեստական էկոհամակարգերի փոխարեն բնական էկոհամակարգերի վերականգնումն՝ արգելոցային ռեժիմի դեպքում, անհնար էր:

Նշված տարածքների վերականգնման, տարածքին բնորոշ բուսական և կենդանական աշխարհի պահպանության ու կայուն օգտագործման, ինչպես նաև ճանաչողական գրոսաշրջության զարգացմանն ուղղված ենթակառուցվածքների ստեղծումն ապահովելու նպատակով հիմնվել է «Գիլան» պետական արգելավայրը:

ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 930-Ն որոշմամբ հաստատվել է «Գիլան» պետական արգելավայրի կանոնադրությունը: ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի թիվ 925-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 1203-Ն որոշմամբ թույլատրվել է «Գիլան» պետական արգելավայրի հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրել վարձակալության՝ մինչև 60 տարի ժամկետով, զյուղատնտեսական գործունեության համար՝ մինչև 10 տարի ժամկետով:

Հիմք ընդունելով այս որոշումները՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ը, սահմանված կարգով, «Գիլան» պետական արգելավայրը 2008 թվականի հունվարի 14-ին վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրել է «Հովազաձոր» ՍՊԸ-ին՝ իր կողմից ներկայացված «Կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների

պահպանության, պաշտպանության, վերարտադրության ու կայուն օգտագործման կազմակերպման» ծրագիրն իրականացնելու նպատակով:

Իրավիճակին ծանոթանալու նպատակով «Էկոլոգիական հասարակական դաշինք»-ի և մի շարք լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից այցելություն է կազմակերպվել «Գիլան» պետական արգելավայր, ինչից հետո ՀՀ բնապահպանության նախարարի հանձնարարությամբ «Հովազաձոր» ՍՊԸ-ի կողմից իրականացվող շինարարական աշխատանքները դադարեցվել են:

Բացի այդ, ՀՀ բնապահպանության նախարարի 14.07.2010թ-ի թիվ 181-Ա հրամանի համաձայն աշխատանքային խումբ է ստեղծվել «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում գտնվող «Գիլան» կոչվող գյուղատեղում առկա տնտեսությունների խնդիրներն ուսումնասիրելու նպատակով:

Աշխատանքային խմբում ընդգրկվել են նաև «Էկոլոգիական հասարակական դաշինք»-ի կողմից ներկայացված երկու անդամներ:

Միաժամանակ տեղեկացվել է, որ «Խոսրովի անտառ» պետական արգելոց «ՊՈԱԿ-ի տնօրինությանը հանձնարարվել է անհրաժեշտ հսկողություն իրականացնել «Գիլան» պետական արգելավայրի տարածքում, որպեսզի «Հովազաձոր» ՍՊԸ-ի կողմից իրականացվող աշխատանքներն ընթանան արգելավայրի պահպանության ռեժիմին, ինչպես նաև պայմանագրում և «Հովազաձոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրագրում ամրագրված պարտավորություններին համապատասխան, ինչը կնպաստի տարածքի բնական լանդշաֆտի վերականգնմանը և նախադրյալներ կատեղի տարածաշրջանում ազրություն և էկոտուրիզմի զարգացման համար:

### 3.16. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության դեմ ուղղված բողոքները եղել են բնակարանային հարցերի, ինչպես նաև վտանգավոր արդյունաբերական արտադրամասների նկատմամբ անհրաժեշտ հսկողություն շիրականացնելու վերաբերյալ:

**Օրինակ 1.** ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի բնակիչը հայտնել է, որ ինքը, ամուսինը, իսկ հետագայում՝ նաև որդին, աշխատել են Աբովյանի հրշեց մասում, որտեղից իրենց տրամադրվել է հանրակացարանային սենյակ: Բացի այդ, դիմումատուն նշել է նաև, որ բնակարան ստացողների ցուցակում հերթագրված այլ աշխատակիցներ բնակարաններ են ստացել: Նկատի ունենալով, որ նախարարությունը ներկայումս բնակարան հատկացնելու հնարավորություն չունի, քաղաքացին դիմել է՝ խնդրելով սեփականաշնորհել զբաղեցրած

սենյակը, սակայն ստացել է իր կարծիքով անհեթեք պատասխան, որ իբր ինքնակամ է գրադեցրել նշված տարածքը:

Հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է ուղարկել ՀՀ ԱԻ նախարարին:

Պատասխան գրությամբ նախարարը հայտնել է, որ քաղաքացին 1981 թ-ից տվյալ տարածքը գրադեցրել է առանց տարածքի հատկացման որոշման, օրենքի կամ իրամանի՝ տվյալ ժամանակահատվածում հրշեց մասի պետի համաձայնությամբ և հովանավորությամբ: Հայտնել է նաև որ դիմումատուն 05.11.09 թ-ին դիմել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն՝ տվյալ տարածքի նկատմամբ սեփականաշնորհման բույլտվություն ստանալու կապակցությամբ, սակայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ուսումնասիրվել են վերջինիս կողմից ներկայացրած փաստաթղթերը և կայացվել է որոշում այն մերժելու վերաբերյալ, քանի որ տարածքը գրադեցվել է ինքնակամ:

Իսկ այլ աշխատակիցների բնակարան ստանալու վերաբերյալ նշվել է, որ վերջիններս բնակարան ստացել են ոչ թե ՆԳՆ հրշեց պաշտպանության վարչության կողմից, այլ Աբովյանի քաղաքային ֆոնդից: Նշվել է նաև, որ քաղաքացուն բույլ է տրվել շարունակել բնակվել նշված տարածքում՝ առանց այնտեղ որևէ հարազատի հետագա գրանցման:

**Օրինակ 2.** «Էկոլոգիական անվտանգության ապահովման և ժողովրդավարության գարգացման» ՀԿ-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած գրությամբ հայտնել է, որ կազմակերպությունը, հետևելով «Դինո գոլդ մայնինգ քամփընի» ՓԲԸ գործունեությանը, պարզել է, որ Կապան քաղաքում իրականացված պայթեցման աշխատանքների աղյունքում գոյացել է 100X70 մետր խորությամբ փոս, թուլացել են կառույցների հիմքերը, որոնք ցանկացած պահի կարող են փլվել՝ առաջացնելով մարդկային զոհեր: Կազմակերպության դեկավարությունը նաև հայտնել է, որ մի շաբթ բնակիչներ 2007 թ-ից չեն կարողանում օգտագործել անգամ իրենց պատկանող հողատարածքները, քանի որ իրագործվող աշխատանքների ընթացքում Ընկերությունը չի ապահովում բնակիչների անվտանգությունը:

Բարձրացված հարցի կապակցությամբ գրություն է հասցեազրվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին:

Ի պատասխան տեղեկացվել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի համաձայնարարականով «Տեխնիկական անվտանգության ապահովման ազգային կենտրոն» ՊՈՍԿ-ի կողմից «Դինո գոլդ մայնինգ քամփընի» ՓԲԸ-ում 2010 թ-ի ապրիլի 26-30-ը ուսումնասիրություններ են իրականացվել: Դրանց արդյունքում՝ ի թիվս այլ հանգամանքների, նաև պարզվել է, որ արդյունաբերական պայթուցիկ նյութերի արտադրամասը ներկա պահին չի շահագործվում, քանզի 2009 թ-ից նրա գործունությունը կասեցված է, իսկ սարքերը՝ ապամոնտաժված: Այն օգտագործվում է որպես սովորական

պահեստ, որը տեխնիկական անվտանգության տեսակետից վտանգի աղբյուր չի պարունակում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների՝ 2010 թվականի հոկտեմբերին ՀՀ Վայոց Զորի մարզի Խաչիկ համայնք կատարած այցելության ընթացքում հարց է բարձրացվել, որ համայնքը սահմանամերձ գոտի է և գլխավոր ճանապարհից հեռու է դեպի գյուղ տանող ճանապարհը, որն ունի բարդ ռելիեֆ ու ոլորաններ: Մինչդեռ այս պայմաններում գյուղը չունի հրշեց մեքենան կարող է դեպքի վայր հասնել երկուսից երեք ժամվա ընթացքում: Խնդրի լուծումը ուղղված է աշխատական նշանակություն ունի նաև այն պատճառով, որ համայնքում տեղակայված է զինվորական գումարտակ: Բարձրացված հարցը քննարկվել է նաև մարզպետի տեղակալ U. Թարվերդյանի հետ, ով, կարևորելով խնդիրը, հավելել է, որ մինչ Հայաստանի անկախացումը՝ խորհրդային տարիներին, գյուղում եղել է առանձին հրշեց մեքենա:

Ենթելով վերագրյալից՝ 22.10.2010 թ-ի գրությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին առաջարկվել է հանձնարարել քննարկել բարձրացված հարցը և տեղեկացնել արդյունքների մասին:

Նախարարը 05.11.2010 թ-ին տեղեկացրել է, որ ինչպես Վայոց Զորի վարզի Խաչիկ գյուղում, այնպես էլ ՀՀ մյուս մարզերում հրշեց հենակետեր ստեղծելու հարցն, իրոք, արդիական է, և նախարարությունը պատրաստում է սահմանամերձ և հեռավոր գյուղերում հրդեհներին օպերատիվ արձագանքելու նպատակով հրշեց հենակետեր ստեղծելու վերաբերյալ առաջարկությունների փաթեթ՝ ՀՀ կառավարությունը:

Փաթեթում նախատեսվել է ընդգրկել նաև Պաշտպանի առաջարկը:

### 3.17. Տրանսպորտի և կապի նախարարություն

Ընթացիկ տարում ևս ստացվել են կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող փոխադրողների կողմից չվացուցակների խախտման և ավտոտրանսպորտային միջոցների անխափան աշխատանքը չապահովելու վերաբերյալ բողոքներ: Դրանք հիմնականում ստացվել են ընդիմության ներկայացուցիչների կողմից Երևան քաղաքում կազմակերպված հանրահավաքների օրերին: Պաշտպանի հարցմանը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարը դեռևս չի պատասխանել: Նախապատրաստվել է հիշեցում:

Եղել են նաև անհատ տաքսու վարորդների կողմից դիմում-բողոքներ:

**Օրինակ** 1. Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից Պաշտպանին է փոխանցվել ՀՀ Շիրակի մարզի անհատ տաքսիստների դիմում-բողոքը, որով իրենց դժգոհություններն են արտահայտել ընդունված այն օրենսդրական ակտերի վերաբերյալ, որոնցով փորձ է կատարվում կարգավորել տաքսի ծառայությունների աշխատանքը:

Վարորդները նշել են, որ շատերը երկրաշարժի պատճառով բնակվում են դեռևս տնակներում, չունեն աշխատանք, ընտանիքները գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և իրենց եկամտի միակ աղբյուրը սեփական մեքենայով տաքսի ծառայություն մատուցելն է:

Բողոքում բարձրացվել են մի շաբթ հարցեր, որոնք վերաբերում են տաքսի ծառայությունների մատուցման համար ներկայացվող նոր պահանջներին: Այն է՝

- ավտոմեքենան պետք է արտադրված լինի ոչ ուշ, քան 10 տարի առաջ,
- պետք է տեղադրվեն դեղին պետհամարանիշներ,
- ունենան հաշվիչ սարքեր:

Բացի այդ, նշվել է, որ մեքենաների՝ որպես մարդատար-տաքսի կահավորման և լիցենզիայի տրամադրման համար նախատեսված գումարները բարձր են:

Վարորդները նաև մտավախություն են հայտնել, որ իրենց մերձավորներին կամ ընտանիքի անդամներին տեղափոխելիս հաշվիչ սարքը չմիացնելը հարկային մարմինների կողմից կարող է ապօրինի ուղևորափոխադրում դիտվել, ինչի համար իրենք հնարավոր է ենթարկվեն պատասխանատվության:

Կարծում են, որ անհատ տաքսիստների նկատմամբ պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերվի:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը 08.02.2010 թ-ին ՀՀ վարչապետին հասցեազրած գրությամբ խնդրել է հայտնել, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել դիմումում բարձրացված հարցերը քննարկելու և համապատասխան լուծում տալու ուղղությամբ:

Խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քննարկվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակիցների հետ:

Պաշտպանի գրությանն ի պատասխան ՀՀ տրանսպորտի և կապի նախարարը 15.03.2010 թ-ի նամակով հայտնել է, որ ոչ միայն Շիրակի մարզում, այլ ընդհանրապես Հայաստանի Հանրապետությունում անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացը գտնվում է ՀՀ կառավարության և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ուշադրության կենտրոնում: Շահագրգիռ պետական մարմինների հետ ընթանում են քննարկումներ՝ անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ

իրականացնող անձանց լիցենզավորման գործընթացում տարբերակված մոտեցում ցուցաբերելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է մերձավորների և ընտանիքի անդամների տեղափոխման լնթացքում հաշվիչ սարքերի չմիացման պատճառով հարկային մարմինների կողմից որպես ապօրինի փոխադրում դիտարկվելու մտավախությանը, ապա «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ավտոտրանսպորտային գործունեությունը հաստատագրված վճարի հարկվող օբյեկտ է համարվում, ուստի հաշվիչ սարքի միացված չկննելը չի կարող դիտարկվել որպես ապօրինի գործունեություն: Միաժամանակ նշվել է, որ հաշվիչ սարքի առկայությունը բխում է ուղևորների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից:

Տեղեկացվել է նաև, որ 2009 թ-ի լնթացքում վրացական կողմից հետ համաձայնություն է ձեռք բերվել դեղին հիմնագույնի համարանիշներով տրանսպորտային միջոցների՝ Վրաստանի տարածք մուտք գործելու վերաբերյալ:

### **3.18. ՀՀ ֆինանսների նախարարություն**

Ֆինանսների նախարարության դեմ ուղղված բողոքներով քաղաքացիները դժգոհություններ են հայտնել անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոռպերատիվների փայտերերի կողմից Խորհրդային Սիության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայտերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնություն տրամադրելու խնդիրների վերաբերյալ:

**Օրինակ 1. Քաղաքացի Օ.Դ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ 1991 թ-ին «Էրեբունի-91» բնակարանաշինարարական կոռպերատիվում երկու սենյականց բնակարան ստանալու նպատակով ներդրել է 13000 ռուբլի: Սակայն Խորհրդային Սիության ռուբլով վճարված գումարի արժեզրկման պատճառով ոչինչ չի ստացել, իսկ այժմ ճգնաժամ են կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրումը, բեև ըստ ժամանակացույցի՝ այդ գումարներն արդեն իսկ պետք է վճարված լինեին: Սինչետո ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցն ամեն անզամ ճգնաժամ է վճարումը՝ բերելով անհերեք պատճառաբանություններ:**

Դիմումատուն նշել է, որ սոցիալապես ծանր վիճակում է և այդ գումարն իր համար օրիհասական նշանակություն ունի:

Այս կապակցությամբ գրություն է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարին:

Պատասխան գրությամբ նախարարը հայտնել է, որ ՀՀ կառավարության 02.08.2000թ. N 432-Ն որոշմամբ հաստատված «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական

կոռագերատիվների փայտաքարերի կողմից Խորհրդային Սիության ոռորով վճարված գումարի արժեզրկումից փայտաքարերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման» կարգի (այսուհետ՝ Կարգ), որը խմբագրվել է ՀՀ կառավարության 15.11.2005 N 2000-Ն որոշմամբ, և ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 12-ի N 229 որոշմամբ հաստատված ժամանակացույցի (այսուհետ՝ Ժամանակացույց) պահանջներին համապատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը սկսել է «Էրեբունի-91» կոռագերատիվի անդամներին դրամական օգնություն տրամադրելու գործընթացը, ինչի կապացությամբ «Հայաստանի Հանրապետություն» թերթի 23.11.2010թ. N 219 (5062) համարում հրապարակվել է համապատասխան հայտարարություն:

Նշել է նաև, որ վերոգրյալի մասին քաղաքացի O. Ղ.-ն ծանուցվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.11.2010թ. թիվ 1.1/9.6/9412-10 գրությամբ՝ Կարգի 6-րդ կետին համապատասխան:

### 3.19. ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Թեև ընթացիք տարում ՀՀ արտաքին գործերի նախարարության դեմ բողոքներ չեն ստացվել, սակայն ՀՀ մարդու իրավունքների Պաշտպանը փորձել է նախարարության միջոցով լուծել ՀՀ քաղաքացիների առջև արտասահմանում ծառացած խնդիրները:

**Օրինակ 1.** Քաղաքացի Ռ. Մ.-ն հայտնել է, որ սույն թվականի հուլիսի 31-ին 14.05.1993թ-ին ծնված իր անչափահաս երեխան՝ Ա. Ա.-ն, մեկնել է Բուլղարիայի Հանրապետություն (ք. Վառնա)՝ հանգստանալու: 01.08.2010 թ-ին տեղի է ունեցել միջադեպ, որի արդյունքում իր երեխան անհիմն մեղադրվել է խուլգանությանը մասնակցելու համար: Այն որ մեղադրանքն անհիմն է՝ փաստել է անգամ տուժողը՝ իրավապահ մարմիններին հայտնելով, որ Ա. Ա-ն չի եղել այդ անձանց թվում: Չնայած այդ հանգամանքին՝ երեխայի հազուստը ենթարկվել է փորձաքննության, որի արդյունքներն, ըստ իրավապահ մարմինների, դեռևս պատրաստ չեն:

Քաղաքացի Ռ. Մ.-ն նշել է նաև, որ ըստ իր տեղեկությունների՝ Բուլղարիայի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված միջոցներն օրինական չեն, և գործն անհիմն ձգձգվում է, երեխան և տուժողը ՀՀ քաղաքացիներ են:

Քացի այդ, կարևորվում է նաև այն հանգամանքը, որ երեխան ծանր առողջական վիճակում է և պարբերաբար բժշկական միջամտության կարիք է զգում, ինչպես նաև՝ ուսանող է և հետ է մնում դասերից:

Պաշտպանի նամակին ի պատասխան՝ ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության պետը հայտնել է, որ Բուլղարիայում ՀՀ դեսպանությունը նշված հարցի մասին տեղյակ է և հետևողական: 2010 թ-ի հոկտեմբերի 18-ին դեսպանության հյուպատոսը հեռախոսազրույց է ունեցել Վառնայի շրջանային դատախազի հետ: Դատախազը նշել է, որ ըստ բուլղարական օրենքների՝ հետաքննության ժամկետը երկու ամիս է, սակայն որոշ մանրամասներ ճշտված չլինելու դեպքում՝ հնարավոր է, որ այն երկարաձգվի: Հայտնել է նաև, որ ամեն ինչ կարվի՝ գործը շտապ դատարան ներկայացնելու համար: Ըստ դատախազի՝ տվյալ հարցով հետաքրքրված է նաև Բուլղարիայում հայերի միության նախագահը:

2010 թ-ի հոկտեմբերի 25-ին դեսպանությունը հայտագիր է հղել Բուլղարիայի ԱԳՆ՝ միջադեպի քննման ընթացքի, ՀՀ քաղաքացի Ա. Ս-ին Բուլղարիայում պահելու հիմքերի վերաբերյալ պաշտոնական տեղեկություններ ստանալու համար:

Այս կապակցությամբ գրություն է ուղարկվել նաև ՀՀ ոստիկանապետին՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել ՀՀ քաղաքացի Ա.Ս.-ի՝ Բուլղարիայի Հանրապետությունում պահելու հիմքերի օրինականությունը պարզելու վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ ՀՀ ներքին գործերի նախարարության միջև գոյություն ունի համագործակցության մասին համաձայնագիր:

ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալը հայտնել է, որ Բուլղարիայի իրավապահ մարմինների՝ Ինտերպոլից ստացված տեղեկատվության համաձայն՝ 02.08.2010 թ-ին Ա.Հ. անունով անձը հայտարարություն է տվել Վառնա քաղաքի թիվ 05 Ոստիկանության քաժնում՝ նշելով, որ 01.08.2010 թ-ին՝ տեղական ժամանակով 01.30-ին, անհայտ անձը (անձինք) հարվածել է վերջինիս քունքության, որի արդյունքում Ա. Հ.-ն տեղափոխվել է Վառնա քաղաքի ակնաբուժական հիվանդանոց:

Բուլղարիայի ոստիկանական մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է թվով 5 հայ: Դեպքից հետո երկուսը, այդ թվում՝ դիմումատուի երեխան, լքել են հյուրանոցը: Վերջիններիս հնարավոր ելքը Բուլղարիայի տարածքից կանխելու նպատակով Վառնա քաղաքի ոստիկանությունը հիշյալ տեղեկատվությունը փոխանցել է Բուլղարիայի սահմանային ոստիկանությանը:

Պաշտպանի կողմից գրություն է ուղարկվել նաև ՀՀ Բուլղարիայի օմբուդսմեն Կոնստանտին Պենչևին:

Պատասխան գրությունում ասվել է, որ ՀՀ քաղաքացի Ա. Ս.-ի նկատմամբ նախաձեռնված քննչական գործողությունների ընթացքի վերաբերյալ Սոֆիայում ՀՀ դեսպանության 2010 թ-ի հոկտեմբերի 25-ի թիվ 0341/2010 հայտագրի կապակցությամբ Ներքին գործերի նախարարությունում կատարված ստուգման արդյունքում պարզվել է, որ

2010 թ-ի օգոստոսի 2-ին՝ մոտավորապես ժ. 17.00-ին, ստացվել է ահազանգ Ա. Հ.-ից առ այն, որ 2010 թ-ի օգոստոսի 1-ին՝ մոտավորապես ժ. 01.30-ին, «Զլատնի պյասըցի» կուրորտային համալիրի «Արոգանս» դիսկոտեկայում անհայտ մի անձ մի քանի անգամ հարվածել է իր աջ աչքին, որի հետևանքով նրան տեղափոխել են Վառնայի Աչքի հիվանդանոց: Նշվածի կապակցությամբ կազմվել է նախադատական վարույթ՝ համար 617/2010, ՆԳՆ Վառնայի Մարզային տնօրինությանն առընթեր 5-րդ Շրջանային ոստիկանական վարչության գրանցումով:

Անցկացված միջոցառումների և դատաքննչական գործողությունների արդյունքում հաստատվել է, որ միջադեպին համամասնակցել է ծագումով հայ 5 անձ՝ Ա. Ս.-ն, Ա. Գ.-ն, Ա. Մ.-ն, Պ. Մ.-ն և Վ. Դ.-ն, ովքեր տեղավորվել էին «Աստերա» հյուրանոցում: Հյուրանոցում կատարված ստուգման ընթացքում պարզվել է, որ Ա. Ս.-ն և Ա. Գ.-ն մեկնել են: 2010 թ-ի օգոստոսի 2-ին նշված անձինք ձերբակալվել են Մալկո Տրոնովոյի սահմանակետում՝ Բուլղարիայի Հանրապետության սահմաններից դուրս գալու փորձի ժամանակ, և պահակախմբի հսկողությամբ ուղարկվել ՆԳՆ Վառնայի Մարզային տնօրինությանն առընթեր 5-րդ Շրջանային ոստիկանական վարչություն: Տեղի ունեցած դատաքննչական գործողությունների արդյունքում 2010 թ-ի օգոստոսի 4-ին Ա. Ս.-ն մեղադրվել է Ջրեական օրենսգրքի 129-րդ հոդվածի առաջին պարբերությամբ և 63-րդ հոդվածի առաջին պարբերության 3-րդ կետի կապակցությամբ կատարված հանցագործության համար: Վառնայի Շրջանային դատախազության որոշմամբ նա ենթարկվել է 72-ժամյա նախնական կալանքի: Ավելի ուշ նրան արգելվել է դուրս գալ Բուլղարիայի Հանրապետության սահմաններից՝ մինչև քրեական դատավարության ավարտը: 2010 թ-ի նոյեմբերի 2-ին գործը պահանջվել է Վառնայի Շրջանային դատախազության կողմից և այժմ գտնվում է քննող դատախազի մոտ: Նախադատական վարույթի ավարտման համար անհրաժեշտ է կատարել ԴՆԹ փորձաքննություն՝ ԴՆԹ տրամադրման մեթոդով, որը մինչ այժմ չի կատարվել:

**Օրինակ 2. Քաղաքացի Մ. Ա.-ն հայտնել է, որ 2005 թ-ին ամուսնացել է ԱՄՆ քաղաքացու հետ: 2007 թ-ի հունվարին մեկնել է մշտական բնակության ԱՄՆ՝ Վաշինգտոն նահանգի Սիեթլ քաղաք: Համատեղ կյանքի ընթացքում ունեցել են երկու զավակ, որոնք ներկայումս երեք և մեկ տարեկան են:**

2010 թ-ի սեպտեմբերի 8-ին իր ամուսինը Հայաստան մեկնելու համար գնել է երկկողմանի տոմս՝ երկու անձի համար: Երեխաների՝ իրենց հետ չմեկնելու հանգամանքն ամուսինը բացատրել է Հայաստանում մնալու ժամկետի սղության (12 օր) և ավելորդ ծախսերը բացառելու պատճառով: Հայաստանում գտնվելու ժամանակաշրջանում ամուսինը փոխել է տոմսը և մեկնումից մեկ ժամ առաջ պարզվել է, որ քաղաքացի Մ. Ա.-ն այլևս չպետք է մեկնի ԱՄՆ, իսկ իր կամքին հակառակ վարվելու դեպքում, ամուսինը սպառնեցել է, որ

կթողնի նրան փողոցում, մտածված վեճ կկազմակերպի և կզրկի նրան մայրական իրավունքներից:

Քաղաքացի Մ. Ա.-ն, իմանալով, որ նախկինում ամուսինը նույնպես նման կերպ է ամուսնալուծվել, վախեցել է և մնացել Հայաստանում:

Այժմ ստացել է ամուսնալուծությանը վերաբերող փաստաթղթերի փաթեթ, որտեղ նա բնութագրվում է որպես հոգեպես անհավասարակշռված մայր, ով ծեծում է իր երեխաներին և բացասական ազդեցություն բողնում նրանց վրա:

Ըստ դիմումատուի՝ ամուսնու նման քայլերը պայմանավորված են իրեն մայրական իրավունքներից զրկելու հանգամանքով: Քաղաքացի Մ. Ա.-ն նշել է նաև, որ իր ամուսնու քայլերը հետապնդում են մեկ նպատակ՝ ճանաչվել միայնակ հայր, ազատվել պետական հարկերից և համապատասխան գումարներ ստանալ երեխաների խնամքի և դաստիրակության համար:

Հարցին հնարավոր լուծում տալու ակնկալիքով դիմումը փոխանցվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության քննարկմանը, դեռևս պատասխան չի ստացվել:

### **3.20. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ**

2010 թվականի ընթացքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների դեմ ստացված բողոքները բազմաքիզական բարձրացված հարցերի պարզաբանման և լուծման նպատակով Պաշտպանի կողմից գրություններ են հասցեազրվել համապատասխան մարմիններին, ինչպես նաև կատարվել են այցելություններ:

#### **3.20.1. Մարզպետարաններ**

Մարզպետարանների դեմ ուղղված բողոքները վերաբերել են բնակարանային ապահովությանը, սոցիալական ծրագրերին, հողօգտագործողների իրավունքների ուժնահարմանը, աշխատանքից ազօրինի ազատելուն և այլնին: Եղել են նաև մարզերում գործող դպրոցների, առողջապահական հիմնարկների աշխատակիցներից՝ մարզպետների կողմից իրենց աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքներ:

2010 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են տարրեր մարզեր, ուստի են հանդիպումներ մարզպետարանների համապատասխան աշխատակիցների հետ, քննարկել մարզերում առկա խնդիրները, մարդու իրավունքներին վերաբերող այլ հարցեր:

Թեև աղետի գոտու բնակավայրերի վերականգնման նպատակով Կառավարությունը յուրաքանչյուր տարի պետական բյուջեից միջոցներ է նախատեսում, սակայն մարզերում շատ են վթարային բազմաբնակարան շենքերն ու անհատական բնակելի տները, որոնց բնակիչներին բնակարաններով ապահովելու ծրագրեր չեն իրականացվում՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով։ Աշխատատեղերի բացակայությունը ծանր սոցիալական վիճակ է ստեղծում մարզերի բնակիչների համար։ Որոշ սահմանամերձ գյուղերի բնակչությունը չի կարողանում զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով, քանի որ աղբբեջանական կողմը խախտում է հրադադարի ռեժիմը։ Բնակիչները բողոքում են, որ չնայած այդ հանգամանքին՝ իրենք չունեն սոցիալական վիճակը մեղմող արտոնություններ (հողի հարկ, լույսի, գազի, ջրի և այլ վճարներ):

**Օրինակ 1.** Ալավերդի քաղաքի թիվ 7 միջնակարգ դպրոցի մանկավարժական կողեկտիվի անունից ստացվել է դիմում-քողոք՝ դպրոցի տնօրենի անօրինական գործողությունների վերաբերյալ։ Ըստ դիմումում նշված տեղեկությունների՝ դպրոցի տնօրենն աշակերտների թվի նվազման պատճառաբանությամբ կրճատել է աշխատակիցների մի մասի աշխատավարձերը։ Փոխարենս աշխատավարձ է վճարել որպես օպերատոր ձևակերպված իր տղային, ով աշխատում է Երևանում, աշխատանքի չներկայացող և հիվանդ ուսուցիչներին փոխարինող աղջկան, ինչպես նաև՝ որպես կազմակերպիչ և ֆիզկուլտուրայի ուսուցիչ ձևակերպված ամուսնուն։

Պաշտպանի ներկայացուցիչների մասնակցությամբ կատարված փաստաթղթային ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ալավերդի քաղաքի թիվ 7 միջնակարգ դպրոցի տնօրենի աղջիկը, տղան և ամուսնը ձևակերպված են որպես աշխատողներ, սակայն դիմումում նշված տեղեկատվությունը կարող է պարզվել միայն ստուգման արդյունքում։

Քանի որ Պաշտպանին հասցեազրած դիմումը ձևակերպված է եղել Ալավերդի քաղաքի թիվ 7 միջնակարգ դպրոցի մանկավարժական կողեկտիվի անունից, չի ունեցել հասցեատեր և չի ստորագրվել, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի համաձայն բողոքը քննարկման չի ընդունվել։

Սակայն, չբացառելով դիմումում նշված տեղեկությունների՝ իրականությանը համապատասխանելու փաստը, ՀՀ Լոռու մարզպետին է ուղարկվել վերոնշյալ բողոքը՝ խնդրելով հանձնարարել կատարել համապատասխան ստուգում նշված հանգամանքները պարզելու կապակցությամբ և արդյունքների մասին տեղեկացնել։

Պատասխան գրության մեջ նշվել է, որ դիմումում բարձրացված հարցերը պարզելու նպատակով Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում կազմակերպվել է քննարկում դպրոցի տնօրինության հետ: Պարզվել է, որ դպրոցի տնօրենի դրամարկում և ամուսինը աշխատում են այդ դպրոցում, սակայն ամուսինը աշխատել է դեռևս նախկին տնօրենի օրոք: Տնօրենի դրամարկում ունի համապատասխան բարձրագույն կրթություն և աշխատում է դեռևս 2005 թ-ից: Իսկ տղան, լինելով ՏՀՏ-ի մասագետ, հասարակական կարգով կատարել է դպրոցի համակարգչային տեխնիկայի մոնտաժման աշխատանքները, իսկ 2006 թ-ից դպրոցում համակարգչային դասասենյակի առկայության պատճառով աշխատել է որպես օպերատոր: 2010 թ-ի հունվարից համատեղությամբ ընդունվել է աշխատանքի Ալավերդու պղնձանոլիրդենային գործարանում, ինչի համար տրվել է համաձայնություն: 2010 թ-ի նոյեմբերի 1-ին ազատվել է օպերատորի աշխատանքից՝ իր դիմումի համաձայն:

Ինչ վերաբերում է դպրոցի որոշ աշխատողների դրույքաշափերի նվազմանը, ապա դա կատարվել է ընդհանուր մոտեցմամբ և սահմանված կարգով: Մասնավորապես՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ և իրենց պարտավորությունների համար (այդ թվում աշխատավարձերի և հավելավճարների վճարման) պատասխանատվություն են կրում իրենց միջոցների հաշվին, ընդ որում, ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին ծախսերը պետք է կատարեն համապատասխան լիազորված պետական մարմինների կողմից հաստատված ծախսերի նախահաշիվներին համապատասխան, իսկ այդ վճարների չափերն իրավասու է որոշել պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ այն համաձայնեցնելով լիազորված պետական մարմնի հետ:

Ուսուցիչների ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բաց թողնված դասերը տնօրենի հավաստմամբ լրացվել են այդ առարկային հարակից առարկայի ուսուցիչների կողմից: Փոխարինող ուսուցիչների համար տրվել են համապատասխան իրամաններ:

Գրությանը կից ներկայացվել է նաև դպրոցի տնօրենի բացատրությունը, ինչպես նաև՝ տնօրենի որորը աշխատանքից ազատման հրամանի քաղվածքը:

### 3.20.2. Երևանի քաղաքապետարան

2010 թվականին շարունակվել են բողոքներ ստացվել քաղաքաշինական նորմերի խախտումներով տրված փաստաթղթերի հիման վրա կառուցապատումների վերաբերյալ,

որոնցով, առանց հաշվի առնելու հարակից բնակելի տների, շենքերի կամ այլ շինությունների միջև եղած հեռավորությունը, հակադրդեհային և ինսոլյացիոն նորմերի պահանջները, բույլատրվել են կատարել շինարարական աշխատանքներ:

Բողոքներ են եղել բակային կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում իրականացվող շինարարության, ծառահատումների, ինքնակամ շինության կանխման ուղղությամբ միջոցներ չեղանարկելու կապակցությամբ:

2010 թ-ին արձանագրվել են նաև բազմաթիվ դեպքեր, երբ Երևանի քաղաքապետարանից Պաշտպանի գրություններին օրենքով նախատեսված ժամկետներում չեն պատասխանվել, նույնիսկ այն դեպքերում, երբ մի քանի անգամ ուղարկվել են հիշեցումներ: Միևնույն ժամանակ եղել են դեպքեր, երբ Պաշտպանի միջամտության շնորհիվ մի շարք հարցեր ստացել են դրական լուծում:

**Օրինակ 1.** Քաղաքացի Փ. Հ-ն, ով համարվում է հանրակացարանային սենյակի սեփականատեր, բողոքել է, որ հարևան սենյակի բնակիչն ինքնակամ կառույցով փակել է իր սենյակի մուտքը, զավթել է ընդհանուր միջանցքը և խորդանոցը: Դատարանի վճռով հաստատվել է այդ քաղաքացու կողմից ապօրինությունների փաստը, և ԴԱՀԿ աշխատակիցների միջոցով քանդվել է ինքնակամ կառույցը: Սակայն որոշ ժամանակ անց կառույցը վերականգնվել է:

Թեև վարչական շրջանը կրկին ինքնակամ շինարարություն իրականացնելու համար կառուցապատողի նկատմամբ կազմել է վարչական իրավախսական արձանագրություն և ուղարկել Երևանի քաղաքապետարան: Սակայն տուգանքի ենթարկելու և շինությունն ապամոնտաժելու փոխարեն վարչական շրջանի դեկավարին հասցեազրած գրությամբ քաղաքապետարանից հայտնել են, որ նշված շինությունն ունի վաղեմություն: Առաջարկվել է փոխել արձանագրությունը:

Պաշտպանը գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ խնդրելով ներկայացնել պարզաբանում:

Բողոքը գտնվում է քննարկման փուլում:

2010 թ-ին բողոքներ են ստացվել այն հարցի կապակցությամբ, որ հասարակական կազմակերպությունները չեն կարողանում մասնակցել ավագանու նիստերին, որով խախտվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածում ամրագրված՝ ավագանու նիստերի հրապարակայնության սկզբունքները:

Բացի այդ, չի տրվում պատշաճ պատասխան, խախտվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգը:

Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճը, տեղերի սահմանափակության պատճառով, տեխնիկապես հնարավորություն չի ընձեռում Երևանի ավագանու նիստերին իրավիրել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, քանի որ նիստերի իրավարակայնությունն ապահովելու համար դրանց լուսաբանման նպատակով ներկա են գտնվում նաև բազմաթիվ ԶԼՄ-ների ներկայացուցիչները:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները հնարավորություն ունեն և ցանկության դեպքում կարող են մասնակցել իրենց հետաքրքրող քեմաներով կազմակերպվող հանրային լսումներին:

Այս կապակցությամբ Պաշտպանի կողմից Երևանի քաղաքապետին գրություն է ուղարկվել՝ առաջարկելով հետազայտմ նման իրավիճակներից խուսափելու համար ավագանու նիստից առաջ հասարակական կազմակերպությունների կողմից գրավոր դիմումներ ներկայացվելու դեպքում ապահովել տվյալ կազմակերպության մեկ ներկայացուցչի մասնակցությունը կամ հնարավորության դեպքում քննարկել ավագանու նիստերի անցկացումն՝ առավել մեծ տարածք ունեցող դահլիճներում:

Երևանի քաղաքապետարանից որևէ արձագանք չի եղել, իսկ հասարակական կազմակերպության ներկայացուցիչները հետազայտմ քանավոր հայտնել են, որ շարունակվում են նման խնդիրների հանդիպել:

Հաշվետու տարում շարունակվել են բողոքներ ստացվել բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաված տարածքներում գույքային իրավունքներ ունեցող անձանցից, որոնք վերաբերել են փոխհատուցման խնդիրներին և պետության կողմից կառուցապատողների նկատմամբ հսկողության բացակայությանը:

Մտահոգիչ է հատկապես այն հանգամանքը, որ պետությունը սահմանափակվում է միայն տարածքի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելով, իսկ բացասական հետևանքները կրում են միայն գույքային իրավունք ունեցողները:

**Օրինակ 1.** Երևան քաղաքի մի խումք բնակիչներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմում-բողոքում հայտնել են, որ լինելով պետության կողմից իրացվող տարածքների բնակիչներ՝ համաձայն ՀՀ կառավարության թիվ 909-Ն 17.06.2004թ. որոշման, Մելիք Գասպարյանի հետ՝ Երևանի քաղաքապետարանի 01/7-11 08.01.2005թ. տված լիազորագրի հիման վրա, կնքել են անշարժ գույքի իրացման և փոխհատուցման պայմանագիր, համաձայն որի 30 ամիս հետո պետք է ստանային իրենց բնակարանները և կոմերցիոն տարածքները: Անցել են սահմանված ժամկետները, սակայն պայմանագրային պարտավորությունները չեն կատարվել:

Մելիք Գասպարյանի մահից հետո նրա ոչ պաշտոնական իրավահաջորդը՝ Ապրես Գասպարյանը, իրաժարվել է փոխհաստուցել շինարարության ձգձգման տույժերը, բնակարանի վարձակալության գումարները, կոմերցիոն տարածքները շիրացնելու հետևանքով պատճառված վնասի չափերը։ Իսկ շինարարական աշխատանքները կատարվում են այնքան դանդաղ տեմպով, որ նման դեպքում դրանք կխլեն ևս 5 տարի։

Բացի այդ, վերոգրյալ տարածքի բնակիչներին չեն տրվել տարածքների հատակագծերը, և նրանք փաստացիորեն զրկված են տարածքներն օտարելու իրավունքից։ Վերջիններս հայտնվել են ծայրահեռ ծանր իրավիճակում՝ գուրկ ապրուստի միջոցներից, անկարող ապրել վարձակալած բնակարաններում։

Դիմում-բողոքի կապակցությամբ պարզաբանում ստանալու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հարցում է կատարել Երևանի քաղաքապետին։

Ի պատասխան՝ Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանը գրությամբ հայտնել է, որ դիմումատու քաղաքացիների և Մելիք Գասպարյանի միջև կնքված «Անշարժ գույքի օտարման մասին» պայմանագրերի համաձայն՝ պայմանագրերով սահմանված պարտավորությունները ստանձնել է կառուցապատող Մելիք Գասպարյանը։ Տարածում շինարարական աշխատանքների կասեցումը պայմանավորված է կառուցապատող Մելիք Գասպարյանի մահվամբ և նրա իրավահաջորդության հարցի լուծմամբ, ինչը՝ պայմանագրի կնքման օրվա դրությամբ, ողջամիտ կանխատեսումներից դուրս է եղել։

Հայտնվել է նաև, որ դիմումատուների կողմից բարձրացված հարցերը վերաբերում են քաղաքացիական հարաբերություններին և ենթակա են կարգավորման՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ուստի, հնարավոր կլինի անդրադառնալ դրանց Մելիք Գասպարյանի իրավահաջորդության հարցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելուց հետո։

Եղել են նաև դատարանի վճիռները չկատարելու վերաբերյալ բողոքներ։

**Օրինակ 1. Քաղաքացի Ս. Կ-ն, լինելով վթարային շենքի նախկին բնակիչ, շուրջ երկու տարի է՝ չի կարողանում Երևանի քաղաքապետարանի հետ կնքել իր նախկին բնակարանի փոխարեն հատկացված նոր բնակարանի վարձակալության պայմանագիրը, այն դեպքում, եթե Երևանի քաղաքապետարանի պայմանագիր կնքելու պարտականությունը սահմանվել է դատարանի վճռով։**

Երևանի քաղաքապետից պահանջվել է պարզաբանում։

Գործը Պաշտպանի հսկողության տակ է։

Բազմաթիվ բողոքներ են ստացվել նաև Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված՝ Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2010 թ-ի դրույքաչափերի

վերաբերյալ, որոնց համաձայն Երևան քաղաքի որոշ փողոցները ընդգրկվել են 1-ին գոտում: Դրանցում գտնվող 7-15 քմ մակերեսով մի քանի կրպակ ծխախոտի և խմիչքի վաճառքի թույլտվության համար տարեկան պետք է վճարեն նախկինում սահմանված 80.000 ՀՀ դրամի փոխարեն 245.000 ՀՀ դրամ՝ տարեկան 3-4 միլիոն ՀՀ դրամ ապրանքաշրջանառության պարագայում:

Քաղաքացիներն իրենց տարակուսանքն են հայտնել այն հարցի շուրջ, որ ստիպված են վճարել ավելի մեծ գումար, քան` վաճառքի հիմնական կետեր հանդիսացող սուպերմարկետները:

Ընդ որում, քաղաքացիները նշել են, որ այդ կրպակներն իրենց եկամտի միակ աղբյուրն են և սահմանված դրույքաչափերի պատճառով հարվածի տակ է դրվում իրենց ընտանիքների գոյատևումն ու բարեկեցությունը:

Նմանատիպ բողոքների կապակցությամբ Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան Երևանի քաղաքապետարանի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետը հայտնել է, որ Երևան քաղաքի ավագանու 02.12.2009թ. թիվ 46-ն որոշմամբ հաստատված՝ «Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2010թ. դրույքաչափերը սահմանելու մասին» ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության տեղական տուրքը սահմանվել է գոտիավորման սկզբունքով:

Միաժամանակ նշել է, որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընթացիկ տարվա համար տեղական տուրքի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Քանի որ վերոնշյալ նամակով չեն պարզաբանվել Պաշտպանի կողմից բարձրացված բոլոր հարցերը, մեկ այլ գրություն է ուղարկվել Երևանի քաղաքապետին: Մասնավորապես առաջարկվել է պարզաբանել՝

- ինչո՞ւ փոքր կրպակների շահագործողները պետք է վճարեն ավելի մեծ գումար, քան վաճառքի հիմնական կետեր հանդիսացող սուպերմարկետները,
- ինչո՞ւ հաշվի չի առնվել տարածքի չափերը, դիրքը,
- ինչպե՞ս է տվյալ տարածքը 7-ից դարձել 1-ին գոտի:
- արդյոք հնարավոր է այս դեպքում հաշվի առնել քաղաքացիների սոցիալական ծանր վիճակը:

Այս կապակցությամբ Երևանի քաղաքապետարանի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետը հայտնել է, որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության տեղական տուրքը սահմանվում է կոնկրետ նշված ապրանքատեսակների վաճառքի կազմակերպման թույլտվության համար, այլ ոչ՝

տնտեսվարող սուրյեկտի գործառնական նշանակության, իսկ գոտիավորման սկզբունքը սահմանվել է քաղաքային նշանակության գլխավոր և երկրորդական փողոցների դասակարգմամբ: Հետևաբար, ելնելով վերոգրյալից՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում օրենսդրական փոփոխություններ կատարելու նպատակով հարցը (փոփոխությունների փաթեթը) գտնվում է քննարկման փուլում և կներկայացվի Ազգային ժողովի քննարկմանը:

Միաժամանակ նշել է, որ սույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն և Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ՝ 2010 թ-ին՝ չորրորդ եռամսյակի ընթացքում, ոգեկից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի բույլտվության տեղական տուրք վճարող տնտեսվարող սուրյեկտներին կտրամադրվեն որոշակի արտոնություններ՝ Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների կողմից համապատասխան հաշվառում իրականացնելուց հետո:

Ընթացիկ տարում հասարակական հնչեղություն ունեցավ Հայաստանի ազգային գրադարանի և Հայաստանի պետական ազրարային համալսարանի միջև տեղակայված «Ուսանողական այգում» կատարվող շինարարության հարցը:

Այս խնդրով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին են դիմել նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնց հայտնած տեղեկությունների համաձայն՝ գոյություն ունեցող սրճարանների վերակառուցման անվան տակ հատկացվել են նախկինում գրադերածից ավելի մեծ մակերեսով հողատարածքներ, ինչպես նաև քաղաքաշինական փաստաթղթերով բույլատրվել են կառուցել ստորգետնյա հարկերով բոլորովին նոր շինություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ ՄԻՊ աշխատակիցներն այցելել են Երևանի քաղաքապետարան, ծանոթացել իրականացվող շինարարությանն առնչվող փաստաթղթերին:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է.

1. Աբովյան փողոցին հարող տարածքում՝ Վ. Համբարձումյանի արձանի դիմաց, «Էլեգանտ» ՍՊԸ-ին սրճարանի սպասարկման համար հողամասի վարձակալության պայմանագրով 15 տարի ժամկետով տրամադրված է եղել առանձին միավորով երկու հողամաս (240+240)` ընդհանուր 480 քմ մակերեսով: Յուրաքանչյուր 240 քմ մակերեսով հողատարածքի վրա կառուցված է եղել 56.7 քմ մակերեսով շինություն ( $56.7+56.7=113.4$ ):

23.12.2009 թ-ին տրամադրվել է թիվ 01/50-22466-535 ճարտարապետահատակագծային առաջադրանք, որի հիման վրա մշակվել է սրճարանի վերակառուցման նախագիծ: Նախագիծը ՀՀ օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ երաշխավորագիր է

տրվել «Ֆուլ-Արտ» ՍՊԸ ընկերության կողմից: Առաջադրանքով շինության առավելագույն բարձրություն է սահմանվել նախկին 5.3 մետրի փոխարեն 4.5 մետր, կառուցվել է 4.3 մետր: Երկու շինությունների ծավալների միջև հեռավորությունը 4.5 մետրից հասցել է 10.5 մետրի՝ ապահովելով Արովյան փողոցից արձանի առավել տեսանելիությունը: Շինություններն առանց նկուղային հարկերի են:

Ըստ փաստաթղթերի՝ լրացուցիչ հողհատկացումներ չեն կատարվել, հատկացվել է 480 քմ մակերեսով հողամաս, իսկ սրճարանի վերակառուցման արդյունքում 40.6 քմ ավելացել է շինության մակերեսը՝ 113.4 քմ-ից դառնալով 154 քմ:

2. Տերյան փողոցի թիվ 74 հասեռում «Արմեն» ՍՊ ընկերությանը սրճարանի սպասարկման համար, վարձակալության իրավունքով մինչև 31.12.2011 թվականը տրամադրվել է 0.1248 հա մակերեսով հողամաս: Հողամասի վրա եղել է 62.9 քմ մակերեսով շինություն և կից ծածկված տարածք:

15.01.2010 թ-ին տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք, որի հիման վրա նախագիծ է մշակվել: Նախագիծը ներարկվել է փորձաքննության և երաշխավորվել համաձայնեցման:

Նախագծով նախատեսվել է 1248.0 քմ մակերեսով հողամասի վրա կառուցել նկուղային, մեկ վերգետնյա (շահագործվող տանիքով) շինություն: Սրճարանի նախկին բարձրությունը եղել է 7.4 մետր, ներկայիս նախագծով նախատեսվել է 6.9 մետր, իսկ տանիքը բարձրացող աստիճանավանդակի հատվածում՝ 10.2 մետր: Ըստ նախագծի՝ նախկին 62.9 քմ մակերեսով շինության փոխարեն պետք է կառուցվի 349.68 քմ մակերեսով շինություն: Ճարտարապետի պատճառաբանմամբ շինության մակերեսն ավելացել է այն բանի հաշվին, որ նախկին շինությանը կից ծածկված տարածքում նոր նախագծով նախատեսված է շինություն կառուցել:

«Արմեն» ՍՊ ընկերությանը 72/7 հասեռում Երևանի քաղաքապետի 18.12.2009թ. թիվ 9825-Ա որոշմամբ, դրա հիման վրա 22.12.2009 թ-ին կնքված կառուցապատման իրավունքի առուվաճառքի պայմանագրով, զրոսայգու սպասարկման՝ օգտագործման նպատակով մինչև 09.11.2028թ. տրամադրվել է 0.01877 հա (187.7 քմ) մակերեսով հողամաս:

Ստորև ներկայացվում են դրական լուծում ստացած օրինակներ:

**Օրինակ 1.** Երևան քաղաքի Քեռու փողոցի բնակիչ Ռ.Դ-ն դիմում-բողոքում հայտնել է, որ իրենց շենքի առաջին հարկի բնակիչը տարիներ առաջ ծաղիկներ տնկելու պատրվակով ցանկապատել է իր պատշգամբի դիմացի հողատարածքը: Մոտ մեկ ամիս առաջ վերացնելով ծաղիկները՝ վերը նշված տեղում կառուցել է ավտոտնակ:

Մեքենայի արտադրած ծխի և առաջացրած աղմուկի հետևանքով ինքը չի կարողանում պատուհան բացել:

Խնդրի կապակցությամբ դիմել է Երևանի քաղաքապետին:

Ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետը հայտնել է, որ կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ շենքին կից մետաղական ցանկապատը տարիներ առաջ տեղադրվել է նշված շենքի ընդհանուր օգտագործման և սպասարկման տարածքում, ուստի դիմումատուին՝ որպես այդ շենքի համասեփականատեր, առաջարկվել է հիշյալ ցանցապատ տարածքի ազատման հարցը քննարկել բնակելի շենքի համասեփականատերերի ժողովում կամ վիճարկել դատական կարգով:

Քաղաքացու դիմում-բողոքում բարձրացված խնդրի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 23.09.2010 թ-ի գրությամբ խնդրել է Երևանի քաղաքապետին հանձնարարել ուսումնասիրել դիմումում նշված տեղեկությունները և ներկայացնել պարզաբանում:

Ի պատասխան՝ Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանը 11.11.2010 թ-ի գրությամբ հայտնել է, որ ձեռնարկված միջոցառման արդյունքում Քեռու փողոցի բնակիչ Լ. Ա-ի կողմից ապամոնտաժվել է բնակարանի դիմացի հատվածում որպես ավտոկայանատեղի օգտագործվող տարածքի ցանկապատը:

**Օրինակ 2.** Երևան քաղաքի Գյուլբենկյան փողոցի բնակարանի բնակչուին Ս. Ռ.-ն ու դիմումը ստորագրած՝ նույն մուտքի ևս երկու բնակիչ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմում-բողոքում հայտնել են, որ Գյուլբենկյան փողոցի նույն շենքի 3-րդ մուտքի թիվ 18 և 19 բնակարաններում արդեն մի քանի տարի է՝ օֆիսային ձեռնարկատիրական գործունեություն է ծավալվում և այդ բնակարանները որպես բնակելի տարածք չեն օգտագործվում: Մինչև կեսօնիցեր վերը նշված բնակարաններից լսվում է աշխատակիցների աղմուկը, իսկ գիշերային ժամերին ինչ-որ հարվածող հաստոցներ և տպագրական սարքեր են աշխատում:

Անդադար լսվող աղմուկի հետևանքով Գյուլբենկյան փողոցի շենքի 3-րդ մուտքի բնակիչները զրկվել են անդորրից:

Դիմել են 18 և 19 բնակարանների սեփականատիրոջը, Երևանի Արարկիր «Շենքերի կառավարում» համատիրություն, այնուհետև ՀՀ ոստիկանության Արարկիրի բաժին, սակայն հարցին լուծում չի տրվել:

Դիմում-բողոքում բարձրացված խնդրի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 18.08.2010 թ-ի գրությամբ խնդրել է Երևանի քաղաքապետին հանձնարարել ուսումնասիրել դիմումում նշված տեղեկությունները և ներկայացնել պարզաբանում:

Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանը 05.10.2010 թ-ի գրությամբ հայտնել է, որ Ս. Ռ-ի բնակարանի վերևի հարկում գտնվող 18 և 19 բնակարաններում տեղատեսություն և ուսումնասիրություն կատարելու համար խնդրվել էր ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Արարկիրի բաժնի միջամտությունը և աջակցությունը, քանի որ այդ բնակարանները տնօրինող ՓԲԸ-ի տնօրինությունը չէր թույատրում Երևանի քաղաքապետարանի աշխատակիցներին մուտք գործել հիշյալ բնակարաններ:

Սույն թվականի սեպտեմբերի 25-ին Ոստիկանության Արարկիրի բաժնի աշխատակիցների և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի կողմից դիմումատուի մասնակցությամբ կատարված տեղատեսության արդյունքում պարզվել է, որ «Արսօյլ» ՓԲԸ-ի կողմից տնօրինվող 18 և 19 բնակարանների թվով 5 սենյակները բոլորովին դատարկ են:

Քաղաքացին հայտնել է, որ Գյուլբենկյան փողոցի շենքի 3-րդ մուտքի 18 և 19 բնակարաններից այլևս աղմուկ չի լսվում:

**Օրինակ 3.** Երևան քաղաքի Զորագյուղ քաղամասի բնակիչ Ա.Գ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմում-բողոքում հայտնել է, որ մի քանի ամիս է «Ֆինստրոյ Արտ-Հաուզ» շինարարական կազմակերպությունն իր տաճ հարակից տարածքում շինարարական աշխատանքներ է կատարում, ինչի հետևանքով ինքը և իր ընտանիքի անդամները զրկվել են ավտոմեքենայի և հետիոտնի ճանապարհոց: Գտնվում են անելանելի վիճակում. երեխաները անձրեային օրերին չեն կարողանում դպրոց գնալ և շինարարական երկաթյա ձողերի և այլ անհարմարությունների պատճառով հաճախ վնասվածքներ են ստանում:

Ա.Գ.-ն ճանապարհի հարցով դիմել է շինկազմակերպության տնօրենին: Վերջինս պատասխանել է, որ տարածքն ինքը գնել և սեփականաշնորհել է ու ոչ մի պարտավորություն չունի անգամ հետիոտնի ճանապարհ տալու: Այնուհետև գրավոր դիմել է Երևանի քաղաքապետին, ի պատասխան՝ աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետը հայտնել է, որ Զորագյուղ ազգագրական թաղամասի 1-ին փողոցում Ա. Մ-ին պատկանող 0.04 հա մակերեսով հողամասում նախատեսվում է կառուցել բազմաբնակարան բնակելի շենք, որի համար Երևանի քաղաքապետարանի կողմից վերջինիս 02.03.2010 թվականին տրվել է հ. 01/50-Մ-620-22 ճարտարապետահատակագծային առաջադրանքը և վերոհիշյալ հասցեում հողային աշխատանքներ իրականացնելու համար 02.03.2010 թվականին տրվել է հ.01/50-Մ-620-06 քանդման թույլտվություն:

Ա.Գ.-ն նաև հայտնել է, որ 2000 թվականից սկսած, երբ վաճառվել են Զորագյուղ թաղամասի հողակտորները, ինքը բազմիցս դիմել է Երևանի քաղաքապետարան, և միշտ ստացել դրական պատասխան, որ, ըստ գլխավոր հատակագծի, ընդհանուր օգտագործման ավտոմեքենայի և հետիոտնի ճանապարհները պետք է պահպանվեն:

Քաղաքացու բողոքի կապակցությամբ պարզաբանում ստանալու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հարցում է կատարել Երևանի քաղաքապետին:

Ի պատասխան՝ Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանը հայտնել էր, որ բնակչի կողմից բարձրացված հարցի պարզաբանման նպատակով տեղում կատարվել է տեղագննում, որի արդյունքում պարզվել է, որ Զորագյուղ ազգագրական թաղամասի 1-ին փողոցի h.21/2 հասցեով ռելիեֆային անկմամբ հողամասում հողային աշխատանքների իրականացման արդյունքում վճասվել է հետիոտնի ճանապարհը, սակայն քաղաքացի Ա.Գ.-ի կողմից տնօրինվող բնակելի տան մոտեցումը փաստացի ապահովված է այդ մասում կառուցապատողի կողմից կառուցված ժամանակավոր հողային ճանապարհով, սակայն այն ապահովված չէ համապատասխան անվտանգության միջոցներով:

Ելնելով վերոգրյալից՝ կառուցապատողին գրավոր կարգով առաջարկվել է սեղմ ժամկետներում ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Կ. Արեյանը հայտնել է նաև, որ ձեռնարկված միջոցառումների մասին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին կտեղեկացվի լրացուցիչ:

Որոշ ժամանակ անց դիմումառուն հայտնել է, որ ոչ միայն չեն պահպանվել ժամանակավոր հողային ճանապարհի անվտանգության միջոցները, այլ ճանապարհը քանդվել է ամբողջությամբ, և շինարարական աշխատանքները մոտեցել են իր տան հիմքին: Ա.Գ.-ի ընտանիքը հայտնվել է ծանր իրավիճակում, երեխաները չեն կարողանում անվտանգ հաճախել դպրոց, զրկվել են իրենց տուն ազատ ելումուտ անելու հնարավորությունից:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը գրությամբ խնդրել է Երևանի քաղաքապետին հանձնարարել ուսումնասիրել բարձրացված հարցը և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանը պատասխան գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կրկնակի կատարված տեղատեսության համաձայն Զորագյուղ ազգագրական թաղամասի 1-ին փողոցից դեպի քաղաքացի Ա.Գ.-ի կողմից տնօրինվող տան մոտեցումը փաստացի ապահովված է, քանի որ կառուցապատողի կողմից շինարարական օբյեկտի տարածքից դուրս հողային ժամանակավոր ճանապարհ է առանձնացվել:

### 3.20.3. Երևանի վարչական շրջաններ

Վարչական շրջանների դեմ ուղղված բողոքներով քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնել համատիրությունների գործունեության նկատմամբ վերահսկողություն չիրականացնելու, բազմաբնակարան շենքերի տանիքները, վերելակները

չվերանորոգելու, որոշ դեպքերում իրենց հետ կնքված հողօգտագործման պայմանագրերի ժամկետը չերկարաձգելու և այլնի վերաբերյալ: Ակտիվ չեն գործում համատիրությունները, չեն պահպանվում բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերը:

Համատիրությունների դեմ ուղղված բողոքներում քաղաքացիները հաճախ նշել են, որ չնայած իրենց բարեխիղճ վճարումներին՝ համատիրությունը չի կատարում իր պարտավորությունները՝ պատճառաբանելով ֆինանսների բացակայությունը: Միևնույն ժամանակ, քաղաքացիների կողմից վճարումներ չկատարելու դեպքում կիրառվում են «պատասխանատվության» միջոցներ (չի տրամադրվում համապատասխան տեղեկանք և այլն):

Բացի այդ, քաղաքացիները բողոքել են, որ համատիրություններին անդամակցությունը կատարվում է ոչ օրինական ճանապարհով՝ չպահպանելով «Համատիրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լնթացակարգը:

Բողոքներ են ստացվել նաև տեղեկատվություն չտրամադրելու, քաղաքացիների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունք ցուցաբերելու կապակցությամբ:

2010 թվականին Պաշտպանի և վարչական շրջանի դեկավարի համագործակցության արդյունքում լուծում է ստացել Ռուսաստանի Դաշնության Սամարայի մարդու իրավունքների հանձնակատարի կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղարկված դիմումում բարձրացված հարցը:

**Օրինակ 1.** ՌԴ Սամարայի նարդու իրավունքների հանձնակատարը դիմումով հայտնել էր, որ իրեն դիմել է ՌԴ քաղաքացի S. Չ.-ն՝ նշելով, որ Միացյալ Արաբական Էմիրությունների Շարժա քաղաքի հայկական եկեղեցում պսակադրության արարողություն է իրականացվել ՀՀ քաղաքացի Ա. Պ.-ի հետ, ինչը հաստատվում է նաև ամուսնության վկայականով՝ գրանցված Միացյալ Արաբական Էմիրությունների ՌԴ հյուպատոսությունում: Ունեն մեկ երեխա: Ամանորյա տոների կապակցությամբ երեխայի հետ եկել է Երևան: Հերթական վեճի արդյունքում Ա. Պ.-ն ծեծի է ենթարկել իրեն: Դրանից հետո նա լրել է ՀՀ-ն: S. Չ.-ն պնդում է, որ երեխային բողել է ամուսնու մոտ, որովհետև վերջինս իրեն սպառնացել է:

Պաշտպանի կողմից կատարված առաջարկի կապակցությամբ՝ անցկացնել երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն, Արարկիր վարչական շրջանի դեկավարը հայտնել է, որ Արարկիր վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի կողմից կատարվել է հետազոտություն:

Ըստ Ռուսաստանի Դաշնության համապատասխան իրավապահ մարմինների հայտնած տեղեկությունների՝ S. Չ.-ն սեփական բնակտարածք չունի, ունի բարձրագույն կրթություն, ոչ մի տեղ չի աշխատում, եկամուտի մշտական աղբյուր չունի, սակայն

օգտագործում է թանկ ավտոմեքենա, լավ հագնվում է: Նախկինում դատված չէ, բայց 2009 թ-ին ենթարկվել է քրեական պատասխանատվության՝ որպես կասկածյալ Ուսուաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման համար (հատկապես մեծ շափերի խարդախություն):

Քրեական գործը դադարեցված է տուժողի նախաձեռնությամբ:

Իսկ կատարված հետազոտության ակտի ուսումնասիրությունից պարզվել է, որ Ա. Պ.-ն ունի եկամուտ, տանը ստեղված են երեխայի համար բոլոր անհրաժեշտ պայմանները, ինչը հիմք է հանդիսացել Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին գալ այնպիսի եզրահանգման, որ երեխային իր ընտանեկան միջավայրից կտրելը կարող է խիստ բացասական ազդեցություն ունենալ նրա ֆիզիկական, մտավոր, հոգևոր և բարոյական գարգացման համար: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դա չի բխում երեխայի լավագույն շահերից՝ Հանձնաժողովը նպատակահարմար է համարել, որպեսզի անշափահաս Կ. Պ.-ն բնակվի հոր հետ, և նա իրականացնի դստեր խնամքն ու դաստիարակությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը վերոգրյալի մասին տեղեկացրել է Ո-Դ Սամարայի շրջանի մարդու իրավունքների հանձնակատարին:

### 3.20.4. Քաղաքապետարաններ

Քաղաքապետարանների դեմ ուղղված բողոքները հիմնականում վերաբերել են բնակարանային և սոցիալական խնդիրներին: Եղել են նաև հողհատկացումների, ապօրինի շինարարության վերաբերյալ բողոքներ: 2010 թվականին՝ սուրիկմի զարգացման առումով, որոշ համայնքներում նկատվել են դրական տեղաշարժեր, որոնք կարող են նպաստել աշխատատեղերի ստեղծմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների՝ տարբեր քաղաքներ կատարած այցելությունների ընթացքում ուսումնասիրվել են քաղաքապետարանների ենթակայության տակ գործող մանկապարտեզներին և երեխաների իրավունքներին վերաբերող հիմնահարցերը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մանկապարտեզների շենքային պայմանները հիմնականում գտնվում են վատքար վիճակում: Թեև դրանց մեծ մասը ենթարկվում են կոսմետիկ վերանորոգման, սակայն հիմնանորոգում չի իրականացվում՝ ֆինանսական միջոցների սղության պատճառով: Յածը են մանկապարտեզների աշխատակիցների աշխատավարձերը (30.000-60.000 դրամ): Քաղաքապետարանների

կողմից հատկացվող միջոցները չեն բավականացնում երեխաների զբաղմունքն ու նորմալ կրթությունն ապահովելու համար խաղալիքներ գնելուն: Համայնքի բյուջեից տրամադրվող գումարը նախատեսվում է հիմնականում շենքերի պահպանման ծախսերի և աշխատողների աշխատավարձերի վճարման համար: Սնունդը գնվում է ծնողների կողմից երեխաների համար ամսական վճարվող գումարով, միջին հաշվով այն օրական կազմում է 170-190 դրամ՝ երեքանգամյա սննդի համար: Տնօրենների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ երեխայի նորմալ և առողջ զարգացման համար, հաստատված նորմաներին համապատասխան, մեկ երեխայի սննդի արժեքն օրական կազմում է 400 դրամ:

Մեկ այլ խնդիր է մանկապարտեզների ջեռուցման հարցը, որը նույնպես տարբեր համայնքներում տարբեր ձևերով է իրականացվում՝ կախված համայնքի բյուջեից: Համայնքի կողմից ջեռուցման համար տրամադրվող գումարը բավականացնում է մանկապարտեզը ջեռուցել հիմնականում միայն ծմբան ամխաներին: Հատ տնօրենների՝ եթե իրենք մանկապարտեզի ջեռուցումը նախատեսվածից ավելի վաղ սկսեն, ապա վառելիքի ծախսը պետք է հոգան իրենց միջոցներով:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համայնքներում, հատկապես՝ մարզերում, նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների, դրանց պարբերաբար վերանորոգման, երեխաների նորմալ և առողջ զարգացման հնարավորությունները կախված են համայնքի բյուջեից: Այդ մասին է վկայում նաև շատ մանկապարտեզներում երեխաների համար ամսական վարձավճարներ սահմանելու հանգամանքը:

Կարծում ենք, որ պետք է մեծ լինի պետության ուշադրությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններին՝ համակարգված մոտեցում ցուցաբերելու համար: Գտնում ենք՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև դրանք ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը հանձնելը:

**Օրինակ 1.** ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի բնակիչ Ռ. Ա-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 2009 թ-ի սեպտեմբերի 25-ին դիմում է ներկայացրել Հրազդանի քաղաքապետ Ա. Դանիելյանին՝ խնդրելով իր առևտրի սրահին կից կառուցվող շինարարության նկատմամբ իրականացնել վերահսկողություն, քանի որ, իր կարծիքով, շինարարությունն իրականացվում է ՀՀ քաղաքաշինական օրենսդրության պահանջների խախտումով: Այս կապակցությամբ Հրազդանի քաղաքապետը հանձնարարական է տվել համապատասխան ստորաբաժանմանը:

Ռ. Ա-ն 05.11.2009 թ-ին դիմում է ներկայացրել համայնքի ղեկավարին՝ խնդրելով իր առևտրի սրահի հողատարածքի ընդլայնման հնարավորություն տալ՝ շինությունը վերակառուցելու և դեպի տանիք բափող անձրևաջրերի խնդիրը լուծելու նպատակով:

Հրազդանի քաղաքապետի 07.12.2009թ. թիվ 651 որոշմամբ իրեն տրամադրվել է Մարշալ Քաղաքացիան քաղամասից 12.0 քմ հողատարածք՝ կառուցապատման իրավունքով առևտի տաղավար կառուցելու համար:

12.03.2010 թ-ին դիմում է ներկայացրել համայնքի ղեկավարին՝ նշելով, որ իր խանութի կողքին կառուցված առևտի սրահի տանիքից հալչող ձյունն ու անձրևաջրերը թափվում են իր կառույցի տանիքին, հետևաբար, անհրաժեշտ է վերակառուցել շինությունը՝ դարձնելով այն եռահարկ:

Համայնքի ղեկավարի կողմից տվյալ դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ խանութի տակ գտնվող հողատարածքն ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, և շինարարության թույլտվության համար նախ անհրաժեշտ է լուծել ջրատարը դրւս հանելու հարցը և հետո միայն դիմել վերակառուցման խնդրանքով:

Ըստ դիմումատուի՝ իր նկատմամբ ցուցաբերվել է խտրական մոտեցում, խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները, որովհետև իր խանութի կողքին գտնվող առևտի սրահի սեփականատիրոջը տրամադրվել է նման թույլտվություն, այն պարագայում, եթե քաղաքապետը տեղյակ է եղել սահմանափակման մասին, սակայն այդ մասին չի նշվել ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

Դիմելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ խնդրել է աջակցել իր իրավունքների պաշտպանության հարցում:

Դիմումում քարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանի կողմից ուղարկված նամակին ի պատասխան՝ Հրազդանի քաղաքապետը հայտնել է, որ Հրազդանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի կողմից ուսումնասիրվել են Ռ. Ա-ին պատկանող շինության և նոր տրամադրված հողամասի վերաբերյալ փաստաթղթերը: Նշել է նաև, որ վերը նշված հողամասերի վերաբերյալ Ռ. Ա-ին տրվել է տեղեկանք՝ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկվելու վերաբերյալ, միևնույն ժամանակ, նախագիծ պատվիրելու համար Ռ. Ա-ին տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք, որտեղ նշված պարամետրերը համապատասխանում են իր ցանկությանը:

Նկատի ունենալով, որ Ռ. Ա-ի դիմումի քննարկման ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ հարցը ստացել է դրական լուծում՝ բողոքի քննարկումը դադարեցվել է:

**Օրինակ 2.** Պաշտպանի կողմից քննարկվող գործերից մեկով ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի բնակիչը հայտնել է, որ իր որդուն Ստեփանավանի քաղաքապետի

1996 թ-ի որոշմամբ հատկացվել է տարածք, որը նա օգտագործել է որպես առևտրի կրպակ: 2001 թ-ին Ստեփանավանի քաղաքապետի որոշմամբ քաղաքի թիվ 3 դպրոցին հատկացվել է 9000 քմ տարածք, այդ թվում՝ 24 քմ, իր որդուն օրինական պատկանող տարածքից: Քաղաքացին հայտնել է, որ թե՛ քաղաքապետարանը, թե՛ կադաստրը ընդունում են, որ կատարվածը վրիպակ է և պատրաստակամություն են հայտնում դպրոցի տնօրենի՝ իրենց դիմելու դեպքում կատարել համապատասխան շտկում, սակայն սխալի շտկման ուղղությամբ տնօրենը չի ցանկանում որևէ քայլ ձեռնարկել:

Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Լոռու մարզպետը հայտնել է, որ դիմումատուի որդին դեռևս 09.02.2009 թ-ին նույն հարցով դիմել է Լոռու մարզպետարան: Մարզպետարանի կողմից դիմումատուին պարզաբանվել է, որ խանութը կառուցվել է պետական սեփականություն հանդիսացող՝ Ստեփանավանի թիվ 3 միջնակարգ դպրոցի սպասարկման համար նախատեսված հողատարածքում, իսկ քաղաքապետարանի կողմից բույլտվությունը տրվել է շինարարական նորմերի խախտումներով: Քաղաքացուն առաջարկվել է նաև հարցին լուծում տալ դատական կարգով:

ՀՀ Լոռու մարզպետին կատարած լրացուցիչ հարցմամբ Պաշտպանի կողմից առաջարկվել է հայտնել՝ դիմումատուին Հ. Մեղապարտի փողոց թիվ 4 դպրոցի մոտակայքում հատկացված տարածքը ներառված է եղել դպրոցի սպասարկման համար հատկացված հողատարածքում ՀՀ ժողովրդական պատգամավորների Ստեփանավանի քաղխորհրդի 26.10.96 թ-ի, թե՛ Ստեփանավանի քաղաքապետի 2001 թ-ի որոշմամբ:

Մարզպետը պատասխան գրությամբ հայտնել է, որ համաձայն քաղաքապետարանի կողմից տրամադրված տեղեկատվության՝ Վիճահարույց խանութի կառուցման համար հատկացված հողատարածքը թիվ 3 դպրոցի սպասարկման գոտում 1996 թ-ին ընդգրկված չի եղել, հետևաբար՝ չի հանդիսացել պետական սեփականություն և, այդ առումով, քաղաքապետի կողմից տրված շինարարության բույլտվությունն օրինական է: Քաղաքացին առաջնորդվել է քաղաքապետարանի կողմից իրեն տրամադրված փաստաթղթերով և շինարարություն իրականացրել դրանց համապատասխան: 2001 թ-ին Ստեփանավանի քաղաքապետի կողմից թիվ 3 դպրոցին հատկացվել է լրացուցիչ 9000 քմ տարածք, որտեղ թյուրիմացարար ընդգրկվել է նաև խանութի կառուցման համար նախատեսված 24 քմ տարածքը:

Վերլուծության ենթարկելով խնդիրը՝ հերթական գրությամբ Պաշտպանը քաղաքապետին առաջարկել է քննարկել քաղաքացու խախտված իրավունքների վերականգնման հարցը:

Ստեփանավանի քաղաքապետը 15.11.2010թ. թիվ 210 գրությամբ հայտնել է, որ քաղաքացու իրավունքները պաշտպանելու նպատակով գրություն է ուղարկվել ՀՀ Լոռու

մարզպետին՝ թիվ 3 դպրոցին հատկացված 9000 քմ տարածքից 24 քմ տարածքը համայնքին հետ վերադարձնելու համար:

**Օրինակ 3.** ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքից Ք. Մ-ն (հասցե՝ Երևանյան խճուղու 141 ա) ՀՀ մարտու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմում-բողոքում հայտնել է, որ 2000 թվականին հայրական տանից տեղափոխվել է իր ազգական Վ.Դ-ի բնակարան, որտեղ մինչ օրս բնակվում է վարձակալական հիմունքներով: Վ. Դ-ի համաձայնությամբ ինքն ու իր որդին հաշվառվել են վերը նշված բնակարանում, և բնակարանի վարձակալական քարտը ձևակերպվել է իր անունով: Ապրելով վերոնշյալ բնակարանում՝ մշտապես վճարել է բնակարանի վարձը, կատարել կոմունալ բոլոր վճարումները և գազիֆիկացրել բնակարանը: 2010 թվականին որդին ՀՀ անձնագիր է ստացել՝ այդ հասցեի հաշվառմամբ:

Ըստ դիմումատուի՝ Գյումրիի քաղաքապետարանը ցանկանում է իրենց գրկել կացարանից՝ ենելով այն հանգամանքից, որ, իբրև թե, իրենք ապօրինի են ապրում այդ բնակարանում՝ պատճառաբանելով, որ 2002-2004 թվականներին շենքի վերակառուցումից հետո այն հասցեափոխվել է (141-ը դարձել է 141ա), և վարձակալական քարտն այդ շենքի հետ որևէ կապ չունի:

Գյումրիի քաղաքապետին ուղղված գրությամբ Պաշտպանը խնդրել է պարզաբանում ներկայացնել դիմումում նշված տեղեկությունների վերաբերյալ:

Ի պատասխան՝ Գյումրիի քաղաքապետը հայտնել է, որ ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննվել է քաղ. գործն՝ ըստ հայցի Գյումրու քաղաքապետարանի՝ ընդդեմ Ք.Մ.-ի և Ա.Մ.-ի, ինքնակամ զբաղեցրած համայնքապատկան բնակարանից վտարելու պահանջի մասին, և 29.06.2010թ. վճռով հայցը բավարարվել է: Նշված վճռի դեմ քաղաքացի Ք.Մ.-ն և Ա.Մ.-ն 29.07.2010 թ-ին ներկայացրել են վերաբերիչ բողոք, որը ՀՀ վերաբնիշ քաղաքացիական դատարանը, 18.08.2010 թ-ին քննության առնելով, որոշել է ընդունել վարույթ: Գործի քննությունը նշանակվել է 2010 թ-ի նոյեմբերի 24-ին: Ք.Մ-ի ընտանիքն օրենքով սահմանված կարգով դիմել է դատարան՝ իր իրավունքները պաշտպանելու նպատակով, և վերջնական արդյունքում դատարանն՝ ըստ օրենքի, կկայացնի համապատասխան վճիռը:

Նշվել է նաև, որ վճիռը կայացնելուց հետո Պաշտպանին կտրամադրվի վերջնական պատասխան:

**Օրինակ 4.** «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ նախագահ Կ. Զադոյանը Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ իրենց կողմից իրականացված հակակոռուպցիոն ծրագրի շրջանակներում պարզվել է, որ դեռևս 1999 թ-ին «Արարատ ԲԲԿ» ԲԲԸ-ի Արարատի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի հիման վրա պարբերաբար կատարել է աղքահանության և բնակչության սպասարկման ծառայություններ և ստացել համապատասխան գումար՝ յուրաքանչյուր տարի մոտ

40.000.000 դրամի չափով: Սակայն, 2009 թվականից սկսած «Արարատ ԲՏԿ» ԲԲԸ-ն հայցեր է ներկայացնում դատարան՝ քաղաքի բնակիչներից պահանջելով կատարած աշխատանքների դիմաց վճարել՝ պատճառաբանելով, որ Ընկերությունն իր կողմից իրականացված աշխատանքների դիմաց վճարում չի ստացել:

ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի ներկայիս քաղաքապետը ներկայացրած պարզաբանմամբ՝ ի թիվս այլ տեղեկությունների, հայտնել է, որ չնայած «Արարատի ԲԿՏ» ԲԲԸ-ն (որի խորհրդի նախագահը եղել է նախկին քաղաքապետ Հ. Թովմասյանը) ծառայությունների մատուցման (աղքահանություն, բազմաբնակարան շենքի սպասարկում և այլն) պայմանագիր է կնքել քաղաքապետարանի հետ և ստացել համապատասխան վճարումներ, սակայն վերոնշյալ Ընկերությունը, քաղաքի մոտ 1500 ընտանիքի դեմ դատարան հայցեր ներկայացնելով, պահանջում է վճարել նախկին տարիներին չվճարված գումարները (ինչպես նշվեց վերևում՝ վճարվել է քաղաքապետարանի կողմից և բնակիչները որևէ պարտավորություն չեն ունեցել վճարել այդ գումարները): Քաղաքապետարանի և վերոնշյալ Ընկերության կատարած ապօրինություններն արձանագրվել են նաև ՀՀ վերահսկիչ պալատի կողմից 2008 թ-ի նոյեմբերին քաղաքապետարանում կատարած ստուգման արդյունքում, որից հետո «Արարատի ԲԿՏ» ԲԲԸ-ին հանձնարարվել է համայնքի բյուջե փոխանցել ավել վճարված գումարները, ինչը մինչ օրս չի կատարվել: Դատարանները վճիռներ են կայացրել քաղաքացիներից պահանջվող գումարները բռնագանձելու մասին:

**Օրինակ 5.** ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի բնակչութիւն Լ. Բ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ 1974 թ-ին շենքի բակում՝ նախկին կաթսայատան և մազութահորի հարեանությամբ, տնկել է ընկույզենի, որը խնամում է մինչ օրս: Ընդ որում, կաթսայատունը և մազութահորը կառուցվել են ընկույզենին տնկելուց ուշ, և ծառը չի վնասվել: Կաթսայատունը և մազութահորը գնել է քաղաքացի Ա. Ս.-ն, կատարել ապօրինի շինարարություն և շինարարական աշխատանքներն ապահովելու նպատակով շարունակ կտրում է ընկույզենու ճյուղերը:

Իր դիմումի հիման վրա ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությունը կատարել է ուսումնասիրություն: Պարզվել է, որ Վայք քաղաքի բնակիչ Ա. Ս.-ն գնել է ԴԱՀԿ ծառայության կողմից աճուրդի դրված թիվ 2 ջերմակետը, որը գրանցվել է նրա անունով՝ որպես սեփականություն: Հետագայում ջերմակետը վերակառուցվել է սրճարանի: Վերակառուցման աշխատանքներն իրականացվել են առանց սահմանված կարգով ձեռք բերված շինարարության թույլտվության և դրա հիմք հանդիսացող փաստաթղթերի:

Վայքի քաղաքապետը 29.06.2009թ. թիվ 53 որոշմամբ, սահմանված կարգի խախտումով քաղաքացի Ա. Ս.-ին ուղղակի վաճառքով ջերմակետի ընդլայման համար տրամադրել է 46.9 քմ մակերեսով տարածք (որտեղ և գտնվում է դիմումում նշված ընկույզենու

ծառը), որի վրայով անցնում է անվտանգության գոտի պահանջող 10 կվ լարման էլեկտրահաղորդման օդային գիծ և որը, Վայք քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն, համարվում է ընդհանուր օգտագործման բակային կանաչ տարածք ու համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի՝ ենթակա չեր օտարման:

Վերը նշվածի մասին հաղորդումներ են ներկայացվել ՀՀ Վայոց ձորի մարզպետին և Վայքի քաղաքապետին՝ առաջարկելով միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Դիմելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ դիմումատում խնդրել է աջակցել իր իրավունքների պաշտպանության հարցում:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով կատարված հարցմանն ի պատասխան՝ Վայոց Ձորի մարզպետը հայտնել է, որ Լ. Բ.-ի կողմից ընկույզենու ծառը տնկվել է ոչ իրեն պատկանող տարածքում՝ պատահականորեն, և քանի որ վերին մասով անցնում է 10 կվ էլեկտրահաղորդման օդային գիծ, այդ ծառը վտանգ է ներկայացնում մարդկանց համար և ենթակա է հատման:

Միաժամանակ տեղեկացրել է, որ նշված հարցերը քննարկվել են մարզպետարանում՝ Վայքի քաղաքապետի մասնակցությամբ: Քաղաքապետին առաջարկվել է կասեցնել իր կողմից ընդունված 29.06.2009թ. թիվ 53 որոշումը, որով կատարվել էր սրճարանի ընդլայնման համար հողիատկացում:

Վայքի քաղաքապետը 04.02.2010թ. թիվ 20 գրությամբ հայտնել է, որ Պաշտպանի կողմից ուղարկված գրությունը քննարկվել է Վայքի քաղաքապետարանում և քննարկման արդյունքում պարզվել է, որ Վայք քաղաքի բնակիչ Ա. Ս.-ին ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով հատկացված 46.9 քմ հողատարածքը հատկացվել է սահմանված կարգի խախտումով:

Նշված խախտումը վերացնելու համար համայնքի դեկավարի 03.02.2010թ. թիվ 5 որոշմամբ չեղյալ է համարվել 29.06.2009թ. թիվ 53 որոշումը:

Գրությանը կից ներկայացվել է վերոնշյալ որոշման քաղվածքը:

Պաշտպանի կողմից ՀՀ քնապահպանության նախարարին առաջարկվել է հանձնարարել անցկացնել հետազոտություն և հայտնել՝ արդյոք ընկույզենու ծառն ամբողջությամբ ենթակա է հատման, եթե այն վտանգ է ներկայացնում մարդկանց համար, հնարավոր չէ հատել արդյոք դրա մի մասը:

Այս կապակցությամբ ՀՀ քնապահպանության նախարարը հայտնել է, որ ՀՀ քնապահպանության նախարարության աշխատակազմի քնապահպանական պետական տեսչության Վայոց Ձորի տարածքային բաժնի կողմից հարցն ուսումնասիրվել է տեղում: Պարզվել է, որ քաղաքացի Լ. Բ.-ի դիմումում ներկայացված փաստերն իրականությանը չեն համապատասխանում: Ըստ էության, ընկույզենու ծառը տնկված է Վայք քաղաքի ընդհանուր

օգտագործման տարածքում, այն չի հանդիսանում ոչ մեկի սեփականությունը, չնայած այն հանգամանքին, որ ժամանակին ծառը տնկվել է քաղաքացի Լ. Բ.-ի ամուսնու կողմից: Վայրի քաղաքապետի 2009 թ-ի մարտի 24-ի գրությանն ի պատասխան՝ ԲՊՏ Վայոց Զորի տարածքային բաժինը տվել է եզրակացություն միայն ծառի՝ շենքի տաճիքին խանգարող և 10 կվ հզորությամբ էլեկտրահաղորդման օդային գծին հարող 18.18 և 25 սմ հաստությամբ 3 ճյուղերի հատման անհրաժեշտության մասին: Նույն ծառի հատման վերաբերյալ քաղաքապետի 2010 թ-ի փետրվարի 25-ի առաջարկին բաժինը տվել է քացասական եզրակացություն՝ մերժելով ծառը հատելու առաջարկը:

Գրության մասին Պաշտպանը տեղյակ է պահել Վայոց Զորի մարզպետին:

Բողոքի քննարկումը դադարեցվել է, քանի որ Պաշտպանի միջամտությամբ հարցը դրական լուծում է ստացել:

### 3.20.5. Գյուղապետարաններ

Գյուղապետարանների դեմ ուղղված բողոքներով քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնել անհրաժեշտ տեղեկանքներ չտրամադրելու, նախկինում հատկացված հողատարածքները հետագայում այլ անձի վաճառելու, սոցիալական ծրագրերից զրկելու, որպես բռնադատվածների ժառանգներ հողամասեր չհատկացնելու վերաբերյալ:

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների՝ ՀՀ Լոռու մարզ կատարած այցելության ընթացքում մարզպետարանում քննարկվել է ՀՀ կառավարության 13.11.2008 թ-ի «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօրեան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգ» հաստատելու մասին թիվ 1337-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները: Վերոնշյալ որոշմամբ քաղաքացիներից պահանջվում էր դիմումին կից ներկայացնել 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի դրությամբ ընտանիքի կազմի մասին քաղվածք՝ ծխամատյանից, ծխամատյանի քացակայության դեպքում՝ արխիվային տեղեկանք: Սակայն շատ համայնքներում չեն պահպանվել այդ փաստաթղթերը, ինչի հետևանքով քաղաքացիները գրկվում էին հասանելիք բնակարանը ստանալու հնարավորությունից:

Խնդիրը մարզպետարանում քննարկվել էր նաև 2009 թվականին, որի կապակցությամբ արվել էր համապատասխան հայտարարություն:

Կատարված փոփոխության արդյուքնում համայնքի ղեկավարին հնարավորություն է տրվել նշված փաստաթղթերի բացակայության դեպքում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող ընտանիքների ցուցակում ընդգրկելու համար հիմք ընդունել տվյալ համայնքի ավագանու որոշումը՝ 1988 թ-ի ղեկտեմբերի 7-ի դրությամբ ընտանիքի կազմի և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

Փոփոխության արդյունքում Լոռու մարզի տարբեր համայնքների ավագանիների որոշումներով 22 ընտանիքի հնարավորություն է տրվել օգտվել բնակապահովության ծրագրից, իսկ դատարանների վճիռներով անօրենանների հերթացուցակում ընդգրկվել է 12 ընտանիք:

**Օրինակ 1.** ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի «Հայգազարդ» հանրակացարանի բնակիչ Վ. Ռ-ն դիմումով խնդրել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջնորդությունն իրեն՝ որպես բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձի, անհատույց սեփականության իրավունքով տնամերձ հողամաս տրամադրելու հարցում: Քաղաքացին նույն խնդրանքով մինչ այդ դիմել է ՀՀ Կոտայքի մարզի Առինջի գյուղապետին, սակայն մերժում է ստացել:

Քաղաքացին 30.07.2010թ. դիմումով Պաշտմանին խնդրել է իր նախորդ դիմումը փոխանցել ՀՀ Կոտայքի մարզպետարան, ինչը և արվել է:

Ի պատասխան՝ ՀՀ Կոտայքի մարզպետը հայտնել է, որ հարցը քննարկվել է Առինջ համայնքի ղեկավարի հետ, ով հայտնել է, որ դիմումատուն վերցվել է հաշվառման, և տնամերձ հողամաս լինելու դեպքում առաջիկայում՝ առաջնահերթության կարգով, նրան հողամաս կհատկացվի:

**Օրինակ 2.** ՀՀ Կոտայքի մարզի Չովունի գյուղի բնակիչ Մ. Մ-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմում-բողոքում հայտնել է, որ 1997 թվականից փաստացի բնակվում է ՀՀ Կոտայքի մարզի Չովունի գյուղի՝ համայնքային սեփականություն հանդիսացող մոտ 100 քմ հողակտորում գտնվող վագոն-տնակում (կցակառույց՝ 16 քմ) իր 2 անշափահաս երեխանների հետ միասին:

Զբաղեցրած տարածքում հաշվառվելու և այն սեփականաշնորհելու խնդրանքով դիմել է համայնքի ղեկավարին և մարզպետարան, սակայն ստացել է մերժում՝ պատճառաբանությամբ, որ նա համայնքի բնակիչ չէ:

Հարցի կապակցությամբ Պաշտպանը գրավոր պարզաբանում է պահանջել համայնքի ղեկավարից:

Ի պատասխան՝ ՀՀ Կոտայքի մարզի Չովունի համայնքի ղեկավարը հայտնել է, որ Մ. Մ.-ն հեռացել է իր հիմնական բնակավայրից՝ Տավուշի մարզի սահմանամերձ Բերդ քաղաքից, և բնակվել է Չովունի համայնքում համայնքի բնակիչներից մեկի արտադրական հողատարածքի շինություններից մեկում:

Իսկ 2005 թ-ից նա, ապօրինի զավթելով համայնքի տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածք, այն էլ ճանապարհի վրա, տեղադրել է շարժական վագոն-տնակ և բնակվում է այնտեղ: Տեղադրված վագոն-տնակը խոչընդոտ է հանդիսանում ճանապարհի երթևեկության համար: Այդ պատճառով նա բազմիցս վեճեր է ունենում նշված ճանապարհից օգտվող բնակչության հետ, և այդ կապակցությամբ բողոքներ են ստացվել գյուղապետարան:

Նշվել է նաև, որ գյուղապետարանի կողմից քաղաքացուն բազմիցս զգուշացվել է կատարված ապօրինի հողագավթման համար: Սակայն նա չի արձագանքել և չի ենթարկվել համայնքի դեկավարի ծանուցումներին, ավելին՝ վագոն-տնակը ճանապարհից հանելու փոխարեն կատարել է ինքնակամ շինարարական աշխատանքներ՝ առանց որևէ օրինական փաստաթղթերի:

Համայնքի դեկավարը նշել է, որ այդ հողատարածքը չի կարող սեփականաշնորհվել, որովհետև այն հանդիսանում է ճանապարհահատված և ընդգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածքների ցանկում, ուստի, նրա ընտանիքը չի կարող հաշվառվել ապօրինի զավթած հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 16 քմ կցակառույցում:

Հաշվի առնելով Մ. Մ-ի ընտանիքի սոցիալական վիճակը՝ հողագավթման, զավթած հողատարածքի վրա կատարված ինքնակամ շինարարական աշխատանքների համար գյուղապետարանը նրան վարչական տույժի չի ենթարկել:

## ԲԱԺԻՆ 4.

### ՀԱՏՈՒԿ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

#### 4.1. Չինակոչիկների և զինծառայողների իրավունքներ

2010 թվականի ընթացքում զինակոչիկների և զինծառայողների իրավունքների վերաբերյալ դիմումները բազմաբնույթ են եղել:

Ընթացիկ տարվա ամենամտահոգիչ խնդիրը ՀՀ զինված ուժերում մահվան ելքով դեպքերն են, հատկապես, որ դրանք ոչ թե դժբախտ պատահարներ են, այլ՝ խաղաղ պայմաններում կատարված դիտավորյալ սպանություններ: Կարող ենք փաստել, որ նմանատիպ դեպքերի գլխավոր պատճառն առանձին սպաների կողմից իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարումն է, որոշ դեպքերում՝ նրանց հակաօրինական արարքները, ինչպես նաև՝ զինծառայողների իրավագիտակցության ցածր մակարդակը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ պաշտպանության նախարարության փոխհամագործակցությունը, այնուամենայնիվ, տալիս է իր դրական արդյունքները՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման ու խախտված իրավունքների վերականգնման առումով: Համագործակցելու պատրաստակամությամբ առանձնանում են ՀՀ ՊՆ իրավաբանական վարչությունը, Ռազմական ոստիկանության վարչությունը և նրա ստորաբաժանումները, թիվ 3-րդ և 4-րդ բանակային զորամիավորումները:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների վերլուծությունից պարզվում է, որ դրանք ունեն հետևյալ դասակարգումը.

- առողջական խնդիրներ ունեցող զինակոչիկներին ՀՀ ԶՈՒ զորակոչելը,
- պայմանագրում նախատեսված ժամկետից շուտ զորացրվելու ցանկություն հայտնող սպաների խնդիրները,
- հիվանդության պատճառով տարկետում ստացած անձանց նախատեսված ժամկետից շուտ կրկնակի փորձաքննության ուղարկելը,
- զինված ուժերի համակարգից քաղաքացիներին անհիմն աշխատանքից ազատելը,
- վիճարկվող քաղաքացիության պայմաններում անձին բանակ զորակոչելը,
- զինկոմիսարիատի աշխատակիցների կողմից անհիմն զինվորական հաշվառման չվերցնելը,
- կարգապահական տույժ շունեցող զինծառայողներին երկու տարին լրանալուց հետո չզորացրելը,

- այլ (այստեղ ընդգրկված դիմում-բողոքներն իրենց փոքրաթվության պատճառով առանձին-առանձին ներկայացված չեն):

**ա) Լիարժեք և մանրակրկիտ բժշկական հետազոտության չենթարկելու հետևանքով հիվանդություն ունեցող անձանց ՀՀ ԶՈՒ գորակոչելը:** Ներկայումս դեռևս առկա են տարածքային զինկոմիսարիատների կողմից առողջական խնդիրներ ունեցող զինծառայողներին բանակ գորակոչելու փաստերը, որոնց մասին Պաշտպանն անդրադարձել է նաև իր նախորդ տարիների Զեկույցներում:

Քաղաքացիների հիմնական դժգոհությունը Հանրապետական բժշկական համաձայնաժողովի կայացրած որոշումների դեմ է: Դրանք որոշ դեպքերում հակասում են բուժհաստատություններից ստացված՝ առողջական վիճակի վերաբերյալ ակտում նշված ախտորոշումներին, և պարտադիր ժամկետային զինծառայությունից տարկետում չի տրվում: Եղել են նաև դեպքեր, երբ երեք տարի առաջ նույն ախտորոշմամբ հիվանդության համար տարկետում ստացած միևնույն անձին գորակոչել են ՀՀ զինված ուժեր:

Հաշվետու տարում գրավոր դիմում-բողոքների մեծ մասի ուսումնասիրությունը դրական արդյունք է տվել, մասնավորապես՝ կրկնակի բուժհետազոտության ուղարկելուց հետո զինակոչիկներին տրվել է որոշակի ժամանակով տարկետման իրավունք:

**բ) Պայմանագրում նախատեսված ժամկետից շուտ գորացրվելու ցանկություն հայտնող սպաների խնդիրները:** Հաշվետու ժամանակահատվածում նույնպես ստացվել են ընտանեկան, սոցիալական և այլ տարրեր հիմնավոր հանգամանքների պատճառով սպաների և ՀՀ ՊՆ միջև կնքված համապատասխան պայմանագրերի դադարեցման վերաբերյալ դիմում-բողոքներ: ՀՀ ԶՈՒ գլխավոր շտարի հրամանատարության կողմից անձանց՝ օրենքով սահմանված բոլոր վճարները կատարելու պայմանով գորացրվելու խնդրանքը որոշ դեպքերում մերժվել է:

Պետք է նշել, որ 2010 թ-ին նման դիմում-բողոքների թիվը բավականին քիչ է, և դրանք, որպես կանոն, ստացել են դրական լուծում:

**գ) Հիվանդության պատճառով տարկետում ստացած անձանց նախատեսված ժամկետից շուտ կրկնակի փորձաքննության ուղարկելը:** Ի տարբերություն նախորդ տարիների՝ 2010 թ-ին այս բովանդակությամբ Պաշտպանին հասցեազրվել է ընդամենը մեկ դիմում-բողոք, ինչը պետք է դրական առաջընթաց համարել:

**դ) Զինված ուժերի համակարգից քաղաքացիներին անհիմն աշխատանքից ազատելը:** Այս բովանդակությամբ դիմումները Պաշտպանին են հասցեազրել տարբեր գորամասերում ծառայություն իրականացնող սպայական և ենթասպայական կազմի անդամները:

Կարծում ենք, որ քաղաքացիներին ժամկետից շուտ ՀՀ զինված ուժերից գորացրելը պետք է ունենա օրինական հիմնավորում:

**ե) Վիճարկվող քաղաքացիության պայմաններում անձին բանակ գորակոչելը:** Այս բովանդակությամբ դիմում-բողոքների թիվը բավականին քիչ է: Դրանցում ներկայացված փաստերը շատ դեպքերում իրականությանը չեն համապատասխանում: Մինչև «Երկրադարձացիության մասին» ՀՀ օրենքի ընդունումը զինակոչիկները, չիրաժարվելով ՀՀ քաղաքացիությունից, ձեռք են բերել այլ երկրի քաղաքացիություն, ինչը չի կարող Սահմանադրությամբ ամրագրված պարտականությունից խուսափելու հիմք հանդիսանալ:

**գ) Զինկոմիսարիատի աշխատակիցների կողմից անհիմն զինվորական հաշվառման չվերցնելը:** Հիմնականում նմանատիպ դեպքերում քաղաքացիները պատշաճ կարգով դիմել են տարածքային զինկոմիսարիատ, սակայն, ըստ դիմումատուների, անհիմն ու չպատճառաբանված մերժում են ստացել: Դիմում-բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցում բերված փաստերը շատ հաճախ իրականությանը չեն համապատասխանում: Միաժամանակ, եղել են դեպքեր, երբ որոշ դիմումներում բարձրացված հարցեր դրական լուծում են ստացել:

**է) Կարգապահական տույժ չունեցող զինծառայողների երկու տարին լրանալուց հետո չզորացրելը:** Ինչպես նախորդ տարի, ընթացիկ տարում ևս խնդիրը շարունակել է մնալ Պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Ինչպես գարնանային, այնպես էլ աշնանային գորակոչների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել են բանավոր բողոքներ, որոնք վերաբերել են զորամասերի հրամանատարների կողմից երկու տարի ծառայություն անցած զինծառայողներին չզորացրելուն: Ընդ որում, նման խնդիր արձանագրվել է նաև Պաշտպանի աշխատանքային խմբի՝ մարզեր կատարած այցելությունների ժամանակ:

**ը) Զինծառայողների սոցիալական և բնակարանային ապահովության հարցեր:** Ինչպես նախորդ տարիներին, 2010 թ-ին ևս Պաշտպանի աշխատակազմ են ստացվել դիմում-բողոքներ՝ կապված զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական և բնակարանային ապահովության հետ: Այս տարի նման դիմումների թիվը փոքր-ինչ ավելացել է:

Ինչպես նշվել է, Պաշտպանի կողմից վերհանված թերությունների մի մասը հայտնաբերվել է մարզային այցելությունների ընթացքում: Մասնավորապես, ՄԻՊ աշխատակիցներն արձանագրել են, որ որոշ զորամասերում դեռևս զորանցների սանհիտարահիգիենիկ պայմանների բարելավման խնդիրներ կան:

## 4.2. Երեխաների իրավունքներ

Երեխայի իրավունքների պաշտպանությունը շարունակում է մնալ Պաշտպանի մշտական ուշադրության կենտրոնում: Այդ նպատակով միջոցներ են ձեռնարկվում երեխայի իրավունքներին առնչվող օրենսդրության կատարելագործման և իրավակիրառ պրակտիկայում առկա բացասական երևույթները վերացնելու ուղղությամբ:

Հատկանշական է, որ կյանքի են կոչվել «Երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության մեջ առկա որոշ խնդիրների վերաբերյալ» Պաշտպանի 2008 թ-ի Արտահերթ հրապարակային գեկույցում տեղ գտած օրենսդրական որոշ առաջարկներ: Խոսքը, մասնավորապես, երեխայի համար բռնագանձվող ալիմենտի նվազագույն չափի և երեխայի աշխատանքի իրավունքին առնչվող առաջարկների մասին է: Այսպես:

1. Զեկույցում առաջարկվում էր երեխայի համար բռնագանձվող ալիմենտի նվազագույն չափը ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69 հոդվածում նախատեսված նվազագույն աշխատավարձի չափի փոխարեն սահմանել առնվազն նվազագույն աշխատավարձի յոքնապատիկը (3.3. կետ): ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69 հոդվածում ԱԺ կողմից կատարված փոփոխությունների (17.03.10 ՀՕ-31-Ն) արդյունքում երեխայի համար բռնագանձվող ալիմենտի նվազագույն չափը սահմանվել է նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

2. Երեխայի աշխատանքի իրավունքի առնչությամբ ԱՍԿ-ի թիվ 138 Կոնվենցիային ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնելու համար Զեկույցում առաջարկվում էր ՀՀ աշխատանքային օրենսգրքով 14-16 տարեկաններին թույլատրել այնպիսի աշխատանքների, որոնք 1) վտանգ չեն ներկայացնում նրանց առողջությանը կամ զարգացմանը, 2) չեն խանգարում դպրոց հաճախելուն, 3) թեթև աշխատանք են: Սրանից ելնելով՝ Զեկույցում առաջարկվում էր խմբագրել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17 հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացիները: Առաջարկվում էր նշված հոդվածի հետևյալ խմբագրումը. «Աշխատող են համարվում ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ կնքված աշխատանքային պայմանագրով թեթև, իրենց առողջության կամ զարգացման համար վտանգ չներկայացնող և դպրոց հաճախելուն չխանգարող աշխատանք կատարող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացիները»:

24.06.10 ՀՕ-117-Ն օրենքով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածում կատարված փոփոխության արդյունքում հոդվածի 2.1. կետով սահմանվել է, որ 14-16

տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվճարող ժամանակավոր աշխատանքներում:

Ընթացիկ տարում երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացվել է հետևյալ ավանդական եղանակներով.

ա) քննարկելով երեխայի իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ մուտքագրված դիմում-բողոքները,

բ) երեխայի իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ տեղեկանալու դեպքում (ԶԼՄ-ի, այլ անձանց ահազանգերի միջոցով) արագ արձագանքելով նման իրավիճակներին և Պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ գործի քննություն անցկացնելով,

գ) երեխայի դաստիարակության և ազգաբնակչության սոցիալական պաշտպանության այլ հաստատություններ (մանկատներ, երեխաների խնամքի և դաստիարակության հաստատություններ, ցերեկային կենտրոններ և այլն), կանանց և անչափահասների գաղութ պարբերաբար այցելություններ կատարելով, դրանցում առկա խնդիրները վերհանելով և իրավասու մարմինների ուշադրությունը դրանց լուծմանը կենտրոնացնելով,

դ) երեխայի իրավունքների պաշտպանությամբ գրաղվող հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումներ կազմակերպելով և ոլորտի հիմնախնդիրները նաև հասարակական հատվածի տեսակետից ուսումնասիրելով ու դրանց արձագանքելով:

Բացի այդ, Պաշտպանը շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, World Vision-ի հետ:

Երեխայի իրավունքների խախտումների վերաբերյալ հաշվետու տարում ստացվել է 15 բողոք: Ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք նույնաբովանդակ են՝ ինչպես նախորդ տարիներին: Ցավոք, երեխայի իրավունքների խախտումների մասին ստացված բողոքները շարունակում են մնալ ծնողների իրավունքների խախտումների համատեքստում: Այսինքն՝ դրանք միջնորդավորված են ծնողական իրավունքների պաշտպանությամբ և Պաշտպանին են հասցեագրվել ծնողներից մեկի կողմից: Հիմնականում դրանք վերաբերում են ոչ միայն երեխայի, այլև ծնողի իրավունքների պաշտպանությանը:

Հատկանշական է, որ բողոքներ չեն ստացվում հենց անչափահասներից, որով նրանք կգանգատվեն իրենց ծնողների, օրինական ներկայացուցիչների կամ տվյալ հաստատության աշխատակիցների գործողություններից (անգործությունից):

Մինչդեռ, ՀՀ օրենսդրությունը, պաշտպանության իրավունք վերապահելով երեխային, հնարավոր է համարում իրավասու մարմիններին՝ իր իրավունքների պաշտպանության համար անձամբ դիմելը:

Երեխայի կողմից իր պաշտպանության իրավունքից անձամբ չօգտվելու պատճառներն ավելի խորքային են և պայմանավորված են հայ երեխայի մենքալիտետով, վախի, ամորի զգացումների դրսորմամբ, ինչպես նաև՝ իրավագիտակցության ցածր մակարդակով:

Պաշտպանի գործունեությունը, բացի երեխայի իրավունքների խախտումների վերաբերյալ դիմում-բողոքների քննարկումից, ուղղված է երեխայի իրավունքների առավել առաջնային համարվող խնդիրների ուսումնասիրմանն ու վերհանմանը, մասնավորապես՝ անշափահասների վերաբերյալ գործերի արդար դատաքննությանը, ընտանիքիներից դուրս ապրող երեխաների իրավունքներին առնչվող խնդիրների բացահայտմանը, նրանց համար անմիջական պատասխանատու մարմինների գործունեության գնահատմանը և առաջարկների ներկայացմանը թե՛ օրենսդրության կատարելագործման, թե՛ իրավակիրառ պրակտիկայում առկա թերությունները վերացնելու ուղղությամբ՝ հատկապես, հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի նշանակությունը և պետական մարմինների համակարգում ունեցած նրա դերակատարումը:

Ընդհանրացնելով 2010 թ-ի ընթացքում երեխայի իրավունքների խախտումների վերաբերյալ ստացված բողոքները՝ նշենք, որ ընթացիկ տարում ավելացել են, այսպես կոչված՝ «օտարերկրյա տարրի» մասնակցությամբ բողոքները, որոնց դեպքում կա՞մ ՀՀ քաղաքացի անշափահասն է գտնվում արտերկրում և անհրաժեշտ է պաշտպանել նրա իրավունքները, կա՞մ հնարավոր իրավախսախտն (ծնողներից մեկը) է գտնվում արտերկրում և անհրաժեշտ է պաշտպանել ՀՀ քաղաքացի երեխայի իրավունքները:

Նշված դեպքերում Պաշտպանը դիմել է ինչպես ՀՀ ԱԳՆ, այնպես էլ օտարերկրյա համապատասխան մարմինների աջակցությանը:

Պաշտպանին հասցեագրած բողոքներում արծարծվել են նաև այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ալիմենտի վճարման վերաբերյալ դատական ակտերի կատարման դժվարությունները, ինչը պայմանավորված է ինչպես ծնողների կողմից ալիմենտը ժամանակին չվճարելու, իրական եկամուտները թաքցնելու, այլ երկիր մեկնելու, այնպես էլ դատական ակտերի հարկադիր կատարողների կողմից դատական ակտի հարկադիր կատարումն ապահովելու հարցում օրենսդրությամբ իրենց վերապահված բոլոր հնարավորությունները չօգտագործելու, ոչ օպերատիվ գործելու, որոշ դեպքերում անգործություն դրսուրելու դեպքերով:

**Օրինակ 1.** Քաղաքացի Ս. Թ.-ն հայտնել է, որ դատական կարգով ամուսնալուծվել է: Վճռով որոշվել է ամուսնությունից ծնված անչափահաս երեխաներ Ա.Պ.-ի և Հ.Պ.-ի բնակության վայր համարել իր բնակության վայրը, և երեխաների հորը՝ Ի.Պ.-ին, պարտավորեցնել իրեն վերադարձնել երեխաներից մեկին՝ Ա.Պ.-ին, և նրանից բռնագանձել ալիմենտ:

Կատարողական թերթը հանձնել է ԴԱՀԿ ծառայություն, սակայն կատարողական վարույթն ավարտվել է՝ կատարողական գործողությունների ընթացքում պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինության և հարկադիր կատարողի կողմից օրենքով թույլատրելի բոլոր միջոցների ապարդյուն լինելու պատճառով: Մինչդեռ, Ս. Թ.-ն ներկայացրել է նախկին ամուսնու և նրա մոտ գտնվող իր երեխայի ստույգ հասցեն, նույնիսկ՝ երեխայի դպրոցի հասցեն:

Բողոքի կապակցությամբ հարցում է կատարվել ԴԱՀԿ:

Բողոքը գտնվում է քննարկման փուլում:

**Օրինակ 2.** Քաղաքացի Ա.Ը.-ն հայտնել է, որ դատարանի վճռով լուծվել է իր և ամուսնու միջև կնքված ամուսնությունը, իրենց անչափահաս երկու երեխաների բնակության վայրը որոշվել է իր բնակության վայրով, իսկ հոր համար երեխաների հետ տեսակցության օրեր են սահմանվել, ինչպես նաև նրան պարտավորեցվել է վճարել ալիմենտ՝ ամսական 12.000 ՀՀ դրամի չափով:

Ա.Ը.-ն բողոքել է, որ նախկին ամուսինը չի վճարում ալիմենտը, իսկ ԴԱՀԿ-ն այն բռնագանձելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկում, հակառակ՝ հարկադրում է իրեն հրաժարվել ալիմենտի՝ մեկ տարվա ընթացքում կուտակված պարտքից, որը կազմում է 144.000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով, որ երեխաների հետ վերջին հանդիպման ժամանակ հայրը նրանց վրա բռնություն է գործադրել՝ երեխաները այլևս հրաժարվել են հանդիպել հորը, իսկ ԴԱՀԿ աշխատակիցը տուգանել է իրեն 200.000 ՀՀ դրամի չափով՝ հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու համար:

Բողոքի կապակցությամբ հարցում է կատարվել ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին:

Բողոքը գտնվում է քննարկման փուլում:

Բողոքների հաջորդ խումբը վերաբերել է երեխայից առանձին ապրող ծնողի, ինչպես նաև երեխայի հետ համատեղ ապրող ծնողի կողմից իր իրավունքները չարաշահելու դեպքերին: Չատ են երեխայի բնակության վայրի որոշման հարցում ծնողների՝ համաձայնության չգալու դեպքերը, ինչը բերում է նրան, որ երեխայի հետ ապրող ծնողը,

չնայած օրինական ուժի մեջ մտած դատական վճռին, չարաշահում է իր իրավունքները և խոչընդոտում է մյուս ծնողին կամ երեխայի մոտիկ ազգականներին շփվել նրա հետ և բացասական է տրամադրում նրանց դեմ: Մյուս կողմից, երեխայից առանձին ապրող ծնողը, հակառակ դատական որոշման, սահմանում է իրեն հարմար շփման կարգ՝ դրանով իսկ անտեսելով երեխայի շահերը, ցանկությունը, հոգեկան և առողջական վիճակը: Պատահում է նաև, որ երեխայից առանձին ապրող ծնողն անօրինական կերպով վերցնում է երեխային և հրաժարվում վերադարձնել մյուս ծնողին, ում խնամքին է դատարանի վճռով հանձնված երեխան:

**Օրինակ 1.** Քաղաքացի Կ.Հ.-ն հայտնել է, որ դատարանի վճռով որոշվել է երեք երեխաներից երկուսին թողնել իր նախկին ամուսնու, իսկ մեկին՝ իր մոտ: Վերաքննիչ բողոքի արդյունքում որոշվել է երեխաներից մեկին ևս տալ մորը: Կ.Հ.-ն բողոքել է, որ վճիռը չի կատարվել՝ չնայած կատարողական թերքը ներկայացվել է կատարման: Բացի այդ, չի կարողանում տեսակցել իր երկու երեխաներին:

Բողոքի կապակցությամբ հարցում է կատարվել ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին:

Բողոքը գտնվում է քննարկման փուլում:

Առանձնահատուկ է «Հրապարակ» օրաթերթի հոկտեմբերի 28-ի և նոյեմբերի 12-ի հրապարակումներում տեղ գտած՝ Բազրատաշեն գյուղի բնակիչ Լ.Գ.-ի կողմից իր հինգ երեխաների նկատմամբ ծնողական պարտականությունները չկատարելու և ծնողական իրավունքները չարաշահելու դեպքը: Չմանրամասնելով հոդվածի բովանդակությունը՝ նշենք միայն, որ Լ.Գ.-ի երեխաներից մեկը՝ նորածին, մահացել էր, իսկ երեխայի իրավունքների հարցերով իրավասու խնամակալության և հոգաբարձության մարմինները, մասնավորապես՝ Բազրատաշեն համայնքի ղեկավարը, ինչպես նաև Տավոշի մարզպետարանի աշխատակազմի երեխայի իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցները, ըստ հոդվածագրի, գործուն քայլեր չեն ձեռնարկել այդ երեխաների իրավունքների պաշտպանության համար:

Դեպքի առնչությամբ Պաշտպանը դիմել է ՀՀ տարածքային կառավարման նախարարին՝ նշելով, որ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է երեխաների իրավունքների պաշտպանության մի շարք իրավական մեխանիզմներ՝ ծնողների կողմից իրենց իրավունքները չարաշահելու և պարտականությունները չկատարելու դեպքերում, մասնավորապես՝ ծնողական իրավունքներից գրկելը (ՀՀ ընտանեկան օրենսգիրը, 59-61 հոդվ.), ծնողական իրավունքները սահմանափակելը (ՀՀ ընտանեկան օրենսգիրը, 63-65 հոդվ.), և ամենակարևորը, որպես օպերատիվ միջոց, որը, կարծում ենք, կիրառելի է նաև տվյալ դեպքում, երեխային անմիջապես վերցնելը ծնողներից (ՀՀ ընտանեկան օրենսգիրը, 58 հոդվ.):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 58 հոդվածի համաձայն երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինն իրավասու է անմիջապես երեխային վերցնելու ժնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան: Երեխային վերցնելիս խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անհապաղ ապահովել երեխայի ժամանակավոր տեղավորումը և յորօրյա ժամկետում դիմել դատարան՝ ժնողներին (նրանցից մեկին) ժնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ժնողական իրավունքները սահմանափակելու հայցով:

Առաջարկվել է ներկայացնել պարզաբանում և միջոցներ ձեռնարկել առանց խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության համար:

Գործը գտնվում է քննարկման փուլում:

#### **4.3. Փախստականների իրավունքներ**

2010 թվականի ընթացքում փախստականների կողմից Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված բողոքները հիմնականում վերաբերել են քնակության վայրի, կենցաղային պայմանների, սոցիալական պաշտպանվածության, ՀՀ-ում ծնված փախստականների երեխաների և այլ խնդիրների, որոնց Պաշտպանն անդրադարձել է նաև իր նախորդ տարիների Զեկույցներում: Պաշտպանի ներկայացուցիչների իրականացրած մոնիթորինգի և օգտագործած կանխարգելիչ միջոցների փորձի ներդրման արդյունքում 2010 թ-ի բողոքների քանակը զգալիորեն նվազել է, սակայն աճել է ՍԻՊ-ից իրավաբանական խորհրդատվություն ստացող փախստականների թիվը:

2010 թ-ի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակիցների կողմից մոնիթորինգ է անցկացվել Հայաստանի 3 մարզերի՝ Արագածոտնի, Արարատի, Կոտայքի գյուղական վայրերում, ինչպես նաև՝ Երևան քաղաքի հանրակացարաններում: Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությունից հետո մարզերի համապատասխան պաշտոնյաների կողմից որոշ խնդիրներ տեղում լուծվել են:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն պետական կառույցները, որոնք կոչված են քացահայտելու և լուծելու փախստականների խնդիրները, հաճախ ոչ օբյեկտիվ են ներկայացնում ինչպես իշխանությանը, այնպես էլ՝ միջազգային կազմակերպություններին ու հանրությանը:

Որոշ գերատեսչությունների կողմից փախստականների իմտեզրման հարցում հաջողություն է համարվում նրանց կողմից ստիպված ՀՀ քաղաքացիություն ընդունելը:

Մինչդեռ, փախստականների կարծիքով իրենք դարձել են պետական պաշտոնյաների խարուսիկ քարոզության գոհերը: Քաղաքացիություն ձեռք բերելուց հետո, դառնալով միջազգային կազմակերպությունների միջոցներով կառուցված բնակարանների սեփականատերեր, փախստականները գրկվել են միջազգային կազմակերպությունների աջակցությունից՝ հայտնվելով սոցիալական ծանր դրության մեջ:

Հանրապետության մարգերում դեռևս լուծված չէ փախստականներից շատերի բնակարանային խնդիրը: Շուրջ հազար ընտանիք վկայագիր չի ստացել: Իսկ ստացածներից 400 ընտանիքի չի հաջողվել բնակարան ձեռք բերել անշարժ գույքի շուկայում գների բարձրացման պատճառով:

Միայն Երևան քաղաքում բնակարանի գնման վկայագիր ստանալուն սպասում է վարչական շենքերում ապրող 1216 ընտանիք:

Եվս 3-4 հազար փախստական ընտանիք ապրում է հարազատների տներում, կամ՝ վարձով, ինչը դժվարացնում է մոնիթորինգի անցկացումը:

Ավելացել է ապաստան որոնող փախստականների նոր ալիք՝ Իրաքից (943), Իրանից, Վրաստանից (117), Թուրքիայից (քրդեր) և այլ երկրներից՝ թվով 1588 մարդ, որոնց կարգավիճակը որոշվում է «ՀՀ փախստականների և ապաստանի մասին» նոր օրենքով:

#### 4.4. Ազգային փոքրամասնությունների իրավունքներ

Ի տարբերություն նախորդ տարիների՝ 2010 թ-ին ազգային փոքրամասնությունների իրավունքների խախտման վերաբերյալ բողոքներ չեն ստացվել:

Ընթացիկ տարում Պաշտպանը շարունակել է համագործակցությունը 30 հասարակական կազմակերպության հետ, որոնք ներկայացնում են ազգային փոքրամասնությունների 11 համայնքի շահերը:

Պաշտպանին կից փորձագիտական խորհրդի աշխատանքներին մասնակցել են ազգային փոքրամասնությունների երկու համայնքի ղեկավարներ:

Պաշտպանը համագործակցել է ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների ղեկավարների հետ: ՄԻՊ աշխատակիցներն օգնել են ազգային փոքրամասնություններին խորհրդատվություն ստանալու և գիտելիքներ ձեռք բերելու հարցերում, ինչը հնարավորություն է տալս ինքնուրույն լուծել խնդիրների մի մասը: Պաշտպանը և ՄԻՊ աշխատակիցները մասնակցել են ազգային փոքրամասնությունների համայնքների կազմակերպած միջոցառումներին:

ՀՀ-ն վերջին տասնամյակի ընթացքում ստանձնել է ազգային փոքրամասնությունների մշակութային ու կրթական ծրագրերի զարգացման օժանդակությունը և որանց իրազործման նպատակով օգնում է եղինական, հունական, ռուսական, քրդական, ասորական և այլ համայնքներին:

Հանրապետության որոշ դպրոցներում հայերենի հետ մեկտեղ ուսուցանվում են նաև վերոնշյալ ազգերի լեզուները: Եզրի ազգի համար Հայաստանում հայ գիտնականների կողմից կազմվել է այբուբեն և ուսումնական ձեռնարկներ: Երկրի 11 փոքրամասնություններն ունեն իրենց գրասենյակները, որտեղ համայնքների ղեկավարներն ու մանկավարժները ստեղծել են մայրենի լեզվի ուսուցման մշակութային կենտրոններ ու դասարաններ:

Ամեն տարի պետությունը ֆինանսական օգնություն է տրամադրում ազգային փոքրամասնությունների համայնքներին:

ՀՀ Նախագահը և Մշակույթի նախարարությունը պարբերաբար կազմակերպում են ճանաչողական ուղևորություններ, փառատոններ և ցուցահանդեսներ:

Եզրիական, ասորական, քրդական և վրացական համայնքները Հանրային ռադիոյում իրենց մայրենի լեզվով հաղորդումներ են եթեր հեռարձակում: Հանրապետությունում գործում են ռադիո և հեռուստաալիքներ, որոնք միշտ պատրաստ են ընդառաջել ազգային փոքրամասնություններին՝ ուղիղ եթերում հանդես գալու հնարավորություն տալ և օգնել իրենց լսարանի համար հաղորդումներ պատրաստել:

Ազգային փոքրամասնությունների շատ համայնքներ, օբյեկտիվ պատճառներով, Հայաստանի հեռուստատեսությունում և ռադիոյում սեփական ծրագիր ստեղծելու հնարավորություն չունեն:

Միևնույն ժամանակ, Հայաստանի ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքները հրատարակում են թերթեր, ամսագրեր և շրջաբերականներ:

Հայաստանի Հանրապետությունում ապրող աղբեջանցիներն իրենց համայնքը չեն գրանցում Արդարադատության նախարարությունում, քանի որ մտահոգվում են Աղբեջանում ապրող իրենց հարազատների ու մտերիմների համար: Կարծում են, որ գրանցման դեպքում նրանց վրա կարող է ճնշում գործադրվել:

Հայաստանի տարածքում ապրում է մոտ 4000 հայ գնչու:

Պաշտպանի կողմից վերահսկվում է ազգային փոքրամասնությունների խնդիրներին առնչվող վավերացված միջազգային փաստաթղթերով ու կոնվենցիաներով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը:

Ինտեգրացման դրական շարժ պետք է համարել ազգային փոքրամասնությունների ակտիվ մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին:

Հայաստանում ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանվածությունը գտնվում է պետական հոգածության տակ: Այդ մասին են վկայում ՀՀ գործող ազգային

փոքրամասնություններին առնչվող կազմակերպությունները՝ ՀՀ Նախագահին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհուրդը, ՀՀ Նախագահին առընթեր հանրային խորհուրդը, ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:

Ինչպես ՀՀ քաղաքացիների մեծ մասի, այնպես էլ ազգային փոքրամասնությունների խնդիրները հիմնականում բնակարանային-կենցաղային, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային և կրթական բնույթի են:

Թեև 2010 թ-ին ազգային փոքրամասնությունների իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքներ չեն ստացվել, միևնույն է, պարբերական ուսումնասիրություններ են կատարվել ոլորտում առկա թերությունների վերաբերյալ.<sup>23</sup>

---

<sup>23</sup> սեւ, 1.6. քաժին: